899.962.1
2-68

Դ. Չիկվաձե



100

899.962
Չ-68

# ՀԱՐԿԵՐ

Պետհրատ
1934

899.962.1
Չ-68

ՊԱՆՏԵԼԵՅՄՈՆ ՉԽԻԿՎԱՁԵ

# Ջ Ա Ր Կ Ե Ր

Վ Ե Պ

Թարգմ. ԱՐՏ. յեվ ՀՈՎՀ. ԴԱՎԹՅԱՆՆԵՐԻ

93

Պ Ե Տ Ա Կ Ա Ն   Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԵՐԵՎԱՆ   1 9 3 4

14 ՓԵՏ. 2013
Ից. 752

Թարգմ Արտ. յեվ Հովհ. Դավթյանների, պատ. խմբ. Ս. Հարությունյան տեխ. խմբ. Տ. Խաչվանքյան, սրբագրիչներ Ս. Փարադանյան յեվ Մ. Բեչյան
Հրատ № 2828. պատ. № 152, տիրաժ 3 000
Գլավլիտ 8404 (բ) պետհրատի տպարան

Հանձնված ե տրտադրության 24 I 1934 թ.
Ստորագրված ե տպագրության 3 III 1934 թ.

## 1

Արևի ճառագայթների տակ քաղաքը թմրել եր…

Աշտարակների նման գետնին կպած գործարանի ծխնելույզներից գորշագույն ծուխը դեպի ցած թեքվեց ու դինամո մեքենան դանդաղացրեց իր արագությունը։

Յե՛վս կես րոպե և՝

— Ո՜ւ–ո՜ւ–ո՜ւ…—միալար մռնչացին սուլիչները…

Նախաճաշի ազդանշանն եր այդ։

Կապույտ շապկավորները ցրվեցին գործարանների բակերը։ Սուլիչի ձայնը գիշերային ավազակի նման ներս խուժեց Գրիգոլ Գիգաուրու բնակարանը։ Քնած եյին…

Գիգաուրին խրտնածի նման վեր ցատկեց անկողնուց և սկսեց տրորել քնաթաթախ աչքերը։

— Լուսարա՛,— մեղմ ու ակնածությամբ ձայնեց իր յերիտասարդ կնոջը և ժպտուն դեմքով նայեց փափուկ մահճակալում մետաքսե վերմակի տակ անուշ քուն մտած Լուսարային, վորի վերմակը սահել եր ցած, ու փղոսկրագույն յերկար ազդրերը փայլփլում եյին արևի լույսի տակ… Մետաքսանման դանգուրները առատորեն թափվել եյին նրա դեմքին ու կրծքին՝ տալով նրան գեղեցկության հետ միասին՝ խորհրդավոր տեսք. կիսալուսնի նման բոլորած հոնքերը՝ պահապան եյին կանգնել Լուսարայի չքնաղագեղ աչիկներին… Լուսարան ամուսնու ձայնից փոքր ինչ շարժվեց… Կուրծքը վեր յելավ, լիաթոք շնչեց ու քունը դեռ չառած՝ շուռ յեկավ մյուս կողքին…

— Դարձյալ քնե՞ց. արդեն ուշացա…— նեղացած փնթփնթաց ինքն իրեն Գիգաուրին, սակայն իբր պատասխան լսեց միայն Լուսարայի անհոգ ու խաղաղ մրափը։

— Ժամն ինն ե արդեն, Լուսարա՛… Չի լսում…

Մալխասյան բզեզը տզզալով ներս թռավ բաց լուսամուտից, մի չորք շրջաններ գործեց սենյակում, անցավ պահարանի գլխով, մոտեցավ տուալետի սեղանի վրա դրած հայելուն և ուժգին զարնվելով փայլուն ապակուն, ջարդուփշուր արավ իր վահանաձև թևերն ու աղեկտուր վայր ընկավ տուալետի սեղանի առաջ փռված փափուկ գորգի վրա... Գիգաուրին հետաքրքրությամբ դիտում էր այս ամենը և...

— Փանիա՛, Փանիա՛,— բարձր ձայնով կանչեց ծառային...

— Ո՛ֆ, չի կարող չաղմկել ու ամբողջ աշխարհին իմաց չտալ իր գնալու մասին, զարմանալի մարդ է. տրտնջաց քնաթաթախ Լուսարան և ջղայնացած գլուխն ընկղմեց փափուկ բարձերի մեջ...

Խոհանոցից լսվում էր պրիմուսի անընդհատ թշշոցի ռիթմիկ ձայնը... Նիկելի սրճամանում յեփվում էր անուշահամ սուրճը... Փանիան նախաճաշիկի պատրաստություն էր տեսնում ու հետն էլ քթի տակ ինչ որ յերգ մռմռում...

Մի ամիս էր արդեն, ինչ Գրիգորու կրտսեր յեղբայր Լևոնն ինչ որ անսովոր աշխատանքներով էր տարված... Յեթե հարցնելու լինեյիք նրան՝ կպատասխաներ, որ համալսարանում քննություններ էր տալիս, և այսոր էլ՝ առավոտ կանուխ պատշգամբում կանգնած՝ ինչ որ մասնագիտական առարկա էր սերտում... Մինչդեռ նրա սիրտը, միտքը... ո՞վ կիմանար, թե ինչով էր զբաղված...

Գրիգորը մտավ սեղանատուն ու պատրաստվեց նախաճաշելու...

—Լևո՛ն, կաթ չե՞ս խմի.— հյուրասիրեց Գրիգորը Լևոնին...

— Դեռ ժամանակ չունեմ...— կարճ կտրեց Լևոնն ու շարունակեց կարդալը:

Ժամացույցի սլաքը մոտեցավ 9 և կեսին...

— Ծկը՛ռ, զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ.—զընգաց հեռախոսը Գրիգորի առանձնասենյակում:

— Փանիա՛, նայիր հեռախոսին.— կարգադրեց Գրիգորն ու շարունակեց նախաճաշելը...

— Գարաժիցն է...— ուկրայնական դիալեկտով պատասխանեց Փանիան...

— Թող գա... ժամանակ է:



Փանիան հեռախոսափողը կախեց իր տեղն ու բաց դռնից զգուշորեն ծլկվեց դեպի խոհանոցը:

Գրիգորը մեծ ախորժակով ուտում էր նախաճաշը և հետն էլ թերթում էր ինչ որ արտադրական բնույթի շրջաբերական գրություններ...

Նախաճաշելիս՝ կարողացավ նույնիսկ լրագրներն էլ աչքի անցնել, սակայն յերբ ձեռքն առավ «Պրավդա» լրագրի վերջին համարը և նայեց առաջնորդող հոդվածին—աչքերը մեխվեցին խոշոր տառերով տպված «Սոցիալիստական մրցումն» վերնագրի վրա... Գրիգորը մտածմունքների մեջ խորասուզվեց... սկսած կամպանիայի կարևորությունն ու լրջությունն անմիջապես զգաց... Շինարարության ու այլ տնտեսական–արտադրական ֆրոնտում մինչև որս կրիայի քայլերով ընթացող աշխատանքի տեմպերը սև ուրվականի նման ցցվեցին նրա առաջ:

— Այո՛, տեղին է, շա՛տ տեղին, անպայման պետք է անցկացնել կամպանիան, սակայն... որ ու գիշե՛ր անընդհատ խիստ հոգնել աշխատանքից... Բայց է՛հ, սա հո տրտո՛ւնջ է, նա՛հանջ...

Գրիգորը փնթփնթալով վեր կացավ և գնաց աշխատասենյակը... Կարևոր թղթերը տեղավորեց պորտֆելում և աչքերը բևեռեց գրասեղանի վրա դրած օրացույցին.— «Տասնութին կբացվի խորհրդակցությունը»...

— Բո՛ւ–ո՛ւ, բո՛ւ, բո՛ւ–ո՛ւ.— լսվեց փողոցից...

Մերսեդեսի զգուշացնող ազդանշանն էր այդ...

Գրիգորը ձայնը լսելուն պես՝ սկսեց շտապել...

Լուսարան քնած էր մինչև տասնմեկը... Տասնմեկին վեր կացավ, հագնվեց, հորանջելով մազերը սանրեց, ապա կանգնեց տուալետի առաջ՝ մերթ ժպտուն դեմքով նայում էր հայելուն, մերթ տխուր դեմք ընդունում, յերբեմն էլ կկոցում էր աչքերը... և այսպես շարունակաբար...

Յերկար այսպես փորձեր կատարելուց հետո վերջում համոզվեց, որ ժպտուն հայացքն ավելի յե սազում իր մանկական շարժուն դեմքին ու չքնաղ աչքերին... Ապա Լուսարան արագ բաժանվեց տուալետից ու թեթև չոր հագած՝ դուրս յեկավ դահլիճ...

Փանիան կարգի յեր բերում սենյակները... Նրա քշտած թևերի վրա ուռչում բարձանում էին մկանները: Լուսարան զարմանքով նայում էր Փանիայի առողջ բազուկներին...

— Փանի՛ա, առավոտը Գուրամին տարե՞լ եյիր զբոսանքի:

— Այո՛, տարել եյի,— յերեսը Լուսարայի կողմը շրջելով պատասխանեց Փանիան և արմունկով սրբեց յերեսի քրտինքը...

— Հո, լաց չի՞ յեղել:

— Վո՛չ, սակայն հաճախ եր հիշում մորը...

— Մայրը... Մայրը մատաղ լինի նրան:

Լուսարան վերջացնելով Փանիայի հետ իր առավոտյան հարց ու փորձը՝ դիմեց դեպի պատշգամբ...

— Գուրա՛մ, Գուրամի՛կ,—փաղաքշանքով ձայնեց Լուսարան իր մինուճար զավակին, վորն իր խաղալիքներով տարված՝ ինչ վոր մռմռալով բան եր սարքում և հաճախակի միստեր Ջեկին «ձիու» վրա գլխի վայր կանգնեցնում...

Գուրամն անչափ սիրում եր իր «ձին», իսկ միստեր Ջեկն ել նրա կարծիքով համարվում եր լավագույն ձի հեծնող...

Լուսարան մոտեցավ Գուրամին...

— Մայրի՛կ, հորյեղբայր Լևանն ականջներս քաշեց...

— Ինչո՞ւ համար, Գուրամիկ ջան, ինչո՞ւ քաշեց.— իր կրծքին սեղմեց Գուրամիկին, ճակատը համբուրեց... աչքի տակով խորամանկորեն նայելով Լևանին...

— Ինչու համա՞ր... Նրա համար, վոր յես գողացա հորեղբայր Լևանի գոտիկը և Ջեկի մեջքին կապեցի... Հորեղբայրն ականջներս քաշեց...

Գուրամը ծիծաղեց:

— Մայրի՛կ, բայց յես ելի սիրում եմ հորեղբայր Լևանին:

— Մայրի՛կ, ինչո՞ւ յեմ սիրում նրան:

— Ինչպես թե ինչու. չե՞ վոր Լևանը քո հորեղբայրն ե, փաղաքշում-սիրում ե քեզ, խնդացնում և շուտ-շուտ տանում ե զբոսանքի և այլն...

Լուսարան մի փոքր կարմրեց և նորից գաղտագողի սատանայական հայացք ձգեց պատշգամբի մի անկյունում բազկաթոռին նրթնած Լևանին...

Գուրամը վերկացավ ու մտավ դահլիճ...

— Փանի՛ա, ի՞նչ ունես նախաճաշին.

Լուսարան ձգվեց, հորանջելով մոտեցավ սեղանին ու նստեց...

— Լևան, նախաճաշելու ժամանակ ե...—ուրախ քրքջալով կանչեց Լուսարան:



Լևանը տեղից վերկացավ և, մի քանի րոպեյից հետո գդալներն սկսեցին չխչխկալ սուրճով լի բաժակներում... Նախաճաշը բավական յերկար տևեց... Լևանն սկսեց ուրախ հանաքներ անել և, յերկուսի բարձրաձայն ծիծաղից ուրախագին ցնծում-աղմկում եյին նույնիսկ դահլիճի պատերը...

Ապա Լուսարան նստեց դաշնամուրի առաջ...

Շարժվեցին դաշնամուրի կրեմագույն կլավիշներն ու սենյակի ոդն արբեցավ Շոպենի սոնատներով... Յերբ Լուսարան վերջացրեց կլասսիկները՝ նոտաների տետրը թերթեց, յերգելու պատրաստ դիրք ընդունեց և լիրիկ մեցոսոպրանոյով, իր ներդաշնակությամբ կլկլացրեց «Մխոլոթշեն երթս» (Միայն քեզ՝ մեկին) ռոմանսը...

Գեղեցիկ եր յերգում Լուսարան վրացերեն և գնչուական ռոմանսները...

— Լուսարա՛, ինչո՞ւ «Դիդեբա»*) չես յերգում,—նեղացած հարցրեց Լևանը. Գուրամը, վոր լարված ուշադրությամբ լսում եր այս բոլորը՝ շտապ վազեց և փաթաթվեց մոր ծնկներին...

— Մայրի՛կ, ի՞նչ ե «Դիդեբա».

— «Դիդեբա»-ն վորդյակս, վրացական շքեղ հանդիսավորություն արտահայտող հիմն ե:

— Մայրի՛կ, ի՞նչ ե «շքեղ հանդիսավորը».— մանկական հետաքրքրությամբ շարունակում եր հարցուփորձը Գուրամը և, յերբ բավարար պատասխան չեր ստանում, մոր փեշերքն եր չանգռտում...

— Շքեղ հանդիսավո՞ր... Նշանակում ե՝ մեծ տոն... այ, յերբ հասարակությունն արտասովոր ուրախությամբ և հանդեսով տոնում ե մի վորևե նշանակալից որ...

Գուրամը, ճիշտ ե չհասկացավ ասածները, բայց և այնպես լռեց: Լուսարան սկսեց նվագել «Սամշոբլո»-ն (հայրենիք)... Լևանը խորը մտածմունքների մեջ ընկավ...

— Մայրի՛կ, «Սամշոբլո»-ում ինչո՞ւ յեն «լեզգինկա» ածում.

— Նրա համար, վոր «լեզգինկան» վրացական պար ե...

— Բա ինչո՞ւ յեն «լեզգինկա» ասում.

— «Լեզգինկա» սխալմամբ են ասում...

Լուսարայի բացատրությունը չբավարարեց Գուրամի անվերջ հարցասիրությունը, սակայն...

*) Վրաստանի մենշևիկյան կառավարության ազգային հիմն եր:

Արեգակն արդեն առատորեն ներս էր թափում իր ճառագայթ-ները լուսամուտներից...

Լուարան վարագույրները ցած թողեց, ծաղկամանի մեջ վարդի ու հասմիկի ճղներ անկեց; սպիրտախառն ջուր սրսկեց վրան և հատուկ տեղ դրեց...

Հասմիկի արբեցող հոտով դրդված Լուարան առատորեն շաղ տվեց իր վրա ֆրանսիական թանգագին դուխին, բազկաթոռը քաշեց լուսամուտի կողմը, վերցրեց Ստեֆան Ցվայգի նովելների գիրքը, բացեց և սկսեց կարդալ «Վախը»:

Պրիմուսը նորից թշշում էր խոհանոցում և, Փանիան էլ ուկրայինական ինչ-որ յերգ էր անճոռնի կերպով մրմնջում...

## 2

Գիդաուրու բնակարանի բակից դանդաղորեն դուրս յեկավ Մերսեդեսը և զգուշացնող ազդանշան տալով՝ միացավ պրոսպեկտի ընդհանուր ժխորին...

— «Դանդաղ»— նախազգուշացնում էյին շոֆերին քաղաքի փողոցներում այս ու այնտեղ յերևացող՝ շարժումը կարգավորող պլակատները, և իրոք, արագաշարժ ու թեթև Մերսեդեսը, իր տիրոջը սպասող արագավազ մատակ ձիու նման՝ կանգնած ան-հանգիստ շարժումներ էր անում, սակայն շոֆերի վարժ ձեռքերը վարպետորեն խլում էյին ավտոյից նրա շարժման արագ էներ-գիան և ազարտի մտած Մերսեդեսը, նյարդերը թուլացածի նման, դողդողալով և ակնածությամբ սպասում էր էլեկտրոքարշի շարժ-վելուն, վորպեսզի ինքն էլ նորից շարունակեր իր ճամբան...

— Ես ի՞նչ կարգ է, ավտոն սպասի էլեկտրոքարշի վագոնների շարժվելո՞ւն—ցածր ձայնով ինքն իրեն շշնջաց Գիդաուրին և նյար-դային ժեստով թեքվեց դեպի շոֆերը, կարծես դրանով ուզենալով ծածկել սպասումի հետևանքով ավտոյի ուշացումը:

Ցեռ ու դեռի մեջ էր պրոսպեկտը. խաչաձևող փողոցների մոտ կանգնած միլիցիոներներն իրենց փոքրիկ կարմիր գավազաններով ղեկավարում էյին շարժումը... իսկ պրոսպեկտի մայթերի մոտ խումբ-խումբ կանգնած անց ու դարձ անողներն էլ իրենց հերթին սպասում էյին շարժումի թույլատրելուն— միլիցիայի ազդանշա-նին, վորպեսզի հնարավորություն տրվեր նրանց մի մայթից մյուս



մայթն անցնելու: Գիդաուրին համարյա յուրաքանչյուր օր ակա-նատես էր նման յերևույթի:

— Քաղաքը մեծանում է,—մտածում էր Գիդաուրին,—որեցոր աճում... հսկայական քայլերով է առաջադիմում: Վորքան գործա-րան է կառուցվում, ինչքան արտադրական—հիմնարկություններ են բացվում, ո՞վ կարող է հաշվել...սակայն բնակարանային ճըգ-նաժամն այսպիսի խոշոր քաղաքներում վոչ մի կերպ չկարողացանք արմատախիլ անել... Թեև ինչ կա զարմանալու, յերբ դեպի քաղաք այնպիսի թափով են գալիս ու խմբվում այնտեղ, ինչպես մեղ-րաճանճերը լորենու ծաղկի շուրջը... Գալիս են գյուղերից, գալիս են գավառական քաղաքներից, գալիս են... գալիս են և յեկող-ների հաշվին աճում է բնակչությունն էլ, նոր բնակարանների պա-հանջն էլ և...

Կանգ առավ Մերսեդեսը:

... Պետշի՛ն.

Արդեն պաշտոնատեղումն էր Գիդաուրին...

Նա զգուշորեն բացեց առանձնասենյակի դուռը, վորին գեղեց-կացնում էր «դիրեկտոր» մակագրությունը և ներս մտնելով գո-թական ճաշակով զարդարված այդ առանձնասենյակը՝ ազատ շունչ քաշեց... Գիդաուրին բազմեց գրասեղանի առաջ դրված փա-փուկ բազկաթոռում, պինջակի կոճակներն արձակեց, ապա գըր-պանից հանեց ծխատուփը, վերցրեց մի հաստլիկ ծխախոտ, թափ տվեց բութ մատի վրա, վառեց լուցկին, կպցրեց ծխախոտը՝ շա-րունակ աչքերն անթարթ հառած մի կետի...

Սեղանի արկղները բացեց, հանեց թղթերը, ինչ-որ մակա-գրության վրա կանգ առավ և բնազդորեն ցուցամատը դրեց է-լեկտրական զանգի կոճակին:

Դռան մեջ յերևաց ցրիչը:

— Խնդրեք Վայնբերգին...— առանց գլուխը բարձրացնելու կարգադրեց ցրիչին և նորից թաղվեց թղթերի մեջ...

Մոխրամանի մեջ դրված չաղլիկ ծխախոտն այրվում էր, վորի ողակաձև քուլաներն ու մխացող ծուխը, բարձրանում էյին վեր և այդ իրենց գցությամբ մրցման բռնվում իրար հետ...

— Զրն, ծկո՛ռ: Խոպոտաց հեռախոսը:

— Ալլո՛, Տրեստի դիրեկտոր, խորհրդակցությո՞ւն:

Գունավոր մատիտով օրացույցի թերթիկի վրա նշանակեց...

— Ուրեմն, պետք է նյութեր պատրաստեմ,— մտածեց Գիգաուրին և նորից ելեկտրազանգը հնչեցրեց...
Գործավարը «գործերով» ներս մտավ...
— Ընկ. Ամբերկի՛. պատրաստեցեք Թիֆլիսի տեքստիլ գործարանին վերաբերող բոլոր նյութերը: Աչքի անցրեք նախկին հետազոտման ակտերը, հավաքեք նաև բոլոր հաշիվները...
— Լսում եմ, քաղաքավարությամբ պատասխանեց գործավարը:
— Յեթե ինժեներ Կարպովը հարցնելու լինի, ներս թողեք...
Այսօր ուրիշ վոչ-վոքի չեմ ընդունելու, պատրաստվում եմ խորհրդակցության համար...
— Լսում եմ:
— Փոստից ստացված թղթերը թողեք, ընկ. Ամբերկի՛. ժամը 4-ին կենտրոնական կոմիտեյից կվերադառնամ, այն ժամանակ կնայեմ... Լսե՛ք, հայտնեք գլխավոր հաշվապահին, վոր կես տարվա հաշիվները պատրաստի...
— Լսում եմ,— գլուխ տվեց գործավարն ու դիմեց նրան.
— Ընկ. Գրիգոլ, այսօր ռոճիկներ դուրս գրե՞նք, թե՞...
— Դուրս գրեք... սակայն սպասեք...
Գրիգոլի աջ ձեռքի մատները ջղայնորեն շարժվեցին գրասեղանի թղթերի վրա...
— Այսօր մի դուրս գրի: Համաձայն վերջին հրահանգի մենք ռոճիկներ ստանալու իրավունք ունենք յերեքին և տասնևութին... Հետևաբար, անկարելի յե...
— Ցավալի յե, ցավալի, Գրիգորի Պետրովիչ.— ժպտադեմ մեջ մտավ առանձնասենյակը մտնող Վայնբերգը, բազմախորհուրդ վողջունելով Գիգաուրուն:— Այսօր առավոտյան Սառա Մարկովնային խոսք տվի անպայման ռոճկով վերադառնալ տուն, սակայն... վոչինչ, վոչինչ...
— Լև Բորիսովի՛չ, տեքստիլ գործարանում դազգյահներ դնելու նախագծի գործն ի՞նչպես է. ձեր տված պայմանի համաձայն, այսօր պետք է պատրաստ լիներ,— հարցրեց Գիգաուրին և «գործերի» պապկան դրեց արկղը...
— Գրիգորի Պետրովիչ, ե՛հ, չեք կարող յերևակայել, թե ինչ դժվարությունների ու խոչընդոտների հետ է կապված ճշտագույն նախագիծ կազմելու գործը. ինչքան աշխատանք ու յեռանդ սպառ-



վեց մինչև որս նրա նյութերի մշակման վրա, վորքան քրտինք թափվեց, վորքան...
— Լա՛վ Բորիսովիչ,— ընդհատեց Գիգաուրին համարտակ Վայնբերգին,— յես ձեզ հարցնում եմ...
— Յես ել պատասխանում եմ, Գրիգորի Պետրովիչ, խիստ դժվար է, այսպիսի պայմաններում աշխատել... կենտվիճվարը վոչ մի օժանդակություն ցույց չի տալիս, վիճակագրական տեղեկություններ հաղորդելու գործում,— դիտմամբ չարախոսեց Վայնբերգը՝ Գիգաուրուն խաբելու նպատակով,— պետպլանն ել չի աջակցում հարկ...
— Սպասեք, ի՞նչ տեղեկություններ է, վոր չեք ստացել դուք պետպլանի հանձնաժողովից:
Գիգաուրին շտապ պատրաստեց բլոկնոտն ու մատիտը՝ Վայնբերգի ասածները գրի առնելու համար, բայց...
— Ինչ տեղեկություննե՞ր... ահա... այս վայրկյանիս, Գրիգորի Պետրովիչ, ուզում եք հենց այս րոպեյիս փնտրեմ ու գտնեմ...— դողդողում եր Վայնբերգը, քանի վոր ցինիկորեն չարախոսել եր հիշյալ հիմնարկությունների հասցեյին ու ընկնելով փակուղու մեջ՝ գունատվել եր և յելք եր վորոնում պատվով դուրս պրծնելու...
— Ընկ. Վայնբերգ,— ձայնը բարձրացրեց Գիգաուրին,— ձեզ լավ հայտնի յե, վոր յես ավելորդ ցերեմոնիաներ չեմ սիրում, նամանավանդ, յերբ գործը վերաբերում է պետական նշանակություն ունեցող գործի չկատարելուն...
Վերջին ասածներն այնպիսի չոր ու համոզիչ ձևով եյին արտասանված, վոր Վայնբերգը հանկարծակի վախից սարսռաց... ակամա գլուխը քորեց և նորից փորձեց վորևե կերպ արդարանալ, և վոր գլխավորն է աշխատեց խոսք գցել առանձին վարձատրության մասին...
— Լսո՛ւմ եմ, Գրիգորի Պետրովի՛չ, շատ լավ եմ լսում...— խղճալի ձևով պատասխանեց Վայնբերգը, որ ու գիշեր աշխատում ենք... քափ ու քրտինքի մեջ կորչում... Նախագծած ծրագրից 173 ժամ ավել ենք աշխատել, սակայն, մենք ի՞նչ մեղավոր ենք, վոր չկարողացանք հասցնել, Գրիգորի Պետրովիչ,— դիտավորյալ կերպով ստախոսեց Վայնբերգն ու գռեխպնդվելով շարունակեց իր խոսքը.— բացի այդ, անկեղծորեն պետք է ասեմ, վոր,— կրկին

խղճալի դեմք ընդունելով կմկմաց Վայնբերգը,— նախորոք պայմանավորված վարձատրությունը...

— Բավակա՛ն է, դարձյալ վարձատրության մասին վախոց. ընկ. Վայնբե՛րգ, վերջնականապես յերեք որ ժամանակ եմ տալիս... յեթե նախագիծը տասնևմեկին պատրաստ չլինի ժողկոմխորհին ներկայացնելու, գիտցեք, վոր այն ժամանակ ուրիշ պայմաններում կհանդիպենք իրար... Դուք, անշուշտ լավ գիտեք, թե մենք ինչպես ենք հյուրասիրում ամեն տեսակի սաբոտաժնիկներին և խանգարիչներին...

Գիտուարին զրույցն ավարտած համարելով, աչքերը հառեց մուտքի դռանը...

Գլխապտույտ յեղած Վայնբերգը մկան նման դուրս ծլկվեց առանձնասենյակից...

— Հը՛,— Լև Բորիսովիչ, յերևի դիրեկտորը շատ նեղը դցեց, հա՞...

Ծիծաղելով դիմավորեցին նրան աշխատակիցները...

— Դուք վո՞րտեղից գիտեք, տո՛, անիրավներ...

— Դե՛հ, դե՛հ, Լև Բորիսովի՛չ, եդ տեսակ բաներ չլինի, թե չէ...

— Ոհո՛, ասում ես մենք վո՞րտեղից գիտենք,— քմծիծաղ տվեց կոմյերիտական տեխնիկը՝ փաստորեն Վայնբերգի ոգնականը...— Դեմքիցդ չի՞ յերևում...

— Մի տեսե՛ք, տեսե՛ք, քրտինքն ենպես է ծորում դեմքից, ճակատից... Այս ու այն կողմ շարունակում էյին ծաղրել աշխատակիցները...

— Ինչո՞ւ յես դունատվել, Լև՛ Բորիսովիչ.— ձեռք չէր քաշում նրանից տեխնիկ Վանոն,— ամա, Գրիգորի Պետրովիչը լավ դաղեց, հա՞...

— Բավական է, հերիք է, անաստվածներ...— մրթմռթաց Վայնբերգն ինքն իրեն և ակնոցներն ուղղեց արծվաքթին... քրտինքը շարունակում էր ծորալ դեմքի կնճիռներով...

Տիրեց լռություն... Ամենքն էլ սկսեցին զբաղվել իրենց աշխատանքով... Կիսաբաց կրծքով ռեմինգտոնի վրա աշխատող աղջիկը ռիթմորեն խաղացնում էր մատները կլավիշներին և տառերի համադարկերով տպում սպիտակ թղթի վրա... Նա նստած էր լու-



սամուտի մոտ և բարակ կրեպ–դե–շինի դեյրայի մեջ նշմարվում էր
նրա վողջ իրանը...

— Մե՛րի. տպեցի՞ք զեկուցումը,— հարցրեց գործավարն ու
«իրալիր աչքերով նայեց նրան...

Մերին նախկին թավադի աղջիկ էր... ժամանակ անցրած «որ-
ֆորդ», սակայն գեղեցիկ ու դուրեկան...

— Արդեն վերջացնում եմ, ընկ. Ամբերկի,— պատասխանեց
Մերին և արագացրեց տպելը...

Տեխնիկը թաղուն քրքջաց...

Վայնբերգը «փիլիսոփայի» նման, նստած էր մտազբաղ մատի-
տի մի ծայրով թեթև հարվածում էր իր ճաղատ գլուխն ու հոգնած
աչքերով դիտում էր Մերուն... հետո էլ նախագծի հերթական
ուշացման համար նոր նախագծեր էր վորոնում...

Գարնանային դուրեկան զեփյուռը հովհարում էր հիմնարկու-
թյան վարագույրները. և տրեստին կից գտնված մեխանիկական
արհեստանոցից բուրող ածուխի ծանր հոտը բռնել էր վողջ հրջա-
կայքը...

Կեսօրը մոտենում էր. ձմռան սառնամանիքից սեղմված–կլո-
չած ողն աշխատում էր բացվել— տարածվել...

Գիտուարին նստած էր առանձնասենյակում և տաք վիճաբա-
նության մեջ էր տրեստի կազմբաժնի վարիչ ընկ. Պողոսովի հետ.

— Հապա, ինչպե՞ս վարվենք ընկ. Ռուբեն,—հարցնում էր
Գիտուարին յուրահատուկ տոնով...յերևու՛մ էր, բարկացած էր—
յես կարևոր եմ համարում ժողտնտխորհի վորոշման անմիջական
իրացումը. տեքստիլ ֆաբրիկան մոտիկ ապագայում անպայման
պետք է բարելավվի, վերակենդանանա...

— Յես դրան դեմ չեմ,— յերկմտում էր Պողոսովը,— ինձ
դործի էյությունն այլ կողմից էլ է հետաքրքրում, և...

—Товарищ Рубен! Брос пожалуй та! պարզ ու անկեղծ ասա
ինչ ուզում ես ասել, և վերջացրու...ընկերների միջև ինչ կարիք
կա «դիպլոմատիական» հանդույցների և վոլորապտույտ դարձ-
վածքների...վորոշակի ասա, վոր դու տրեստի վարչության վորո-
շումներին դեմ ես տեքստիլ ֆաբրիկայի շինարարության վերա-
բերմամբ...պրծավ գնաց...

Գիտուարին ջղաձգորեն շուռ տվեց ինչ վոր թղթեր ու շեշտակի
նայեց Պողոսովի աչքերին, սպասելով պատասխանի:

— Գուցե այդ այդպես էլ է, բայց գլխավորն այն է, ընկ. Գրիգոլ, վոր յես հիմնովին դեռ չեմ ուսումնասիրել տեքստիլ ֆաբրիկի գործերը, վորոնց համաձայն էլ շինարարության գլխավոր պատասխանատու պաշտոնից հեռացվում է ինժեներ Մելիքովը...

— 18.000 ռուբլու վատնո՞ւմը. Ժողտնտխորհի վորոշո՞ւմը.— յերկաթի կտորների նման ծամծմեց բառերը Գիգաուրին և սկսեց թերթել քննիչի կազմած ակտը... Մատը դրեց վատնումների կետի վրա և ջղայնորեն առաջարկեց Պողոսովին.— արձանագրությունից կարդալ այդ կետը.—

—Ցես այդ մասին վոչինչ չգիտեմ...— նեղացած տոնով պատասխանեց Պողոսովը, վատնումների մասին քննիչի կազմած ակտը մինչև վերջը կարդալուց հետո,— ինձ անհատապես հետաքրքրում է միայն ինժեներ Մելիքովի գործը, վորպես լավ մասնագետի գործ և նրա տեղն առաջարկված վոմն ինժեներ Կարպովի թեկնածությունը, վորն իմ կարծիքով անհամապատասխան է, քանի վոր այդ ինժեներներին վոչ վոք չի ճանաչում վորպես մասնագետ...

— Սխալվում եք, ընկ. Ռուբեն.—ընդհատեց Գիգաուրին Պողոսովին,— ընկ. Կարպովը հրաշալի գնահատական ունի ընկ. Կույբիշևից... Ընկ. Գրիգորին էլ շատ լավ կարծիքի յե Կարպովի մասին, այնպես վոր, ինչպես պարզվում է, Կարպովն իսկական խորհրդային ինժեներ է և լավ շինարար...—վերջացրեց իր խոսքը Գիգաուրին...

— Բավական չե միայն կարծիքը... «Շախտն էլ» եր այդպիսի կարծիքներով կերակրվում տարիների ընթացքում...

— Գործն ինքը ցույց կտա, յես կարծում եմ, մենք ինչպես միշտ, յերբեք յետ չենք նահանջի՝ գնահատականը տալու Կարպովի իսկական գործունեյությունը...

— Բարի, յես միայն կարծիքս եմ հայտնում, վորպես մի տեսակ նախազգուշացնող ազդանշան...

Պողոսովը լռեց, նայեց մի կողմ և թափառող աչքերը սևեռեց Լենինի պատկերին...

— Ընկ. Ռուբեն, ինձ զարմացնում են ձեր խոսքերն ու ինչվոր «ազդանշանները»: Իմացած յեղեք, վոր յես ատելով ատում եմ անմիտ բանաստեղծներին, յերբ նրանք գրում են իրենց անբովանդակ ու տխմար վոտնավորները...

— Կոմպլիմենտի ժամանակ եք գտե՞լ՝ ընկ. Գրիգոլ.—ժպտալից դարձավ Պողոսովը Գիգաուրուն, և նրա վարմունքի մեջ ավելի շուտ ատելություն ու վոխակալություն եր արտահայտվում, քան անկեղծ ծիծաղ: Կոմպլիմենտը՝ իր ամենավատ նշանակությամբ:



— Գուցե ունեք վորևե փաստաթուղթ ինժեներ Մելիքովի օգտին. հայտարարեցեք և մենք դատավարությունը կդադարեցնենք մինչև քննությունը լրիվին ավարտվի...

— Վո՛չ, յես սկզբունքով դեմ չեմ Մելիքովին գործից հեռացնելուն...—ծռեց իր խոսքը Պողոսովն ու մտքերով սավառնեց դեպի հեռուները... յես վոչ էլ Կարպովի նշանակելուն եմ դեմ...— թունալից վերջացրեց իր խոսքը Պողոսովն ու ագահաբար կուլ տվեց ծխախոտի ծուխը, ապա խեթ հայացք ձգեց Գիգաուրու վրա և նենգամտորեն ժպտաց...

— Ուրեմն այսպես,— վոտքի կանգնեց Պողոսովը, վորը կարծես պատրաստվում եր մեկնելու...—դեմ վոչինչ չունեմ, յեթե վոր...—Պողոսովը բազմախորհուրդ ձևով գլուխը շարժեց և դուրս գնաց առանձնասենյակից...

Шалишь, Погосов, шалишь.—դառն հեգնական ժպիտով ճանապարհեց Պողոսովին և նորից դարձավ իր թղթերին...

— Դու ուզում ես ամեն ինչ տակն ու վրա անել այստեղ, և... նորից մի բան ուզում եր ինքն իրեն ասել. սակայն հեռախոսն իր ուժեղ զրնգոցով խախտեց սենյակի լռությունը: Գիգաուրին ձեռքը մեկնեց հեռախոսափողին:

— Ա՛լլո, Գրիշան եմ... Լուարա. ցավդ տանեմ, ճաշին մի սպասի...կուշանամ... Այս րոպեյիս գնում եմ Կենտկոմ և չգիտեմ՝ յերբ կազատվեմ այնտեղից... Տոմսակնե՞ր, լավ, կաշխատեմ...Լա՛վ...Ասացի, վոր չեմ կարող գալ, կարծեմ հասկանալի յե...

Գիգաուրին հանկարծ փոխեց տոնը...

— Լավ, կաշխատեմ. լավ, ցավդ տանեմ...—քաղցրությամբ ու գուրգուրելով վերջացրեց կնոջ հետ ունեցած խոսակցությունն ու ելի զանգը զրնգաց գործավարի ուղղությամբ:

— Ցես գնում եմ Կենտկոմ,—հայտնեց գործավարին մեկնող Գիգաուրին,—ժամը ութին կունենանք վարչության նիստը... Խնդրեցեք ընկերներին, վոր չուշանան...

— Լսում եմ,—պատասխանեց Սմբերկին և գնացող Գիգաուրուն աչքերով ճանապարհ գցեց մինչև դուռը, ապա դառնալով

նստեց գրասեղանի յեզրին ու գլխանքով լի հայացք նետեց կուտակված գործերին և նույն վայրկյանին ինչ որ խնդրի համար սպասող գլխավոր հաշվապահին դառնալով՝ ասաց.—

— Մեր դիրեկտորը շատ է սիրում զինվորական հրամաններով խոսել. մի ավելորդ բառ բաց չի թողնում բերանից... Ամբողջ որերով թաղված է ինչ որ թղթերի ու նախագծերի կույտի մեջ...

— Ինչի՞ն են պետք ավելորդաբանությունները...—բացատրեց գլխավոր հաշվապահը, որն իր հերթին տառապում էր պրոֆեսիոնալ հիվանդությամբ: «Սոսկալի կերպով ատում էր պարապությունն ու ավելորդաբանությունները»:—Այսպես ուրեմն,—շարունակեց նա,—Գրիգոլը հին չեկիստներից է և բավական ժամանակ վարժված զինվորական կարգապահության...

— Ինչպե՞ս, Գրիգոլը մի՞թե չեկայումն ել եր աշխատել,—զարմացավ Ամբերկին:

— Հինգ տարի փոխնախագահ եր ու օպերատիվ բաժնի վարիչ...կարծեմ հիմա յել կոլեգիայի անդամ է...

Ամբերկին գլխավոր հաշվապահի ասածներից զարմացած մտածում եր.—«ինչպե՞ս, մի՞թե չեկիստն ել կարող է այնպիսի լավ ու բարի մարդ լինել, ինչպիսին է Գիգաուրին. մի՞թե չեկիստը կարող է ուրիշի դրության մեջ մտնել, վորպիսին հաճախ անում է Գիգաուրին. մի՞թե չեկիստը կարող է բարեսիրտ լինել, արդարադա՛տ»...

Իսկ գլխավոր հաշվապահը շարունակում եր.

— Քաղաքացիական պատերազմի ժամանակ Գրիգոլը Ռուսաստանում, ինչ վոր ֆրոնտի հրամանատար է յեղել. Բազվում բանակի քաղաքական կոմիսար...

— Այնպես վոր մեր դիրեկտորն արդեն իր անցյալով բոլորովին հանաք չի՞ անում...անցյալ գործունեյությամբ բավական ամուր է յեղել նրա մեջքը...

— Գրիգոլն այժմ ել պակաս գործիչ չի,—անկեղծորեն արտասանեց գլխավոր հաշվապահն ու իր շարժումների համեմատ հոնքերը խաղացրեց...

— Ցեվգենի, դրա մասին յերկու կարծիք չի՛ կարող լինել. յես միայն ասացի, թե չոր մարդ է և խիստ պունկտուալ...Գրիգոլը, վոր աշխատասեր է, դրա հետ մեկտեղ նաև չափազանց կուլտուրական անձնավորություն է, բարեսիրտ ու արդարադատ,



այս մասին վոչ մի կասկած չի կարող լինել... Գրիգոլն անպայման իսկական աշխատավոր ինտելիգենտ է...թեև չոր է...

— Չորությունն, իմ Ամբերկի, զինվորական մարդկանց բնորոշ հատկությունն է...

Ժամացույցի սլաքն արդեն կանգնել եր յերեքի վրա...

— Եհ, ամենքը գնացել են...ժամանակ է՝ մենք ել շարժվենք:

Գլխավոր հաշվապահն ու Ամբերկին հանդիստ զրուցելով դուրս յեկան փողոց և գլխիկոր մնացան պրոսպեկտի բազմության:

Հիմնարկություններից ու հաստատություններից խումբ-խումբ դուրս եյին գալիս ծառայողներն ու դրանցից մի քանիսը փայլուն պորտֆելներն ու գործերը ձեռքին՝ սպասում եյին ելեկտրոքարշին...

1006
28964

3

Հրաշալի ճաշարան է «Над Курой»-ը, կասի քեզ Թիֆլիսցի ամեն մի զարաչուխալի, և իրոք, ում ճաշակն ընտելացած է ասիական համադամ կերակուրներին, ում ականջը վարժված է դուդուկ-զուռնին ու քեֆ ուրախության, թող մտնի այդ ճաշարանը և ինչով ասես, վոր չի զվարճացնի և ուրախացնի նրան այդ ճաշարանի տերը՝ խորամանկ ու ճարպիկ միկիտանչին...

Խաշած հնդուհավ, կամ սովորական հավ—սածցրած ղոմիով*) ղոճին և հնդուհավն իր համեմներով յեփած, խորոված...Շահել վառիկներ...«ցոցխալ (թարմ, չմորթված) ձուկ» ու այլ ձկնեղեններ, թթուներ և...

Մի խոսքով, այն ամենն, ինչ վոր ասված է մի շատ ժողովրդականացած վրացական կուպլետում.

Յերեք բան եմ սիրում աշխարհումս—
«Գինին, դուդուկ ու աղջիկներ...
«Գինին խմում ենք, դուդուկով յերգում,
«Իսկ աղջիկներին մատաղ լինում» և այլն...

— Տղերք ջա՛ն, դե՛, մեկ-մեկ էլ լավում են խուպա բացականչություններ վարագույրներով պատած առանձնասենյակներից

*) Կորեկից պատրաստած վրացական հատուկ կաշա, վորով համեմում են և ուտում խաշած հնդուհավը կամ սովորական հավը:

152—2



Гос. Публ. библиотека

կամ դահլիճից. և փայլփլող բյուրեղյա բաժակները դատարկվում են Թամադի յուրաքանչյուր «կենացից» հետո...

Ինչ տխուր մարդ ուզես, կպատահես այնտեղ—կոմբինատոր, վատնիչ ու ամեն տեսակի կասկածելի փողավոր անձնավորություններ. միշտ տեղ ու պատիվ ունեն «Над Курой ճաշարանում. այս ճաշարանի պատի մեջ գրված մշտական անդամներ են նրանք...

Հաճախ սև գլխավորություններով օժտված մարդիկ սեղանի շուրջը բոլորած՝ իրար յետևից դատարկելով «Նապարեուլիով», «Մադերայով» լիքը շշերը՝ փորձում են աշխարհի բախտը...

Մի՞թե սրանից ավելի լավ բան կարող է լինել աշխարհիս յերեսին. նստած ես հարուստ ու գեղեցիկ սախական ճաշարանում, ախորժակով վայելում ես տապակած հնդուհավն ու խորովածներ, բյուրեղյա փայլփլող բաժակներով խմում ես Կախեթու կարմիր գինին՝ համեմած քաղցրախոս Թամադայի անուշ խոսքերի հետ. ու այդ բոլորին զուգընթաց յերբեմնակի սեղանից սեղան է անցնում Կախեթու հայտնի «Մրավալ ժամիեր» յերգը, և յերկու կամ յերեք մարդ վորպես թե քեֆի համար միայն պատրաստ, վորոճում են իրենց սև ու մութ ղավաղիր ծրագրերը:

— «Ցերանի հավատացյալներին»... բացականչում եյինք մենք և... «Над Курой» ճաշարանում լիքը բաժակների միջով...

— Թամա՛դ, վերցրո՛ւ, դատարկի՛ր... վերցրու քեզ մատաղ,—կարգադրում է առանձնասենյակի փարթամ սեղանի շուրջը բազմած Լևան Գիգաուրին պատառաքաղը խաղացնելով ձեռքին... Գոնե այստեղ թափենք մեր սրտի թույնն ու մաղձը և մեր դարդ ու ցավի արխաները հանձնենք Քուռ գետի պղտոր ալիքներին՝ տանելու հեռո՛ւ և հեռո՛ւ... վերցրե՛ք, բարձրացրե՛ք բաժակներդ, բարեկամներս, մինչև զենիթը բարձրացրեք, գեթ մի վայրկյան մոռացնել տվեք ինձ այս զզվելի կյանքը.... Թամա՛դ, Նոդա՛ր, Զալիկո՛, դե՛, բաժակներդ բա՛րձր...

Տղերք ջան, Լևանին չնեղացնենք... ըլենք մի յերգ.—համաձայնության նշան է տալիս Նոդարն ու Թամադն սկսում են կլկլոցով յերգել. մնացածները ձայնակցում են նրան.

«Լցրու բաժակը, խմե՛նք,
Եդ անո՛ւշ, անո՛ւշ գինին...
Գուցե այսուհետ լավ հասկանանք՝



Դեպի յետ պտույտն աշխարհքի»...

. . . . . . . . . . . . . . .

Ցնցվե՛նք, հուզվե՛նք վողջ մարմնով,
Գուցե աշխարհիս վերջը մարենք՝
Այս յեղջյուրե բաժակներում»...

— Տղերք ջան, հրաշալի յե, գեղեցիկ,—թախծալից հառաչում է Լևանը...—Վաժան անպայման հանճար է յեղել, տղերք, մարդարե... Վաժայի յուրաքանչյուր խո՛սքը, յուրաքանչյուր բառըն անգամ զգացմունքների մի ովկիանոս է, առանձնապես այս վոտանավորի մեջ Վաժան վերավոր մի առյուծ է՝ Աֆրիկայի խորքերից ճողոպրած, վորը ժամանակավորապես ապաստան գտավ լեռներում... Վաժան լեռան արծիվ է, Վրաստանի սիրտն ու հոգին... Վաժայի յուրաքանչյուր բառը, ամեն մի խոսքը հրդեհներ առաջացնող կայծ է... Վաժան իր ժամանակի Ռուսթավելին է և անզուգական ղարաչուխայլին... Վրացական ճաշասեղանների անմահ Թամադա... Ցավ, ճիշտ վոր, վորքան արժեքավոր են այս սքանչելի տողերը.—

«Գուցե աշխարհիս վերջը մարենք՝
«Այս յեղջյուրե բաժակներում...»

Տաղանդավոր է, տղերք, անզուգական... Վորքան միտք ու զգացմունքներ են թաղված այս յերկտողի մեջ... վորքան կրակ ու բոց՝ նույնիսկ ամեն մի բառի խորքում...

Լևանի այս գեղեցիկ խոսքերից ազդված՝ Նոդարի վողջ մարմնով սարսուռ է անցնում. նա նստած եր լուսամուտի մոտ դրված սեղանի ծայրին, վորտեղից պարզ յերևում եր Քուռ գետը և յերկար ժամանակ անթարթ աչքերով նայում եր հոսուն գետին՝ ընկղմած սեփական յերևակայությունների ովկիանում և արտամոռմոք ախ ու վախ եր քաշում...

— «Մարենք վերջն այս յեղջյուրե բաժակներում»—նորից կրկնում եր Լևանը... ե՛հ, միայն այդ խոսքերի հիշատակությունն անգամ խիստ թանգարժեք է մեզ համար... և իրոք, ինչ է մեր կյանքն այսօր, ուրիշ վոչինչ, քան գինով և յեղջյուրե բաժակներով բոլոր զգացումներիդ բթացում, ինքնամոռացում... և քանի՛-քանի՛ վրացական հասարակական գործչի գործունեության ասպարեզն է պարփակված այդ նույն յեղջյուրե բաժակներում... վորքան շնորհք ու թանգարժեք տաղանդ է խորտակվո՛ւմ—կործում

այսօր գինու ովկիանում... Այո՛, խորտակվում ու կորչում է անհետ... Վաժան էլ հո յուրահատո՛ւկ, գերության մեջ աննման լոթի բանաստեղծ էր, վորը մեզ նման, աշխարհիս ցավն ու վիշտը գինու մեջ էր մեռցնում... և նույն գինու կրակով, կենդանություն տալիս—բոցավառում էր մեջ հեղեղի նման ժայթքող զգացումներին...

— Տղե՛րք, քանի վոր Վաժային մտաբերեցինք, սա յել խմենք նրա հիշատակի հոգեթասը,—թամադան բարձրացնում է բաժակն ու դատարկում...—Բարի հիշատակ, մեծ Վաժային.—արձագանքում են այս ու այն կողմից և բաժակները ագահաբար դատարկվում: Սեղանը նորից կենդանանում է, ուրախ յերգերն ու առանձնապես «Մրավալ ժամիերն» անցնում է սեղանից-սեղան....

Այդ պահին ճաշարան մտավ Աբեսալոմ Լոմջարին... Նա խիստ գունատված էր ու այլայլված... Նա գլուխը կախ իջավ դեպի նեղ միջանցքը տանող սանդուխքի աստիճաններով և հրավիրվածի նման յեկավ ու միացավ Լևանի սեղանին...

Աբեսալոմը յերկար ժամանակ նստած էր լուռ և բարկացկոտ հայացքով մերթ մեկին էր նայում, մերթ մյուսին... իր ձայն հանելը կարծես դիտմամբ ուշացնում էր... սեղանակիցները համր զարմանքով նայեցին իրար...

— Ի՛նչ նոր բան կասես, Աբեսալո՛մ.—լռությունն ընդհատեց Նոդարը:

— Վոչինչ...—բայղուշի նման արտասանեց Աբեսալոմն ու հոնքերը կիտեց...

— Ի՞նչ նորություն կա.—կարծես հրամայողական տոնով կրկնեց Լևան Գիգաուրին և աչքերը հառած նրան՝ բաժակում կիսատ մնացած գինին մի ակնթարթում դատարկեց... Ամենքն էլ ինչ վոր անսպասելի բան եյին նախազգում Աբեսալոմի այսօրինակ վարմունքից, սակայն վոչ մեկը պարզապես չէր կարողանում պատկերացնել, թե ի՞նչ կարող էր պատահած լինել...

— Ա՛յ մարդ, հո լեզուդ կապ չի՞ ընկել,—դիմեց Նոդարը...

— Կորա՛նք.—ցածր ձայնով արտասանեց Լոմջարը...

— Ի՞նչպես.—միանգամից բացականչեցին սեղանակիցները...

— Այնպես, ինչպես վոր սպասելի յեր...ճիշտ այնպես, ինչպես առաջուց յենթադրում եյի...



— Ասա վերջապես, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չես խոսում,—չեյին հանգստանում սեղանակիցները:

— Իսկ և իսկ այն յեղավ, ինչ վոր պետք է լիներ...Պետքաղվարչության ագենտները ձերբակալեցին Մելիքովին...

Սև քող իջավ բոլորի դեմքերին... Օդը ծանրացավ և շունչները պահած սեղանակիցները հեշտությամբ լսում եյին մեկ-մեկու սրտի բաբախումը...

— Ուրեմն կորանք.—ինթինթաց Թամադան...

— Զա՛նդ, սո՛ւս արա, ամեն բան կարգի կընկնի...—ցածրաձայն շշնջաց Գիգաուրին և նրա չեշտակի հայացքը նետվեց ճաշարանում ճաշող ուղիղ մի զինվորականի դեմքին...—Անպայման մի բան պետք է հնարենք... Նոդար, լուսամուտի կողքին միայնակ ճաշող զինվորականին մտաբերո՞ւմ ես... Ամենքն էլ յերեսները դարձրին դեպի ընդհանուր դահլիճն ու նայեցին զինվորականին:

— Ո՞վ պետք է լինի:

— Ծանոթ կլինի, յերկու ռոմբ ունի...—ասաց մեկը:

— Հա՛, բայց վզի յեն կարմիր նշաններին ի՞նչ ես ասում—կասկած հայտնեց մյուսը:

— Դա հո չեկիստ է, ա՛յ մարդ.—ավելացրեց յերրորդը, վախեցած:

— Կարմիր նշանները ձիավորներն էլ ունեն, սակայն սա ավելի շուտ չեկիստ պետք է լինի...

— Ի՞նչ կասեք, մի բան դուրս կգա՞.—հարցրեց Նոդարը:

— Ինչո՞ւ յես այդ հարցը տալիս. դեռ մարդու ով լինելը չենք պարզել,—բարկացավ Թամադը...

— Շինելին չե՞ք նայում, չեկիստ է էլի,—համոզված տոնով ասաց Նոդարը...

— Ցածր խոսեք, կարող են մեզ լսել...ի՞նչ կասեք. մի բան դուրս կգա՞...

— Փորձենք, տեսնենք...—վճռաբար պատասխանեց Նոդարը...

— Վոր անհաջող անցնի՞,—կասկած հայտնեց Թամադը,—էն ժամանակ հո բոլորովին կորանք:

— Ի՞նչ պետք է փորձենք,—ձայնը բարձրացրեց Աբեսալոմը,—ի՞նչ պետք է փորձենք, յերբ մեր ամեն մի փորձը պարտությամբ է վերջանում...

— Աբեսալոմ, թող էդ կանխորոշման հիմար սովորությունըդ...

— Իմ կանխորոշումները միշտ յեղել են ճիշտ,—նեղացած տոնով պատասխանեց Աբեսալոմը...

— Աբեսալո՛մ, ընդհանուր գործի կազմակերպման նախօրեին չի կարելի այդպիսի թունոտ լեզվով խոսել. քո հուսահատ խոսքերով մի տեսակ քայքայում ես մտցնում մեր շարքերում,—յեզրակացրեց Լևանը:

— Ելի ինչ հուսահատություն, Լևան, յերբ ճնճղուկների նման ընկած ենք վանդակում, յերբ մեր յուրաքանչյուր քայլից մահվան հոտ է փչում, բավական է մի ակամա սխալ և մենք բոլորս փիզիկապես վոչնչացած ենք... Ջուր յերազ է այսպիսի պայմաններում վորևէ լավ արդյունք սպասելը...

— Ուրեմն ի՞նչ, ձեռքներս ծալած նստե՞նք.—դառն հեգնանքով նկատեց Նոդարը:

— Յես այդ չեմ ասում, ընդհակառակը:

— Քո խոսքերից այդ է դուրս գալիս և...

— Ամեն դժվարությունից մարդ կարող է դուրս գալ, յեթե... Աբեսալոմ.—խուլ ցասումն իր մեջ անձայն խեղդեց Լևանը և ակամա սկսեց ափսեները տեղաշարժել...

— Ի՞նչ է, հո չե՞ս սպառնում, Լևան Գիգաուրի...

— Բավական է թույլ տաս նույնանման մի դեպք... վոտքերիս տակ կտրորեմ, կոչնչացնեմ...

— Հա՛, հա՛, հա՛, վոտներս էլ չես կարող ուտել, Լևա՛ն Գիգաուրի, ներողություն եմ խնդրում սեղանակիցներից, ա՛յ վոտներս.—լարախաղացի նման շարժեց իր վոտը Լոմջարը Լևանին ավելի կատաղեցնելու համար... Աբեսալոմը հարմար ժամանակ և մոմենտ էր վորոնում իր խմբի և մասնավորապես Գիգաուրու հետ հաշիվները մաքրելու, բայց... չեղավ, հարմար մոմենտ չգտավ...

— Աբեսալո՛մ, հավատա ինձ, վոր դու որհասական մրրիկի հետ ես խաղում...

— Լևան Գիգաուրի, զգո՛ւյշ, զգույշ.—հեգնանքով արտասանեց Աբեսալոմն ու շուռ յեկավ...

Զզայնությունից Լևանի շունչը կտրվում էր... Աչքերը խելագարի նման չռեց...

— Ի՞նչ պատահեց ձեզ, տղերք,—միջամտեց Թամարը,—ի՞նչ



է հիմարացնում ձեզ... Վաղուց մոռացության տված «վորսորդությունը». ձեր անտակտ վարմունքով նորի՞ց եք ուզում կենդանացնել... Մեր խմբի համար մի՞թե բավական չի Մելիքովի կալանավորումը. մի՞թե ուզում եք նորից նոր զոհեր լինեն այդ հիմար գործի համար... Մի՞թե մոռացել եք, վոր էդ չանրակոտները, ինչ վոր միջատի նման, առաջից և յետևից աչքեր ունեն:

Անհանդուրժելի յե, Թամար. Աբեսալոմի այսպիսի հուսահատությունը... սա արդեն ընդհանուր գործին դավաճանել և կռվի դաշտից վճռական մոմենտում փախուստ տալ է նշանակում:

— Լևա՛ն, յես վոչ մի տեղ չեմ փախչում, սակայն անկեղծորեն ասում եմ, վոր այսպիսի պայմաններում աշխատելն անկարելի յե... Շատ կասկածելի յե այսոր Մելիքովի այսպես անսպասելի «ընկնելը», բացի դրանից պետք է ճշմարիտ խոստովանենք, վոր մեր կուսակցությունը փաստորեն այլևս գոյություն չունի Վրաստանում... Հատ ու կենտ փշրանքները հաշվի առնելու բաներ չեն. մեր կուսակցությունն արդեն քայքայված, փտած լեշ է վրաց ժողովրդի աչքում. իսկ մենք լավ գիտենք, թե ինչպես են սովորաբար քթները բռնած անցնում հոտած լեշի կողքով... մեր կուսակցությունը մասսաների աչքում կորցրել է իր վողջ հեղինակությունը, այլևս չունենք լիդերներ, չունենք կազմակերպություն և յեթե վորևէ ձևով հիշվում ենք, գոյություն ունենք, այն էլ միայն և միայն արտասահմանյան էմիգրացիայի յերազավառ մտքի պուճախներում... մեր կուսակցությունը ժողովրդի համար մեռա՛վ, նա չկա այլևս, և վա՛յ նրան, ով յերազում է մեռելներին կենդանացնելու մասին...

—Молчать, սրիկա՛... իմացած յեղիր Աբեսալո՛մ, վոր քեզ համար ճակատագրական նշանակություն կարող են ունենալ քո վերջին քայլերը... վերջը չփոշմանես.—Լևանը փրփրակալած պռոշները թաշկինակով սրբեց և հանկարծակի սթափվելով՝ նայում է իր շուրջը՝ համոզվելու համար, թե վոչվոք չե՞ր նայում իրեն:

— Դարձյալ սպառնալիք...—հանգիստ արտասանեց ինքն իրեն Լոմջարը...—

— Բարի: Յես կարծում էի՝ նման վճռական րոպեյին միացած կգործեյինք, միասին կխորհրդակցեյինք, ստեղծված դրությունը կչափեյինք, կկշռեյինք, մի խոսքով ընդհանուր յեզրակա-

ցությամբ հրապարակ կգայինք...բայց քանի վոր սպառնում եք... լավ...

— «Դավաճանին գնդակը կուզի» այս լոզունգով ենք յերդվել մի ժամանակ...անշուշտ այս մեր յերդումը մոռացած չես լինի Լոմջար...

— «Լևո՛ն.—վեր թռավ տեղից Աբեսալոմը և այլայլված աչքերով խիստ հուզված դուրս ժայթքեց բերանից այն բոլորը, ինչ մինչ այդ զսպված պահում եր իր մեջ...—Յես դավաճան չեմ... սակայն սպառնալիքների համար, ներողություն կանես: Յես այստեղ, առայժմ սրանից ավելին չեմ կարող ասել. բայց կանխորեն զգուշացնում եմ, Լևոն Գիգուարի, զգուշացիր այսուհետ ավելորդ բամբասանքներից իմ մասին»...

Աբեսալոմն շտապ կերպով դուրս նետվեց ճաշարանից, մի բան, վոր աննկատելի չմնաց ճաշարանում գտնվածների համար...

— Լևոն, ինչո՞ւ վտանգեցիր մեզ.—տրտնջացին մյուսները:

— Վոչինչ... Աբեսալոմը վոչինչ չի համարձակվի անել... Նրան հաճախակի հարկավոր ե հարվածել...

Լևոնը ձեռքը տարավ գրպանը ճաշարանին հաշիվ տալու նպատակով...

Զինվորական մարդն այս պայմաններում հաշիվներ եր մաքրում...

— Վոչինչ չենք կարող հաջողեցնե՞լ.— բացականչեց Լևոնը ակնարկելով զինվորականին...

— Եդ դեպքում կամ պետք ե Մելիքովին հենց իրեն չանսատակ անենք կամ, յեթե բան դուրս չդուրս գա...Ամբա...

Լևոնը հիշեցնում ե սեղանակիցներին, թե ինչպես են վարվում նավաստիները նման դեպքերում, աչքը չհեռացնելով զինվորականից...

— Չի համաձայնվի...

— Կամ գուցե ենտեղ չի՞ աշխատում...

— Ուրիշ մարդ կունենա, գործը դրսից ու...ասում ե Լևոնը յերեք մատն իրար շփելով,—փողի բան չի՞:

— Յես վախենում եմ, տղերք. ուրիշ յելք փնտրենք,—ասում ե Թամարը:

— Ե՛հ, մուրացկաններ. դուք կռվի համար չե՞ք ստեղծված.—Լևոնը պատառաքաղով թխթխկացնելով սեղանը...—հա-



չիմն ստացեք,—դիմում ե աֆիցիանտին և մի կապոց դրամ ե հանում գրպանից...

Դուրս գնացող զինվորականը, վոր Նոդարի կարծիքով չեկիստ եր, հանկարծ նկատում ե անծալ չերվոնեցների կապոցը, կասկածի մեջ ե ընկնում, բայց...

— «Անհարմար ե»—անցնում ե զինվորականի մոտով և շարունակում ե իր ճամբան... սակայն նրա աչքերից յերբեք չեն հեռանում անծալ, նոր ոսլայած չերվոնեցները...

4.

Այնտեղ, ուր առաջ Թավադ-Մուխրանիներն արագավազ ձիաներին նստած վորս եյին անում, կառուցվում ե հսկայական տեքստիլ գործարանը:

Դիդուբեյի բուրավետ տափաստաններում, ուր առաջ կանաչում-ծաղկում եյին ամեն տեսակի խոտեր ու ծաղիկներ և վորոնց քնքուշ նազանքով փաղաքշում եր Քռի զովարար զեփյուռը, այժմ այդտեղ թափված—կուտակված ե ահագին քանակությամբ քար ու կիր, աղյուս ու ավազ, ամեն տեսակի շինարարական նյութեր, գործիքներ... Մի տեղ բանվորական ողակները քանդել են գետինը. մյուս տեղ՝ վորմնադիրները մի մեծ շենքի հիմքն են դցում...

Ահա այստեղ պետք ե կառուցվի գիգանտ ֆաբրիկան, վորն իր արտադրած մահուդեղեն ապրանքով ապահովելու յե ամբողջ Անդրկովկասի ազգաբնակչությունը...

Դարպասի դռնից ճռռոցով ներս են գալիս ավազով, քար ու խիճով բարձած սայլեր...գյուղի հոտաղներն ել գործ են գտել, իրենց վայրերին շատ մոտիկ...հեռվից լսվում են պայթյունի ու վորոտի ձայները, վորից սարսափած Դիդոմից վերադարձող ճամբորդները զարմացած հարցնում եյին իրար.

— Ի՞նչ ե կատարվում.

— Ժայռերն են պայթեցնում, ֆաբրիկայի համար հարկավոր քար են պատրաստում...

Շինարարությունը վաղուց ե սկսվել Դիդուբեյի հարթավայրում. որեցոր բարձրանում եյին նորանոր շենքեր...որեցոր փոխվում եր յեղած կացությունը... Ճիշտ ե, սկզբից և եթ նկատելի

յեր շինարարության մեջ թափթփվածությունն ու խնայողության բացակայությունը, թեև... յերբեմնի անտեր թողած դաշտի փոխարեն այսօր աչքդ են շլացնում արագորեն բարձրացող վիթխարի շենքերը՝ բանվորական կացարանների և ֆաբրիկայի...

Կեսօրից անցել եր...

Ֆաբրիկի դավիթում խումբ-խումբ հավաքված արհեստավորներն ու դեմնավոր բանվորները ձեռքերի շարժումներով տաքարյուն կերպով վիճաբանում եյին իրար հետ և հաճախակի հիշոցներ ու սպառնալիքներ ուղղում աշխատանքների ղեկավարի հասցեյին...

— Ես ի՞նչ տեսակի աշխատանք ե, ախպեր, շունը տիրոջը չի ճանաչում...—ասում ե, ըստ յերևույթին գուրիացի մի յերիտասարդ արհեստավոր ու, անմիջապես իր տեղը փոխում ե, դրանով գեթ իր ներսում կուտակված զայրույթը մեղմացնելու համար.—

— Այ ժողովուրդ, յեթե մենք ձայն չհանենք ու համրի նման մնանք, են ժամանակ կորած ենք, մեր մեծավորն ինչպես ուզի ենպես ել կվարվի մեզ հետ. ամենքիս ել վոչխարների նման կքշի եստեղից,—բացականչում ե բանվոր Տատե Նոնիկաշվիլին և իրար գլխի հավաքված բանվորներին մեկ-մեկ աչք ածում...—Ժողովուրդ, մի՞թե կարելի յե եսպես ձեռք առնել մարդկանց. բջիջը վորոշում ե, «սամեչչանիան» վորոշում և մի ինչ վոր անտեր մեծավոր ե՝ թե վոտներս ե, դեմ գնում...մինչ յե՞րբ պետք ե մնանք համր, համբերենք ես ծանր վիճակը...

— Ընկերնե՛ր, խակի մի՛ք անհանգստանա.—մեջ մտավ ավագ բանվոր Սուլախաուրին,—ձայներս ել կբարձրացնենք և ամեն տեսակի սրիկաների ձեռներն ու վոտներն ել շղթաներ կկապկպենք... Ժողովրդական հարստության վատնումն ո՞վ ե կարողացել մարսել, վոր ինժեներ Մելիքովը կարողանա մարսել ու ազատվել իշխանության հետապնդումից...

— Հապա, մի սրան նայեք.—ձեռքը մեկնում ե դեպի այն կողմը, ուր արտասահմանից ներմուծված դիզելը բաց յերկնքի տակ ընկած ե ժանգոտած վիճակում...բա սա վնասարարություն չի՞...ասացեք խնդրեմ, վո՞ր մասնագետի սիրտը կհանդուրժի նման բան, մասնագետ, վորը լավ ե հասկանում ու ըմբռնում մեքենաների նշանակությունն ու դերը շինարարության գործում. վո՞ր մասնագետը հանգիստ խղճով ու անտարբեր կանցնի արևի ու անձրևի տակ անտեր ընկած մեքենայի մոտով, վորն ահագին տանջանքներով բերվում ե հեռավոր յերկրներից...

— Դու եդ ես զարմանում, ընկ. Սուլախաուրի, բա են չե՞ս ասում, թե պատճառն ինչ եր՝ մեքենաներ գնելու հիմնապատր մեջտեղից ճաքեց և մեր այսքան ժամանակվա աշխատանքը ջուրն ընկավ.—բացականչեց բանվորներից մեկը...

— Սա յել նոր բան, սրտնեղությամբ բացականչեցին բանվորները...

— Ինժեներ Մելիքովը զավխոզի հետ միասին կալեխտիվի աղյուսները, վոր բրակ ե արել, պատճառաբանելով, թե կալեխտիվի աղյուսները «մանր են» և շինարարության համար անպետք, սա յել ե՞ ճիշտ, ժողովուրդ...

— Դրա փոխարեն հո կարողացան չարչի Կասպարովի աղյուրխանան հարստացնել...

— Ի՞նչպես.—հարցեր տեղացին այս ու այն կողմից:

— Վո՞նց թե, ինչպես. չե՞ վոր եստեղ դարսած աղյուսները բոլորն ել Կասպարովի աղյուսի գործարանից են բերված...մինչդեռ աղյուս պատրաստողների կալեխտիվն յուրաքանչյուր որ աչքով ու մետրով ե չափում իր աղյուսները և ուղղակի զարմանում ե, թե մի՞թե իրոք մանր աղյուսներ են դրանք. բայց...ո՞վ ե հարցնողը, ո՞ւր ե այն մարդը, վոր այս բոլորը ստուգի և ճշմարտությունը վեր հանի...

Այդ ժամանակ բանվորներին մոտենում ե ֆաբրիկի տնտեսական բաժնի վարիչ Բարնաբ Բարբաքաձեն, վորը տեսնելով իրար գլխի հավաքված բանվորներին՝ գոռում ե.

— Ի՞նչ եք խմբվել, ի՞նչ խաբար ե.

— Բանը նրանումն ե, ընկ. Բարնաբ, վոր մեր արտադրական խորհրդակցության վորոշումները չեն կիրառվում կյանքի մեջ, եդ մեքենաները իզուր փչանում են արևի ու անձրևի տակ. անտեր թափված փայտեղեն շինանյութերն ել կամ կորչում են, կամ բանեցնում են վառելիքի տեղ: Գետին փորելու, հողային աշխատանքները և ավազի ու խիճ բերելու գործը ձգել եք մասնավորի ձեռքը և արտելի բանվորներին ցրել դես ու դեն. մի՞թե այս բոլորի մասին կարելի յե լռել, մի՞թե վոչ վոք հոգս չպիտի տանի և թույլ

ա, որ այս անտանելի դրությունն այսպես յերկար շարունակվի. մի՞թե պիտի սպասենք այնքան ժամանակ, մինչև որ կենտրոնից մարդ գա և մեր կույրերի մատնանշի՝ «ո՞ւր եյիք, ինչո՞ւ եյիք քնած»...—վերջացրեց իր խոսքը Սուլակաուրին և մի հայացք ձգեց բանվորներին—հո ճի՞շտ եմ ասում ես բոլորը:

— Դա մասամբ ճիշտ է, ընկ. Գեորգի,—իմերեթցու վոճով պատասխանեց Բարբաքաձեն,—սակայն չե՞ վոր ունենք վարչություն, աշխատանքների ղեկավար և ով գիտե ելի վորքան պաշտոնատար մարդ, վորոնք կառավարությունից լիազորված են հատուկ մանդատներով, յեթե մենք միջամտենք ու ցուցմունքներ տանք՝ վախենում եմ հանկարծ «կոտրած գդալ» անվանեն մեզ և գործն ավելի փչացնենք... Ֆաբրիկան անշուշտ իր պակասություններն ունի, ինչ վոր շատ լավ հայտնի յե վարչությանը, սակայն ով չունի պակասություն... Մենք հո ամերիկացիներ չենք, վոր առանց պակասությունների ու առանց խոչընդոտների շենքեր կառուցենք...

Յերանի, Ամերիկան ի՞նչ նվիրական յերկիր է, վոր գովում ես եդքան...—խոսքն ընդհատեց մեկը...—Ուրեմն քո կարծիքով Ամերիկայում սոցիալիզմն արդեն իրականացա՞ծ է, ի՞նչ է...

— Յեթե սոցիալիզմ չկա, համենայն դեպս, կառուցումներ անելը մեզնից լավ գիտեն, իսկ փող ու հարստություն վորքան ուզես կգտնես այնտեղ...

— Այ քեզ բան, դեռ սա կոչվում է կուսակցական. շարունակում եր իր կծու հեգնանքներով անընդհատ անհանգիստ անել Բարնաբ Բարբաքաձեյին բանվորներից մեկը...սակայն ի՞նչ կարող եր անել...

— Այսպես թե այնպես, մենք, վոր գլխավորն է շարունակ կառուցում ենք և յեթե այդ կառուցումների ընթացքում մեջեմեջ լինում են մանր պակասություններ՝ ուրիշ կերպ ել չեր կարող լինել...

— Ի՞նչ ես ասում, Բարնաբ. մի՞թե դիզելի անճրևի տակ անտեր թողնելն ու հիմքի պատի ճեղքումն աննշան պակասություն է կամ ինչպես դու յես ասում մանր բան է...Հապա, ել ի՞նչ գլխավոր աշխատանք, յերբ մեքենաներ դնելու հիմքապատն այնպես է ճեղքվում, վոր ստիպված ես նորից կառուցել, նորից հիմքը շարել. առանց քաշվելու կարելի յե ասել, վոր սա ուղղակի դիտա-



վորյալ կերպով արված բան է...այս նշանակում է, վոր կառքը վազելիս լինի իսկ ճամբորդներն ուզենան կառքը կանգնեցնել՝ նրա անիվների արանքները փայտեր խցկելով... Ո՞ւր է արտադրական պլանը, վո՞րտեղ են բանվորական տները, վորոնք կառավարության վորոշման համաձայն ֆաբրիկան կառուցելուց առաջ պետք է ավարտված լինեյին. ո՞ւր են, ո՞ւր... Մի՞թե, քնձրոտի մեկն էնպես սարկացրեց բոլորիդ, վոր...

— Սուլակաուրի՛, կարծում եմ՝ տեղին չի բոլորովին այդ ձևի պրովոկացիոն յելույթներ ունենալ. հը՞, ի՞նչ ես կարծում. մարդկանց հավաքել ես շուրջդ և կազմալուծող աշխատանքներ ես տանում նրանց մեջ. ինչե՞ր ասես, վոր դուրս չես տալիս...

— Դուրս եմ տալիս, հա՞...բարի, այ ժողովուրդ, լսեցեք. ուրեմն Բարբաքաձեյի կարծիքով, յես այստեղ հիմարություններ եմ դուրս տալիս...լա՛վ...շա՛տ լավ... Սուլակաուրին բարկությունից վառվում եր, սակայն աշխատում եր զսպել իրեն՝ չափից չանցնելու համար:

— Դուրս ես տալիս, այո՛, դուրս ես տալիս.—նորից պնդեց Բարբաքաձեն—կուսակցությունն ու իշխանությունը գյուղատնտեսական բանվորների առաջ հազար ու մի լուրջ հարց է դնում. հավատում է իր նշանակած «խազյայստվեննիկներին». իսկ դու հրապարակ ես յեկել և կոկորդովդ մին գոռում ես՝—ոչնեցե՛ք, կործանվում ենք...

— Կուսակցությո՞ւն.... Դո՛ւ, Բարնաբ Բարբաքաձե, դո՞ւ պետք է լինես կուսակցության անունից խոսողը, դո՞ւ...վաղո՞ւց է ինչ խցկվել ես կուսակցության մեջ...բայց սպասի՛ր...քեզ համար ել կգտնեն ժամանակ...ծերացար, 50 տարեկան դարձար և կուսակցությունը նո՞ր միտդ ընկավ...կուսակցությունը հիմա պետք յեկավ, յերբ զավխոզությունը ձեռքդ գցեցի՞ր... Վո՞րտեղ եյիր առաջ՝ մտրակների ու բանտ-աքսորների շրջանում:

— Յերևի են ժամանակ վորևէ տեղ ստրաժնիկ եր.—բացականչեց բանվորներից մեկը...

Բարբաքաձեն կարմրատակեց...նշանը ճիշտ կետին դիպվածի պես՝ այլայլվեց, հուզվեց, սակայն սեփական ինքնատիրությունը խեղդելով իր մեջ՝ ուշադրությունը կենտրոնացրեց գրասենյակի սանդուխքներով բարձրացող յերկու անծանոթների վրա...

Յերկու անծանոթները պլաշչները գցած, դանդաղ քայլերով

բարձրանում էյին ժամանակավորապես կառուցած հասարակ փայտե սանդուխքով, նրանց կոշիկների վոտնաձայնը պարզ լսելի յեր Մարնարին...

Յերբ անծանոթներից մեկը բարձրանալով սանդուխքը՝ հրջվեց դեպի գրասենյակը, նա մի րոպե կանգ առավ, նայեց ցած՝ դեպի բակը, հենց այդ վայրկյանին քամին բարձրացրեց նրա պլաշչի մի ծայրը, վորի տակից Բարբաքաձեյի աչքին ընկավ անծանոթի կողքից կապած նագան ատրճանակը...

Բարբաքաձեն ցնցվեց...բանվորները լռեցին և իրենց ուշադրությունը կենտրոնացրին սանդուխքներից շտապ կերպով իջնող ցրիչի վրա, վորը մի ակնարկ ձգելով բանվորների վրա և նկատելով Բարբաքաձեյին՝ անմիջապես դիմեց դեպի նա:

— Աշխատանքների ղեկավարը խնդրում է ձեզ, իր գրասենյակը,—հայտնեց Բարբաքաձեյին ցրիչն ու շտապ յետ դարձավ նորից դեպի գրասենյակը...

— Գրիշան ուշանում է— ընդհատեց լռությունը Լուսարան և նայեց Լևոնին, տեսնելով նրա վատ տրամադրությունը, Լուսարայի սրտին դիպավ...

— Լևոն, ինչո՞ւ յես տխրել։

Զինվորականն աննկատելի շուռ յեկավ զրույց անող հարևանների կողմը և իբր թե ի միջի այլոց գաղտնի սկսեց հետևել նրանց խոսակցությանը...

— Տխո՞ւր. ամենևին, ինչո՞ւ պետք է տխուր լինեմ.—ասաց Լևոնը...

Զինվորականը կասկածոտ հայացք ձգեց Լևոնի վրա և դարձ-

յալ մտածմունքների մեջ խորասուզվեց... կարծես ծանոթ ձայն պետք է լինի...

— Լևան, ներկայացումը ի՞նչպես ես հավանում.— դիմումը հանգիստ չէր տալիս Լուարան նկատելով նրա տխրությունն ու միանգամից տրամադրության փոխվելը...

— Լավ է,— կարճ կտրեց Լևանն ու նեղացած աչքերով զինվորականին նայեց...

Աչքերն իրար հանդիպեցին...

Զինվորականը շուռ յեկավ և գլուխը կախ նորից տարվեց մտածմունքներով...

— Մի տեղ տեսել եմ... սակայն այս չուխա-արխալուխը՞.

Դարձյալ մարեցին լույսը և ներկա յեղողների ուշադրությունը նորից կենտրոնացավ բեմի վրա:

Լևանը պարուրվեց մշուշում... Զնայելով նայում եր բեմին, սակայն համարյա բան չէր նկատում, ամեն ինչ խառնվում եր նրա ուղեղում...

— Ինչ հարմարավոր ժամանակ է.— մտածում եր Լևանը— բայց, վոր չեմ ճանաչում, սա վոր չեկիստ է յեղել, դա փաստ է, սակայն... ի՞նչպես մոտենամ... յեկ, անտրակտի ժամանակ առանձին կտանեմ և ամեն ինչ կհայտնեմ... վոր չհամաձայնի՝ ինձ էլ խորտակե՞մ. ո՛չ, Մելիքով, Մելիքով...ինչ վատ ժամանակ կորստի մատնեցիր մեզ...

«Յեթե հաջողեցնեմ մի նամակ գոնե ներս ուղարկել, ջհանդամը... սակայն չեկայում յերկնքից չես կարող նամակ գցել ու ենպես... չէ՛, արի պարզապես հայտնեմ ամեն բան, գուցե կարողանամ... և... ով է իմանում, հաջողություն էլ ունենամ...

Լևանն այնպես տարվեց մտածմունքներով, վոր բոլորովին մոռացավ թե թատրոնումն է և թևերը քշած բռունցքով այնպես ուժգնորեն զարկեց օթյակի հենարանին, վոր բոլոր հարևաններն ակամա նայեցին նրան...

Լևանն ուշքի յեկավ և կրքոտ հայացք նետեց Լուարային՝ նրա կարմիր դեղձանման շրթունքներին... Լուարայի կրակոտ աչքերը ժպտում եյին...

Իսկ ծիծաղն առաջացնում եր Կարլ Թոմասի և հյուր յեկած յերեխաների միամիտ զրույցը...

— Հիմար.



— Հիմար,— յեվրոպական «քաղաքակրթությամբ» կրկնում եյին յերեխաները բեմի վրա և ծիծաղաշարժ ռևերանսներով, յետ-յետ նահանջում... Կարլ Թոմասին հրաժեշտ տալիս...

«Հիմար» ածականը բիզի նման խրվում եր Լևանի ականջը և թվում եր նրան, թե այդ բառն արտասանված եր հենց իր արարքը վորակելու համար:

«Լևան Գիգաուրի, լսո՞ւմ ես, ասում են հիմար».— հարցրեց ինքն իրեն Լևանը... Լևանը խուսափում եր այս բառից և կարծես միջոցներ եր փնտրում այս դրությունից մի կերպ դուրս պրծնելու, սակայն...

«Խոստումդ, Լևան Գիգաուրի, խոստումդ»,— կարծես ինչ վոր անհայտ ձայներ կանչում եյին նրան... ծանոթ, հարազատ ձայներ...

«Այնքան խոսք և յերդում՝ հայրենիքը փրկելու համար»:

Այս ծանոթ ձայները դադար չեն տալիս նրան...

«Հիմար»,—բեմի վրա նորից վորոշակի լսվեց յերեխայի թավշյա փափուկ ձայնը և Գիգաուրին շփոթմունքից կծկվեց՝ կարծես կոշմարային յերազներում զալարվելիս լիներ:

— Տեսնենք, կաշխատենք և...

Ահա, Գրիգոլն էլ մտավ օթյակ...

Բեմի վրա այժմ չարլատան եյին պարում...

Լևանը կենդանացավ, նորից այս աշխարհը վերադարձավ և սուր ու անկշտում աչքերով ուշադրությամբ սկսեց հետևել մերկ արգիլաններին...

Մինիստր—Կիլմանսի կարիերան և Լևան Գիգաուրին...

Գերմանիան և Վրաստանը...

— Միթե.

Դե՛, ասացեք խնդրեմ, այս կյանքից ավելի լավ բան կա՞ աշխարհում...

«Հեղափոխությո՞ւն».

Յես քեզ կտանեմ և...

Լևանը նորից մտածմունքների ծովն ընկավ...

Շամպանիան և մինիստր Կիլմանսի անհոգ կյանքը շլացրեց Լևան Գիգաուրուն և վոգևորված ու ինքնաբավական քիչ եր մնում բացականչեր.

«Կորչի ամեն տեսակի փլուզումն ու շարժումները, թող կոր-

չի՛ հեղափոխությունը»: Բայց...

Ահա, մինիստր Կիլմանի վրա յել կրակեցին...

Կիլմանն սպանվեց:

Մինիստրի գլխին էլ սառավ...

Մեռավ անհոգ կյանքն էլ...

Ցավ...

Վրիժառության հրով բորբոքվեց Լևան Գիգաուրին...

Մինիստր Կիլմանի արյունը յեռաց յերազկոտ վրացի Կիլմանի մեջ և... «Ի՞նչ փոքրոգություն է», փնթփնթաց ինքն իրեն Լևանը...

Դահլիճն արդեն լուսավորել եյին:

Ո՛, ընկեր Միշային բարևներս, դիմեց Գրիգոլը գինվորականին և քաղաքավարությամբ սեղմեց նրա ձեռքը:

— Ծանոթացե՛ք... Ամուսինս.. Եղբայրս... Մեր լավ բարեկամ և ընկեր Միշա Երգեմլիձե...

Լևանը զարմացավ... սառը քրտինք պատեց նրա ճակատին...

— Ուրիշ, Միշա, Փաբրիկայում հեղափոխական ոպերացիաներն ինչպես անցկացրիր, հո չհոգնեցի՞ր.—ցածր, սակայն համարյա ամենքին լսելի ձայնով դիմեց Գրիգոլը Երգեմլիձեյին և աթոռ հարմարեցնելով՝ դրեց մեջտեղը:

— Սաստիկ հոգնեցի, Գրիշա, սաստիկ. ամբողջ մի շաբաթ է որ ու գիշեր դադար չունենք... վոր գիտենաս ինչ քոքած ու ույնքաղն է յեղել եդ Մելիքովը,—ցածրաձայն ասաց Երգեմլիձեն. Լևանն ականջները սրեց և ամբողջ մարմնով լսողության դարձավ.— նրա պես քոքած ու ճարպիկ մարդու յես դեռ չեմ պատահել...

— Եդ վոչի՛նչ... խելք կտավորի,—ժպտալով պատասխանեց Գրիգոլը և Երգեմլիձեյի ուսերին թեթև խփեց..—պինդ սեղմեցի՞ք.

— Ինչ խոսք... Այժմ մեր ձեռքումն է... շշուկով ասաց Երգեմլիձեն Գրիգոլի ականջին և Լևանի կողմը նայեց...

Լևանի անչափ հետաքրքրությունն ու լսողության դառնալը Երգեմլիձեյի մեջ կասկած հարուցեց, ուստի նրանք խոսակցությունը փոխոցի վերածեցին և վերջում տեքստիլ Փաբրիկայի շուրջը յեղած և Մելիքովի մասին զրույցը բոլորովին ընդհատեցին...



— Լևան, ներկայացումը դո՞ւր է գալիս.— հարցրեց Գրիգոլը կրտսեր յեղբոր՝ Լևանին ու կարծես նույնանման հարցի պատասխանը սպասելով նաև Լուարայից:

— Վոչինչ, հաջող է...— Յերրորդ գործողությունն ուժեղ է... խոսքը ծռեց Լևանը:

— Հիանալի յե,— մեջ մտավ Լուարան:

Այս պատասխաններից Գրիգոլը վերջնական ու կարևոր յեզրակացություն հանեց:

Ներկայացումն ավարտվեց:

Անվերջ ծափահարությունների ու ովացիաների տարափի տակ դատարկվեց վողջ դահլիճը:

Գրիգոլ Գիգաուրին և Երգեմլիձեն խիստ քննադատության յենթարկեցին պիեսի իդեոլոգիական կողմը, Կարլ Թոմասի վողբողությունն ու ինքնասպանության փաստը... Քննադատում և անարգանքի սյունին եյին գամում պայքարող կոմունիստի այդրինակ արարմունքը... զարմանում եյին, վոր կոմունիստն իննասպանությամբ վերջ տվեց իր կյանքին և այլն...

Կեղծ է և ամեն տեսակետից դատապարտելի... պնդում եյին յերկուսն էլ: Թատրոնը շտապ դատարկվեց:

— Ընկ. Միշա, անցեք մեր կողմը, խնդրեց Գրիգոլը Երգեմլիձեյին, յերբ նրանք դուրս եյին գալիս Թատրոնից:

— Կաշխատեմ,— խիստ քաղաքավարությամբ հրաժեշտ տվեց Երգեմլիձեն Գիգաուրիներին և շտապ կերպով քայլերն ուղղեց դեպի տուն:

Լևանի հայացքը յերկար ժամանակ հետևում էր դեպի տուն գնացող Երգեմլիձեյին...

Հով էր:

Արճճագույն թուխ ամպերը սպառնում եյին արևմուտքից՝ դեպի արևելք...

Գիգաուրիները լուռ նստեցին Թատրոնի առաջ կանգնած կառքերից մեկը և մեկնեցին դեպի տուն:

Գրիգոլն ինչ վոր մտածմունքի մեջ էր:

Լևանը բացեց արծաթյա ծխախոտատուփը և մի գլանակ էլ յեղբորն առաջարկեց:

Գրիգոլն անձայն մի գլանակ վերցրեց, դրեց բերանը, վառեց և ծուխը քուլա-քուլա բարձրացավ ելեկտրոլույսի տակ:

— Տա՛կ-տո՛ւկ, տա՛կ-տո՛ւկ.

Դատարկ տարածության մեջ լսվում էր վազող ձիերի ոտների ռիթմիկ դոփյունը և ռետինե ուռցրած անիվներով կառքն արագորեն սլանում էր Նյուքիձեյի զառիվայրով:

9

Կարպովը նշանակված ժամանակին չեկավ պաշտոնատեղ—տեքստիլ ֆաբրիկան... Սրտացավ հոգատարությամբ նայեց բոլոր աշխատանոցները:

Քննիչի աչքով դիտեց նաև ճաքած հիմքը և հաստատապես համոզվեց կատարված վնասարարության մեջ... Կարպովը հիմնովին ստուգեց բետոնի համար պատրաստած նյութերը, հիմքի խորությունն ու դնելու ուղղությունը...

— Դիտավորյալ է կառուցված, կանխորոշ նպատակով, եզրակացրեց նա:

Կարպովին արտակարգ սրտացավությամբ կպավ աշխատանքին. հիմնավորապես ուսումնասիրեց բոլոր աշխատանքները և միայն այժմ մեռած կետում գտնված աշխատանքներին կենդանություն տվեց և արագորեն վերափոխեց ամեն ինչ... Կարպովը ծանոթացավ կառուցողների կազմին, բջիջի անդամներին և ֆաբրիկի կոմիտեյի անդամներին, իր առանձնասենյակում ֆաբրիկայի ակտիվի խորհրդակցություն հրավիրեց, որոնց հետ երկարատև զրույց ունեցավ շինարարական խնդիրների շուրջը:

— Ցես բոլոր ընկերներից պահանջում եմ անկեղծություն ու սեր դեպի աշխատանքը, անհրաժեշտ կլինի ընկերական ամուր կապ պահպանել նաև ֆաբրիկի կառուցող վարչության հետ,— հայտարարեց Կարպովին ու նրա բարի դեմքը փայլեց ազնիվ ժպտով...

Կարպովը տարիքավոր մարդ էր, փորձված ինժեներ, անսահման փորձառությամբ և տեսական գիտությամբ առատորեն օժտված:

Մելիքովի արարմունքներից խռոված ակտիվը՝ պաղարյունորեն դիմավորեց նոր գլխավոր ինժեներ Կարպովի անկեղծ հայտարարությունը և, նրանց յուրաքանչյուրի գլխում անցավ հետևյալ միտքը.—



— Գործ, նախ գործ ցույց տուր, ա՛յ մասնագետ, և հետո ճառիր ընկերական ամուր կապի մասին:

Բանվորներն իրենց կարծիքներն արտահայտեցին ֆաբրիկի գործերի շուրջը:

— Ընկերնե՛ր,—ժողովի վերջում ասաց Կարպովը,—ես նոր մարդ եմ ձեզ համար, ընդամենը մի քանի օր է, ինչ եկել եմ, սակայն դժբախտաբար պետք է հայտնեմ, որ շատ անցանկալի ու խիստ պախարակելի երևույթներ տեսա—մի քանի բանվորների՝ գլխավորապես գյուղից նոր եկածների կյանքում... Ծանր է ինձ համար հրապարակ բերել այդ երևույթները, սակայն ընդհանուրի շահն ինկատի առնելով պարտավոր ենք: Այստեղ բանվորներ կան, որոնք սովորություն ունեն աշխատանքի գործիքները երբեմն գրպանելու և տանելու տուն. այս տգեղ երևույթին պետք է վերջ տալ...

Ակտիվը շարժվեց ու մեկ մեկու նայեցին...

— Միք զարմանա, ընկերնե՛ր, մենք. ինչպես ասի, դժբախտաբար փաստի հետ գործ ունենք, իսկ հո գիտեք՝ փաստերն անողոք են:

Առանձնասենյակում զարմանք պատեց բոլորին:

— Ընկերնե՛ր, ես իմ աչքով տեսա,— շարունակեց Կարպովը, թե ինչպես բանվորներից մեկն աշխատանքն ավարտելուց հետո իր շուրջը նայեց, ապա զգուշությամբ գողտուկ վերցրեց մի զույգ և քայլերն ուղղեց դեպի տուն, մի ուրիշ բանվոր գրպանեց ռանդան և սա չել առանց խղճահարվելու՝ շտապեց դեպի տուն:

— Մի՞թե,— փնթփնթացին մի քանիսը և իրար նայեցին:

— Դժբախտաբար սա փաստ է, ընկերներ, և դուք, ի հարկե, լավ եք հասկանում, թե որքան աններելի հանցանք է պետական գույքի հետ այսպիսի անփույթ վերաբերմունքը... Ցես հասկանում եմ սեփականատեր գյուղացու (որն այսօր բանվոր է դարձել) հոգեբանությունը, ձգտումը սեփական օջախի բարգավաճման համար, սակայն պետական գույքի և ֆաբրիկի գործիքների հաշվի՞ն... ուստի, նպատակ ունեմ, եթե ի հարկե, դուք էլ համաձայն կլինեք, արմատական փոփոխություն մտցնել ֆաբրիկի ծառայողների և պատասխանատուների կազմի մեջ, եղած պահակները պիտի փոխարինվեն կարգին և հավատարիմ բանվորներով, պետք է ընդհանուր հսկողություն նշանակել ֆաբրիկի բոլոր

տեսակի աշխատանքներում և արագությամբ առաջացնել—լավացնել գործը և դրանով վորոշ չափով նպաստել գեթ մասամբ արագացնելու, առանց այն էլ ըստ պլանի բավական դանդաղած գործը...

Զնայելով Կարպովի հայտարարության ակտիվը սառնասրտությամբ արձագանքեց, նամանավանդ գործիքների գողության խնդրին, այնուամենայնիվ համաձայնություն տվին՝ ամեն կերպ օգնելու նրան...

«Կեղծիքներ թույլ կտա»...— մտածում եր մեկը:

«Սա յել, Մելիքովի նման, մեծ-մեծ խոստումներ է անում»— ավելացրեց յերկրորդն իր սրտում...

«Կեղծիք թույլ կտա, են ժամանակ հերը կանիծենք» կրկնեց յերրորդը և հենց ժողովն էլ վերջացավ, բայց...

Բոլորովին անսպասելի, Կարպովի դեմ հանկարծ արշավանք սկսեց Բարնար Բարրաքաձեն:

— Ուրեմն, Կարպովի ասելով, դուրս է գալիս, վոր մենք ֆաբրիկայում գողեր էլ ենք ունեցե՞լ.

— Այո, դժբախտաբար, ունեցել ենք.— պնդեց Կարպովն անմիջապես կտրելով նրա խոսքը:

— Դա ստոր զրպարտություն է և ուրիշ վոչինչ, անտեղի զայրացավ Բարրաքաձեն, վորը մինչև այդ մի անկյունում նստած ծխում եր և վոչ մի մասնակցություն չեր ցույց տալիս ժողովի աշխատանքներին:

— Ես դրանցով չեմ հետաքրքրվում— կարճ կտրեց Կարպովը և նորից դիմեց ակտիվին.— Ես պահանջում եմ ձեզնից որինական աջակցություն, իմ կարծիքով, ժողովրդական գործը կկարողանամ գլուխ բերել միմիայն ձեր սերտ ընկերական աջակցությամբ, իսկ յեթե դուք Բարրաքաձենների նման չինծու և անսկզբունք պատվասիրության դրդացմունքներով մոտենալու լինեք ընդհանուր, հասարակական խնդիրներին, հավատացնում եմ ձեզ, վոր վոչ մի սպեղանի չենք կարողանա դնել այս ամեն կողմից խճճված գործին, սատանան էլ գլուխ չի հանի ես ընդհանուր քաոսից...

— Յեթե գողեր ենք ունեցել ֆաբրիկայում...

— Յի՛ց,— բարկացավ Սուլակաուրը Բարրաքաձեյի վրա,— դու դարձյալ քո եշն ես քշո՞ւմ...



Բարրաքաձեն գլխատվածի նման պապանձվեց, ասելու համար պատրաստ խոսքը կուլ տվեց և գլխավորյալ հազաց...

— Հատկապես խնդրում եմ, մի քանիսներիդ լավ հետևեք և հսկեք շաբաշից հետո տուն գնացող բանվորներին, այն ժամանակ ինքներդ կհամոզվեք ասածներիս ճշմարտությանը,— հայտարարեց Կարպովը և գլխարկը ծածկեց:

Յերկրորդ օրը Կարպովի ասածները մի շարք փաստերով հաստատվեցին: Մեծ դարբասի դռան առաջ հավաքվեց բավական քանակությամբ «գրպանով տարված գործիքներ»: Այս բոլորը տեսնելով Բարրաքաձեն, ծեծ կերած շան նման կուչ յեկավ՝ ամաչելով յերեկվա անտեղի յելույթից:

Շատերը խոստովանվեցին իրենց հանցանքը:

Շատերն էլ հանցանքը պատճառաբանում եյին տնտեսական սուղ դրությամբ, չքավորությամբ և այլն, սակայն...

Հանցանքը հո սրանով չէ՞ր թեթևանում:

Շնորհիվ Կարպովի արթուն և աչալուրջ աշխատանքների, շուտով տեքստիլ ֆաբրիկայի գործերը նորմալ հունի մեջ մտան...

## 10

Վարչության ժողովի յերկրորդ օրը, Պողոսովը վաղ առավոտյան յեկավ հիմնարկություն:

Ընդհանուր մուտքի կողմից գաղտագողի բացեց առանձնասենյակի դուռը, պատի կախարանից նյարդայնորեն կախեց գլխարկն ու վերարկուն և ներս մտավ:

Պողոսովն անմիջապես այցելեց բոլոր սենյակները և բոլոր ծառայողներին հաղորդեց Մելիքովին պաշտոնից հեռացնելու լուրը:

—Жалко!

— Ա՛յ թե ինչ մասնագետ կորցրինք,— մխիթարում եյին Պողոսովին մի քանի աշխատակիցներ ու ապշած լսում՝ նորանոր բանբասանքներ ու անտեղի դժգոհություններ:

— Դժբախտությունն էլ հենց այն է, աղեկտուր ասում եր Պողոսովը, միաժամանակ թաքցնելով իր փոխհարաբերությունը Մելիքովի հետ,— մենք լավագույն մասնագետներին քշում ենք մեր հիմնարկություններից և դրանով միաժամանակ սառցնում

գործից սրտակից աշխատակիցներին: Ցես Մելքովի գործով հետաքրքրվում եմ, վորպես լավագույն ինժեների, ուրիշ վոչինչ...

— Իհարկե, Ռուբեն Արությունովիչ, ի հարկե.— ընդգծեց մռայլված Վայնբերգն ու պատին հենվեց... Մեր մասնագետների արժեքը խորհրդային շուկայում տատանվող դարձավ և, որա պատճառը, անտարակույս, մի-յերկու չափին անցած վարիչներ են և վոչ թե իշխանությունը...

— Այո, մի-յերկու վարիչ և դիրեկտոր...— հաստատեց Վայնբերգի ասածները Պողոսովը— ա՛յ, թեկուզ այնպիսի դիրեկտորներ,— Պողոսովն այստեղ դիտմամբ ձայնը ցածրացրեց և կպցավ Վայնբերգի ականջին փսփսաց.

— Ինչպիսին մեր դիրեկտորն է... մինչև մեր Տիգրան Տիգրանովիչին չեկա չուղարկեց, չկարողացավ հանգստանալ, բայց...

— Ի՞նչպես, չեկայո՞ւմ.— ամբողջ մարմնով դողդողաց Վայնբերգը՝ չեկայի անունը լսելիս և ճակատի քրտինքը սրբեց— ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, Ռուբեն Արությունովիչ. ինչ սոսկալի յե...

— Ի՞նչ ասեմ... բանը վոր պատճառները գտնելուն ընկավ, չափազանց դյուրին է ամեն մի գործին վորևե պատճառ կպցնելը...

— Ո՛հ, աստված իմ, ինչ դժբախտություն է, ինչ սոսկալի, Ռուբեն Արությունովիչ: Ո՞վ է իմանում, ինչպիսի ծանր վիճակ է ապրում այժմ մեր հարգելի Տիգրան Տիգրանովիչի ամուսինը...

— Ի՞նչ կարող ես անել...

— Աստված իմ, առանց վորևե պատճառի, անմեղ տեղը... Չեկայո՞ւմ, ինչո՞ւ, ինչո՞ւ, ի՞նչ պատճառով,— ամենքին լսելի դարձնելու նպատակով ձայնը բարձրացրեց Վայնբերգը:

—Անպայման պատճառ կլիներ, թե չէ...առանց պատճառի ով ինչ կպահանջեր,—վերջի վերջո խոսակցության մեջ խառնվեց գործավար Ամբերկին և չեշտակի հայացք ձգեց դեպի հաշվապահը:

Պողոսովն ապշեց:

Նա Ամբերկից չէր սպասում նման կոպիտ ու անտեղի պատասխանների. Ամբերկուն համարում էր «յուրայիններ»-ից, ուստի.. վորպես խոսակցությունն ընդհատելու նշան՝ Պողոսովը սառը տո-



նով պահանջեց ինչ վոր թղթեր և նույն տոնով էլ դիմեց Ամբերկուն.

— Ընկեր Մշվիդորաձե, դուք յերևի կդժվարենաք տեսչության շրջաբերականը, վո՞ր գործին է կցված... Ցեթե կարելի յե գտեք և ինձ հանձնեք...

Աշխատակիցներն անցան իրենց գործին:

Վայնբերգը Պողոսովի հետ մտավ առանձնասենյակը և հարմար վայրկյան էր փնտրում, ընդհատված խոսակցությունը շարունակելու...

— Շրջաբերակա՞ն, նոր շենքերի վերաբերմա՞մբ, թե՞...

Հա՛, կարծեմ այդպիսին պետք է լինի...Համաձայնության նշան տվեց Ամբերկուն Պողոսովը:

— Այն շրջաբերականը գաղտնի գործերի մեջ է:

— Բերե՛ք,—հրամայեց Պողոսովը:

— Վո՞րտեղից, գաղտնի գրագրությունները ինձ մոտ չեն.

— Հապա ո՞ւմ ձեռքին պետք է լինեն գրագրությունները, յեթե գործավարի ձեռքին չեն...

— Ցես ինքս խնդրեցի ընկ. Գիգաուրուն, վոր գաղտնի գրագրությունները, մնացած կարևոր փաստաթղթերի հետ միասին, պահվեն անկիզելի արկղում:

Պողոսովը զայրացավ... Ջղայնացավ, սակայն գործավարը վոչ մի հանցանք չուներ...

Հարևան սենյակից լսվում էր ռեմինգտոնի միալար տկտկոցը և, գլխավոր հաշվապահի չաղլիկ մատներն էլ արագորեն խաղում էին հաշվեհամրիչի վրա...

Հիմնարկությունն ընկղմվեց խոր աշխատանքների մեջ:

Գործավարն էլ անցավ իր սովորական աշխատանքին, միայն Վայնբերգն էր կատվի նման կուչ յեկել առանձնասենյակում և, հենց հարմար մոմենտը ճանկելուն պես՝ նորից սկսեց իր զրույցն առանձնասենյակում մենակ մնացած Պողոսովի հետ:

— Ռուբեն Արությունովի՛չ, ի սեր աստծո, օգնեցե՛ք, և...

— Ի՞նչ է պատահել, Լեվ Բորիսովիչ, զարմացած հարցրեց Պողոսովն ի նկատի առնելով Վայնբերգի խնդրանքի տարորինակ ձևը:

— Ազնիվ խոսք, յերդվում եմ պատվովս, Ռուբեն Արությունովիչ, մարդկությունը վկա, վոր նախադեծ կազմելն ու վերջաց-

նելը յերեք օրում անհնարին է... Ողնեցեք վորևէ կերպ, Ռուբեն Արությունովիչ...

— Ի՞նչ նախագիծ.

— Ա՛յ, Փաբրիկայում, մեքենայացման:

— Խոսեցի՞ք դիրեկտորի հետ.

— Հետո՞ ինչ, Ռուբեն Արությունովիչ, յերեք օր ժամանակ ավեց և հետո էլ, անձամբ ինձ սպառնաց. յեթե մինչև 19-ը նախագիծը չհանձնես, այդ դեպքում այլ պայմաններում կհանդիպենք իրար. ճիշտ այսպես ասաց, յերդվում եմ պատվովս:

Պողոսովը նենգամտորեն ժպտաց:

— Ցերեկի ձեր տեղն արդեն նոր թեկնածու ունի, սակայն... Լեվ Բորիսովիչ,—այստեղ Պողոսովը խոսակցության տոնը փոխեց, աթոռը մոտեցրեց Վայներգին և այնպես ցածրաձայն համարյա ամբողջ մի ժամի չափ խորհրդակցում էր նրա հետ:

Վայներգը գլխի շարժումով վավերացնում էր Պողոսովի ասածները և հաճախակի ակնոցներն ուղղում իր արծվաքթին...

— Այսպես ուրեմն... մնացած ուժերով աշխատենք և հետևանքն էլ կտեսնենք: Մեր պարտքն է աջակցություն ցույց տալ բոլոր անկեղծ մասնագետներին... խորհրդային շինարարին և...

— Ի դեպ, Ռուբեն Արությունովիչ, յեթե Տիգրան Տիգրանովիչին ողնելու համար դրամական աջակցություն հարկավոր լինի, նրա հարգելի տիկինը թող չքաշվի...

— Շնորհակալ եմ, Լեվ Բորիսովիչ, քույրս խելոք կին է և դժվար թե նման մոմենտների համար կանխորոք տնտեսած չունենա: Այսպես ուրեմն, հույս ունենք...

Անպատճառ, անպատճառ, Ռուբեն Արությունովիչ.

Վայներգը գոհ և հնդուհավի նման փքված դուրս յեկավ Պողոսովի առանձնասենյակից և ակնոցները մաքրելով դիմեց դեպի տեխնիկական բաժանմունքը:

Հարևան սենյակում կրկին լսվում էր ռեմինգտոնի տկտկոցը և հաղթառավոր օրինակներով տպագրվում էր նորանոր հրահանգները:

Ժամը տասն էր արդեն, յերբ Գիգասուրին ներս մտավ:

— Ամբերկի, կոմբջիջի քարտուղարին խնդրեցեք.

Գիգասուրին բացեց անկիզելի արկղը և ինչ-վոր թղթեր հանեց. արձանագրության մատյանից մի քանի թերթ պոկեց և դրեց իր պայուսակի մեջ:



— Ընկ. Ամբերկի, հրամանը պատրա՞ստ է,—Կարպովին նշանակելու մասին.

— Պատրաստ է.

— Ռոճիկը չորսհարյուր ութսուն ռուբլի...

Գիգասուրին վառեց ծխախոտը. հեռախոսափողը վերցրեց, դրեց ականջին և կենտրոնից խնդրեց № 17—71, պետական կոնտրո՞լ է... Դաթիկո՛, գիտե՞ս ինչ... Ցերկու օրից հետո մի խոշոր գործի քննության առթիվ մի տեղ եմ ճանապարհվելու, խնդրում եմ ուղարկես քո գլխավոր վերահսկիչ Լաչաուրուն, վոր ինձ աջակցի... Հա՛, ինչպես ինձ հաղորդեցին, ասում են, վոր անկեղծ ու ժրաջան աշխատող է... Մի կերպ պետք է հաջողացնես... դե՛հ, շնորհակալ եմ... Ցտեսություն, ցտեսություն, ընկ. Դաթիկո:

— Ամբերկի՛, այս գրությունը հանձնեք ինժեներ Վայներգին և պատվիրեք, յեթե մինչև ամսիս քսանհինգը յեզրակացություն չտա, այն պարագայում հայտարարություն տա պաշտոնից ազատվելու մասին:

«Ինժեներ Բուրդովանիձեյին—յեզրակացության համար».—յերկրորդ թղթի վրա մակագրեց դիրեկտորը.—Սադի խելք ունի անպիտանը և հետո էլ սոսկալի ինքնասեր է...

Ներս մտավ բջիջի քարտուղարը...

— Ընկ. Հմայակին բարև, հը՞, ի՞նչպես ես, այ տղա.

— Առայժմ այսպես եմ,—Հմայակը բութ մատը ցցեց, ի նշան պատրաստ լինելուն...

— Հմայակ, ահա թե ինչ, յեղբայր, յես մոտ օրերս մեկնելու յեմ տեքստիլ Փաբրիկա հետախուզական աշխատանքներս ավարտելու նպատակով... Այստեղ, հո գիտես, ինչպիսի մթնոլորտ է ստեղծված...

— Լսում եմ.

— Ինձ յերևի կվիճակվի շարունակ Փաբրիկայում լինել՝ հետազոտությունս ավարտելու համար. կամ գուցե մի առ ժամանակ նույնիսկ ստիպված լինեմ ժամանակավորապես այնտեղ վերաբնակվելու, այստեղերը դու գիտես, լավ կնայես...

— Բարի, Պողոսովն ինչ-վոր փքվում է, ինչ է պատահել նրա հետ, չգիտեմ. հոտ է առել, յերևի...

— Փքվում է թող փքվի, մենք էլ պարտքի տակ չենք մնա, սակայն թողնենք, այդ հետո... Այժմ, ինչ վոր խոշոր խնդիր է և առաջնակարգ, նախ զբաղվենք նրանով: Գիտես, վոր Մելիքովն արդեն չեկայումն է...

— Գիտեմ.

— Գուցե այստեղից վորևե տեղեկություններ պահանջվեն, դու անմիջապես կերթաս ընկ. Լավրենտու մոտ, կամ Միշա Երզնկյանցին կտեսնես չեկայում, հետը կխորհրդակցես, ինչպես հարկն է. բացի այդ, այս հարցն առանց ուշացնելու քննության նյութ պիտի դարձնենք նաև բջիջի ժողովում... Շրջկոմն ու կենտկոմն իրազեկ են արդեն...այսպես...ուրեմն...Մինչև իմ գալը, այս հիմնարկությունը թողնում եմ քո հսկում...իմ ոգնականը հո տեսնո՞ւմ ես ինչ գործերով է տարված... Մի խոսքով, արթուն կլինես...Յեթե վորևե բանի կարիք զգաս, անխնիկլի՝ Կուպրաձեյին ոգնության կանչիր, նա կաջակցի...Բացի այն, վոր նա ակտիվ կոմյերիտական է, նաև ազնիվ քաղաքացի յէ...

Զնայելով գործավարն անկուսակցական է, սակայն հավատարիմ մարդ է...կարող ես ամեն տեսակ հանձնարարություններ տալ նրան...

— Կաշխատեմ յեղբայր Գրիշա, բայց...

— Ել ի՞նչ բայց.

— Շեֆարկյալ գյուղ պետք է գնանք, յեթե դու այստեղ լինեյիր...

— Հետո:

— Դու, վոր չես լինի...

— Վոչինչ, մի որով էք գնալու գյուղ, շուտով էլ կվերադառնաք, վոչինչ չի վնասվի:

— Վոչ էլ ավտո ունենք...—ամաչկոտ հայացք գցեց Գիգաուրուն:

Գիգաուրին, լուռ, մոտ քաշեց բլոկ-նոտը և գունավոր մատիտով արագ կերպով ինչ վոր բան գրեց:

— Քանի հոգի յեք:

— Քսան:

— Մի ավտոբուս բավական է...սակայն չուշացնեք, ավտոբուսը նույն որը վերադարձրեք.—

— Ինչ խոսք, ընկ. Գրիշա:



— Այսպես ուրեմն...ամեն բան կարգին է...Հուսով քեզ վրա յեմ և համոզված եմ, վոր այդ հույսերս իզուր չեն անցնի, հակառակ դեպքում՝ աչքիս չերևաս...

Գրիգոլը ժպտադեմ հրաժեշտ տվեց Հմայակ Մուրադովին և մտքերի մեջ խորասուզվեց:

— Զե՛, և լավ աշխատող է, և հրաշալի ընկեր...

Գիգաուրին նորից մտածմունքի մեջ ընկավ. բայց հանկարծ մի բան մտածեց,—ով է իմանում, գուցե մի բան պետք գա—ինքնիրեն մտածեց Գիգաուրին և նորից գլուխը թաղեց թղթերի մեջ:

Մոխրամանի վրա աբեթի նման այրվում էր չաղլիկ գլանակը...

## Ա

Մթնաշաղ է, մութն իջել էր արդեն լուսամուտներին:

Լուսամուտները փակվեցին:

Կանացի մի սուլեր լուսամուտների վարագույրներն ուղղեց:

Բազմաթիվ դորդերով ու կարպետներով զարդարված հյուրասենյակը տոնական կերպարանք եր առել:

Հրավառված եր հսկա ջահը:

Հյուրասենյակում ամբողջ դահլիճի յերկարությամբ սեղան է բացված, վորի վրա պահապան զինվորների նման խցաններ հանած Նախարեուլու գինու շշերը շարված՝ խորին ակնածությամբ սպասում են հյուրերին:

Սառա Մարկովնան արտասովոր յեռ ու զեռի մեջ է...

Ողնում է ծառային, ընթրիքի պատրաստություն է տեսնում.

Վայնբերգի բնակարանը սովոր չի հաճախակի «պիկնիկների», այդ է պատճառը, վոր Սառա Մարկովնան խիստ անհանգստության մեջ է. չի իմանում, թե վորտեղ հյուրերին ինչպես և ինչով հյուրասիրի...

Այս գիշերվա ընթրիքի համար վոչ մի տեղ չի յերևում իքնայեռը...

Գինու բաժակները փոխարինել են թեյի բաժակներին ու ֆինջաններին....

Զինար բույի՝ բարձրահասակ դաշնակահարուհին դաշնամուրի առաջ նստած անընդհատ նվագում է «Սամշոբլոն»...

«Սամշոբլոն»—հրեայի բնակարանում. սակայն...

Վայնբերգը վորտեղից վորտեղ լսել է, վոր Լևանն ու նրա համփոնները*) սատանի սիրահար են ազգային հիմնի...

Մի խոսքով, ամեն տեսակի վրացական ազգային մի բան խիստ հետաքրքրում է նրանց, վորովհետև վրացական է... և Վայնբերգի շողոքորթությունն ու խորամանկությունն ակամա յերևան է յեկել ե՛լ ավելի սիրաշահելու իր հյուրերին...դաշնակահարուհին խայտառակ կերպով աղավաղում է սքանչելի սիմֆոնիան...Լևան Գիգաուրին արմունկներին հենված՝ իր համփոնների հետ միասին մեծ ուշադրությամբ ականջ է դնում յերաժշտությանը և շարունակ խաղացնում խանչալի կոթը:

— Լև Բորիսովիչ,—հրավիրեք սեղանի մոտ ձեր հյուրերին... Արդեն ժամանակ է.—դիմում է Սառա Մարկովնան Վայնբերգին և աչք ածում սփռոցին, արդյոք, ամեն ինչ կարգի՞ն է, թե վոչ...

— Լևան Պետրովիչ, դուք էլ պարոնայք, խնդրեմ, համեցեք,—հրավիրում է հյուրերին և խիստ հոգատարությունից ու քաղաքավարության ցերեմոնիաներից գլխապտույտ յեղած՝ հոգնելով, սրբում է ճակատի քրտինքը...

— Լևան Պետրովիչ, դուք անպայման թամադի տեղը գրավեցեք, վորովհետև դուք շատ լավ գիտեք վրացիների սովորությունները ու քեֆի մանրամասնությունները... Համեցեք, խնդրեմ...

Վայնբերգը ծիծաղելի ռեվերանսներով հրավիրում էր հյուրերին նստելու, միաժամանակ նայելով սեղանին, վոր ամեն ինչ կարգին լինի:

Հա ամեն ինչ կարգին է...

Հյուրերը շրջապատում են սեղանն ու գլուխները վեհապանծ բռնած՝ սպասող վիճակի մեջ են...

— Բարեկամնե՛ր,—սկսում է թամադայության համար նկատի առնված Լևանը,բարձացրեք բաժակները և խմենք տիկին Սառա Մարկովնայի և հարգելի Լև Բորիսովիչի կենացը...

Լևանը մի ումպով կուլ է տալիս գինին ու խորհրդավոր կերպով ժպտում...

Այ թաղեմ յես դրա գլուխը, կարծում է, թե շատ եմ սիրում դրան, բայց...—փսփսում է Լևանը կողքին նստած Զալիկո Բակուրաձեյի ականջին և յերկուսն էլ ծիծաղից թուլանում են...

*) Քեֆ անող ընկերները



— Մի նայիր, նայիր, ճաղատ գլուխը կարծես մեռելի գանգ լինի.—ավելացնում է Զալիկոն իր կողմից և նորից լուռ ժպտում են իրար հետ...

— Յերկար կյանք մեր հարգելի տանտիկնոջն ու Լև Բորիսովիչին...

— Տես, տես, ինչպես է թաղի նման ընդլնդալով որորվում մեր հյուրնկալուհին.

— Ինչ ասեմ, ախպեր, չաղլիկն ու կարճլիկը դա չէ,—իսկ գիտես ով է մեր սեղանակիցների մեջ յերկար ու չինար բոյը... Լևանի հայացքը մեխվում է բարձրահասակ դաշնակահարուհու վրա:

— Դե՛, ընկերներ, մի լավ «Մրավալ ժամիեր»-ն յերգենք,—կարգադրում է Լևան Գիգաուրին և հյուրասենյակը դղրդում է ուժեղ յերգի հնչյուններով:

Սեղանակիցներն իրար հետ խոսում են ռուսերեն ու վրացերեն, յերբեմն էլ անեկդոտային, ծիծաղ առաջացնող անհաճո դարձվածքներով՝ ծիծաղ են շարժում լրիվ վրացի հյուրերի շրջանում...

Մերթ ընդ մերթ լսվում է յերգը, կենացներ և ընդհանուր ուրախ բացականչություններ: Հրավիրվածները դիտմամբ բարձրաձայն են յերգում, վորպեսզի խնջույքին տան արտասովոր փայլ ու շքեղություն...

— Դե՛հ, ընկերնե՛ր, կրկնեք բաժակները,—մերթ ընդ մերթ ձայն է տալիս թամադան և, բաժակները դատարկվում են իրար յետևից:

Զրնգում է դահլիճն ընդհանուր ժխորի մեջ, քեֆ անողները յերգում, խոսում, ուրախանում են...

— Մի բան նվագեք, մադեմուազել,—խանդաղատանքով դիմում է Լևանը դաշնակահարուհի Մարգոյին,—վորևէ քնքուշ և ախորժալուր յեղանակ...

Դաշնակահարուհին մոտենում է դաշնամուրին...

Վայնբերգն ըստ սովորականին շրթունքներն է լպստում և ակնոցներն ուղղում առանց այն էլ չիլ, սակայն այժմ գինուց ծռված աչքերին:

Ալկոհոլին անսովոր Վայնբերգը շատ շուտ է հարբում և նրա

մշտական մոխրագույն անարյուն դեմքը վառվում՝ կարմիր գույն է ստանում...

Գինին առատությամբ վեր ու վար է անում քեֆ անող սեղանակիցների յերակներում...

Մարգոն նվագում է Բախի մելոդիան...

— Բարեկամնե՛ր,—հարմար մոմենտ է վորսում Լևոնը:

Ամենքը լռում են:

— Մենք այստեղ քեֆ չենք անում և քեֆի տրամադրություն էլ չունենք... Լև Բորիսովիչի այսպիսի անձնվիրությունն ու հրաշալի կազմակերպած ընթրիքը մեծագույն հարգանք է դեպի մեզ, սակայն մեր ժողովվելը յեղել է բոլորովին այլ նպատակով:

— Ի՞նչ եք հրամայում Լևոն Պետրովիչ.—ծանրագին ու լրջորեն շնչեց Վայնբերգը, բայց...

Գինու ազդեցությունը տակավին չկարողացավ ծածկել.. իրար յետևից բռնկացրեց: Գաղտնագողի Բաքոսն իր ուժը ցույց տվեց: Հանքային ջրերին ու թեյին սովոր Վայնբերգը թեթևացել, ջրիկ եր դարձել. կանոնավոր մանդալ չեր կարողանում...

— Մելիքովն ընկավ—շարունակում է Լևոնը և աչքի տակով նայում է Մարգոյին՝ տեսնելու համար արդյոք ուշադի՞ր է դեպի իրեն.—նա նստած է չենկայում և կարծում եմ նրան ազատելը դըժվար է, յեթե վոչ անհնարին: Ենովիսի շանվորդու ձեռքին է նրա գործը, վոմն Երզեմլիձեյի, վոր հազիվ թե մեր վորևե աշխատանքը փրկի նրան... վոչ մի կողմից չես կարող մոտենալ... ար-տովա փորձ անհաջողությամբ վերջացավ, յերևի չստերին հայտնի յե, Լևոնը կրկին ցածրացրեց ձայնը,—այնպես վոր, մեր գլխավոր ծրագիրը Ֆաբրիկի վերաբերմամբ համարյա թե բոլորովին ջուրն ընկավ...

— Այո՛, այո՛, ջուրն ընկավ...քանդվեց...քանդ...վեց—զգուշությամբ արտասանեց Վայնբերգը և ալկոհոլից պապակած լեզուն կաթվածահարի նման յետ ու առաջ է տանում չորացած բերանում...

Մարգոն շարունակում է նվագել հերթական մելոդիան...

— Այնպես, վոր,—շարունակում է Լևոնը—մեր գլխավոր գիծը քանդվեց, Ֆաբրիկին վերաբերող մեր աշխատանքի ընդհանուր պլանն էլ խորտակվեց...մեքենաները խախուտ տեղում դնելու ծրագիրն էլ վիժեց և վոր գլխավորն է, մեր վողջ գործունեյության ընդհանուր ցանցը բոլորովին խճճվեց—քարուքանդ յեղավ. գործեր, վորոնք սերտորեն շաղկապված եյին Մելիքովի անձնավորության հետ. այս բոլորը կատարվում եր նրա ղեկավարությամբ: Մելիքովն եր գլխավորում բոլոր մնացորդ աշխատանքները... Մելիքովը համարվում եր աշխատանքների գլխավորը, թե մեր կողմից և թե իշխանության կողմից: Այսօր, այդ աշխատանքների գլխավորը, վորը պարզերես ու անաղմուկ կատարում եր միայն մեր կոմիտեյի դիրեկտիվները, չեզոքացած է և ձերբակալված: Մելիքովը կարողացավ դեռ մի տարով հետաձգել Ֆաբրիկի շինարարությունը, կարողացավ մեքենայացման հիմքը սխալ դնել, վորի պատճառով գործը կարող եր բավական ձգձգվել և բավական թանգ նստել Ֆաբրիկայի վրա...

Այս դեռ բավական չե...

Մենք, Մելիքովի հետ միասին համապատասխան ծրագիր ունեյինք մշակած...Այժմ, քանի վոր չկա այլևս Մելիքովն այնտեղ.. գործի գլուխ կանգնած, պարզ է, վոր մեր ծրագիրն էլ պետք է փոփոխության յենթարկվի...

Ամենքն էլ լուռ լսողություն դարձան... Վայնբերգը զոռում է իրեն և աչքերը պլշած անմտորեն լսում է բոլորի խոսածները:

Ամենից առաջ հարկավոր է մեքենականացման աշխատանքների նախագիծը մի առ ժամանակ հետաձգել—դանդաղեցնել... հիմքը հո խարխուլ ու սխալ է դրած, նախագծի հաստատումն էլ իր հերթին կդանդաղեցնի աշխատանքի տեմպը. այս գործը Լև Բորիսովիչը, կարծում եմ լավագույն կերպով կկիրականացնի...

— Ի հարկե, Լևոն Պետրովիչ, խոսք չկա...չէ՞ վոր...ինչքան ժամանակ է ձգձգում եմ ու ձգձգում...

— Այո՛, հարկավոր է մի քանի ամիս ևս ձգձգել և ապա...հո հասկանում եք, յերբ բուն նպատակին կհասնենք...Լև Բորիսովիչ, վարձահատուցման մասին, կարծում ենք այլևս խոսելու կարիք չենք զգա...

— Ինչին է պետք, Լևոն Պետրովիչ, Боже упоси! , եղ ի՞նչ եք հրամայում...

— Իսկ դրանից հետո արդեն...

Մարգոն վողեվորված նվագում է հիասքանչ մելոդիան և, հետն էլ զարմանում է, վոր սեղանակիցների ուշադրությունը

գրավված է մի այլ բանով, մինչդեռ թամաշան մի քանի վայրկյան առաջ ինքը ցանկացավ, որ նվագեր գեղեցիկ մեղեդին...

Սակայն...

Եվ ո՞վ ունի դրա համար ժամանակ:

Բոլոր սեղանակիցների ուշադրությունը բևեռած է անքանի Փաբրիկայի շուրջը և...

— Ֆաբրիկա պետի ուղարկենք մեր ակտիվ աշխատողներից մեկին...

— Ինչո՞ւ համար,—այս ու այն կողմից հարցեր տեղացին սեղանակիցների կողմից...

— Մեր մարդն իբրև սև բանվոր, շորերը փոխած, կեղծ դիմակի տակ կմտնի ֆաբրիկա և քանի որ մի ծրագիր քայքայվեց ու փչացավ...քանի որ Մելիքովի վճռապարտությունն յերևան յեկավ, մենք պետք է կարողանանք.—Լևոնը, խոսակցության մեջտեղին աչք չի հեռացնում Մարգոյից, որին աննկատելի չի մնում Սոսա Մարկովնայի, նամանավանդ հարբած Վայնբերգի կողմից:

— Միք անհանգստանա, Լևոն Պետրովիչ, Մարգոն, Սոսա Մարկովնայի քրոջ աղջիկն է և միանգամայն վստահելի անձնավորություն...

— Այո՛, մենք պետք է այժմևեթ կարողանանք յերկրորդ ծրագրի գործադրման պատրաստությունները տեսնել...

— Օրինակի համա՞ր.

— Դա առայժմ գաղտնի կմնա շատերի համար և, յերբ հարմար րոպեներ կգան մեր գործուղած մարդը կգործի կենտրոնի դիրեկտիվների համաձայն...

Ամենը մտածմունքի մեջ ընկան...

Ամենքն էլ խիստ հետաքրքրվեցին, գոնե ծրագրի հետ մակերեսորեն ծանոթանալու, սակայն...

Վոչվոք չհամարձակվեց հարց տալ...

— Կարծեմ ամենքիդ հասկանալի կլինի, բարեկամներս, վոր ֆաբրիկա յենք ուղարկում ակտիվ աշխատողներից մեկին...Նա այնտեղ կտեղավորվի, վորպես բանվոր...«նրանց» վստահությանը կարժանանա և, յեթե կարիք յեղավ, նույնիսկ դիմում կտա կուսակցության մեջ ընդունվելու... իսկ յեթե այնպես պատահի, վոր չընդունեն, այդ դեպքում էլ՝ վորևէ կասկածի տեղիք չտալու համար, գոնե պետք կգա և յերբ ժամանակը կգա, նա կգործի մեր



տված դիրեկտիվների համաձայն. իսկ այդ ձեռնարկված գործն ու սկսված աշխատանքը մեծ ուրախություն կպատճառի մեզ՝ բոլորիս...

— Հրաշալի յե, սքանչելի, ձայնակցում են ամեն կողմից:

Դաշնակահարուհի Մարգոն գալիս նստում է սեղանակիցների մոտ՝ առանց վորևէ մեկից այդ մասին հրավեր ստանալու, այդ հանգամանքը համարյա բոլոր սեղանակիցներից աննկատելի չե մնում. ամենքի ուրախության ու ցնծության մեջտեղին, վորովհետև բոլորն էլ ընդհանուր աղմուկի և ժխորի մեջ «լուրջ» հարցերով բավական ճարպկորեն լուծում եյին հրատապ խնդիրներ:

— Браво!, Браво мадмуазель! .. Այս ու այն կողմից ծափահարում են Մարգոյին, թեև բավական ուշացած...

— Բարեկամնե՛րս,—Լևոնը լցնում է բաժակներն ու Մարգոյին մոտեցնում իրեն—այս կենացը խմում եմ եկստրա...

— Յերեկի մեր...

— Այո՛, մեր լավագույն գեղարվեստագետ Մարգոյի կենացը. կեցցես, мадмуазел Մարգո, կենացդ...

— Բոլորդ. եկստրա...

— Եկստրա, եկստրա,—համաձայնություն են տալիս ամենքը և բաժակները մինչև հատակը դատարկում...

— Դե՛հ, ընկերնե՛ր,—նույն ժպիտը դեմքին և աչքերի ուրախ արտահայտությամբ դիմում է Լևոնը սեղանակիցներին—ո՞վ է հանձն առնում գնալ մեր նշանակած տեղը...

— Յես կերթամ—վճռականորեն հայտարարում է Զաքիա Բակուրաձեն և, քեֆը նորից մտնում է նախկին հունի մեջ...

Այսպես ուրեմն, յերբ սեղանակիցներն այդքան դյուրությամբ վճռեցին որակարգի ամենահրատապ խնդիրը, վորի համար և հավաքված եյին, քեֆի տրամադրությունն ավելի բարձրացավ, ախորժակները կրկնապատկվեցին և մանր բաժակների փոխարեն արդեն գործի անցան խոշոր գավաթները...

— Զրի, դագաղն անգամ, հետաքրքիր է, թե չէ...

— Ուրեմն, սկսենք յեղբայրներ, ավելացնում է իր կողմից Նոդարը և սկսվում է անընդհատ մի սոսկալի խռպոտ ձայների վրանոց, մի կատարյալ ժխոր և այս աղմուկը քանի գնում ավելի և ավելի սաստկանում է, վողջ դահլիճում տիրում է անկարգություն և վերջում հարբած սեղանակիցները կորցնում են իրենց

և թույլ են տալիս ամեն տեսակի ափեղ ցփեղ արտահայտություններ՝ դուրս գալով քաղաքավարական բոլոր սահմաններից:

Թափառող ձեռքերը հանգստություն չեն տալիս Մարգոյին և... Մարգոյի աչքին հարբածներն իրենց այլանդակ դեմքի արտահայտություններով յերևում են վորպես խելագարներ:

Վայնբերգը սեղանին կռթնած արդեն խռմփացնում է:

Իսկ Սառա Մարկովնա՞ն...

Հյուրասենյակում այլևս չի յերևում...

Ավարտվում է խնջույքը:

Մի խնջույք, վոր և՛ գործնական եր, և՛ ուրախ տրամադրություններ առաջ բերող...

Գինու գոլորշին առատորեն դուրս է գալիս սենյակից...

Ձեռքերը վարժողություններ են կատարում ելեկտրական լույսի չափսերի վրա... դատարկ շշեր, սփռոցի վրա ընթրիքի մնացորդներ...

Վերնազգեստներն անկանոն թափթփված այստեղ–այնտեղ... բաժակաթասերի ճռճռոց, արագ–արագ շնչառություն, անսովոր... վոչ վոք չի հիշում, թե Վայնբերգի տնից յե՞րբ հեռացան մյուսները...

Վոչ վոք չի մտաբերում, թե հյուրերը յե՞րբ հրաժեշտ տվին Վայնբերգին ու նրա ընտանիքի անդամներին, կամ արդյոք հրաժեշտ տվի՞ն, թե վոչ...

Լուսադեմին, յերբ ծառան կարգի յեր բերում հյուրասենյակը, բազմաթիվ անկարգությունների հետ, նրա աչքին ընկավ խիստ կասկածելի կացություն: Գեղեցիկ բաղկաթոռի ծայրին տղամարդու թողած վոտնատեղի նշան, իսկ բաղկաթոռից առաջ կնոջ ներքին սպիտակեղենի շաղկապներից պոկված սադափի կոճակներ:

Կոճակներ—թելով խաչած և, նշմարվում եր, վոր դրանք ամուր կարած եյին սպիտակեղենի վրա... Ծառան հեգնական ժպտով նայեց սադափի կոճակներին և ավելի շարժումով տարավ, միացրեց աղբին...

## 12

Բավական ժամանակ է, ինչ Գրիգոլ Գիգաուրու նախագահությամբ տեքստիլ ֆաբրիկայում տարվում են հետազոտման աշխատանքներ...



Ֆաբրիկայի աշխատակիցները սրտատրոփ սպասում են հետազոտման աշխատանքների հետևանքներին: Վերջում տեղկոմը հայտարարություն փակցրեց պատին ընդհանուր ժողով հրավիրելու մասին.

Բանվորությունը մեծ հետաքրքրությամբ սպասում է որակարգում առաջադրված հարցերի մասսայական քննարկությանը...

Կիրակի յե...

Նշանակած վայրում հավաքվեցին բանվորները:

Ֆաբրիկայի նորակառույց սենյակներից մեկում հաղիվ է տեղավորվում հոծ բազմությունը...

Հատակավորները տհաճությամբ ծխում են դառն թամբաքուն և աջ ու ձախ թքում:

Անախորժ թամբաքուի հոտով լցվում է ամբողջ սենյակը և ծանրացնում առանց այն եյ ծանր ոդը...

— Ընկերնե՛ր,—զանգահարելով դիմում է ժողովին տեղկոմի նախագահը:

Բարձրաձայն խոսակցությունը վայրկյանապես փսփսոցի յե փոխվում, վորին հաջորդում է մեռելային լռություն:

— Ընդհատեք ծխելը, ընկերներ, առաջարկեցեք ժողովի համար նախագահ և քարտուղար...

— Գարաղանիձե...

— Ցիրղիլաձե...

— Սուլակաուրի...

Դահլիճում զանազան բացականչություններ են լսվում.

— Ո՞վ է՝ ընկ. Գարաղանիձեյին կողմնակից.

Միաձայն:

— Ընկ. Գարաղանիձե, գրավեցեք ձեր տեղը:

Ընկ. Գարաղանիձեն և Ցիրղիլաձեն գրավում են իրենց տեղերը:

— Ընկերնե՛ր, ժողովը հայտարարում եմ բացված, խոսքը տրվում է մեր տրեստի դիրեկտոր ընկ. Գիգաուրուն, վորը զեկուցում կտա ֆաբրիկայի աշխատանքների մասին...

Դահլիճը վորոտընդոստ ծափահարությամբ դիմավորում է զեկուցողին: Լայնաբաց աչքերով սպասում են զեկուցողի յերևալուն:

Ժողովի առաջ ներկայանում է Գիգաուրին: Ցածրահասակ,

հասատամարմին, դիմագծերը ջղայնորեն շարժման մեջ են, վորն էլ ավելի յեռանդուն աշխատողի տպավորություն է անում հանդիսականների վրա։ Նա այսոր, ինչպես և միշտ մաքուր սափրել է յերեսը և գանգուր մազերը գառան խուզուլիկների նման թափթփված են լայն ճակատին, արծվային աչքերը ծանր և հպարտորեն շարժվում են յերկարուն թերթերունքների տակ։ Առաջին հայացքով Գիգաուրին սառն բնավորության մարդու տպավորություն է թողնում, սակայն…

— Ընկերնե՛ր,—համարձակ և հուժկու, բայց նեղացած տոնով սկսեց նա. նկատելի յե, վոր հուզված եր և ճակատի կնճիռներն անսովոր ձևով հավաքած…

Դահլիճում տիրեց քար լռություն…

Այս ու այն տեղերում գաղտուկ հազացին… Լռությունը թագավորեց ահագին դահլիճում։

— Դժբախտաբար, այսոր ձեզ հետ զրույց կունենամ խիստ անդուրեկան, բայց միևնույն ժամանակ, խիստ նշանակալից ու ցավոտ հարցերի շուրջը։ Ամենքիդ քաջ հայտնի յե, թե կուսակցությունը և իշխանությունն ինչ խոշոր նշանակություն են տալիս մեր յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության վերակառուցման հարցերին… Անտարակույս, ձեզանից ամեն մեկը գիտե, թե կապիտալիստական օղակում ընկած մեր յերկիրը տնտեսական ինչ նեղ վիճակում է կարողանում իր վերածնման և բարգավաճման համար նյութական միջոցներ հայթայթել…

Մեր սեփական միջոցներով պետք է վերածնե՛նք, վերստեղծե՛նք մեր խորհրդային յերկիրը.

— Ահավասիկ սա յե մեր այսորվա լոզունգը…

«Մենք պետք է հասնենք ու առաջ անցնենք կապիտալիստական յերկրներից»,—ահա մեր հողացողության առարկան է, ամենևին չեմ կասկածում, վոր դուք՝ բանվորներդ, վոր լավագույն մասերից մեկն եք մեր վողջ պրոլետարիատի, քաջ ըմբռնած կլինեք այս լոզունգների հիմնական միտքը, նրանց իսկական նշանակությունը։

Գիգաուրին աստիճանաբար, մեծանում, բարձրանում եր բանվորների աչքում։ Յուրաքանչյուր նախադասությունը բանվորության կողմից ընդունվում եր բուռն վոգևորությամբ, վորովհետև նրա բոլոր ասածները հիմնված եյին անհերքելի փաստերի



վրա. զեկուցումն անխափան կրում եր խիստ գործնական բնույթ…

— Ընկերնե՛ր,—շարունակում եր Գիգաուրին,—ինչ ենք տեսնում այսոր, մեր շինարարության մեջ և մասնավորապես, յեթե կուզեք, մեր այս ֆաբրիկայի կառուցման գործում…

Լսենք թվանշաններին, ընկերներ.

Սկզբնական նախագծով ֆաբրիկայի վրա պիտի ծախսվեր յերկուս ու կես միլիոն ռուբլի… Մինչև այժմ լոկ շինանյութերի վրա ծախսված է չորս միլիոն յոթ հարյուր հազար ռուբլի…

Դահլիճը համարյա միաձայն հառաչում է և զարմացած բանվորներն իրար են նայում… Հետո, ընկերներ,—շարունակում է Գիգաուրին հուզված տոնով—այսպիսով ֆաբրիկայի կառուցումը նստելու յե յոթ—ութ միլիոն ռուբլի… Դժվար է ճշգրիտ վորոշել «յոթ», թե «ութ» միլիոն, վորովհետև աշխատանքի մեծ մասը պիտի նորից վերակառուցվի. և ես գլխից ասել, թե շենքի վո՞ր մասը պիտի վերակառուցվի, և վորքան ծախս է գնալու այդ վերաշինությունների վրա, դժվար է վորոշել…

— Տեսնո՞ւմ ես, ինչե՞ր է ասում.—փսփսացով ասում եյին իրար բանվորները։

— Ինչի՞ նման է այս, ընկերներ.

— Նման պարագայում հնարավո՞ր եր խնայողության ռեժիմի կամ պլանավորված աշխատանքի մասին անրջել, արդյոք սա չի՞ նշանակում գիտակցաբար խոչընդոտներ հարուցել. յես ընդգծելով հայտարարում եմ, վոր այս գործում հանցանքի խոշորագույն մասը բարդվում է կառուցող կադրերի պակաս կվալիֆիկացիայի, անփորձության և վոր գլխավորն է, մի քանի մասնագետների անփութության ու մասամբ գիտավորյալ կերպով խանգարելու…. գիտակցական վնասարարության վրա…

Գիգաուրին կրկին թվանշաններին անցավ և կոկորդը չորացած, սակայն դեմքի բոցավառ արտահայտությամբ պղպջան կարների նման թափում եր փաստալից նախադասությունները, փաստալից մտքեր…

Նա անխնա խարազանում եր շինբաժնի նախկին ղեկավար ինժեներ Մելիքովին, անբաժնի վարիչ Բարնաբ Բարբաքաձեյին, վորոնց անփույթ վերաբերմունքի շնորհիվ ֆաբրիկայի կառուցումն այնքան դանդաղեց ու վերջում, ի հարկե, թանկացավ…

Մի առ մի յերևան եր հանում՝ դեղծարարության, ուշացման,

անփութության և վնասարարության փաստերը, վորոնք մեծ վոգևորություն եյին առաջ բերում բանվորների շրջանում, վորոնք այսպիսի կրակե ինքնաքննադատության նշանաբանի տակ մերկացնում եյին բոլոր վնասարարներին: Ներկա յեղողները զմայլվում, ծափահարում և հաճախ ել «ճիշտ է» բացականչություններով ընդհատում եյին զեկուցողին:

— Մի խոսքով,—ավարտեց իր յերեք ժամի չափ տևող քննադատական խոսքը Գիգաուրին, յեզրափակելով.—մեր ֆաբրիկայում, կամ ավելի ճիշտ՝ մեր ֆաբրիկայի շինարարության գործում տեղի յե ունեցել գիտակցական կազմակերպված խոշոր վնասարարություն, կեղծ նախագծեր կազմելով, և այլ միջոցներով, վորով իշխանությանը միլիոնների վնասներ են հասցրել...

Վնասարարություն. հիմքի ճաքելու փաստը և այլ «մանր դեպքերը», սակայն այնպիսի «մանրունք», վորը ֆաբրիկայի վերջնական ինքնարժեքը յերկուս ու կես միլիոնից յոթ—ութ միլիոնի բարձրացրեց. գոյություն է ունեցել շռայլ վատնումն, խնամիության թեքումն դեպի մասնավոր կապալառուներ և այլն...

Հետազոտման արձանագրությունների մեջ առաջ բերած փաստերը պարզ և ցայտուն կերպով ապացուցում են այն բոլորը, ինչի մասին զեկուցեցի մի փոքր առաջ...

Սրանից պետք է յեզրակացնենք հետևյալը.—

Ինչ գնով էլ լինի պետք է առողջացնենք գործոն ապարատը. ամեն ճիգ ու ջանք պիտի թափենք, վոր ֆաբրիկայի աշխատանքների մեջ նկատած բոլոր թերությունները յերկաթե բոցավառ շանթով այրենք ու սպեղանի դնենք այն վերքերի վրա, վորոնք հանձնաժողովի կողմից յերևան են հանվել. բավական չե միայն ինժեներ Մելիքովին հեռացնելն ու դատի տալը, կարևոր է նաև նրա բոլոր համախոհներից զատել, մաքրել ֆաբրիկան և նորմալ հունի մեջ դնել աշխատանքները: Ինչպես արդեն նկատելի յե, այդ ուղղությամբ բավական գործ է կատարում նոր ինժեներ Կարպովը և հուսով եմ, ընկերնե՛ր, վոր դուք ամեն տեսակ աջակցություն ցույց կտաք՝ հաղթահարելու խոչընդոտները. կաշխատեք առողջ ինքնաքննադատության բովով անցկացնել ֆաբրիկայի վարչության աշխատանքների ամեն մի քայլը և դրանով մի կողմից՝ կաջակցեք ֆաբրիկայի աշխատանքները նորմալ հունի մեջ դնե-



լուն, մյուս կողմից՝ պետական գումարները կազատեք անտեղի ծախսերից ու զուր վատնումներից...

Վորոտընդոստ ծափահարությամբ դղրդում է ամբողջ դահլիճը և բանվորները բոլոր փաստերը լսելուց հետո, վոգևորված ասում եյին իրար.—

— «Տեսա՞ք, ա՛յ քեզ ինքնաքննադատություն, ինչ տղա յե յեղել ե՛»...

«Տեսա՞ք, մեր քթի տակ ինչեր է կատարվելիս յեղել, շատերը վոչինչ չգիտեյին, իսկ ովքեր գիտեյին, նրանք էլ լռում եյին, խուսափում եյին հայտնաբերելուց»:

Սկսեցին հարցեր տալ զեկուցողին:

Գովեցին նաև ըստ եյության արտահայտվելու:

— Հե՛յ, Լեքսո՛,— դիմեց վոմն ժողովի նախագահին,— ինձ էլ գրիր...

— Ազգանո՞ւնդ.

— Տատե, Նոնիկաշվիլի, վա՛յ, չե՞ս ճանաչում այ մարդ, նախագահությունը հո չկուրացրեց քեզ...

— Տատեյի ասածներն իր շրջապատի ընկերների մեջ՝ բուռն ծիծաղ առաջ բերին:

— Ջինջիխաշվիլի.

— Սուլակաուրի...

— Սաղվարելիձե...

Իրար են խառնվում ձայները և դահլիճը փեթակի ճանճերի նման տզզում է...

— Հանդարտ, ընկերներ,— կոշտ բամբ ձայնով, դիմում է ժողովին Գարաղանիձեն—խոսքը պատկանում է Տատե Նոնիկաշվիլուն...

Տատեն, նախագահի կանչը լսելուն պես՝ շտապ վեր թռավ տեղից և քայլերն ուղղեց դեպի այն կողմը, վորտեղից ընկ. Գիգաուրին զեկուցում եր կարդում...

Տատեն բարձրացավ բեմ, ու անմիջապես շրջվեց դեպի ժողովուրդը...

Թաղիքյա գլխարկն ուղղեց, աջ վոտը մի քիչ առաջ դրեց և ձեռքերը խաչած սկսեց.

— Ժողովո՛ւրդ— Տատեն մի ընդհանուր հայացք նետեց դահլիճում նստող բոլոր ժողովականների վրա.

— Ժողովո՛ւրդ, այն բոլոր անարդարություններն ու անաստվածությունները, վոր կատարվում եյին ես մեր անտեր ֆաբրիկայում, ինչ խոսք, վոր նրա կառուցման ծախսերը պիտի հասցնեյին տասնյակ միլիոնների, միթե դա զարմանալի չե... Ժողովուրդ,—սրանից ավելի աննամուսություն կարելի՞ յե սպասել. ես մեր զավխոզ ա, թե ինչ զահրումար ա, մեր արտելի տղաներից վոչ վոքին քար ու ավազ բերել չավեց մեր ֆաբրիկի համար... Բայց, գիտե՞ք թե ինչո՞ւ յեր այդպես անում, վորովհետև չարունակ կրկնում եր.—

«Ձեր արտելի գոմեշներն ասում եր, լղար են. լղար կլինեն, բա ինչ վոտներ, ի՞նչպես պիտի չաղանան, յերբ աշխատանք չեք տալիս արտելին, վոր հնարավորություն տրվի կանոնավոր կերպով կերակրել իրենց անասուններին...

Վողջ դահլիճը քրքջում ե.

— Ժողովուրդ, ես անտեր գոմեշները յեթե լղար եյին, զավխոզին ինչ, մսացուի համար հո չեյի՞նք ուզում, վորոշած գնով քար ու ավազ կկրեյին, կդնեյին իր տեղը, ուրիշ էլ ի՞նչ վոտներս եր ուզում եդ անիրավ զավխոզը...

—Դեռ խոսելու ձևը սովորիր և...— բացականչում ե տեղից Բարնար Բարրաքաձեն:

Նախագահը կարգի յե հրավիրում ժողովականներին, բանվորները ծիծաղում են ու չեչոտակի նայում ջղայնացած Բարնար Բարրաքաձեյին...

— Ժողովուրդ, կոլեկտիվը ադյուս վոր պատրաստեց և Մելիքովին ու զավխոզին միասին տարավ արին կոլեկտիվի ադյուսներին,— եդ ի՞նչ ա, ասում են, «մանրունք են», եդպես ադյուս կլի՞...

— «Մանր են» ա՛յ թե ինչ,— բացականչում ե մեկը դահլիճում:

— Ահա, սրա արևովն եմ յերդվում— աջ ձեռքով դարնում ե իր աջ այտին և լուրջ տեսք ընդունում—իբր թե մանր եյին և յավ չթրծած, մահանա բերին ու մասնավոր կապալառուից ձեռք բերին նույնքան ադյուս՝ հազարը քառասուն ռուբլու հաշվով, այն ժամանակ, յերբ կոլեկտիվը յերեսուն հինգ մանեթով եր առաջարկում հազարը. Ֆաբրիկան թանգ կնստեր, բաս ի՞նչ կպատահեր, այ ժողովուրդ:



Ժողովրդի միջև տիրում ե անընդհատ ծիծաղ ու «ղոչաղ Տատե» բացականչությունը...

Տատեն քաջալերված, ձեռքերը թափահարելով շարունակում ե.

— Իմերեթից վոր փողրաշիկ բերեց իր բանվորներով, եստեղ նարդով աշխատանքի գներն իբր թե իջեցրեց, բանվորների աչքերին թող փչելու նպատակով, մինչդեռ փողրաշիկը գիրացավ բանվորների հաշվին ու մեր մեջքին նստեց. սա յե՞լ ե սուտ, այ ժողովուրդ.

Տատեն, նորից մի ակնարկ գցեց ժողովրդի վրա, նայեց յուրաքանչյուրին ու հանկարծակի.—

Ա՛յ ժողովուրդ, յես վերջացրի և ինչ վոր մնացա դուք ասացեք, ընկերնե՛ր:

Տատեն նետի նման սլացավ դեպի իր տեղը, իսկ Գիգաուրին իր բլոկ-նոտում մի նկատողություն գրեց...

— Խոսքը պատկանում ե Ջինջիխաշվիլուն, ընկերներ.

— Ձենք ուզում, լռությունը խզեց ժողովականներից մեկը, վորին հետևեցին մի քանիսներն էլ:

— «Բարրաքաձեյի մարդն ա՞».

«Փողրաշիկ ե»,—խառնվեցին ձայներն իրար:

— Ընկերնե՛ր,— դիմում ե ժողովին Ջինջիխաշվիլին, նա ամբողջովին սփրթնած ե, դողդոջյուն ձայնով աշխատում ե մի կերպ հանգստացնել ալեկոծ ժողովրդին:

«Կորչի».

«Ձենք ուզում»,—դղրդում ե դահլիճն ու անվերջ շփոթաղաղակ բարձրացնելով՝ սպառնում...

— Լռությո՛ւն, ընկերնե՛ր,— տաքանում ե նախագահ Գաբաղանիձեն ու պստլիկ զանգակը դնգդնգացնում...

— «Կորչի».

— «Կորչի»,— նորից դղրդում ե դահլիճն ու անորոշ դարձվածքները դարնվում են պատերին:

— Ընկերնե՛ր, ինչո՞ւ չեք կարծում, վոր...

— «Ձենք ուզում»:

— «Բարրաքաձեյի վոտները լպստողն ա»:

— Ընկերներ, համառորեն շարունակում ե Ջինջիխաշվիլին,—

պետք է ասեմ, վոր, յերբ ընկեր Տասեն խոսում է կոլեկտիվի աղյուսի մասին....

— Քո ընկերները փողրաչիկներ են...

— Այո՛, յերբ խոսում ենք կոլեկտիվի աղյուսի մասին, պետք է ի նկատի առնենք, վոր կոլեկտիվները, վորպես տնտեսական միավորներ դեռևս ամրացած ու կազմակերպված չեն:

— Հետո՞.

— Պետք է նկատել, վոր կոլեկտիվի պատրաստած ապրանքը ցածր վորակ...

— «Կորչի».

— Փողրաչիկ.

— Ընկերներ, այն աղյուսը, վոր պատրաստել է կոլեկտիվը վորակով անհամեմատ վատ եր...

— Ինչի՞ց յեր վատ.

Զատանի փողրաչիկի աղյուսներից վա՞տ եր:

— Այո՛, մասնավոր շուկայում ձեռք բերած աղյուսները և, ինչպես ընկ. Լենինն եր ասում...

— Բերանդ սապոնով վողողիր Լենինի անունը հիշելիս...

— Տեսնո՞ւմ եք, Լենինին ել է ոգնության կանչում.

— Այո՛, ինչպես առաջնորդ Լենինն եր ասում. «գործը վորակի մեջ է և վոչ թե արժեքի, այդ պատճառով, ել շինբաժնի ղեկավարն ու տնտեսբաժնի վարիչը հարմար դատեցին ֆաբրիկայի համար շինանյութեր ձեռք բերել մասնավոր շուկայում...

— «Կորչի».

— «Կաշառված է».

— Ընկեր նախագա՛հ,— Ջինջիխաշվիլու խոսքն ընդհատեց մի սև բեղավոր տղա— խոսք տվեք ըստ կարգի...

— Տրվում է, ընկեր, խոսեք ըստ կարգի...

— Ընկերնե՛ր,— սկսում է սև բեղավորը— ինչպես գիտեք, Ջինջիխաշվիլին մեր ֆաբրիկայում մասնավոր կապալառուներից մեկն է... Ծորհրդային կոնստիտուցիայով ձայնազուրկ, հետևաբար, որինական կլինի, յեթե այստեղ ել ձայնի իրավունքից զրկենք...

— Ընկերներ, քննարկության եմ դնում խնդիրը.—

— «Կորչի».

— «Զենք ուզում»,— միաձայն աղաղակեց դահլիճը:



— Թող Ջինջիխաշվիլին ել խոսի...— կատվի մլավոցի նման, ձայնեց մեկը ժողովրդից... բայց...

— «Կորչի».

— «Զենք ուզում»,— լսվում եյին նորից նույն ձայները:

— Ուրեմն, խոսքը պատկանում է Գիորգի Սուլակաուրուն.

— Ապորինի և բռնություն է, նորից թույլ ձայնով ծկլթաց ժողովականներից մեկը... Դահլիճը գայլի հայացք նետեց դեպի այդ անծանոթը... վոչ վոք համարձակություն չունեցավ կրկնելու...

Ամբիոնի վրա յերևաց Գիորգի Սուլակաուրին:

Զայրացած Ջինջիխաշվիլին ամոթահար յեղած, ձեռքերը խաչած՝ կանգնել եր մի անկյունում և գայլի նման խեթ-խեթ նայում եր իր դեմ ըմբոստացած ֆաբրիկի բանվորներին:

Բանվորներն հետաքրքրությամբ սպասում եյին նոր ճառախոսին:

— Բեմի վրա յերևաց Սուլակաուրին:

— Ընկերնե՛ր,— հանդարտ տոնով սկսեց Սուլակաուրին,— նախ և առաջ պետք է հայտնեմ, վոր մինչ այսոր մեր ֆաբրիկայում ինքնաքննադատության հարցը մթագնված եր և վարչությունն իշխանության վստահությունը վայելելով հանդերձ՝ աչքաթող եր անում բանվորության առաջարկները...

Բանվորները պայքարում եյին ֆաբրիկայում յեղած թերի կողմերը յերևան հանելու համար, պայքարում եյին ֆաբրիկի ներսում, մամուլի միջոցով, սակայն... հաճախ, փոխանակ մատնանշած պակասությունները վերացնելու վրա ուշադրություն դարձնելու, ֆաբրիկայի վարչությունը զինվում եր թղթակցի դեմ և, հայտնաբերելու դեպքում՝ դուրս եր շպրտում նրան, վորպես «ինտրիգան» և «ֆաբրիկի աշխատանքները խանգարողի».

Այս այսպես եր մինչև վերջին ժամանակներս. այստեղ, ընկերներ, շատերը կվկայեն, թե մեր ֆաբրիկան ինչքան այդպիսի լավագույն ընկերներից զրկվեց շնորհիվ վարչության ապիկարության և հատկապես ինժեներ Մելիքովի ու նրա փաստացի տեղակալ Բարնար Բարրաքաձեյի:

— Սուտ է, հիմարություն է,— կատաղեց Բարրաքաձեն և աչքերը խելագարի նման չռեց:

— Համբերեք, ընկ. Բարբաքաձե,— խաղաղ տոնով դիմեց Սուլախուրին Բարբաքաձեյին,— հիմարություն է թե վոչ, դրա մասին ավելորդ եմ համարում խոսել, միայն, յեթե փաստերի յերևան հանելը սրախոսություն է, այն պարագայում, դուք դուրս յեկեք ասպարեզ և ապացուցեք հակառակը. իսկ այժմ, թույլ տվեք անցնեմ հերթական խնդրին. ընկերներ, դուք գիտեք, վոր կուսակցության և իշխանության ուշադրությունը բևեռած է շինարարության եժանացման և ապարատի ռացիոնալացման վրա. ի՞նչ ճանապարհով կարող է եժան նստել շինարարական աշխատանքը.

Պարզ է, նորանոր գյուտերի շնորհիվ, վորով այս կամ այն կառուցումը կարող է ավարտվել արագ ու եժան գնով...

Մեր Փաբրիկայում մի շարք բանվոր գյուտարարներ, հենց այդ կառուցողական աշխատանքներն եժանացնելու նպատակով, վարչությանը ներկայացրին իրենց գյուտերի նախագծերը... մինչդեռ վարչությունը փոխանակ գյուտարարներին քաջալերել— վոգևորելու և աշխատանքները խորացնելու, նույնիսկ խնայողական Փոնդից պարգևատրելու, վարվեց ընդհակառակը՝ գյուտարար բանվորներից շատերին դայրույթ ու նողկանք հայտնեց վերջինս նախազգուշացումով, վորպեսզի հետագայում այլևս չհամարձակվեն «աշխատանքի» պրոցեսում ինչ-վոր «գյուտարարություններով» զբաղվելու և զուր ժամավաճառ լինելու: Ահա թե ինչպիսի վերաբերմունք եյին տածում մինչ որս դեպի բանվոր-գյուտարարները Մելիքովն ու մյուսները, հատկապես Մելիքովը, վորը փաստորեն գյուտարարական աշխատանքների ղեկավար եր ու միևնույն ժամանակ եքսպերտային հանձնաժողովի նախագահը.

— Ճշմարիտ է,— վավերացնում եր դահլիճը:

Կառուցողական աշխատանքների նոր պետն ինժեներ Կորպովը, գործի մտնելուն պես՝ ուշադրություն դարձրեց հենց գյուտարարությանը, դրանցից ընտրեց լավագույն գործնական ցուցմունքները և, ինչպես գիտենք, մի քանի տեքստիլ դազգյահների ու բրդի լվանալը կատարվում է համաձայն գյուտարարների ցուցմունքների...

— Բուրդը լվանալու գյուտը դուր եր յեկել նաև Մելիքովին— բացականչեց վոմն ժողովրդի մեջից...



— Դուր յեկավ, հավանեց, բայց չկիրառեց— պատասխան տվավ Սուլախուրին:

— Մեզ չի հետաքրքրում հավանություն տալը՝ հարկավոր է կյանքում անցկացնել...

— Ճիշտ է,— դղրդում է դահլիճը... Բացի այդ, ընկերներ, այստեղ մատնանշեցին Մելիքովի և Բարբաքաձեյի մասնավոր կապալառուների հետ ունեցած կապի մասին, այո՛, ամբողջ հարյուր տոկոսով ճշմարտություն է և այդ հարցը քննության կառնվի համապատասխան տեղում, միայն գործի լիակատար պարզաբանման համար կարող ենք ասել, վոր ինչպես հավաստի աղբյուրներից գիտենք, Բարբաքաձեն ահագին կաշառքներ է ստանալիս յեղել կապալառուներից. իբր ապացույց, Բարբաքաձեն այս յերկու տարվա ընթացքում իրենց գյուղում կառուցել է քսան և հինգ հազար արժեցող յերկհարկանի փառահեղ քարուկրյա մի շենք, ձեռնարկել է մասնավոր տնտեսություն, վորը հանձնվել է իբր թե յեղբորը, նույնիսկ ծառաներ ել է պահում իր տնտեսության մեջ:

— Սուտ է, բամբասանք է,— անհանգստանում եր Բարբաքաձեն և խելքահան եր լինում հանկարծակի հարձակումներից:

— Վոր ասածներս իրավացի յեն և վոչ հերյուրանք, ինչպես տեղից մեզ հավաստացնում է Բարնաբ Բարբաքաձեն, ապացուցվում է հենց թեկուզ այս նամակով, վոր զետեղված եր «Կոմունիստ», լրագրի «Մասսաների կոնտրոլի ճամբով» բաժնում և ռայոնական իշխանության պատասխանն այս նամակի առթիվ, վորով հաստատվում են նամակում բերված բոլոր տեղեկությունները... Ահավասիկ նամակը...

Սուլախուրին լրագրից յերկարությամբ կտրած թերթիկը խաղացնում է ոդում և ապա հանձնում նախագահությանը՝ վորպես մեղադրանքը հաստատող փաստաթուղթ...

Ջերմից բռնվածի նման Բարբաքաձեն սկսեց դողալ. աչքերը չաղվեցին, քիչ եր մնում վայր ընկներ...

Սուլախուրին անհողդողդ կանգնած է բեմի վրա և ամենևին չի շտապում արագացնելու իր խոսքը...

— Ընկերնե՛ր, պետք է նշել նաև, վոր սրանից չորս ամիս առաջ, տրեստի վարիչի տեղակալ ընկ. Գողոսովն ել անցկացրեց աշխատանքների ստուգատես... Ստուգատեսի ընթացքում բանվորներից շատերը համարձակ կերպով, միքանիսներն ել անստա—

տալիր՝ նկատողություններ ներկայացրին հանձնաժողովին՝ ֆաբրիկայում աչքի զարնվող պակասությունների մասին, սակայն հանձնաժողովը մազաչափ ուշադրություն անգամ չդարձրեց բանվորների ասածներին, նրանց գործնական ցուցմունքներին և երբ Պողոսովը հետևանքների մասին զեկուցում տվեց ընդհանուր ժողովին, խմիջի այլոց մեծ ապլոմբով հայտարարեց, որ ֆաբրիկայում աշխատանքները նորմալ կերպով են ընթանում, ամեն ինչ կարգին է, նամանավանդ հաջող և խնաեմնախվ են կառուցողական աշխատանքները և այլն... Անտարակույս, նման բովանդակությամբ արձանագրություններ չերևի տեսստումն էլ կունենան:

Մենք, բանվորներս, կանխապես կասկածների մեջ էինք, սակայն ձեռքի տակ տվյալներ չունենալու պատճառով, ճարահատյալ լռում էինք... «Ասլես, Սուլակաուրի, սաղոլ» — հաստատում էին նրա ասածները և խրախուսված մեջքները ծդում, ուղղում էին:

—Վերջացնելով խոսքս՝ կանգ կառնեմ մի քանմնելի փաստի վրա, բանն այն է, որ մեր ֆաբրիկայում վարչության կողմից ինքնաքննադատությունն այն չափով էր խեղդված, որ նույնիսկ զոհ գնաց մեր բջիջի քարտուղար ընկ. Նիշնիանիձեն, որին անխնա խարազանում էր ադմինիստրացիայի սուր արարքներն ու վոչ մի կերպ չէր հանդուրժում նրանց մեշչանական ու բյուրոկրատական քայլերը, Նիշնիանիձեյին ֆաբրիկայից արտաքսեցին, որպես անուղղելի ինտրիգանի և խանգարիչի:

Ընկ. Գիգաուրու գալը մեր ֆաբրիկան մեզ ուրախություն է պատճառում. նա Կենտրոնական Կոմիտեյի անդամ է և կարծում ենք, անպայման մեր այս հարցը կդնի համապատասխան օրգանների առաջ՝ ֆաբրիկի բջիջի և անկուսակցական ակտիվի խնդրանոք և նախքան կուսզտումը սկսելը նշանակել կտա մի նիստ, ուր քննության կառնվեն (մեր բջիջի և ընդհանրապես ֆաբրիկայի աշխատանքների առողջացման խնդիրները:

Այս ու այն կողմից լսելի չեղավ հատ ու կենտ ծափահարություն և «ճիշտ է» բացականչություններ, որ միացան դահլիճում տիրող ժխորին...

— Ես ի՞նչ խաթաբալի մեջ ընկա,—մտածում էր Բարբաքաձեն,—այժմ հո ամեն ինչ կպարզվի, կորավ այսքան տարվա աշխատանքս, ի դերև անցան հույսերս, ա՜խ, Մելիքով, Մելիքով.



դու չես իմ դժբախտության պատճառը... Դիփ դու չես մեղավոր, դու...

Բարբաքաձեն այնպես էր իրեն կորցրել, մոլորվել, որ չէր մտածում, թե ինքը գտնվում է գլուխս ժողովում. նա կարծում էր, թե արդեն իր սեփական տանն էր...

— Ո՜, Մելիքո՛վ, Մելիքով,— շրթունքների հիստերիկ շարժումներով փսփսում էր Բարբաքաձեն ինքն իրեն և, չեթե ամոթի զգացմունքն չլիներ, անպայման դաղտնի կծլկվեր ժողովատեղից:

Ամբիոնի վրա ճառախոսները փոխում էին մեկը՝—մյուսին:

Առողջ ինքնաքննադատության լոզունգով քաջալերված բանվորները նշում էին թերի կողմերն ու խոստանում ակտիվորեն աջակցելու նոր վարչությանը, և նոր նշանակված ինժեներ Կարպովին՝ ճեղքերը գոցելու գործում:

— Ջնայելով մենք շատ բանի տեղյակ չենք, ասում էր մի չերիտասարդ իմերել բանվոր,— բայց և այնպես մի քանի թերություններ նկատում էինք... հարցերը դնում էինք, սակայն ի՞նչ փույթ, ո՞վ էր լսողը. Մելիքովը մոտ չէր թողնում մեզ, մեր Բարնարն էլ «եսպես էր» նրա հետ, այ «եսպես». Իմերելը ցուցամատները միացնում է իրար, որից բանվորների մեջ բարձրացավ կուշտ ծիծաղ—քրքիջ...

— Մինչ այժմ համբերում էինք, իսկ հիմա, չերբ արդեն արժանացել ենք իշխանության հավանած մարդուն, հուսով ենք մեր ֆաբրիկայի գործերը կշտկվեն...

Արդեն դահլիճը հոգնել էր, մարդկանց ձայները մեղրաճանճերի բզզոցի էին նմանվում. տեղ-տեղ ոմը գաղտնի ծխած թութունի ծխից մշուշել էր...

Այս ու այն կողմից լսելի չեր խուպոտ հազը, բարձրաձայն հորանջելն ու անհանգստության նշաններ...

Խոսք ուզեց Բարնար Բարբաքաձեն:

Ժողովուրդը լուռ լսողություն դարձավ:

— Ցեղրայրնե՛ր,— ողխողորմ ձայնով դիմեց Բարբաքաձեն, կարծես ուզենալով իր հանցանքները մեղմել,—ի՞նչն սովորեց ձեզ, իմ ընտանիքս անբախտացնելու... այսուհետև չես այս չերկրում ի՞նչպես պետք է ապրեմ...

— Բարբաքաձեյի աչքերից քանի մի կաթիլ արցունքներ ցայ-

տեցին.— կվերցնեմ մի փամփուշտ կպարպեմ սրտիս և վերջացավ իմ գործը... Դուք կարծում եք ինձ համար շատ դուրեկան է մնալ այսպես արատավորված, ցեխոտված, ի՞նչ վատ բան եմ արել, որ մեր գյուղում յերկու սենյակից բաղկացած մի տուն եմ կառուցել...

— Ոչ թե յերկու սենյակից, այլ յերկու հարկից բաղկացած...

— Ծերությանս որերին՝ ուզեցի ինձ համար մի հանգստարան ունենալ, ասացեք խնդրեմ, մի՞թե յես մի վատություն եմ արել: Յեղբայրնե՛ր, գերեզմանս խոմ չեմ տանելու են անտեր շենքը. յերբ մեռնեմ... կամ պետությանը մնա, կամ ժողովրդին, ի՞նչ եք վախենում, որդի չունեմ ու ժառանգ...

— Տեսնո՞ւմ եք ինչպես խեղճացավ այդ սրիկան:

— Յեղբայրնե՛ր, վերև ասված էլ գիտե, որ ֆաբրիկայում, յես...

— Փխու, փխու,— քեհ-քահ ծիծաղեց դահլիճը:

— Ի՞նչ եք ծիծաղում, յեղբայրներ, ի՞նչ,— աստծու անունը մի անգամ ժողովին սխալմամբ Լենինն էլ ասեց, յես որ ասեմ, մեծ բան է, ինչ անենք, յես մի անգրագետ, անուսում մարդ եմ.— արդարացրեց ինքն իրեն Բարբաքաձեն:

— Ամենքիդ քաջ հայտնի յե, որ ես յեղունգներովս եմ կառուցում ֆաբրիկան... քննադատությունից հեշտ բան չի ստեղծել աստված այս յերկրում. գլխավորը՝ գործն է. գործ, որ մարդս մի շնորհք ցույց տա, թե չէ... ճիշտ է, մեր նպատակն եր ֆաբրիկայի կառուցման աշխատանքները շուտափույթ ավարտել, բայց ի՞նչ անենք, յեղբայրներս, դեռևս անփորձ ենք, անփորձ... Սկզբներում շատ բան չեյինք հասկանում շինարարության գործից, թեև այժմ էլ դեռևս շատ բան չգիտենք և մեր գիտցածով Ամերիկային չենք կարող զարմացնել, իհարկե, բայց...

— Հիմարություններ ես դուրս տալիս,— բացականչեցին դահլիճում ամեն կողմից

Հա, այսպես թե այնպես,— կրկին շարունակեց Բարբաքաձեն մի փոքր տրամադրությունը փոխած և այլայլված.— ինչպես տեսնում եք, վաղնաջարի չենում ենք ֆաբրիկան. իմ կարծիքով, յեթե փորձված մասնավոր մարդկանց տայինք, այն ժամանակ համ



էժան կնստեր կառուցումը, համ էլ արագությամբ կկատարվեր գործը, ենքան վնասներ էլ չեյինք տեսնի...

— Ըհը՛, իր ձևի ճկճկոցն սկսեց...

Գիտաուրին այլևս չկարողացավ տանել իշխանության ճիշտ գծի աղավաղումը, նախագահի ականջին մի բան փսփսաց և ջղայնորեն բանալով բլոկ-նոտը մի բան նշանակեց...

— Թույլ տվեք, յեղբայրներ.

— Ինչ լավ է կչկչում,— ամեն կողմից կարկուտի նման տեղացին Բարբաքաձեյի հասցեյին և բոլորովին չփոթեցրին նրան...

— Համբերեք, յեղբայրներ, ականջ դրեք, ճշմարիտ ասածներիս վրա ինչո՞ւ յեք զարմանում...

— Կորի՛ր, միաձայն աղաղակեց դահլիճը... ցած ամբիոնից... կրկնեցին բոլորը.—

— Ի՞նչ եք զարմանում, ախպեր, չեմ հասկանում. մի՞թե մասնավոր փորձված փոդրատչիկներն ավելի կանոնավոր, հունարով և շուտափույթ չեյին ավարտի գործը. մի՞թե այս մասին կարող է կասկած լինել... սակայն յես հո այն չեմ պնդում, թե ինչու մասնավորներին չտվինք մեր կառուցման գործերը...

— Կորիր, մենշևիկ, ցած ամբիոնից...

Բարբաքաձեյի խոսքերը չոր կոկորդում խեղդվում եյին և թուքը մեծ դժվարությամբ կուլ տվեց, այնպիսի դժվարությամբ, որ կարծես սեփական լեզուն էլ հետը տարավ...

— Յեղբայրնե՛ր,— ուժ առնելով նորից խոսեց Բարբաքաձեն,— թույլ տվեք, հնարավորություն տվեք, խոսեմ և ամբողջ իրերի դրությունը մի առ մի բացատրեմ, ինժեներ Մելիքովի և...

— Խոսիր քո մասին, ինժեներն ապեկունի կարիք չունի.

— Գործից խոսիր.

— Ահա թե ինչպես պատահեց, որ մենք կոլեկտիվի աղյուսները չդնեցինք...

— Չդնեցիք, որպեսզի գրպաններդ հարստացնելու համար դիմեյիք մասնավոր շուկայի...

Բարբաքաձեն կարմրատակեց, յերբ լսեց արդարացի բացականչությունը, ուշքն ու միտքը կորցրեց, լեզուն կապ ընկավ, սակայն զոռ տալով իրեն՝ դողդողջուն ձայնով սկսեց.

— Ճիշտ է, կոլեկտիվի աղյուսը լավն եր, սակայն մեր ֆաբ—

Բիկայի համար մասնագետների յեզրակացությունը չափն անհամապատասխան եր...

— Զ-ղ-ղ-ո-ո...

— Վո՞ր մասնագետների.

— Ամաչի՛ր.

— Հանգիստ, ընկերներ,— կոչ եր անում նախագահը ժողովականներին, բայց...

— Ձենք ուզում...

— Ընկերնե՛ր, այս ձևով ժողով տանելն անկարելի յե...

— Յեթե խոսքի իրավունք չեք տալիս, մրմնջաց մեկը...

— Հանգիստ, ընկերներ,—բարկացավ Գաբրադանիձեն և չուքըրիկ ղանգակը չուռ տվեց կարմիր սփռոցով ծածկված սեղանի վրա...

Բարբաքաձեն մի քիչ ուշքի յեկավ... մտքերը հավաքեց. կարծես կողմնակից եր գտավ և համարձակ բացականչեց.

Հերյուրանքներ են... ստախոսություն ե ձեր ասածները:

Դահլիճում աղմուկը հետզհետե սաստկանում եր:

Նախագահն աննպատակ եր ղանգահարում պստլիկ ղանգակը, վորի խղճուկ ձայնը հազիվ եր հասնում դահլիճի կեսին:

Մինչդեռ ժողովուրդը... լսելով Մելիքովի ու Բարբաքաձեյի հասցեյին ուղղած մեղադրանքները, կատաղել եր նրանց վրա և ղարբնոցի նման գնգնգում եր...

Յերեկոյանում եր...

Գերմանական գաղութից փչեց ապրիլյան հեզ զեփյուռը, վորից խանդաղատանոք շարժվում եյին նոր ծաղկած կեռասենու ճղները, և բերում իրենց հետ նաև թարմ խոտի բուրմունքը...

Իսկ Փաբրիկայում...ժողովարանում բանվորները մեկը մյուսին հաջորդելով ճառախոսում եյին, հայտնաբերելով այնպիսի փաստեր, վորոնք վաղուց հետե մոռացության եյին տրված:

Ժողովը մոտենում եր իր վախճանին:

Յեզրափակման ճառում Գիգաուրին պարզ ու վորոշակի լուսաբանում եր բանվորների կողմից արված առաջադրանքները և յերբեմն—յերբեմն անում անհրաժեշտ լրացումներ:





Յերեկո յեր:

Մթածմինդի անմարդաբնակ վայրերից փչում եր կանաչ խոտի ղուրեկան բուրմունքը:

Մոդեստադույն պգեստներով զուգվում եր Արսենալի շրջակայքը, իսկ «յեղբայրական գերեզմանատունը» ծաղկել եր յերփներանգ ծաղիկներով:

Հրաշեկ գունդը սողալով անցավ քաղաքի վրայով և ծածկվեց Դեզամի սարերի յետևը:

Մթնշաղ եր, սակայն...

...Փոխարենը քաղաքում տասնյակ հազարներով գիշերային ղրնդեղներ վառվեցին:

Հիշում եմ՝ փոքր ժամանակս Գուրիայում, յերեխաներս հավաքվում եյինք, նավթի մեջ թաթախած փալասներ ամրացնում ձողերին ու ենպես վառում, կարծես «հարս ու փեսին» դիմավորելիս լինեյինք. ղրնդեղները հանկարծակի հրավառվում եյին ու կարճ ժամանակամիջոցում աստիճանաբար հանգչում:

Իսկ քաղաքի ղրնդեղները...

Ա՛խ, վորքան լավ են մանկական հիշողությունները, մանկական անհոգ ուրախ կյանքը.— քաղաքի ղրնդեղները վառվում եյին յերեկոյան մութն ընկնելուց անմիջապես՝ մինչև առավոտ. լույսը վոչ պակասում ե, վոչ եւ ավելանում...

Հավասար՝ միշտ և ամենուրեք...

Ինչ ժամանակների յենք հասել, վոր այսոր, նավթավաճառ Յաղորն անգամ, իր փոքրիկ խուցը ելեկտրական լամպով ե լուսավորում. ճրագուից պատրաստած մոմը և ձեթ ու պատրույգով վառվող ճրագներն արդեն թանգարանի առարկա յեն դարձել...

Ձնայած՝ տակավին լավ չեր մթնել, սակայն քաղաքը կրկին արթնացավ... Շարժումն սկսվեց և կենդանանում ե նաև քաղաքի պարկերակը...

Քաղաքը նորից տարվում ե աշխատանքի հոգսերով...

Յերևի մեր մի քանի բանաստեղծները հենց սրա համար են կանգատվում՝ ասելով, վոր «Ինդուստրիան սպանել ե գեղեցկության զգացմունքը»...

«Ջաղեսն եւ սպանել ե Թիֆլիսի գիշերը» և այլն...

Ճիշտ է, նախկին Թիֆլիսյան գիշերները մեռան, բայց...

Ապրում է ինդուստրիան, ապրում է ու հրճվում շինարարության մեջ քար–քրտի՜նք Թիֆլիսը...

Բայց...

Վորքան, վոր անդուրեկան է ինդուստրիալ քաղաքը...

Ներեցեք...

Գեղեցկությունը հո բազմազա՞ն է ու բազմատեսակ...

Մինչդեռ շինարարությունն՝ ուրախացնում է աշխատավոր բնակչությանը...

Վոչ վոք թող ուրիշ բան չհասկանա...

Միմիայն և լո՛կ աշխատավոր մասսային...

Մնացյալներին հաշվի չենք առնում...

Զագես—Ռիոնգես—Արգես–ի շնորհիվ, Գուրիայում ընդմիշտ մոռացության տրվեց խիստ տարածված դարձվածքը. «Ենդլսի աղջամղջային գիշեր եր, վոր մատդ չեյիր կարող աչքիդ մոտեցնել»:

Սույն հակադրությունը Թիֆլիսցին այսօր, այլևս յերբեք չի ունենա՝ անյերևակայելի յե նման մղձավանջային մութ գիշերներ...

Այո՛, մթնեց, սակայն քաղաքը նորից կենդանացավ, քաղաքի յուրաքանչյուր անկյունը, յեռ ընկած փողոցն ու նրբանցքը, հրապարակներն ու փակուղիները...

Կարմրադրոշ բանակայինների շտաբի բաց լուսամուտներով ներս թափանցեց Մթածմինդից փչած զովաշունչ զեփյուռը և յերկար սեղանին ցրված բազմաթիվ գրությունները խոտի նման ցնցեց, ու փշշացրեց... Սեղանի վրայի թղթերը տարուբերվեցին, ճոճացին սենյակների բաց դռները:

Հսկիչը՝ Կոմինտերնի փողոցի մուտքի մոտ արձանացած-կանգնած եր և մերթ ընդ մերթ աննկատելի փոխում եր իր վոտը մի տեղից մյուս տեղ...

Սոսկալի ցանկություն ունի ծխելու, սակայն...

Դիսցիպլինա՞.

Հարկավոր է յերկաթե կամքի ուժ և, իրոք նա անհողդողդ է, անծռելի՝ յերկաթե սյունի պես...

Կարմիր վաշտապետը, իր մի շարք ընկերների հետ միասին, ռազմական քարտեզի վրա կարմիր մատիտով անսահման զոհանա–



կությամբ ինչ վոր գծագրումներ եր կատարում ու բեղերի տակ ժպտում...

Սրահում լսելի յեր զինվորականների յերկաթավոր կոշիկների ճռճռոցն ու զրնգզրնգոցը...

— Վաշտապետի մոտ:

Կարճ խոսքով դիմեց հսկիչ-պահապանին յեվրոպական հագուստով մի ջենտլեմեն և հրամցրեց հրամանագիրը...

Անծանոթին ուղեկցում եր տարատով (շինել) հագած մի զինվորական:

Տարատոկը միմիայն կարմիր ժապավենով եր տարբերվում, սովորական քաղաքացիական հագուստից:

— Հինգերորդ սենյակ,— պատասխանեց հսկիչը, վոր թեթև կասկածի մեջ ընկավ, թե արդյոք այդ հրամանը կեղծված չե՞...

Թեև...

«Պաշտոնական հրամանը մի ինչ վոր տարականի ձեռքի՞ն, այն ել զինվորականի՞...

Զարմանալի յե...— նորից կասկածով համակվեց հսկիչը: Մտածմունքի մեջ ընկավ նա և լուռ հետևեց վոտնաձայնին...

Ամեն ինչ լսեց...

— «Զգույշ Զալիկո՛... Զխալվես:

«Գաղտնի բաժին» գրված եր ցուցանակին:

— Վոչվոք չկա:

— Դե՛հ, Զալիկո շո՛ւտ, ահա և բանալին... Զշփոթվես... շուտ...— ջղայնանում եր անծանոթ ջենտլմենը...

— Զա՛նկ,— լսվեց գաղտնի բաժանմունքներում, և անկիզելի պահարանը բացվեց:

— Վոչինչ չկա,— հազիվ լսելի ձայնով ասեց Զալիկո Բակուրիձեն:

— Շուտ.

— Վոչինչ չկա, դատարկ է.— կրկնեց նա:

— Ա՜խ...— զայրացկոտ բացականչեց ջենտլեմենն ու շր–թունքներ կրծոտեց...

— Դավաճանություն է.

— Կարող են վրա հասնել... ի՞նչ դրա ժամանակ է....

— Ահա, այստեղ ինչ վոր քարտեզներ են, Լեւան,— դողդողալով ասաց Բակուրիձեն:

— Վերցրու-բեր հետդ...ախ ի՜նչպես խաբվեցի...
— Ինչ վոր գծագրումներ կան.— բերե՞մ.
— Շուտ վերցրու և հետդ բեր. ոչ, ձեր...

Նույն անծանոթները, տասը րոպեյից հետո կանգնած եյին հսկիչի առջև, համապատասխան փաստաթղթերով:

— Հրամանի անկյունին մակագրված եր.— անցկացրեք.—

Հսկիչն ուշադրությամբ զննեց հրամանը:

Մի անգամ արդեն կասկածի մեջ ընկնելով՝ աչքին չեր հավատում և հրամանը մի քանի անգամ ստուգեց:

Հասկացավ վոր վաշտապետի մակագրությունը կեղծված եր...

— Կանգնեք.— բարձրացրեց հրացանը... սակայն... նագանի յերկու խողովակներ դեպի հսկիչն ուղղվեցին աջ ու ձախ կողմից...

Լևոնը դուռը յետ դրեց ու միացավ ժողովրդին:

Բակուրիձեն էլ հետևեց Լևոնին և Կոմինտերնի փողոցում զբոսնող ուրախ ու զվարթ ամբոխի աչքը կուլ տվեց հանցագործներին... նրանք չքացան...

Վաշտապետն ու շտաբի անդամները նույն սիրով զննում եյին քարտեզը և ստրատեգիական կետերը կարմիր մատիտով նշանակում:

Շտաբի անդամները մեծ ախորժակով ծխում եյին և հետը ծիծաղում մի ընկերոջ վրա, վորն անգլիական ծխամորճով հոտած մախորկան եր քթքթացնում և խոսելիս էլ բառերի մի մասը կուլ տալիս...

14

Ինժեներ Մելիքովի սենյակը, ուր նա վերջերս ապրում եր, ցուրտ եր, խոնավ ու մութ:

Խոնավությամբ հագեցած օդը շնչելը խիստ ծանր եր ու անտանելի. Մելիքովը մի անկյունում կուչ յեկած՝ վոզնու նման փշաքաղվում եր:

Ցերեկվա նրա հպարտությունը, սառնասիրտ գոռոզությունն անհետ կորել եր... Նշույլն անգամ չեր մնացել այն զզվանքից, վոր տածում եր նա դեպի «սև մարդիկ» և բոլորովին մոռացության եր տվել իր վաղեմի նուրբ ինքնասիրությունը...

Մելիքովը կուչ յեկած՝ նստած եր մութ խուցի մեջ և որեր եր համրում... Բայց մինչև յե՞րբ պիտի այսպես որերը համրեր—այդ չեր կարողանում հասկանալ... նստած եր և...

Մինչև «յե՞րբ»...—նրա կարծիքով, սրա պատասխանն արդեն կախված եր նրա բախտից:

Մեծ դժվարությամբ ընտելացավ նա իր վերջին բնակարանին, սակայն իր ստոր միտումներից ձեռք չեր քաշում:

Մի քանի անգամ կանչեցին քննիչի մոտ...

Հարց ու փորձի յենթարկեցին, ամեն ինչ հարցրին...

Հարցերը բազմատեսակորեն շուռ ու մուռ տվին, սակայն... Մելիքովն իրան յերբեք հանցավոր չի ճանաչում.

Նա մշտապես միևնույնն եր կրկնում.

— Ֆաբրիկայում ինձ դիտավորյալ կերպով խանգարում եյին աշխատել... Այնտեղ նպատակ եյին դրել ինձ խորտակելու, սևացնելու և ուրիշ վոչինչ:

Այս պայմանները վերջի վերջո ձանձրացրին Մելիքովին:

Ձանձրանում է նաև քննիչը Մելիքովի միապաղաղ և միօրինակ ցուցմունքներից:

Մելիքովն ամեն ճիգ ու ջանք եր թափում վորևե կերպ ազատվելու: Մինչդեռ քննիչն որեցոր սպասում է Մելիքովից, հանցանքների խոստովանությունը...

Խիստ մրցում է տեղի ունենում...

Գաղտագողի դարդերից Մելիքովն որեցոր հալ ու մաշ եր լինում...

Աչքերը խորն ընկան:

Միրուքն ու մազերը փշաքաղվել եյին՝ խելագարի նման...

Սոսկալի հազը խեղդում եր նրան:

Բայց և այնպես Մելիքովը համառ եր... միշտ կրկնում եր նույնը, առանց հուսահատվելու... Կրկնում եր միանգամ ընդմիշտ անգիր արած Փրազը և...

Եսոր, եգուց նույնիսկ հույս ուներ ազատագրվելու...

Մինչև անգամ ինքն իրեն էլ համոզեց իր անմեղության մեջ...

Հետևաբար...քննիչն էլ ավելի շուտ պետք է համոզվեր, վոր Մելիքովն անմեղ է.

Մելիքովի կարծիքով, նրան շուտով կազատեն, անպայման կազատեն, վորովհետև իր կարծիքով, այն բոլորը, ինչ անցավ նրա գլխով՝ սարքովի բաներ եյին և ինքը բոլորովին անմեղ եր. բացի այդ, նա լավ գիտեր, վոր քաղ-վարչության մեջ լուրջ հանցավորներին նույնիսկ խաչում են, մինչդեռ Մելիքովն ապահով-ված ե նման յերևույթներից:

Յեթե պաշտպանված ե, ուրեմն և անմեղ ե:

Վո՛չ. վոր շուտ կազատվեմ, այդ արդեն փաստ ե: Այս պարզ յերևում ե նույնիսկ վերաբերմունքից, յեթե ինձ լուրջ հանցավոր համարեյին՝ խիստ կվերաբերվեյին, մտածում եր Մելիքովը և անհամբեր սպասում վերջնական կանչին:

— Հենց վոր ազատվեմ... անմիջապես կճանապարհվեմ դեպի Արասթուման... լավ կհանգստանամ և բնության ծոցում նորա-նոր աշխատանքի ծրագրներ կվորոճամ.... Համարյա ամեն իրի-կուն այդ քաղցր անուրջներով ու մտածմունքներով տարված՝ քնում եր ինժեներ Մելիքովը...

Քաղցր և անուշ յերազները համակում են նրան.

— Ի՞նչ հրաշալի ամառանոց ե Արասթումանը. ուղղակի հրաշագործություններ են կատարում այստեղի սանատորիաները թույլ թոքեր ունեցողների վերաբերմամբ...

Սանատորիաներն,—անրջում ե Մելիքովը յերազում,— այժմ կոչվում են «Բանվորական սանատորիաներ», սակայն սրանով ի՞նչ ե փոխվել...ի՞նչ...վոչինչ:

Բանվորներին ե՛յին պատկանում նաև այն ֆաբրիկաները, վորոնց հիմքը քանդում եր Մելիքովը... սակայն...

Դրությունը փոխվեց և...

Այսոր Մելիքովը «հանգստանում ե»:

Սանատորիայո՞ւմ...

Մելիքովը ձեռքը թափ տվեց, ձեռքի շարժումից հանկարծ պարթնեց և դառն իրականությունը ծառացավ նրա առաջ...

Վոչ սանատորիայում և վոչ ել բանվորական քրտնաթոր գու-մարների վատնում...

Նրա սիրտը կծկվեց...

— Մելիքո՛վ.

Սրահում լսվեց խուլ, սակայն բամբ ձայնը և հրացանավոր պահապանը մոտեցավ դռանը:



Մրջյունները կարծես սողոսկացին Մելիքովի վողջ մարմնով

— Քննիչի մոտ:

Սառը քրտինք պատեց Մելիքովի ճակատին, յերբ պահապանը «քննիչի» անունը տվեց:

Թևաթափ աղավնի նման դուրս յեկավ սրահը, առաջ ընկավ, հրացանավորը քայլ—առ քայլ հետևեց նրան:

— Մեզ առանձին թողեք,—հազիվ լսելի ձայնով ասաց քննի-չը պահապանին և շուռ յեկավ Մելիքովի կողմը:

— Ծխախոտ վերցրեք, խնդրեմ.—«Ռեոնդեսի» տուփը քաշեց դեպի Մելիքովի կողմ և լուցկին վառեց:

— Չեմ ծխում այլևս,— մերժեց Մելիքովը,— քննիչը կար-ծես թե չլսեց, ժպտալից դիմեց նրան.

— Յես անվարան համոզված եմ, վոր այսոր վերջնականապես կավարտեմ ձեր գործը:

— Յես ել նույն հուսով եմ ապրում:

— Այդ դեպքում...—քննիչը մի հայացք ձգեց թղթերին, մատիտը ձեռքից դցեց և արմունկներով սեղանին հենած՝ փափուկ տոնով դիմեց.—

— Յեղեք անկեղծ, և խոսք եմ տալիս, վոր գործին բոլորովին այլ ուղղություն կտամ...

— Նախկին ցուցմունքներիս մեջ յես բավականաչափ անկեղծ եյի... այնպես վոր դուք...

— Սպասե՛ք... քաջ հավատում եմ ձեզ, միայն խնդիրը, վորպեսզի թե ձե՛զ և թե մեզ համար պարզ լինի, հարկավոր ե մի շարք ճշտագույն տվյալների կցում գործին... իսկ դրա համար ձեզ հետ միասին հարկավոր ե պարզել հետևյալը. թույլ տվեք հարցնել—վո՞րն եք համարում ձեր հիմնական պրոֆեսիան:

— Ինժեներ-ելեկտրիկն ամբողջ կյանքի ընթացքում չի կարող հարազատ աշխատակից չլինել իր պրոֆեսիային,— պատասխանեց Մելիքովը:

— Բարի: Վո՞ր թվականից:

— Մինչ հեղափոխությունը... կարծեմ 1910 թվից:

— Նրանից հետո՞...

— Այսինքն՝ հեղափոխությունից հետո, չե՞.

— Այո՛, նրանից հետո...

— Յերբեմն անգործ... յերբեմն շինարար... յերբեմն էլ լեռնահանքային աշխատանքներում...

— Դուք առիթ եք ունեցել վորոշ ժամանակ աշխատելու նաև լեռնահանքերո՞ւմ.

— Աշխատում եյի մի քանի տարի...

— Բագվո՞ւմ, չէ՞,— ժպտալով հարցրեց քննիչը:

— Այո՛, Բագվում...— Մելիքովը նոր ուշքի յեկավ, հասկացավ իր սխալը և վերջին տառը կուլ տվեց, թեև, ինչպես նկատելի յեր քննիչի դեմքի արտահայտությունից, նա վոչ մի նշանակություն չեր տվել վերջին հարց ու պատասխանին...

Բայց...

Մելիքովն զգաց իր սեփական հանցանքը...

— Արտասահման յեղե՞լ եք.

— Այո, յեղել եմ, գիտական գործուղման մեջ:

— Ի՞նչ պետք է ուսումնասիրեյիք.

-- Մասնագիտական հարցեր... Զանազան...

— Նավթային արդյունաբերությա՞ն...

Անակնկալ հարցերից Մելիքովը սարսեց:

— Յես հարցնում եմ— շտապեցրեց քննիչը:

— Ներողություն... ինձ վատ եմ զգում և, յեթե կարելի յե հարցաքննությունը հետաձգեք մի այլ անգամ.

— Այն դեպքում յես յեզրակացություն կհանեմ...

Քննիչի ձեռքին մատիտը շարժվեց..

— Չե, ձեզ մատաղ, ինչպես է պետք... Մի քիչ կհանգստանամ և հետո...

Քննիչի որինական ու տեղին հարցերից Մելիքովն այլայլվեց, վախեցավ...

Նա մտածեց, թույլ տված սխալներից մի կերպ գլուխն ազատել, սակայն...

— Ինչ ասվեց, նրա ժխտելն անհնար եր... Բագվում... Լեռնահանքային գործերում... Նավթարդյունաբերության մեջ...

Մելիքովը տխրեց...

— Նավթարդյունաբերության մեջ, հետո ի՞նչ,— հարց է տալիս ինքն իրեն Մելիքովը,— ո՛վ ինչ գիտե, թե...

— Շարունակե՞նք գործի ընթացքը, ի՞նչ կասեք.



— Մի փոքր ժամանակ տվեք... Մի քանի ժամ... կամ, յեթե կարելի յե այդ գործը հետաձգենք մինչև վաղը...

— Հետաձգե՞նք... լավ հետաձգենք, միայն... իմացած յեղեք, վոր ինչքան ձգձգեք ճշմարտության խոստովանությունը, նույնքան վատ ձեզ համար. դուք պետք է գիտենաք, վոր մենք ամեն տեսակ տեղեկություններ ժողովել ենք, այժմ մեզ համար կարևոր է միայն այն, թե դուք ինչ կապ կամ առնչություն եք ունեցել ձեզ ուղղված հարցումների հետ կամ ապագայում ինչ մտադրություն ունեք... Այս խնդրի լուծումը ձեզանից է կախված, վորքան ուշ,— ավելի վատ ձեզ համար...

— Տարե՛ք.

Դուռը յերևաց ծանոթ պահապանը և Մելիքովից քիչ հեռու կանգնեց:

— Աշխատեցեք համառություն չանել... միևնույն է, վոչինչ չի օգնի... բացականչեց քննիչը գնացող Մելիքովի հետևից և փոքրիկ սենյակը լցրեց ծխախոտի ծխով...

## 15

Հակակրոնական կամպանիան լայն ծավալ ստացավ մամուլի միջոցով...

Յերգիծաբանական ժուռնալները լցվեցին յերփներանգ ծաղրանկարներով:

Կոմյերիտմիությունը պիոներների հետ միասին կազմակերպում եր ագիտացիոն կարնավալներ:

Տակավին չկարգավորված քաղաքի շուկան լցվեց զատկական բազմատեսակ մթերքներով:

Մի կողմից՝ խոզի գոճիների լխճկոր ճղավոցն և մարդու ականջները խլացնում, մյուս կողմից՝ հնդկահավերի խմբերն են էլեկտրաքարշի յերթը խանգարում:

Ի՞նչ խաբար է,— հարցնում են մի քանիսները...

— Ինչպե՞ս, զատկական պատրաստություն է:

— Դրանք էլ բան ու գործ չունեն—զատիկս վո՞րն է...

— Մեր գործարանի բանվորները խույս են տալիս զատկական տոներից...

— Ուրեմն, ա՛յ մարդ, վաղը մեր բոլոր ֆաբրիկ-գործարաններն աշխատելո՞ւ չեն:

— Այս աշխատանքները կուսակցության և պրոֆմիության գծով...

— Խոզի ճուտերն ու հնդուհավերն էլ բանկոոպների գծով չե՞ն, կարծեմ այսպես պետք է ասեյիք, քեռի Շաքրո, — միջամտեց Ստալինի անվան արհեստանոցի բանվորը՝ տուն վերադարձող փականագործին և աչքերը հառեց կայարանից չեկող էլեկտրաքարշի վագոնի ցուցանակին...

— Վանո ջան, դժվար է, կրոնի ու տրադիցիոն սովորությունների դեմ լոկ դեկրետներով պայքարել... Դեկրետները ժողովրդի տգիտությունը չեն կարող կասեցնել...

— Ճիշտ է, սակայն այս հակակրոնական կամպանիանե՞րը:

— Կամպանիանե՞ր. կամպանիաներ յերբեմն լրագրներով է սահմանափակվում, իսկ տնե՞րում...

Շաքրոն ձեռքով թափահարեց, ծխամորճը հեռացրեց ատամների տակից և մի կողմ թքեց...

— Վաղը մեր «ընկերներից» շատերն իրենց մոր կամ կնոջ խաթեր համար զատկական փարթամ ու ճոխ սեղան կպատրաստեն, կգտնվեն նույնիսկ մարդիկ, վորոնք «պասկա» յել կօրհնեն...

Վանոն խորասուզվեց մտքերի մեջ:

— Չե՞ վոր Սոժողկոմն արգելեց զատկական թխվածքներ պատրաստելը, վո՞րտեղ կճարեն...

— Վո՞րտեղ, վորտեղ ուզես... Հացի գրքույկների սիստեմը մտցնելով, գործը չի գլխում... Հարկավոր է, վոր ամեն ինչ նորմայով բաշխվեր... Նամանավանդ առաջին պահանջի կենսամթերքները և այն դեպքում...

Այո՛, այն դեպքում մենք կհասնենք խնայողության նպատակին...

— Նորմա, նորմա, ամեն բանում քեռի Շաքրո, նորմա յե հարկավոր. ամեն ինչում խնայողություն է պետք...

— Հարկավոր է այն էլ, ի՞նչպես. յեթե տասնյակ տարիներ բանտ-աքսորավայրերում անցկացրինք, յեթե յես անձամբ տասը տարի Տուրուխանի շրջանում դիմացա, Սառուցյալ ովկիանոսի



մոտերքում, մի՞թե այժմ, այս մեր իշխանության օրոք յերեք-չորս տարի չենք կարող խնայողությանը դիմանա՞լ...

— Կդիմանանք, սակայն... պլանավորում այստեղ էլ է պետք...

— Ինչ վոր յերեկ և այսոր սպիրտային խմիչքներ վաճառվեցին, ինչքան վոր խոզի գոճիներ ու հնդուհավեր ծախվեցին, այս քանի օրերս, յեթե այդ բոլորի վրա ծախսված գումարները, կամ բոլոր գնված կենսամթերքները ի մի հավաքեյին—այդ վողջ պաշարն ամբողջ քաղաքին բավական կլիներ առնվազն յերկու շաբաթ:

— Այ, կեցցես, յես էլ հենց այդ եմ ասում, վոր յերկու շաբաթվա պաշարը, յերկու օրում պետք է քամուն տրվի և...

Ե՛հ, ցտեսություն, Վանո ջան. ահա իմ վագոնն էլ յեկավ:

Շաքրոն Վանոյին հրաժեշտ տալով՝ տխուր ու տրտում մտավ վագոնը...

Ահագին բազմությունը՝ բեռնված զամբյուղներով, ջվալներով, կենդանի ու մորթած մսի պաշարներով բարձրացավ վագոն:

Խոզի գոճիների ճղճղոցից գայրացած կոնդուկտորը բարկանում եր ուրոջ վրա...

Կուդանեմ, — շարունակ կրկնում եր կոնդուկտորը:

---

Լուսաբայի ուշադրությունից էլ չեյին վրիպել զատկական պատրաստությունները:

Լուսաբայի կարգադրությամբ Փանիան մաքրեց բոլոր սենյակներն ու տոնին համար սարքավորում տվեց:

Լուսաբան ցուցակագրեց հարկավոր մթերքներ, խմիչքներ, քաղցրավենիք և տվեց Փանիային...

Փանիան հազիվ եր քարշ տալիս ծանր զամբյուղը...

Գրիգոլը բավական ուշ վերադարձավ ֆաբրիկայից:

Նա խորագին նայեց անսովոր պատրաստություններին:

Սենյակների անծանոթ սարքավորումն էլ զարմացրեց նրան...

— Մայրի՛կ, պասկանե՞ր.

— Կասնեմ, վորդյակս, անպատճառ կասնեմ... Լավ ժամանակ յեկար Գրիշա... Ի՞նչպե՞ս ես հավանում:

Ժպտալեն մոտեցավ Լուսաբան Գրիգոլին և ձեռքով շոյեց նրա գլուխը...

Գրիշա, ինչո՞ւ յես տխուր… Վոչվոքին չե՞ս հրավիրել վաղվա համար…

Լուսարան նստեց:

— Վո՛չ:

— Հետո, ինչո՞ւ Գրիշա. այդքան պատրաստությո՞ւն…

— Այո՛, այսքան պատրաստություն և վոչ մի խոսք նրա կարևորության, նրա անհրաժեշտության մասին:

— Հայրիկ, յե՞րբ կբերես պասկան:

— Լուսարա, ինչի՞ նման է սա.

— Ի՞նչ պատահեց, Գրիշա, ի՞նչ յեղավ.

— Ինչո՞ւ յես յերեխայի միտքը թունավորում հիմար բաներով.

— Վոչինչ չեմ հասկանում…

— Լուսարա, ինչո՞ւ յես յերեխային սովորեցնում յեկեղեցական սնոտիապաշտական ծեսերը… ի՞նչ պասկա… ինչի՞ն է պետք պասկան: Այ, կնիկ, յերեխան անպայման պասկաների կարի՞ք է զգում.. Ի՞նչ բան է պասկա… Յերեխան ի՞նչ գիտե պասկայի մասին…

Ինչո՞ւ յես թունավորում յերեխայի միտքը, ինչո՞ւ…

— Գրիշա, դու հիվա՞նդ ես.

— Սխալվում ես, յես ինձ շատ առողջ եմ զգում, սակայն այս դարձվածքը, այս քաղքենիական քաղաքավարությունը (թե անքաղաքավարությունը) հենց հիվանդության մի ձև է… Յես հիվանդ եմ նրա համար, վոր…

— Գրիշա՛, Գրիշա՛, դու սարսափելի տեսք ունես…

— Լուսարա՛.

— Գրի՛շա.—Լուսարան գունատվեց Գրիշայի աղաղակից:

— Լուսարա՛.

— Մայրի՛կ…

— Գրիշա հանգստացիր, յերեխան կվախենա… ցավդ տանեմ, Գրիշա…

— Լուսարա, ինչո՞ւ յես Գուրամին թունավորում…

Բարկացած ու կարմրատակած Գիգաուրին շտապ վեր թռավ ու փարթամ դահլիճում մի քանի զիգզագներ անելուց հետո… վերջը մոտեցավ լուսամուտին… Նայեց փողոցում անց ու դարձ անող ժողովրդին ու հուսահատ բացականչեց.



— Մի՞թե ամեն ինչ այսպիսի վախճան պիտի ունենար… Մի՞թե սրա համար հարկավոր եր պայքար ու անթիվ զոհեր…

Ներս յեկավ Լևանը…

— Նոր ի՞նչ կասես, Գրիշա.

Գրիգոլը Լևանի տարորինակ հարցից ապշեց…

— Վաղը, կարծեմ, աշխատանքի ո՞ր է լինելու.— շարունակեց Լևանը:

— Մի՞թե,— վիրավորված հարցրեց Լուսարան…

— Լրագրերում այսպես է գրված և…

— Այո՛, բայց… Լուսարայի ձայնը խանգարված ռադիո-ընդունողի նման խզվեց և ուղղակի ընկավ իր սիրած փափուկ բազկաթոռին… Իսկ Լևանն ագահաբար նայում եր պահարանի գլխին շարած անուշահամ ու թանգարժեք խմիչքներին ու մերթ ընդ մերթ բերնի ջուրն առատորեն կուլ տալիս…

## 16

Հենց վոր ինժեներ Կարպովը նշանակվեց տեքստիլ ֆաբրիկայի կառուցողական բաժնի ղեկավար, ամեն ինչ անմիջապես փոխվեց. մեռած ու սառցման կետին կանգնած աշխատանքները վերսկսվեցին և յերկար ժամանակ անուշադրության մատնված բանվորական կտուրների թիթեղները գրնգացին մուրճերի հարվածներից:

Ամենուրեք յերևաց շինարար ձեռքի շնորհքը. Ֆաբրիկան յեռ ու զեռի մեջ եր…

Ֆաբրիկի բակում հաճախակի յեր լսվում սայլերի ճռճռոցը, ուր ավազ մաղողների շրջանում յերևաց մի անծանոթ յերիտասարդ բանվոր… Աշխատանքի նոր ընդունված բանվորը, վորի ով լինելու մասին դեռ վոչ վոք գաղափար չուներ, ամենայն բարեխղճությամբ կատարում եր իր վրա դրված սև բանվորի պարտականությունները…

Վաղուց հետե չափրած միրուքը, միշտ քրտնաթոր, ագահաբար վերցնում եր փոշին ու ավազը…

Յերիտասարդ բանվորն անդադրում գլխիկոր աշխատում եր և գաղտնի շարունակ իր ձեռքի ափին եր մտիկ անում… Ծանր աշխատանքին անսովոր ձեռքերը ցավում եյին…

Այնուամենայնիվ նոր ընդունված բանվորը հավասարամտու-թյամբ շարունակում էր աշխատանքը և իր ով լինելը պարուրում թանձր մշուշի մեջ...

— Յես ամարեցի փուխարա յեմ... Բակուրիձե,— ասում էր նա, յերբ նկատում էր, վոր արված հարցին վորևէ ձևով պիտի պատասխանի, խուսափելը հնարավոր չէ...

Բանվորներն էլ հավատում եյին Բակուրիձեյի ասածներին ե...

— Թամրի՛կ, հանգստացիր... Թութունդ ծխիր,— ամեն կող-մից ձայնակցում եյին բանվորները, յերբ տեսնում եյին, վոր նա աշխատանքով տարված հանգստանալու մասին չէր էլ մտա-ծում...

Թամրիկ Բակուրիձե.

Ջալիկո Բակուրիձե...

Բակուրիձեն—փուխարա և սև բանվոր...

Բակուրիձե՞...

Սակայն ինչու յենք շտապում...

Թամրիկը հնդկացի Ֆակիրի նման ճարպիկ է աշխատանքի մեջ:

Ջալիկոն արագավազ է և վրացական ճաշկերույթների լա-վագույն անդամ... Թամրիկը հավասարամիտ մարդ է և իր պարտա-կանությունները կատարում է ամենայն բարեխղճությամբ:

Աշխատավարձը.

Յոթանասուն ռուբլի և...

Թամրիկը դրանով բավարարվում է...

Դժգոհության նշույլ անգամ չես լսի նրա բերանից, յերբ հա-ճախակի գանգատների տարափներ են տեղում մի քանիսների կողմից:

— Ինչ քիչ ռոճիկ են տալիս...

— Նույնիսկ չոր հացի հերիք չի անում...

— Մի ամիս է արդեն՝ մի կվարտ գինի անգամ չեմ խմել...

— Ի՞նչ ես ասում. մի կվարտ գինին ռոճիկի քանակի սակա-վության մասին շատ քիչ բան է ասում.

— Հապա ի՞նչ, դու յել խոսում ես, է՛լ...

— Գինու դարդն ո՞վ ունի, դրա պակասը հո զգում ենք ու զգում. Ես անուեր Ֆաբրիկայում արդեն մի տարի ու կես է ինչ



աշխատում եմ և մի լուծ յեզ կամ գոմեշի վարձագին անգամ չեմ տեսել:

— Ի՞նչպես, Քիտո, դու գյուղացի՞ յես.

— Իհարկե, գյուղացի յեմ:

— Հետո՞, էստեղ ի՞նչ ես անում.

— Ինչպես թե ինչ եմ անում, յեզ-գոմեշ եմ ուզում, չլսեցի՞ր.

— Յեզ-գոմե՞շ.

— Հա՛ ու հա՛...

— Ճիշտ է, բայց դու հո քաղաքի բանվո՞ր ես.

— Յես ինչ գիտեմ, դեռևս վոչինչ չունեմ ու...

— Քիտո, յեղբայրս, այդպես լավ չէ, կամ էս կողմ պիտի լինես, կամ էն կողմ... կամ գյուղում պետք է ապրես ու ընտա-նիքդ ապահովես կամ էստեղ-քաղաքում...

— Ի՞նչ ես ասում... սրտնեղած պատասխանեց Քիտոն և բան-վորներին նայեց...

— Հապա, ի՞նչպես ես ուզում. դու էսօր մի ձեռքիդ ճիպոտ ես բռնել, իսկ մյուս ձեռքիդ էլ՝ կացինն ու մուրճը...

— Բա ի՞նչ անեմ, ա՛յ մարդ—փոքր ինչ ամաչելով ասաց Քիտոն,— քանի դեռ ես Ֆաբրիկայում շտատնի չեմ դառել, ինչ-պես կարող եմ գյուղից ձեռք քաշել, հա՞...

— Քիտո՛, կամ այս կողմ, կամ այն կողմ... թե չէ... լինել գյուղում և քաղաքում—անկարելի յէ... շուտով այս առթիվ դեկ-րետ էլ կհրատարակվի...

— Ճի՞շտ.

— Ճիշտ, բա ի՞նչ ես կարծում:

Քիտոն մտածմունքի մեջ ընկավ: Նրա մեջ խոսեց մասնավոր սեփականատիրոջ սերն ու տասնիններորդ դարու մարդը: Ի՞նչպես. յեթե քաղաքի բանվոր եմ, գյուղից պետք է ձեռք վերցնե՞մ. իմ պապական հողն ու ջուրը, գույքն ու կարողությունն ուրիշին հանձնե՞մ. ի՛մ, ի՛մ քրտինքով վաստակած հողերն ընդհանրացնե՞մ. ի՞նչպես, ի՞նչպես, ի՞նչպես, այ մարդ, եդ բովանդակությամբ էլ դեկրետ կլինի՞. եդպիսի ապօրինի բանը կարող է դեկրետ ու օրենք դառնա՞լ: Հետո՞, դրանից հետո էլ ի՞նչ, վոտնե՞րս է պետք ձեր քաղաքն ու քաղաքի սոցիալիզմը...

Քիտոն դառնացավ... Ծանր թախիծ ընկավ նրա դեմքին և սև մշուշ պատեց նրա սիրտը...

—Տատե, ճիշտ եք մտքով դեկրե՞տ է լինելու,— հարցրեց նա վախեցած:

— Լինելու չէ, բա՛ս.

— Հետո և...

Բիտոն ուզում էր ասել. չէ՞ թե քաղաքը թողնի ու գյուղ գնա ենտեղ՝ ձեռք չեն տա իրեն. բայց, այլևս բան չավելացրեց իր անկապ խոսքին և գլուխը քորեց...

Բակուրիձեն առանց գլուխը բարձրացնելու անդադար աշխատում էր ավազամաղի վրա և կեղտոտ ձեռքերով ճակատի քրտինքը սրբում...

Աշխատանքի սիրով տարված Կարպովն ուշադրությամբ զննում էր ամեն ինչ. նայում բոլոր աշխատանքներին սրտացավ հոգատարությամբ. շարունակ պտտվում էր բուրդ լվալու աշխատանքների և շենքի հիմքը կառուցողների շուրջը. հսկում էր բոլորին, ամեն ինչ ինքն անձամբ չափում ու ձևում և ամեն աշխատանք կատարում էր օգնական ինժեներների և տեխնիկների հետ խորհրդակցելով:

— Բակուրիձե՛, վաղվանից դու ինձ մոտ կաշխատես... ինչպես երևում է ղոչաղ տղա ես, և հարվածայինների խմբում հենց քեզ նման ղոչաղ տղաներ են հարկավոր...

— Վաղվանից մեր խումբը հայտարարելու եմ հարվածային...

Բանվորները շրջապատեցին Սուլակաուրուն...

— Ի՞նչպես թե հարվածային,— ձայնակցեցին այս ու այն կողմից:

— Հիշո՞ւմ եք, չէ՞ որ երեկ բաղվեցիների հետ սոցմրցման պայմանագիր կնքեցինք, այդ պայմանագրի մեջ շատ պարզ ասված է՝ աշխատանքը դարձնել արդյունավետ, այնպես անել, որ շինարարությունն էժան նստի և այլն. ի՞նչ եք կարծում, մի՞թե այս բոլորը հնարավոր է առանց հարվածային բրիգադների:

Յեվ, վորպեսզի հարվածային միջոցներ կիրառես, վորպեսզի սոցմրցումը կյանքում անցկացնես, հարկավոր է ֆաբրիկի ներսում խումբը խմբի հետ մրցման դուրս բերել. այդ պատճառով վաղվանից ձեզ իմ խմբով մրցման եմ հրավիրում Վանո Սադվա-



ռելիձեյի խմբին... Վանոյի խումբն էլ մրցման կկանչի Նոնիկաշվիլուն և այլն...

— Ուրեմն հարվածենք, էլի՞,— վոգևորված բացականչեցին բանվորները...

Հարվածենք, են էլ ի՞նչպես... Այսպես... ընկ. Բակուրիձե, վաղը կներկայանաս ինձ...

— Ուրախությամբ,— նեղացած տոնով պատասխանեց Բակուրիձեն Սուլակաուրուն և մտամոլոր հենվեց թիու կոթին...

— Մոտիկանալ Սուլակաուրո՞ւն... Սուլակաուրու հարվածային խմբո՞ւմ...

— Սուլակաուրու մո՞տ... Սուլակաուրին արթուն է և սուր հոտառության տեր, սակայն... ուրիշ ելք չկա...

Հրաման է և, յուրաքանչյուր հրաման՝ առանց առարկության անմիջապես կատարվում է ինժեներ Կարպովի պաշտոնի կոչվելու օրվանից:

— Ուրեմն, վաղվանից Սուլակաուրու գնդում... ավարտեց իր տրտունջը Բակուրիձեն և տխրադեմ հայացք նետեց նորակառույց ֆաբրիկի շենքին:

Զալիկոն (ներողություն Ռամիզը) սև բանվորի աշխատանքները վերջացնելուց հետո, զզվանք արտահայտող տրամադրությամբ հոնքերը կիտեց ու գնաց դեպի ֆաբրիկի գրասենյակ...

— Ընկ. Բակուրիձե, դուք վաղվանից Սուլակաուրու հարվածային խմբումն եք աշխատելու:

Ժպիտը դեմքին դիմեց տաբելչչիկը Ռամիզ Բակուրիձեյին:

— Այո՛,— նույնպես ժպտադեմ պատասխանեց Ռամիզը,— ընկ. Սուլակաուրին մի փոքր առաջ արդեն այդ մասին ասել է ինձ և վաղվանից նրա գնդումն եմ աշխատելու...

— Ընկ. Ռամիզ, այսուհետև լավ ղեկավար կունենաք...: Գիորգի Սուլակաուրին հրաշալի մարդ է...

— Հաճելի չէ...

Տաբելչչիկը Ռամիզից հեռացավ. վերջինս զզվանքով լի հայացք նետեց հեռացողի յետևից և ինքն իրեն փնթփնթաց — գնա՛, քո...

«Լավ ղեկավար»... լավ ղեկավար... տեսնենք...

Տեսնենք, ո՞վ ո՞ւմ...

Փոքրիկ, մութ ու խոնավ սենյակում թութունի ծխի ծանր ող էր կանգնած, հատակին էլ թափված էին ոտքերի տակ տրորված ծխախոտի մնացորդներ։

Սենյակում ամեն ինչ խառն ու խուռն էր—թափթփված։

Փոշոտ իրերն ու կեղտոտ հատակը պարզ վկայում էին, որ սենյակը յերկար ժամանակ կարգի չէր բերվել…

— Զալիկոյին ո՞ւր ճամբեցիր, Լևա՛ն,— վերջապես հարցրեց Աբեսալոմը։

— Զալիկոյի՞ն.

— Հա՛… շատուց է ինչ նա մեր շարքերում չի յերևում այլևս…

— Լոմջարն ուշադրությամբ զննեց Լևանին.

— Զալիկո…

Լռություն տիրեց. Լևանի պատասխանն ուշացավ…

— Ի՞նչ շատ եք դժվարանում ճշմարտությունն ասելու,— բարձրաձայն ու բարկացած աղաղակեց Աբեսալոմն ու տեղը փոխեց,— ուրիշ դեպքերում բավական ճարտասան եք…

— Չե՞ս ամաչում, Աբեսալոմ,— ժպտալից դիմավորեց Լևանը Աբեսալոմին, նպատակ ունենալով գործի իսկական էությունը մթագնել, որպեսզի Լոմջարի մեջ որևէ կասկած առաջ չգար։

— Զալիկոյին ուղարկել եմ մի փոքր գործի և յերբ կվերադառնա, ամենքդ էլ կիմանաք նրա որտեղ լինելու մասին, իսկ մինչ այդ… շատ լավ գիտեք, որ պետք պահպանվի խստագույն գաղտնապահություն… կարծեմ հասկանալի յե, բարեկամներս։

— Հասկանալի յե,— գլուխը թափահարելով ասաց Լոմջարը,— սակայն անհասկանալին այն է, որ ինչ ինձ համար լինում է գաղտնի, այդ նույն բանը շատ հեշտությամբ մատչելի յե լինում ուրիշներին և, յերևակայեցեք, անգամ օտար մարդկանց… այս բանը, անկեղծորեն ասած, մի քիչ մտածելու առիթ է տալիս ինձ…

— Չե՞ս ամաչում, Աբեսալոմ,— դիտմամբ փաղաքշեց Լևանը Լոմջարին և ի նշան բարեկամության ու մոտիկ հարաբերության, ձեռքը թեթևակի դարկեց նրա ուսին, մի փոքր կռացավ և ականջին ինչ որ բան փսփսաց։



— Դա սուտ է, ընկեր Լևան, չեմ հավատում…

— Հավատացնում եմ քեզ, Աբեսալոմ, յերդվում եմ պատվովս։

Լոմջարը լռեց։

Մեռելային լռություն տիրեց սենյակում։

Յերկուսն էլ անհարմար զգացին, առանց այն էլ նեղ ու արտնեղություն առաջ բերող սենյակում։

Այս ու այն կողմից զոռով հազի ձայներ լսվեցին։

Կարծես ամենքն էլ մի բան էին ուզում ասել, զանազան պատրվակներով ցանկանում էին նոր զրույց սկսել, բայց…

Իրար հետ մրցում էին զսպվածության մեջ։

Այո՛, թերևս կարևոր է իմանալ, ո՞ւմ համար է ձեռնտու մեր գաղտնի գործունեությունը,—լռությունն ընդհատեց Նոդարը։

— Ո՞ւմ համար,— մեքենայորեն դուրս ժայթքեց Լոմջարի սրտից,— ում համար ցանկանում եք, միայն ոչ ինձ համար,— Աբեսալոմը նորից փշաքաղվեց։

— Այնուհամենայնիվ հետաքրքիր է իմանալ, ո՞ւմ համար։

— Հերիք է Նոդա՛ր, այս խնդիրը չի կարող որևէ մեկի քննության առարկա դառնալ և ոչ էլ հրապարակ է դուրս բերվելու… Այս բանը գիտե Լոմջարը և դու, Նոդար. նորից ես պատմությունն սկսում…

Լևանն աչքով արավ Նոդարին և, նա յել փոքր յերեխայի նման իսկույն պապանձվեց։

Ճիշտ է, Լոմջարը գիտե, որ ընկերները նրան կասկածով են վերաբերվում և այդ պատճառով խոշոր նշանակություն ունեցող հարցերի քննության դեպքում մինչինչ չեն հարցնում, ընկերոջ տեղ չեն ընդունում նրան թեև…

Յես սրանից մի քանի որ առաջ հայտարարել էի, որ այսօր էլ, առավել ևս չեմ հասկանում մեր ներկա աշխատանքի բովանդակությունը և յեթե կուզեք՝ նպատակը. բայց և այնպես հետաքրքիր է գիտնալ, քանի որ բոլորս ընդհանուր առմամբ լծված ենք աշխատանքի—իմանալ վերջնականապես, թե՝ ի՞նչ ենք անում, ի՞նչ նպատակի յենք ձգտում և ո՞ւմ համար…

Աբեսալո՛մ, դու այդպե՞ս ես կարծում. իզուր, յերդվում եմ պատվովս… սխալանքներ ո՞վ չունի, վայրկենական բորբոքման

պարագայում ո՞վ չի դժգոհել, սակայն սա դեռ չի նշանակում, վոր մենք մեր ընդհանուր գործից հրաժարվում ենք... Աբեսալոմը փորձված ու տոկուն հեղափոխական է, և յես համոզված եմ, վոր նա բավականաչափ ուժ և յեռանդ կունենա արիաբար տանելու այս ամենը՝ փարատելով կասկածների վրա հիմնված ամեն տեսակի տարակուսանքները.

— Ճշմարիտ է,— բոլոր ընկերները հաստատեցին Լևանի ասածները և նայեցին Լոմջարին.

— Յեթե ճշմարիտ է, հապա ինչո՞ւ յեք ինձ տարակուսանքի մեջ գցում.

— Այսինքն, ի՞նչ տարակուսանք,— հարցրին ամեն կողմից:

— Այն, վոր դաժան խոնխայով ժպտաց Աբեսալոմը.—դուք ճգնում եք աչքերս գոցել, կարծես թե յերեխայի հետ լինեք խաղալիս, յերևի համոզված լինելով, վոր յես՝ իրոք քթիցս դենը վոչինչ չեմ տեսնում, սակայն, դժբախտաբար բանն էլ հենց այն է, վոր դուք հարաչար սխալվում եք, և յես էլ ձեր ջղրու չեմ խաբվում:

— Աբեսալո՛մ, զարմանալի յե, յերդվում եմ պատվովս...

— Նույնիսկ զարմանալի՞...

— Հապա ուրիշ ի՞նչ կերպ հասկանալ քո անսովոր կասկածամտությունն ու շարունակ անվստահության մասին խոսելը:

Յեթե հարցը կրկին վերաբերում է Զալիկոյի գործուղման և այդ գործուղման նպատակին ակնհայտ դարձնելուն, նորից մի ավելորդ անգամ կրկնում եմ, վոր կարիք չի զգացվում բոլորովին գաղտնիքը բանալու՝ դա մեր կոնսպերացիան է.

Փակագծերը չպիտի բանալ...

— Նոր յեկած եմիսարը, մեզանից ի՞նչ է պահանջում. ի՞նչ առաջադրանքներ է տալիս.— կատեգորիկ կերպով պահանջեց Աբեսալոմը և վոտի յելնելով դեմ առ դեմ կանգնեց Լևանի առաջ:

— Վո՞ր եմիսարը,— զարմացավ Լևանը, սակայն, վորպեսզի գունատվելն աննկատելի մնար, անմիջապես ժպտաց՝ ժպտի մեջ կորցնելով դեմքի արտահայտությունը...

— Վորի հետ մենք յերկուսս էլ շատ լավ ծանոթ ենք:

— Մի՞թե, համենայն դեպս ո՞ւմ մասին է խոսքը.—հարցական հայացքով դիմեց Լևանը Լոմջարին...



— Նրա, վոր մի յերկու օր առաջ ձեզ նոր պարտավորություններ հանձնարարեց:

— Ի՞նչ... պարտավորություննե՞ր...

— Այո՛, ձեզ և վոչ ուրիշ վորևէ մեկին... ի՞նչ պարտավորություննե՛ր, չեմ հասկանում....ինչո՞ւ չես հասկանում:

Լևանի համար այժմ ամեն ինչ պարզ ու հասկանալի դարձավ:

— Վո՞րտեղից, ինչպե՞ս,— մտածում եր ինքն իրեն Լևան Գիգաուրին, բայց մտածելու ժամանակը չեր այլևս...

— Ջե՞ս տալ, բարի: Ասացեք խնդրեմ, ո՞ւմ համար եք հավաքում ռազմական գաղտնիքները.

— Ռազմական տեղեկություննե՞րը...

— Այո՛, ռազմական, և ավելորդ խոսակցության կարիք էլ չկա,— ասաց Աբեսալոմը մի փոքր հանգստանալով:

— Դա սուտ է... համենայն դեպս մեծ արխկայություն է՝ քիթը կոխել այնտեղ, վորտեղ գործ չունես, կամ քեզ չեն հարցնում...

— Յերբեմն անհաճո հյուրասիրությունն էլ անհրաժեշտ է լինում,— խոսք շպրտեց Աբեսալոմը:

— Վոչ անհրաժեշտ, սակայն միշտ անդուրեկան:

— Թույլ տվեք, Լևան Գիգաուրի, վերջնականապես հարցնեմ ձեզ, մինչև յե՞րբ եք մտադիր այսպիսի աշխատանքներ շարունակելու. միթե կարևոր չեք համարում գեթ մի անգամ վերանայելու մեր անցած գործունեությունը և պատշաճ յեզրակացություն հանելու մեր առաջիկա գործունեության վերաբերմամբ: Վերջապես, յե՛ս, վորպես այս կորպորացիայի ակտիվ անդամներից մեկը՝ գոնե մինչև այսօր, պահանջում եմ ձեզնից, բայց յեթե կրկին խուսափողական պատասխան տաք իմ օրինական պահանջներին և նորից շարունակեք ձեր մեկուսացած գործունեությունը, այն պարագայում, չնեղանաք յեթե մի քանիսներս անջատվենք ձեզնից, մեկուսանանք և մեր ապագա աշխատանքների հեռանկարները մենք ինքներս ուրվագծենք՝ ձեզնից անկախ:

— Շատ բարի, Աբեսալոմ, վերանայենք, ո՞վ է դրան դեմ,— վորպես թե զարմացած պատասխանեց Լևանը. մի բան, վոր աննկատելի չմնաց Աբեսալոմի համար:

—Վերանայենք, բայց անշուշտ այդ չի նշանակում, վոր

մենք գործնական աշխատանքներից պիտի ձեռք քաշենք և հազիվ հազ գործի գցած ապարատը դադարեցնենք:

— Յեթե այս դեպքումն էլ սուտ չե՞ք խոսում, նշանակեցեք ժամկետը— յե՞րբ և վո՞րտեղ...

— Ինչքան է պետք ժամկետը, հենց վոր հնարավոր կդառնա...

— Հնարավո՞ր...

— Տո՛, հեր օրհնած, եգուց հո չե՞մ կարող համագումար հրավիրել և մեր գործունեյության խնդիրները քննության առնել.—

Հեգնական տոնով պատասխանեց Լևանը:

— Յեթե մեր այս տարտամ դրությունը մի ամիս էլ շարունակվի, այն ժամանակ, յես կվարվեմ այնպես, ինչպես կթելադրի իմ գիտակցությունը: Ահավասիկ այս է իմ վերջնական նախազգուշացումը:

Ամենքն իրար նայեցին:

Դարձյալ լռություն տիրեց սենյակում:

Դարձյալ տխրությունը թագավորող դարձավ ամենքի սրտին ու մտքին:

Մտածմունքների մեջ խորասուզված Լոմջարն ու Լևան Գիգաուրին իրար էյին նայում. չափում-ձևում՝ գալիք իրար դեմ ունենալիք հնարավոր բաղխումները: Յեվ ամեն մեկն իր մտքում ինկատի յեր առնում ու մշակում ապագայում իրար վրա հարձակվելու ծրագիր:

18

Շինկոմում ռադիոյի արագությամբ տարածվեցին Փաբրիկայի հետազոտման արդյունքները:

Շատերը խիստ տխրեցին՝ վնասարարների բունը քարուքանդ լինելու հետևանքով:

Շատերն էլ ուրախությունից ծուլ-ծուլ էյին լինում:

Պողոսովը լրջությամբ կարդաց այն բոլոր ակտերն ու ճառախոսների արձանագրված յելույթները, վորոնք կասկածանքով էյին վերաբերվում նաև դեպի Պողոսովը. նա ակամա այն յեզրակացությանն հանգեց, վոր նրա բարեկամական վերաբերմունքը



դեպի Մելիքովը չափազանցրած է, հարկավոր է մի քիչ մեղմացնել... և...

Լոկ «ազգակցական» պաշտպանություն է յեղել և ուրիշ վոչինչ... ինչպես... տնավարի... Շատերը նույնիսկ չգիտեյին, վոր Մելիքովը Պողոսովի փեսան է և մոտիկ բարեկամը:

Ի՞նչ արած.

Բարեկամությունը հասկանալի յե առանձնահատուկ պայմաններում և վորոշ ժամանակին, սակայն...

Յերբ այս բարեկամությանը զոհ է գնում իր՝ Պողոսովի անձնական գործը, Պողոսովն այս ճամբով չի գնա:

Պողոսովը հետազոտումից հետո ամբողջ մի շաբաթ այսպես էր մտածում ու տրամաբանում:

Յեվ վերջում.

— Կարելի յե՞,— ամաչկոտությամբ բացեց Պողոսովը Գիգաուրու առանձնասենյակի դուռը և խոնարհ բարև տվեց աշխատանքներով տարված դիրեկտորին:

— Համեցե՛ք, նստե՛ք.— պաշտոնական քաղաքավարությամբ ընդունեց իր տեղակալին ու այնպիսի դիրք ընդունեց, վոր կարելի յեր հետևցնել՝ «պատրաստ եմ, ձեզ լսելու»:

— Ընկ. Գրիգոլ,— անհամարձակ տոնով սկսեց Պողոսովը— անչափ ցավում եմ անցյալ սխալների վերաբերմամբ, իմ անփութության և այս անփութությունից բղխած անցանկալի հետևանքների համար. անցանկալի հետևանքներ, վորոնք, ակնհայտ է, իմ վարկաբեկման հետ միասին, վարկաբեկվելու յե նաև մեր տրեստի հազար ու մի տանջանքներով ձեռք բերած դիրքն ու հեղինակությունը: Այս բոլորը չեր կարող մտատանջություն չպատճառել ինձ. հենց այսօրվա իմ զրույցը ձեզ հետ այդ խնդիրների շուրջը ապացույց է, վոր յես արդեն զգում ու խոստովանվում եմ կատարած սխալներս:

— Լսում եմ, շարունակե՛ք,— պաղարյունությամբ հատարարեց Գիգաուրին:

— Բանն այն է, ընկ. Գրիգոլ, վոր յեթե յես Մելիքովին պաշտպանում էյի, լոկ այն պարզ պատճառով, վոր նա իմ փեսան էր, բնական է, ուրեմն, վոր բարեկամական փոխհարաբերության մեջ լինեյի նրա հետ...

Այսօր, ինչպես վերջնականապես պարզվեց ինձ համար, Մե-

լիքոլի գործունեությունն ափաշկարա հակահեղափոխական ու վնասարարական բնույթ է կրել և անշուշտ նա արդեն մոտենում է իր վողբերգական վախճանին։

— Այդ բոլորն այդպես է, դժբախտաբար...— ընդհատեց սառնասրտությամբ Գիգաուրին...

— Այո՛, գործը շատ է բարդացել և իմ սխալներն էլ անպայման ստանում են քաղաքական բնույթ, և այդ սխալներն այնքան լուրջ են ու խորը, վոր յես փոքրիկ փորձ անգամ չեմ անում՝ ազատվելու պատասխանատվությունից. սակայն սկսված գործն ավելի լուսաբանելու և իմ ու Մելիքովի փոխհարաբերությունների ամբողջ պատկերն ավելի ցայտուն դարձնելու համար, նպատակահարմար եմ գտնում պատշաճ բացատրություն գրելու... նորից կրկնում եմ, այս բացատրականով յես բնավ չեմ ցանկանում անձս պատասխանատվությունից զերծ պահելու, վո՛չ, ուզում եմ, վոր մի փոքր լույս սփռեմ իմ և Մելիքովի փոխհարաբերության գործում...

— Բարի, գրեցեք և... մի առ մի գրեցեք ձեր՝ Մելիքովի հետ ունեցած կապի մասին, ինչպես անցյալում, այսինքն՝ մինչ Մելիքովի ձերբակալվելը, այնպես էլ ներկայումս և նույնիսկ ապագայում էլ... հայտարարությունը տարեք վերաքննիչ հանձնախմբին՝ ընկ. Բերքաձեյին, նա գիտե Ֆաբրիկայի գործը... ուրեմն ձեր դիմումն էլ կկցվի ընդհանուր գործին...

— Ցերեկի գործն էլ շուտով կքննվի և...այն ժամանակ այնտեղ ավելի հիմնավորապես կխոսենք... կարծում եմ, այսպես ավելի համար կլինի... ի՞նչ կասեք...

— Ցես էլ եմ այդպես կարծում։

Պողոսովը վերկացավ տեղից, մի տեղում շրջան գծեց, աննպատակ ու ծանր հազաց, դարձյալ մի բան պիտի ասեր, սակայն գերադասեց լռել...

— Կաշխատեմ, վոր գործն արագացնեն,— կրկնեց դիրեկտորն ու սկսեց թղթերը դիտել։

Պողոսովը մտախոհ դուրս յեկավ Գիգաուրու առանձնասենյակից, գործավարից մաքուր թուղթ պահանջեց, մտավ իր առանձնասենյակը, դուռը պինդ դոցեց և սկսեց վերաքննիչ հանձնաժողովի անունով դիմումը...





Ցերեկներն որբատորեն յերկարում էյին, անողոք պայքար մղելով մայիսյան գիշերների դեմ և մշտական չոր գետինը շարունակ ծածկված էր ծովի նման կապտավուն յերկնակամարով։

Հաճախակի փչում էր զովարար քամին...

Արեգակի ճառագայթները չեշտակիորեն այրում էյին տանիքների թիթեղները։

Ցերեկն էլ կայծակներ էյին զարկվում շանթարգելներին...

Սակայն մի փոքր անց՝ արեգակը կրկին փայլփլում էր լվացած թիթեղյա կտուրների վրա։

Փողոցներում կանգնած էր փոշով հագեցած ծանր օդը և յերեսները լվացած չինարները հարբած մարդկանց նման, դանդաղորեն տարուբերվում էյին քամու յուրաքանչյուր շարժումից։

Աղմուկ ու ժխոր էր բանուկ փողոցներում և ռադիո-բարձրախոսներն էլ զառանցում էյին նորանոր լուրեր։Արևմտյան կվարտալներում տիրող ճշմարիտ և կեղծ լուրեր. «Լեհաստանի իշխանությունը վրացի էմիգրանտներին իրավունք տվեց Լեհաստանի տերրիտորիայում տոնելու Վրաստանի անկախության ինչ վոր տարեդարձը»։

«Մեքսիկայում սկսվել է դանդերի ապստամբությունը»։

«Հուվերը տեսակցություն ունեցավ (և ճաշով հյուրասիրեց) պատերազմի խեղանդամների (ինվալիդների) հետ»։

«Պան Պիլսուդսկին իր ամառային արձակուրդը կանցկացնի Ռումինիայում»։

«Անգլիական բարձր խավերը մտածում են— Անգլիայի և Խորհրդային Միության հարաբերությունների մոտիկ ապագայում վերականգնելու մասին»։

Մի խոսքով.

Լուրեր և բամբասանքները մի վայրկյան հանգիստ չեն տալիս մարդկանց։

Լրագիր-ամսագրերում, ակումբներում, պարտեզ-զբոսավայրերում, փողոցներում և նույնիսկ սեփական բնակարաններում անգամ, ամեն տեղ և ամենուրեք լսելի յեր ժխոր, աղմուկ, շարժում, ռադիո-բարձրախոսների խրխռոց և այլն։

Առավոտվա ժխորից ու աղմուկից Լուսարան էլ զարթնեց։ Սեղանի վրա դարսած լրագրերն աչքի անցրեց։ Վեր կացավ։ Երկայն խալաթը հագավ և բարձր հայելու առաջ մազերը սանրելու և կանոնավորելու համար՝ մի քանի անգամ պտույտ յեկավ...

Վարագույրները յետ քաշեց, պատշգամբում նստած Լևանին տեսնելով՝ ինքն էլ լրագիրը ձեռքին մոտեցավ.

— Լևա՛ն.

Սովորական քաղաքավարությամբ Լուսարան դիմեց իր տեգր Լևանին՝ դուրս գալով ննջարանից աչքերը տրորելով և հորանջելով.

Լևանը խորասուզված էր ինչ-որ մտածմունքների մեջ.

— Ի՞նչ կասես անկախության վերաբերմամբ կազմակերպված դեմոնստրացիայի մասին.

— Ո՞րտեղ,— անհամբերությամբ հարցրեց Լևանը և իր անսահման հուզումը չկարողանալով զսպել՝ շտապով վեր կացավ տեղից։

— Լեհաստանում... Լեհաստանի հող ու ջրի վրա...

Դեռ վրայի սև ներկը չչորացած լրագիրը հրամցրեց Լևանին, իսկ ինքը հոգնած ու ջարդված շարժումներով և հորանջելով (իրանի դրացիող տարուբերումով), ճիշտ այնպես, ինչպես կաներ անքուն գիշերներ անցրած, կրքոտ ու վավաշոտ ժամերով համակված մի կին. վերադարձավ իր ննջարանն ու նորից իր սովորության համաձայն՝ նստեց տուալետի առաջ։

Լուսարան յերկար ժամանակ նստած էր տուալետի առաջ...

Երկար ժամանակ հայելու մեջ նա զմայլվում էր իր դեմքով... Սակայն...

— Ցտեսություն, մայրի՛կ,—քաղցրահնչյուն ձայնեց Գուրամը և կախվեց մոր պարանոցով...

Լուսարան տաք համբույրներ դրոշմեց Գուրամի ճակատին և...

— Փանիա, Գուրամին զգուշությամբ կտանես... Ճանապարհին վոչինչ չպատահի...— զգուշացրեց Լուսարան ծառայողին։

Լուսարան մռայլվեց...

Գուրամը զրուցելով բաժանվեց մորից և բռնելով Փանիայի ձեռքը դուրս յեկավ բակը...



Գրիգոլի համառ պնդումով վերջապես Լուսարան համաձայնվեց Գուրամին ուղարկել մանկապարտեզ, և իրոք, ահա յերկու որ է, ինչ յերեխան ուրախ, թռչկոտելով, Փանիայի ուղեկցությամբ գնում էր մանկապարտեզ...

— Գուրամի՛կս, իմ պստլիկ տղան,— տխուր ախ քաշեց Լուսարան և հյուրասենյակ մտավ...

— Ամբողջ չորս ժամ յես վո՛նց դիմանամ... ա՞խ աստված իմ. այս ի՞նչ արեց Գրիգոլը...

Շատ ծանր թվաց Լուսարային Գուրամի ամբողջ որով բացակայելը...

Նրա համար դժվար էր մեն-մենակ մնալ տանը...

Նրան այլևս չեյին զբաղեցնում վո՛չ գրքերը, վո՛չ անհոգ ապրուստը և վոչ էլ... Լուսարան ամբողջ որը հոգեկան հիվանդի նման մի սենյակից մյուսն էր անցնում և միակ մխիթարությունը գտնում էր Գուրամի խաղալիքների մեջ...

Գուրամի մանկապարտեզ հաճախելը քանի գնում ավելի և ավելի անտանելի յեր դառնում Լուսարայի համար, բայց... ինչ արած, ուրիշ յելք չէր մնացել, պետք է հոժարվեր։

Գրիգոլի կամքի ուժին Լուսարան այլևս չհակաճառեց...

Զիջեց Գուրամին և...

Փոխարենը...

Ինքը տխրեց ու ծանր վշտերով համակվեց...

Լուսարան նույնիսկ դաշնամուրին էլ չէր մոտենում... Գրքերի կողքովն անգամ չէր անցնում...

Հուսաբեկ նա նստեց իր փափուկ բազկաթոռի մեջ և խորասուզվեց մտքերի մեջ...

Լևանն արագ կերպով կարդաց շատ հակիրճ, սակայն նրա համար խիստ կարևոր նշանակություն ունեցող ռադիո-հեռագիրն ու նույնիսկ լրագիրը չծալելով՝ մտավ իր սենյակը...

Շտապ բացեց կաշվե չեմոդանը, հանեց մի հաստլիկ որագրամատյան և իր ուշադրությունը կենտրոնացրեց դրած նյութերից մի փոքրիկ հատվածի վրա։

Նա տարվեց մտքերով...

Գոցեց չեմոդանը, բանալին զգուշությամբ պահեց... Նստեց բազկաթոռի ծայրին և աչքերը բևեռեց գրասեղանին դրած Նապոլեոնի քանդակագործ արձանին...

Հոնքերը կիտած, Նապոլեոնը նայում էր հեռու, հեռու...

«Փարիզ», «Սենայի ափերը»:— Մտածում էր Լևոնը և Ֆրանսիայի հանճար—Նապոլեոնն էլ յերևի այս մտածմունքներով էր տարված: «Փարիզ», Վատերլո, Բորոդինո, Մոսկվա,—Աուստերլից... Փարիզ, ահա թե վորտեղից սկսվեցին Նապոլեոնի փառահեղ առաջխաղացումները և, Փարիզն էր, վոր սոսկալի դատավճիռ հանեց ֆրանսիական գահը նստած մյուռոնած Բոնապարտին...

Փարիզ, վորտեղից սկսվում են շատ շատերի փայլուն թռիչքն ու արշավները և Փարիզ, վորտեղ բորբոսնում, նեխվում են շատերի սին հույսերն ու տենչերը: Փարիզը չէ՞, վոր բոլոր «փախըստականների» ապաստարանն է...

Ամեն տեսակի բախտախնդիրների ոթևան...

Նույնիսկ Լևոնն էլ Փարիզից սկսեց...

Թեև, ինչ սկսեց, կամ ինչո՞ւ սկսեց,— ինքն էլ դժվարանում էր վճռական պատասխան տալ, բայց և այնպես...

Սկսեց...

Սկսեց և այցելեց Վրաստանին...

Այցելեց գաղտնի, հատուկ հանձնարարություններով....

Շատ մոտ ժամանակներին վերաբերող հրահանգներով....

Իսկ այստեղ...

Լևոնն իրագործեց այն ամենը, ինչ հնարավոր էր....

Կապ հաստատեց...

Աշխատակիցներ գտավ...

Գաղտագողի ներս ծլկվեց շինարարական բաժնի գաղտնի գործերի բաժանմունքը...

Բայց...

Մելիքովի ձերբակալվելը... նշանակում էր իմ բոլոր ծրագրերի խորտակումն...

Մելիքովի կործանումը...

Ահա Թամարն էլ գրքերով յեկավ Լևոնի մոտ...

Յեվ յերկու անբաժան ընկերներն շտապ կերպով ուր վոր մեկնեցին...

Լուարան հեռացող Լևոնին վոչինչ չասաց, միայն Գուրամի վշտերով համակված՝ ծանր ախ քաշեց...

Բայց լուսամուտներից յերևում էյին արծաթաղոծ ակացիաները: Այսօր առավոտը մեղմ էր և խիստ գուրեկան. ուրախ էյին



ու զվարթ բոլորը. կապույտ ու ջինջ յերկնակամարում գեղեցկորեն աջ ու ձախ էյին սլանում սավառնակները:

Հարևան սենյակից լսելի յեր դաշնամուրի ձայնը, սակայն այնքան կոշտ ու կոպիտ, աններդաշնակ, վոր թվում էր քեզ՝ թե հենց այդ րոպեյին աղմկելով ապրանքատար գնացքն է անցնում յերկաթե կամրջով... Առաջքաշված պատասխանատու աշխատակիցներից մեկի կինն էր, վոր նստած դաշնամուրի առաջ՝ սովորում էր նվագել. սակայն հասակն առած կնոջը՝ դավաճանում էյին և՛ յերաժշտական ունակությունները և՛ լսողությունը, և՛ կոշտացած ու կոպտացած մատները... Յեվ անշուշտ այս պարագայում գեղեցիկ յերաժշտական հարվածի ներդաշնակ ակկորդներն անգամ վոչինչ չէյին ասում նրա անարվեստ լսելիքին...

## 20

Յերկու որ անց՝ Մելիքովին կրկին կանչեցին քննիչի մոտ:

— Համեցե՛ք,—սառն ու հրամայողական տոնով դիմեց նրան քաղ. վարչության գլխավոր քննիչ Երզեմլիձեն:— Մելիքովը դո՞ւք եք:

Մելիքովի լեզուն ցամաքեց...

Նոր քննիչին տեսնելուն պես՝ նա շփոթվեց, իրար անցավ և մի անգամ արդեն անցիր արած հարց ու պատասխանն իսպառ մոռացավ...

— «Այստեղ, ինչպես տեսնում եմ, իմ ոյինները չեն անցնի», —մտածեց Մելիքովը և միանգամից միտքը փոխեց ցուցմունքներ տալու մասին...

— Նստե՛ք, խնդրե՛մ...

Մելիքովն անխոս նստեց...կարծես յերկու վոտն էլ միասին ծալվեցին, այնպես ընկավ բազկաթոռում...

— Ուրեմն, դուք ինժեներ-ելեկտրի՞կ եք...աշխատել եք հանք-արդյունաբերական գործերո՞ւմ... Յեղել եք նաև արտասահման գիտական գործուղման մե՞ջ...—կարդաց արձանագրությունը Երզեմլիձեն և խստորեն դիմեց նրան...

— Չհամարձակվեք այլևս ստել, ապա թե վոչ...հո գիտեք.— նախազգուշացրեց Մելիքովին քննիչը:

— Պատասխանեցե՛ք, ո՞վ գործուղեց ձեզ արտասահման...

Մելիքովն այլայլվեց․․․լեզուն կապ ընկավ, մինչև չկարողացավ պատասխանել․․․

— Ցես հարցնում եմ․․․պատասխանի ուշացումը նշանակում է գործից խուսափել․

— «Ցերանի, գլխավոր քննիչը ինչո՞ւ յե այսպիսի խստություն բանեցնում»․—մտածեց Մելիքովն ինքն իրեն․․․

— Ուրեմն, պատասխան չե՞ք տալիս, չէ՞․

— Ի-ի-ի-մ ա-ն-ե-ր-ո-ջ-ջ կողմից․․․—հազիվ արտասանեց Մելիքովը։

— Արդյունաբերող Մանթաշևի կողմի՞ց, այո՞․

Մելիքովի զարմանքը սահման չուներ արդեն․․․

— Այո՛, Մանթաշևի․․․—մի փոքր ուշքի գալով պատասխանեց Մելիքովն ու վորոշեց յուրաքանչյուր հարցին վճռական և ճիշտ պատասխան տալ․․․

— «Միևնույն է, ստախոսությունն այլևս չի անցնի, հետևաբար, գերադասելի յե ամեն ինչ խոստովանելը»։

— Ի՞նչ փոխհարաբերության մեջ եյիք ձեր աներոջ հետ․․․

Մելիքովը կարկամեց․․․ մի վայրկյան առաջ հանած վորոշումը՝ «ամեն ինչին ճշգրիտ պատասխան տալու»—մոռացավ, այլայլվեց․․․

— Ընպես․․․բարեկամական․․․—ծամծմեց խոսքը Մելիքովը և քրտինքը սրբեց։

— Նյութակա՞ն, թե՞ արդյունաբերական բնույթի․․․

— Վ-ո-ո-ո-չ․․․վոչ․

Երդեմլիձեն սեղանի դարակից հանեց փոքրիկ գրքույկը և դրեց Մելիքովի առաջ․

«Նավթարդյունաբերողներ՝
Ա․Վ․ Մանթաշևի, Տ․ Տ․ Մելիքովի և ընկ․
Բագու, Առևտրական փողոց, № 13»։

— Ի՞նչ կասեք․․․

— Փաստն ակներև եր․․․փաստաթուղթն ինքն իրեն խոսում եր․․․

— Ուրեմն դուք նավթարդյունաբերո՞ղ եք․․․և միևնույն ժամանակ ինժեներ-ելեկտրիկ,—աննկատելի կերպով հեգնեց Երդեմլիձեն․․․



— Իմ ինժեներության ամենալավ վկան պաշտոնական դիպլոմս է,—կարճ և հատու պատասխան տվեց Մելիքովը քննիչին։

— Դուք, բանվորական շարժումները ճնշելու գործում մասնակցություն ունեցե՞լ եք, թե վոչ․․․—հարձակողական դիրք ընդունեց քննիչը։

— Այո՛, մասնակցում եյի,— համարձակ կերպով պատասխանեց նա։

— Ինչո՞վ․

Կառավարությանն ոգնում եյի դրամով․․․

— Հեղափոխությունից հետո՞․

— Հետո ել․․․

— Կրկին փողո՞վ, թե՞․․․

— Փողով ել և իմ ակտիվ աշխատանքով ել․․․

— Դե՛հ, ուրեմն, ի՞նչ կասեք արտասահմանյան եմիգրացիայի մասին։

— Վնասարար կոմիտեյի ակտիվ անդամներից մեկը կանգնած է ձեր առաջ․․․ Մելիքովն ինքն ել զարմանում եր իր համարձակության վրա, սակայն․․․ յերբ ամեն ինչ ակնհայտ եր, և ուսումնասիրված, նրա համառությունն անոգուտ եր․․․ Այդ պատճառով ել․․․

— Արտասահմանից յե՞րբ յեկաք մեզ մոտ։

— 1924 թ․ սկզբներին։

— Վերադառնալուն պես՝ դուք կարծեմ տեղավորվեցիք Սաբունչի գործարաններից մեկում, չե՞․․․

— Ճիշտ է․

— Հետո՞․

— Հետո Բագու․․․ Այնտեղից Քութայիս․․․ Իսկ Քութայիսից՝ տեքստիլ ֆաբրիկայում․․․

— Ձեր նպատակը՞՝ տեքստիլ ֆաբրիկայում․

— Գործի հապաղեցում․․․ Շինարարական աշխատանքների թերի կատարում և առհասարակ ճիգեր, վոր զգալի վնաս հասցնենք խորհրդային շինարարությանը։

— Ուրեմն դուք գործում եյիք գիտակցաբա՞ր։

— Անտարակույս․

— Ի՞նչ եք մտածում այսօր․

— Եթե հնարավորություն ունենայի նորից մի փոքր խոշոր ֆաբրիկայի հիմքն էլ կքանդեի...

— Նպատա՞կը.

— Պարզ է, նպաստել իշխանության տապալմանը...

— Ժողովո՞ւրդ... բնակչությո՞ւն։

— Կռվի դեպքում զոհերից չեն քաշվում ու խուսափում,— այս մենք ձեզանից ենք սովորել... Այնպես որ ժողովուրդը...

Մելիքովը ձեռքերը շարժեց օդի մեջ...

— Ճիշտ է, բայց... Դուք այն ասացեք, թե ֆաբրիկայի մեքենաշինարարական հիմքը ճաքելու գործում ձեր մասը խա՞ռն է, թե ոչ.

— Մի ամբողջ տարի, ամեն տեսակի միջոցների առաջ կանգ չառնելով՝ պայքարում էյի, որպեսզի մի կերպ կեղծ նախագիծ հաստատել տամ... մնացածը կարծեմ հասկանալի է...

Զրնգաց էլեկտրո-զանգը։

Ներս մտավ պահակը...

— Դիլեգո՛ւմ,— արդեն հրաման է արձակված...

Մելիքովի ոտներին շղթաներ դրին։

— Ո-՜ո՜-հ, ի՞նչ նեղ են էս անտերները,— մտածեց ինքն իրեն Մելիքովը և այսօրվա «հերոսական» ցուցմունքներ տալուց հետո, քաղցր քնեց...

Քաղ. վարչության կոլեգիան լսելով գլխավոր քննիչ ընկ. Միշա Երզեմլիձեյի զեկուցումը վճռաբար Մելիքովի գործի մասին՝ վորոշեց.

— Ամբողջ գործն ուղարկել հանրապետական դատախազին՝ բանվորական թաղամասերում ցուցադրական դատ կազմակերպելու համար...

## 21

Փողոցում բավական շոգ էր։

Արագ սլացող թեթև ավտոներին օձապտույտ հետևում էր դուրս մղած ծուխն ու փողոցներում բարձրացող փոշին։

Նրանց էլ հետևում էին դանդաղորեն շարժվող ու ծանրաքաշ բեռնակիր ավտոներ և...վատմաններն էլ պինդ կառչել էին վեստինհաուզից...



«Ժորեսի փողոցի վրա տեղի ունեցավ ողբալի դեպք»— իմաց էին տալիս մեկը՝— մյուսին։

Ահագին բազմություն էր հավաքվել դեպքի վայրը։

Վիրավորներին շտապ կերպով ճամբեցին հիվանդանոց։

Լևոնն ու Թամարն արագորեն գնում էին պրոսպեկտով և իրար հետ զրուցում մի շատ կարևոր հարցի շուրջը. Նրանք այնքան էին տարվել խոսակցությամբ, որ նույնիսկ ծանոթ-բարեկամներին անգամ չէին նկատում...

Աննկատելի կերպով անցան նաև այն վայրի մոտով, ուր պատահել էր աղետը... Թամարն իրենից անկախ պատճառով թողած ահագին միրուքի (կինո-պատկերում պիտի խաղար Լենցու դեր) ծայրերն էր ոլորում և տհաճությամբ ինքնիրեն փնթփնթում...

Գուցե Թամարն արդեն իրեն զգում էր Լենցու դերում և դեմքին համապատասխան արտահայտություն տալով արագ շարժվում էր առաջ... ո՞վ կիմանար...

Թամարը դերասա՞ն.

Թեև...

Կինոարտադրության մեջ, բանից դուրս է գալիս, որ ամեն ինչ հնարավոր է...

Դեռ ավելին։

Մեզնում յերբեմն նոր թխած կինոդերասանները, ինչպիսին է Կոխտա Ղարալաշվիլին, հավակնություն են ունենում մրցման յելնելու համաշխարհային «կինոաստղերի» դեմ... Կոխտան «Վաժլայի» դերով կամենում է նսեմացնել Դուգլաս Ֆերբենկսին և այլն...

Վոյն Միրաբիշվիլի էլ, առանց քաշվելու, ցինիկաբար, աշխատում է նմանվել հայտնի տրագիկներին...

Մի խոսքով՝ ցանկությո՛ւն լինի, թե չէ...

Կինոդերասանի տիտղոս ստանալն էնքան էլ դժվար բան չի։

Երկար ժամանակ է, ինչ Թամարն էլ կինոդերասան է համարվում Վրաստանի կինո-արտադրության մեջ. ճիշտ է, նա խոշոր ու պատասխանատու դերեր չի ստանձնել և իր շնորհալի խաղով աշխարհ չի հրապուրել ու զարմացրել, այնուամենայնիվ...

Լենցու դերում հրապարակ գալով՝ բավական առատ հոնորար է ստացել, նա էլ, իր նմանների նման—դերծ ամեն մասնագիտությունից՝ ապահով ապրում էր քաղաքում, շնորհիվ, ի հար-

կե, մի շարք մարդասեր ռեժիսյորների և այլոց օժանդակությամբ...

— Մարդս ուրիշ վորտե՞ղ կարող է տեսնել տիրաժից դուրս յեկած վրացի թավադ-ազնաուրներին, յեթե վոչ...;

— Կինո-արտադրության մեջ:

— Ո՞վ է մասնակցում վրաց կինոնկարներում:

— Թավադ-ազնաուրներ... (ի հարկե նախկիններ).

— Կինո-արտադրությունն՝ —թավադ-ազնաուրներ և հակառակի նման... Վաղուց է ինչ Թամարը կինոդերասան է համարվում: Յեվ...

— «Գոսկինպրոմ»-ը վոր չլիներ, իմ դրությունն անտանելի կդառնար,—հաճախ կրկնում եր Թամարը յուրայինների շրջանում: Յեվ իրոք, ինչ կլիներ նախկին դեղին ուսադիրներ ունեցող Թամարի վիճակը, վորի «շնորհքը» թղթախաղի, սիրաբանության և Թամարայական շրջանակներից դենը չեր անցնում...

— Լևա՛ն, Նողարին ել հանդիպենք,—հիշեցրեց Թամարը, յերբ մոտեցան կինոֆաբրիկային:

— Ի՞նչպես, մի՞թե Նողարն ել կինո դերասան է.

— Վաղո՛ւց...

— Ոհո՛, ապրուստի համար լավ տեղ եք գտել... Նեղության ժամանակի չափ ու ձևած միջոց,— ժպտալով նկատեց Լևանը:

— Յեթե չսկսեն զտումը...—դառնագին դուրս պոռթկաց Թամարի սրտից:

— Զտո՞ւմ.

Այո՛, ասում են, կինոֆաբրիկայում չտեսնված զտում պետք է կատարվի...

— Ճիշտ է, ասում են, սակայն դերասաններին ի՞նչ փույթ. ապարատի զտումը հո ակադեմիական զտում չի՞ նշանակում:

— Դժբախտաբար... Առաջին հերթին դերասաններին ու ռեժիսյորներին են թափ տալու... Այս յերեք-չորս ամսվա ընթացքում քառասունի չափ մարդ ենպես քամուն տվին, վոր վոչ վոք վոչինչ չհասկացավ...

Մի քանի ռեժիսյորների յել քշեցին...

— Ուրեմն, վտանգը մոտեցել է քե՞զ ել, Նողարի՞ն ել...

— Պատահմունք է, իմ Լևան, յեթե ազատվենք, մեծ հաջողություն կլինի մեզ համար...



— Լևա՛ն.

Թամարը մտածմունքների մեջ ընկավ...

— Յեթե հաջողեցնեյինք Նողարին արտասահման գործուղել ...նախ մեր հանձնարարությունները կկատարեր, բացի այդ... հո գիտես, փողի գործն ել...

Թամարը փողի անունը տալով՝ իր յերեք մատները ռիթմորեն շարժեց և կայարանի ժամացույցին նայեց...

Հեռավորության պատճառով չկարողացավ տեսնել, թե ժամը քանիսն է և նորից շարունակեց իր ճանապարհը...

«Ռաճա» ճաշարանը—գտնվում է կայարանի փողոցի ձախ կողմում... Այս ճաշարանից ամեն առավոտ սխտորի հոտ է բուրում և ռաճեցի համբալները մեծ ախորժակով ուտում են խաշը: Ցուցարաններում (վիտրին) դարսված են խորոված դառան գլուխներ, խաշած վոտներ և այլն, իսկ դախլի տակն ել կգտնեք զանազան ձևի ու մեծության ողու շշեր, բաժակներ...

Այնտեղ կա նաև ողու մաղան՝ կիրկած լոբին՝ վրեն սոխ ջարդած, խրեն և տարբեր համեմունքներ...

Ապակեպատ բուֆետում խռնված են ճանճերը: Վոսկեպատ այծյամի յեղջյուրները կախած են աչքի զարնող տեղում, սակայն...

Ներկայումս յեղջյուրներով ո՞վ է քեֆ անում, այն ել այսպիսի կեղտոտ ճաշարանում:

Պատերին դուք կտեսնեք նկարազարդված «պատկերների» բացառիկ նմուշներ:

Միկիտան Վանիչկան յուրաքանչյուր մուշտարու (նույնիսկ անպետք) աչք ու ունքին է նայում, ծամածռություններ անում և տռանից քաշվելու հաճախ հրամցնում ձեզ մի շաբաթվա յեփած վառեկը՝ նորի հաշվին:

Բայց...

Միկիտանն ել, ինչ միկիտան է, վոր հինը նորի տեղ չսաղացնի և քացախած գինին կախեթու գինու փոխարեն չհրամցնի:

Սարաջևի կոնյակի չորս աստղանի շշում դուք մշտապես կգտնեք միկիտանի «կոնյակը» թեյի ջրով ի այրած շաքարով համեմած, անշուշտ, հասարակ հաճախորդների համար... Բեռնակիր բանվորները, փալանավոր քուրդերը և յեզիդիները «Ռաճա» ճաշարանի մշտական հաճախորդներ են: Սրանք յերբեմն սպիրտային

խմիչքներին էլ են դիմում և յեթե ուլա աշխատածը բարձր է լինում սովորական նորմայից՝ արդեն քեֆը պատրաստ է, սկզբում 20 կոպեկանոց բաժակներով, վորոնք աստիճանաբար միկիտան Վանիչկայի կողմից փոխարինվում են հաստափոր բաժակների···

— Խմի՛ր, քե՛ մատաղ, խմի՛ր·

— Համեցեք, յեթե իմ խաթր ունես,—այնպես է հյուրասիրում միկիտանը, կարծես ամբողջ ծախսն ինքը պետք է վճարեր և թմրած ու արբած քուրդ յեզիդին արդեն պատրաստ եր իր կյանքն անգամ զոհաբերելու··· Խմում են, քեֆ անում, չափրած և քըրտինքի մեջ կորածները···խմում են և···

Թուրքական թութունն առատորեն ծխում···

Փալանավոր քյուրդ—յեզիդիներն էլ գիտեն հարբել և ծանոթ են հարբեցողի ճաշակին: Փոխարենը միկիտան Վանիչկան և Գրամիտոնը (խանութի տերը) կես գիշերին համրում—հաշվում են քրտնաթաթախ դրամները և թիթեղյա արկղիկների մեջ չրխկալեցնում են սև ու սպիտակ հնչյուն դրամներ···

Կասկածելի անձնավորություններն էլ (կոնտրաբանդիստներ, կայարանի գողեր, գրպանահատներ և այլն) «Բաճա»—յի հաճախակի հյուրեր են և···

Սևատրական նկատառումով ոգուտն էլ հենց սրանց մեջն է··· Այս հաճախորդները ճաշարանում նստած՝ ուրիշների աչքերը շլացնելու նպատակով՝ շարունակ դոմինո յեն խաղում, սակայն իրոք, նրանք զբաղված են գիշերային նորանոր դավադրական ծրագրեր կազմելով:

— Ճեպընթաց գնացքին կդիմավորի «Գրիկը»,—և դոմինոյի քարն ենպիսի ճարպկությամբ է դնում, վոր կարծես ամբողջ հոգսն ու գլխավոր առարկան հենց եդ քարն եր և վոչ թե ճեպընթաց գնացքին դիմավորելու խնդիրը···

— Պերոնի*) վրա հերթապահությունն կանի «Զորնան»···յեթե պետք լինի, նրան կաջակցի «Մալականը»···

Բուֆետում կաշխատի «Յաշկան»···

Թիկունքում կլինեմ յես,—ավարտում է իր ծրագրային խոսքը ատամանն ու շտապ վերջացնում հաշիվը···

Շտապում են գործի անցնելու···

Լևան Գիգաուրին և Թամարը ներս մտան ճաշարան···

*) Յերկաթուղու կայարանի այն մասը՝ վորի առաջ կանգնում է գնացքը:



Միկիտանը տեսնելով ընտիր հյուրերին՝ խոնարհ գլուխ տվեց, գոգնոցով սրբեց իր ձեռքերն ու մի քանի պտույտներ գործելով՝ արագորեն մոտավ դախլը և ձգվեց հին զինվորի նման:

Նորեկներն ուշադրությամբ զննեցին ճաշարանը:

Ծկրակեցին նաև վարագույրի յետևը:

Նկատելով Նոդարին ու Զալիկոյին վարագույրի յետևի դայիճում նստած, նրանք լուռ ու մունջ մոտեցան նրանց սեղանին:

Տրեստի գարեջրի շշերը շարվեցին սեղանի վրա:

Յեկող—դիմավորողները հարց ու փորձ արին իրար:

Շուտով Արեսալոմն էլ յեկավ, տխուր, բարկացկոտ:

Տհաճությամբ նայեց իրենից առաջ յեկողներին և հեռու նըստեց:

Զոռով շարժեց գլուխն ու լուռ բարևեց:

Դեռ ևս կանուխ եր:

Վոչ վոք չեր մտնում ճաշարան:

Յերբեմն դախլին մոտենում եյին հատ ու կենտ մարդիկ՝ ողի կուլ տալու համար, ճաշելու մասին դեռ վոչ վոք չեր մտածում···

Վարագույրի յետևը կատարյալ դատարկություն եր, նույնիսկ ճաշարանի ծառայողներն անգամ չեյին մտնում այնտեղ:

Այսպես ուրեմն, բարեկամներս,—յեզրափակեց խոսքը Լևան Գիգաուրին և մի հայացք նետեց սեղանակիցներին.—մի շաբաթվա ընթացքում Արեսալոմը մեզ կտա Պետպլանի վերաբերմամբ լրիվ տեղեկություններ, վորից հետո, յերևի հունիսի սկզբներին, յեթե վոչ պաշտոնական գործուղմամբ, գոնե գաղտնի, արտասահման կճամփենք մեր ընկ. Նոդարին···

Արեսալոմը սեղանից մի փոքր հեռու նստած՝ դժկամակությամբ լսում եր Լևանի ասածները. կամենում եր ընդվզել, կատաղած սրտի մաղձը դուրս թափեր, սակայն չեր կարողանում և ավելի շատ աշխատում եր զսպել իրեն:

Վերջապես···

— Յես ընկերներ, խոսք չեմ տալիս,— հատ ու կտոր արտասանեց Արեսալոմը, կարծես դրանից հետո անմիջապես պիտի հետևեր նրա բուռն ցասումը····

— Ի՞նչ:

— Բան չեմ հասկանում:

Ներկա յեղողները բոլորն էլ զարմացած եյին նրա այս վերա—

բերմունքից... Այնպես վոր, տեղեկություններ ժողովելու գործում ինձ բոլորովին ի նկատի մի՛ք առնի և հույսերդ կտրեցեք ինձանից:

— Աբեսալոմ, նորից սկսեցի՞ր:

— Դարձյալ հին փնչխող միտդ ընկա՞վ:

— Հին, վտանգավոր ավլիներո՞վ:

— Այս ճանապարհն ինձ համար նոր է և, գուցե մոտավս,— յեզրափակեց Լոմջարն առանց գլուխը վեր բարձրացնելու...

— Աբեսալո՛մ,—Լևան Գիգաուրու աչքերը բոցավառվեցին և աթոռը մի փոքր առաջ քաշեց...

— Յես գուցե չկարողանամ պատշաճ տեղեկություններ հավաքել, սառնարյունությամբ ասաց Աբեսալոմն ու թշնամական հայացք նետեց Լևանի վրա:

— Յեթե ուրիշները պիտի կարողանան... դու ինչո՞ւ չպիտի կարողանաս:

— Յես այդ չգիտեմ...

Աբեսալոմն ուղղվեց և յերեսը դարձրեց դեպի սեղանը.— վերջի վերջո, յես անկեղծորեն պետք է հայտարարեմ, վոր ինձ համար պարզ չի ձեր անմիտ գործունեության իմաստը. այն էլ չեմ կարողանում հասկանալ, թե արտասահմանում ումն է պետք Կարմիր բանակի վերաբերմամբ տեղեկություններ և այլ գաղտնի փաստաթղթեր, քարտեզներ և ինչ վոր գծագրություններ... Յես այդ մասին, յեթե մտաբերում եք, առաջ էլ եմ ասել...

— Ինչպե՞ս, ի՞նչ ես ասում:

— Յես այժմ էլ չեմ իմանում, թե սոցիալիստական կուսակցության անդամն ինչպես պետք է աշխատակցի ամեն տեսակի ու գույնի սրիկա իմպերիալիստների հետ և թե ինչպես դուք դավաճանորեն սոցիալիստների ձեռքից «բանալին» պիտի առնեք և հանձնեք գաղտնարարը կապիտալիստներին:

— Աբեսալոմ, դու դարձյալ տատանվում ես այնպես, ինչպես այս ամբողջ տարվա ընթացքում,— ձայնը ցածրացնելով ասաց Լևան Գիգաուրին:

— Դա ճշմարիտ է:

Վաղուց է, ինչ յես արտասահմանին այլևս վորևե հավատ չեմ ընծայում... Վոտներիս տակի հողն այստեղ անհամեմատ ավելի պինդ է և մշտական...



— Ինձ համար արեգակն այստեղ էլ լավ է լուսավորում և պետք է ասեմ, վոր արեգակի ճառագայթներն այժմ ավելի ուժեղ են տաքացնում խորհրդային հողն ու ջուրը, քան յերբևիցե...

— Ի՞-ի՞-ի՞-նչ...

— Տեսնո՞ւմ եք:

— Յես հո ասում եյի...

— Չեմ հասկանում, այդ տեղեկությունները այսօր ումն են պետք... Չեմ հասկանում, չէ՛, և համոզված եմ, վոր ձեզանից շատերի համար էլ անհասկանալի յեն... Պատասխանեցեք խնդրեմ, ո՞ւմ կամ ինչի՞ ոգուտն է գնալու գաղտնի վարձատրությունը.— Աբեսալոմը կրկին շուռ յեկավ սեղանի շուրջը և այլայլված դեմքով գոռաց.—Ամոթ, հազար ամոթ ձեզ, վոր սոցիալիստական կուսակցության անդամներ լինելով հանդերձ՝ ափաշկարա սպեկուլյացիայով եք զբաղված բանվորական իշխանության դեմ...

— Հերի՛ք է, Աբեսալոմ,—փրփրակալեց Լևան Գիգաուրին. չորս կողմ նայեց և նորից բոցավառ աչքերով չեչտակիորեն նայեց Աբեսալոմին:

— Լևան, ի՞նչ պատահեց.—ձայնեցին ընկերները:

Աղմուկի վրա Միկիտանն էլ ներս նայեց:

— Յերկու շիշ գարեջուր:

Միկիտանն անմիջապես հեռացավ՝ կատարելու Թամազի պատվերը:

— Լև՛ան, չես ամաչո՞ւմ, Աբեսալոմ, ի՞նչ է պատահել, այ մարդ:

— Բարեկամնե՛ր, անկարելի յե այսպես աշխատել:

— Այո՛, այո՛, այսպիսի հիմարությունները է՛լ անկարելի յե տանել...

— Աբեսալոմ, դու վերջերս բոլորովին փոխվել ես և ինչ վոր այլ ձևի յերգեր ես յերգում... տրամադրություններդ կարծես ուրիշ են...

— Յես այնպես եմ յերգում, ինչպես...

— Հը, ասա վերջապես, ասա բոլորը...

— Ի՞նչ ասեմ,—ձայնը բարձրացրեց Աբեսալոմը:

— Այն, վոր դիմում ես ավել:

— Զայնդ,—ընդհատեց խոսքը Աբեսալոմը,—Դուք վոր ավանտյուրիստ ավազակի հլու հպատակ եք դառել և հաշիվ չեք տալիս

ձեզ, իրավունք ունե՞ք ուրիշից դժգոհելու։ Ասացե՛ք, պարզ խոստովանվեք, վո՞ր տիպի մոնարխիստ և ռեակցիոներ սիրով հանձն չէր առնի իրագործելու այն բոլորը, ինչին ձեռնարկել եք այժմ դուք բոլորդ՝ սոցիալիստական կուսակցության անդամներդ։ Դեպի ո՞ւր եք գնում, ո՞ւր...

Պապանձվեցին ամենքը։

— Ի՞նչ եք պապանձվել. պատասխանեք, էլի, վո՞ր տիպի լրտես, կամ պրովակատոր կմերժեր այն տեղեկությունները ժողովելու, վորպիսիները դուք հանձն առաք և մասամբ նույնիսկ իրագործեցիք...

— Աբեսալոմ... ի՞նչ ես ասում.—այս ու այն կողմից շշնջացին մի քանի ձայներ...

— Սկսեցիր դավաճանին վայել վարմո՞ւնք.—կրճտացին Գիգաուրու ատամներն ու բերանը լցվեց ճերմակ փրփուրով։

— Միկիտանը ներս բերեց գարեջրի շշերը, մի հայացք ձգեց ամենքին և շուտով էլ դուրս գնաց...

— Աբեսալոմը դավաճան է, ի՞նչ կասեք բարեկամներս,—հայտարարեց Լևոն Գիգաուրին և սպասեց ընկերների պատասխանին...

— Ճշմարիտ է, ցածրաձայն հաստատեցին մի քանիսը...

— Յեթե ճշմարիտ է, այն դեպքում, յես կգնամ և դուք վորտեղ կուզեք վորոնեցեք դավաճանին։

Իսկ Պետպլանի տեղեկություններն ու այլ նյութերը...այնտեղ պահանձեցեք, վորի անունը տալիս մազերդ փշաքաղվում են ու սպիտակում և վորի կողքով անցնելուց՝ խուսափում եք այնպես, ինչպես բծավոր տիֆով վարակված հիվանդից։

Աբեսալոմը շատ շուտ յեկավ և...

— Կանգնի՛ր, Աբեսալոմ, թե չե կվոչնչացնեմ.—ակամա բացականչեց Լևոնն ու գարեջրով լի շիշը ձեռին ուղղվեց դեպի Աբեսալոմը։

Ամենքը խառնվեցին իրար՝ վախենալով, վոր գաղտնի աշխատանքները կարող են բացվել, աչքերն սկսում են խղճալիորեն ճպճպացնել և նույնիսկ մի քանիսները մտադրվում են ծլկվել, գլուխներն ազատել...

— Նորի՞ց սպառնալիք, Լևոն Գիգաուրի...դարձյալ վայրենի շարժումներո՞վ...



Աբեսալոմը շուռ է գալիս, կայծակի արագությամբ անդրավարտիքի գրպանից հանում է փոքրիկ կալիբրի մաուզերը և...

— Առաջարկում եմ մի քայլ անգամ առաջ չգնել. հակառակ դեպքում...

Ամենքը տեղն ու տեղը սառչում են. Նկատելով ատրճանակը և մինչ այսոր յեթե կասկած ունեյին նրա «դավաճանության» մասին, այժմ արդեն ակնհայտ դարձավ...

Գիգաուրին էլ Աբեսալոմի արարմունքից շշմած՝ ճգնում է մի կերպ դուրս պրծնել այդտեղից...

Միրոն սկսում է արագորեն բարբաջել և վախից կարծես ուզում է ցնորվել...

— Աբեսալոմ, մի՞թե մեր գործը մինչև զենքի հասավ—մի՞թե ամեն ինչ կորած է, բոլոր հույսերն ուրեմն ի դերև՞ անցան...

— Դե՛հ, մեկ-մեկ առաջ անցեք.—կարգադրում է Աբեսալոմն ու ատրճանակի խողովակն ուղղում յուրաքանչյուրի կրծքին...

— Աբեսալո՛մ... մի՛ կործանիր մեզ...

— Աբեսալոմ, այսորվա իմ վարմունքը թյուրիմացության և վայրկենական զայրույթի արդյունք է... Մեզ պատիվ չի բերում... Ուրիշ բան յեթե չասենք, ախր մենք զավոդական ընկերներ ենք և մոտիկ բարեկամներ...

— Աբեսալոմը մի քայլ յետ դառնալով՝ գոռում է...

— Բարեկամության մասին վոչ մի խոսք... Պահանջում եմ՝ վոչ մի խոսք...

— Աբեսալո՛մ, մինչ այսոր մեզ շաղկապում էր մի խոշոր գործ... Սակայն, քանի վոր այսորվանից մենք իրարից հեռանում ենք, բավականանանք այս անախորժ ինցիդենտով, և յեթե մեզ վիճակված չե իրար հետ աշխատակցելու ապագայում, գեթ մեր անցյալ գործունեյությունը վերհիշենք և չվոտնահարենք ամեն ինչ...

— Իրարից անջատվելն յես անհիմն չեմ համարում...մենք սկզբունքային հարցերում տարբեր հայացքներ ունենք և այդ տարբերությունը շատ է խոր ու հիմնավորված. այնպես վոր մենք բաժանվում ենք իրարից ընդմիշտ...

— Աբեսալոմ, յենթադրենք բաժանվենք իրարից, չե՞ վոր անցած ճանապարհները մեզ և ամենքիս համար միատեսակ ու թանգարժեք են յեղել.—դիմամբ նորից անցյալը հիշեց Լևոնը։

— Սխալվում ես, Գիգաուրի, մեր անցյալը, յեթե ինձ համար թանկ լիներ, յես յերբեք փախուստի չէյի դիմի այնտեղից... Յես փախչում եմ ձեզնից, գնում եմ ընդմիշտ, հեռանում եմ հավիտյան հենց նրա համար...

— Գուցե հոգնե՞լ ես, Աբեսալոմ, ուժդ չի՞ պատում այլևս...

— Գուցե անդորրությա՞ն կարի՞ք ես զգում և նրա համար ժամանակավորապես փոխեցիր մտքերդ:

— Ի՞նչպես, դարձյալ ափեղցփեղ ու սուտ զրպարտություններ...

— Աբեսալոմ, մի՞թե քեզ համար թանկագին չեն անցած կյանքի ու պայքարի օրերը, վորոնց ամբարկուս չարչարված էյիր առաջներում:

— Վո՛չ, նրանք վոչ միայն թանկարժեք չեն, Գիգաուրի, այլև յուրաքանչյուր մի քայլ, վոր արել ենք, նրանք սև բիծ են անջնջելի դրոշմված կյանքի ճակատին:

Լևանն ամեն կերպ աշխատում էր Աբեսալոմի քար սիրտը մեղմացնել, բայց ի զուր, չարաչար խաբվեց, խաբվեց նաև այն ժամանակ, յերբ նա մտածում էր գործի հաջողության համար վորոշ չափով գայրացնել Աբեսալոմին...Սակայն...

Քարսիրտ էր դարձել Աբեսալոմը...

Աբեսալոմի վերջնական վորոշումն էր...

— Ի՞նչ կասես, Աբեսալոմ, մի՞թե չես ների մեր հանցանքն ու չե՞ս վերադառնա մեր շարքերը...

— Վոչ մի խոսք ներելու մասին. վաղուց է ինչ իմ հանցանքներս արտահայտել եմ ձեր շրջանում և ատյանից...

— Ջեկայի աշխատակից դարձա՞ր.—նորից գայրացավ Լևան Գիգաուրին...

— Այո՛, յես դերադասեցի ժողովրդի հետ աշխատել, աշխատավոր մասսայի հետ և յեթե, արևմտյան իմպերիալիստներից կաշառված լրտեսներին լրտեսելու լինեմ, փառք ու պատիվ ինձ, դրանով բանվորների շրջանում կարող եմ պարծենալ:

— Ա՛խ, դո՛ւ, զզվելի դավաճան,—ատամները կրճտացնելով գոռաց Լևան Գիգաուրին և ատրճանակի խողովակի բերանը ցածր տանելով՝ մի ակնթարթում գարեջրով լի շիշը վերցրեց և շպրտեց Լամջարի ճակատին. վերջինս՝ վիրավոր գլորվեց սեղանների մեջտեղ՝ գինով լի տակերի արանքում...



— Լևան, այս ի՞նչ արիր.

— Տերո՛ր, տերո՛ր դավաճաններին...

Քրքջում է Լևանը և ուշադրությամբ զննում շշի կտորտանքները...

— Այս էլ այսպես, Փարիզից բերած ռոմը, վոր մեր թշնամիների գլխին պետք է պայթեր, պայթեց մեր ներսում, մեր շրջանում...հա՛, հա՛, հա՛...

Շուտով ուշքի յեկավ Աբեսալոմը...

Թեև վերքն այնքան էլ թեթև չէր, այնուամենայնիվ իր ուժերը մի կերպ հավաքեց և յերբ ատրճանակի կոթը դտավ իր ձեռքում, ուշքի գալով՝ մի կերպ վերկացավ տեղից և հեռանալու պատրաստ Լևանի կրծքին ուղղելով ատրճանակը՝ իրար յետևից արձակեց բոլոր փամփուշտները...

Աբեսալոմը կրկին ուշաթափվեց ու փռվեց գինով լի խոշոր տակերի վրա:

Վիրավոր գլխից արյունը ջրի նման թափվում էր, սակայն վոչ վոք ոգնություն չէր հասնում...

Միկիտան Վանիչկան, չնայելով ուշադրությամբ հետևում էր վարագույրի յետևը կատարված ամբողջ անցք ու դարձին, չէր համարձակվում ներս մտնելու...

Աբեսալոմին մոռացան այն ժամանակ, յերբ ծանր վիրավորված Լևան Գիգաուրուն կառք նստեցրին և ուղարկեցին հիվանդանոց...

## 22

Ֆաբրիկան դրսից ու ներսից ինչպես հարկն էր սարքավորեցին: Գործի դրին նաև բուրդ լվանալու բաժանմունքը:

Առանձին պահեստներ, առանձին չորացնելու տեղեր...

Ֆաբրիկան դրվեց նորմալ հունի մեջ...

Աճեցին նաև բանվորական տները և արագ կերպով բնակեցված բանվորական տները [illegible], ժխորը, մանուկների ճիչն ու աղաղակը տիրող դարձավ ամենուրեք:

Տեղ-տեղ լվացքն էլ յերևաց:

Բանվորական նոր թաղը կենդանություն ստացավ...

Դազգյահներն էլ համարյա պատրաստ էյին արդեն...

Ֆաբրիկայում օրըստօրե ավելանում են բարձր վորակի բան-

վորներ, կայծակի արագությամբ պտտվում են մաքոքներն ու իլիկները:

Ներսում տեղի յե ունենում փորձնական աշխատանք...

Մինչդեռ դուրսը...

Նույն փութկոտ շինարարությունը, դարձյալ ուրագն ու սղոցը, դարձյալ քարեր ու ավազ...

Բակում չի յերևում այլևս Բարնաբ Բարբաքաձեն...

Վոչ էլ նրա մի շարք համախոհները...

Գրիգոլ Գիգաուրու առաջադրությամբ Կենտկոմը Ֆաբրիկայի անտեսաժվարի պաշտոնում հաստատեց ընկ. Հմայակ Մուրադովի թեկնածությունը, և այսօր այդ Մուրադովն ուղղակի կրակ է կտրել—այնպես յեռանդով ու վոգևորված է աշխատում իր նոր պաշտոնում:

— Հեյ գիդի, ինչեր կարող է ստեղծել աշխատավոր ժողովուրդը:

— Իբր թե ի՞նչ, հա՛, Տասո:

— Չես տեսնո՞ւմ, Ֆաբրիկի գործերն ինչպես շուռ բերին...

— Ինչպե՞ս բոցավառեց բոլորին են հերոսհնածի վորդի դիրեկտորը.— ընդհանուր ժողովում Գիգաուրու արտասանած ճառից մի շարք եզրակացներ մտաբերեց վորմնադիր Ղափլանը, վորի աչքերը հրճվանքից առկայծում եյին...

— Հեյ, գիդի, մարդս ուսման համար պետք է իր գլուխը մահու տա:—Չայնակցում եր յերկրորդը,—մեր Գիգաուրին ինչպես փաստերով ապացուցեց են սրիկաների արարմունքները...

— Ի՞նչ ես զարմանում, ի՞նչ. ասում են՝ եդ դիրեկտորը, ինչպես ասում են, շատ մեծ մարդ է, կառավարության անդամների մեջ առաջնակարգ տեղ ունի գրավծ,—միջամտեց քարտաշ Իվանեն և ճակատի քրտինքը սրբեց...

— Մեր Տասոն ասում է, վոր Գիգաուրին վխոշի սովնարկոմի անդամ է յեղել...

— Վոչ թե Սովնարկոմի, այլ Սովնարխոզի...

Այսինքն՝ Նարոդնի խազյաստվի վխոշի... իմացա՞ր, վխոշի, բարձրագույն, ելի՞...վխոշի խազյաստվոյի Նարոդնի պրեդսեդատելը, հասկացա՞ր. յուրահատուկ բացատրություն տվեց ներկա-
բար Ավետիքը և գրպանից հանեց «մոսսելպրոմի» արկղիկը:
Ատամների օգնությամբ բացեց արկղիկը, քարին նստեց, մե-



տաքսանման դեղին ծխախոտ հանեց ու սկսեց փաթաթել թղթիկի մեջ...

— Ավետիքը սովորություն ուներ ձեռքով փոլորած ծխախոտի գործածության, նա մեծ բավականություն եր զգում, յերբ իր կոշտացած մատներով այդ աշխատանքն եր կատարում....

Պատրաստած գլանակը դեղին սաթե ծխամորճին ամրացնելով, դրեց բերանը և ազահաբար կուլ տվեց անուշահոտ ծուխը. ծխախոտի տուփն առաջարկեց Իվանեին, իսկ ինքն սկսեց դիտել ծխախոտի սպիտակավուն մոխիրը:

Իվանեն էլ չաղացրեց իր չիբուխը:

— Ոխա՛յ, այ թութուն, հնում նման թութուն կոնտրաբանդիստներն եյին ներս բերում...վո՞րտեղի թութունն է...

— Ախալցխայի:

— Ախալցխայի թութունն էլ են գովում,—դիտավորյալ ստախոսեց Իվանեն և չիբուխը քթքթացրեց...

Ձոալով ներս մտան սայլերը:

— Սուլակաուրի, վո՞րտեղի աղյուսներ են դրանք.

— Կոլեկտիվի աղյուսն է,—առանց վարանելու պատասխանեց Սուլակաուրին:

— Բարնաբի չհավանած՝ ե՛ն «մանր» աղյուսները դրա՞նք են:

— Դրանք են...

— Ա՛յ, քոռանան նրա աչքերը, բա չե՞ս տեսնում ես աղյուսները...

— Բայց ես աղյուսներով ի՞նչ պիտի կառուցվի:

— Բանվորական տներ... Տեսնո՞ւմ եք, ինչքան բնակարաններ սկսել, սակայն...

— Փայտեղենը՞:

— Փայտեղենն էլ Բորժոմի արտելն է մատակարարելու...

— Բորժոմի արտելը՞...

— Ինչո՞ւ զարմացար...

— Չէ՞ վոր ասում եյին, թե փայտեղեն վոչ մի տեղ չի ճարվում...

— Ո՞վ ասաց...

— Ցես ինչ գիտեմ, այդպես եյին ասում ու...

— Հիմարություն է, ամեն ինչ պատրաստ է: Մինչև ձմեռ, Ֆաբրիկան իր բանվորական տներով պատրաստ կլինի...

— Այ, վողջ լինեք, գործի մարդիկ եք, գործի, կեցցեք տղերք...

— Տղանե՛ր.

— Ի՞նչ, ի՞նչ կասես Տառե:

— Հարվածային բրիգադը տեսնո՞ւմ եք գործերն ինչպիսի արագությամբ է տանում...

— Ի՞նչպես.

Այն օրվանից, ինչ բրիգադներն սկսեցին աշխատել, չեք տեսնո՞ւմ, ինչպես մեծանում է, են անտեր...ինչ են ասում...ո՛ւհ, մոռացա...

— Աշխատանքի արտադրողականությունը, Տառե:

— Հա՛, աշխատանքի արտադրողականությունը...

— Առաջին կվարտալում Սուլախաուրու բրիգադն առաջնություն վաստակեց...

— Յերկրորդում գուցե Վանոն հաղթի...

— Վո՞ր Վանոն.

— Են վոր կոմյերիտմիության քարտուղար է...ջահել տղան..

— Նրա բրիգադը... հա՛, գիտեմ... հրաշալի տղաներ են խմբված...կհաղթեն անպատճառ...

— Սուլախաուրին հին քթնուկ է, այ ժողովուրդ. ջահելները դեռ չեն կարող նրան հաղթել...—հին է...հին...

— Ասա ելի, հին սազը միշտ լավ է լինում...

— Չէ՛, յես այդ չեմ ասում, բայց... Սուլախաուրու մոտ աշխատող են աջարեցի տղան... պարզ յերևում է, վոր մեր մարդկանցից չպետք է լինի...

— Ի՞նչ ես նկատում:

— Առայժմ վոչինչ չեմ կարող, սակայն...եսպես եմ կարծում...

— Ե՛հ, դու յել...հենց վոր մեկն աչքիդ դուր չի գալիս, անպատճառ աշխատում ես ստվեր գցել վրան. Բարնաբը քեզ օրինակ...գլուխներս տարար՝ սեփականատեր է, հա՛ սեփականատեր...

— Հետո՞ ինչ, սուս դուրս յեկա՞վ...

— Ճիշտ, հիմա հիշեցի. վո՞րտեղ են այժմ Բարնաբն ու նրա ընկերները, վորոնց մենք ֆաբրիկից դուրս քշեցինք...



— Բարնաբի գործը հանձնված է վերահսկիչ հանձնաժողովին...

— Եդ լավ է, կարող է պատահել, վոր կուսակցությունից էլ քշեն, չէ՞:

— Ինչու չէ...հենց հիմա յել կուսզտման աշխատանքներն են տարվում. չեմ կարծում թե Բարնաբը պատվով դուրս պրծնի, տասցին բանվորները...

— Համա, ինչ լավ ժամանակին օգնության հասան են մեր ֆաբրիկին է,—թե չէ ամբողջովին կուլ կտային եդ գազանները... տեսեք ի՞նչ արավ ինքնաքննադատությունը վոր դա չեր յեղեր, ո՞վ է իմանում, թե ինչեր կկատարվեյին...

— Ճիշտ է, ինքնաքննադատությունն ու լրագիրը շատ օգնեցին գործին, շատ...

— Հե՛յ, գիդի, ինքնաքննադատություն,—գանգատավես ախ քաշեց Տառե Նոնիկաշվիլին...

— Ի՞նչ է, Տառե. ինչո՞ւ ախ քաշեցիր.—հարցրին այս ու այն կողմից...

— Յերևի հանաք արավ— հեղնեց վորմնադիրներից մեկը:

— Գուցե նրա մեջ խոսեցին նախկին հանցանքները...

— Ի՞նչ հանցանքներ, Ճաքրո.

— Տառեն գիտե այդ... Հը՛, ճիշտ չեմ ասո՞ւմ.

— Գնա— քո հերն էլ անիծած, դու միշտ հիմար բաներով ես զբաղված...

— Բա ինչո՞ւ ախ քաշեցիր.

— Ինչո՞ւ, ինքնաքննադատության անունը տալիս՝ հիշեցի մեր քարտուղարին, Նիշնիանիձեյին, հիշո՞ւմ եք...

— Ճիշտ, տղերք, տեսնես, հիմա ո՞ւր է Նիշնիանիձեն, խակալես վոր նա ինքնաքննադատության զոհերից մեկը յեղավ... խեղճ տղա...

— Գիտեք տղերք, վերաքննիչ հանձնաժողովը Նիշնիանիձեյին արդար է ճանաչել ու վորոշել են նորից ուղարկել մեզ մոտ աշխատելու,— բացականչեց մեկը:

— Կատակ ե՞ս անում, թե՞.

— Ճիշտ եմ ասում...

— Դե՛, թիխ ձեռ...

— Շան փորը լինեմ թե խաբեմ, վաղը կգա և ինքդ կհամոզվես...

— Ջան բոլշևիկներ, կեցցեք, վոր շնորք ունեք լավն ու վատը ջոկելու...ջան...ջան.—ձայնակցեցին մի քանիսներն էլ և ուրախությունից սկսեցին թաշկոտալ:

Գործարանի բակում յերևացին ինժեներ Կարպովն ու տնտես բաժվար Մուրադովը:

Կարպովը մանրամասնորեն ծանոթացնում էր Մուրադովին աշխատանքների էությանը, իսկ Մուրադովն էլ մեծ հետաքրքրությամբ լսում ու բլոկ-նոտում նշանակում էր կարևոր կետերը...

Նոր դիրեկտորի պարզ և անպաճույճ հագուստը զարմանք էր պատճառում շատերին. կապույտ բլուզ, եժանագին կեպի, տրիկոյի վարտիքն ու յուխտի ճտկավոր կոշիկներն ավելի շուտ ալեց հագուստի տպավորություն էյին թողնում, քան ինժեներ-դիրեկտորի զգեստի: Պարզ ու հասարակ էր հագնված նաև Մուրադովը։

Մուրադովը հատուկ ուշադրությամբ էր զննում բակում թափված շինանյութերը...

Կարգադրություններ անում...

Խնամքով դարսում գործիքները.—

Կարպովը զարմանում էր առաջ քաշված յերիտասարդ բանվորի այսպիսի հոգատարության ու խնամքի վրա, նամանավանդ մասնագիտական խնդիրներում:

Այդ պատճառով էլ, Կարպովը վոչ մի յեռանդ ու ջանք չէր խնայում Մուրադովին մանրամասնորեն ծանոթացնելու ամեն ինչի հետ—աշխատում էր ցույց տալ ու բացատրել, թե վորտեղ, ինչ պիտի կառուցվի, ինչքան շինանյութեր կհարկավորվի և ի՞նչ գործիքներ պետք է պատրաստվեն...

Մուրադովն էլ խիստ սրտացավ էր դեպի ստանձնած գործը և չափազանց համապատասխան մարդ դուրս յեկավ իր հանձնառած պաշտոնի մեջ:

Ֆաբրիկի գործերը շտկվեցին...

Ղեկավարները, ֆաբրիկայում աշխատող բարձր պաշտոնյաները, շատ մոտեցան բանվորներին... իրար շնորհավորեցին...



Հարց ու փորձ արին ֆաբրիկայի անցյալի ու ներկայի մասին... Շուտով Սուլակաուրին էլ յեկավ բանվորների մոտ հանդըստանալու և գլխավորներին ընկերաբար վողջունեց:

— Իվան Իվանիչ, այսոր կամ վաղը ֆաբրիկի ընդհանուր ժողով պիտի գումարենք...

— Ինչի՞ առթիվ.— հարցրեց Կարպովն ու մոտեցավ Սուլակաուրուն:

— Առաջին կվարտալի սոցմրցման պայմանագրի հետևանքների մասին պետք է խոսենք... Կարծեմ, արդեն ժամանակ է՝ յերեք ամսվա աշխատանքի հաշվառում կատարելու:

— Ճիշտ է, ընկ. Մուրադով, յե՞րբ ավելի հարմար է ժողով նշանակել:

— Վաղը հրավիրենք:

— Թող վաղը լինի....

— Իվան Իվանի՛չ.

— Լսում ենք.

— Բացի սոցմրցման պայմանագրից, կուզեյի հարց հարուցել գործարքային սիստեմի գլուխքային տարիֆն իջեցնելու առթիվ, այս խնդրով ակտիվն զբաղվել է և...

— Ի՞նչ ես ասում Սուլակաուրի, ի՞նչ իջեցնելու ժամանակ է.— ձայնեց բանվորներից մեկը:

—Ընկերնե՛ր հարցը հասունացած է, գնանք և այնտեղ խոսենք...

— Դուք աչքի անցրեք և ծանոթացեք հաշվային նյութերի հետ: Յես ժամանակ չեմ ունեցել այդ գործով զբաղվելու, վորովհետև ծանրաբեռնված եմ յեղել ուրիշ աշխատանքներով...

— Նյութերը բավականաչափ պերճախոս են... հարվածային բրիգադների սիստեմ մտցնելուց հետո աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 7 %ով:... Ամսական գրույքը մեծացավ՝ 12%ով... Մենք այժմ հարց պետք է հարուցենք աշխատանքի արտադրողականությունը 15 %-ով բարձրացնելու և յեղած աշխատավարձն անխախտ պահելու վերաբերմամբ...Ահավասիկ խնդիրն ինչպես պետք է դնել...

— Համաձայն եմ,—Կարպովը պինդ սեղմեց Սուլակաուրու ձեռքը և Մուրադովի հետ շարունակեց իր ճամբան...

Դռնչաց սուլիչը…

Ֆաբրիկայում սկսվեց ութժամյան աշխատանքը:

Դազգյահները գործի անցան…

Մուրճերն ու քլունգները, շնչացին…

Յեվ դարերով բաժան-բաժան քարի կտորները սիրահարված-ների նման փաթաթվեցին իրար, ցեմենտով շաղկապվեցին, կը-պան հավիտյան…

23

Տխուր էր Գիզառուրու բնակարանում:

Լուսարայի տրամադրությունը բոլորովին փոխվել էր այն օր-վանից, ինչ Գուրամն սկսեց մանկապարտեզ հաճախել. Լուսարան անճանաչելի յեր դարձել, նա օրերուն տխուր տրտում էր անց-կացնում…

Հազվադյուտ էր պատահում, վոր Լուսարան դաշնամուրին մոտենար…

Նա նույնիսկ տուալետին էլ չէր մոտենում…

Նստում էր Լուսարան և յերբեմն միայն գրքեր էր թեր-թում… թերթում էր, թերթում և նորից դեն շպրտում… Լրագրե-րի յերեսին անգամ չէր նայում… ընդհակառակը, նա նույնիսկ կատաղում էր, յերբ Փանխան սկսում էր թերթել լրագրերը, մի տեղ չէր կարողանում մնալ, մի գործի վրա կենտրոնանալ. անց-նում էր սենյակից սենյակ և ջղաձգորեն կրճտացնում ատամ-ները…

— Ինչո՞ւ ծնվեցի, ինչո՞ւ,— յերբեմն հարց էր տալիս ինքն իրեն և յերբ պատասխան չէր ստանում, թողնում, փախչում էր դեպի մանկապարտեզը… Լուսարան համարյա յուրաքան-չյուր օր տեսնում էր Գուրամին… Դիտում էր, թե ինչ պայման-ներումն են մեծանում ու դաստիարակվում յերեխաները… Դուր եյին գալիս Լուսարային այնտեղի դաստիարակության մեթոդնե-րը… դուր եյին գալիս նաև յերեխաների խաղալիքներն ու զվար-ճալիքները… Մեծ հիացմունքով լսում էր փոքրիկների յերգեցո-ղությունը…

Բայց…

Յեթե ամեն օր Գուրամին մանկապարտեզում չտեսնի, չի կա-



րող համբերել: Լուսարան սովորաբար գնում է այն ժամանակ, յերբ Գուրամի տուն վերադառնալու րոպեները մոտեցած են լինում…

Փանխան ազատվեց այդ պարտականությունից:

Այժմ այդ պարտականությունը հոժարակամ իր վրա յեր վերցրել Լուսարան և մեծ հաճույքով էր կատարում…

— Լուսարա… վերջերս քո մեջ խոշոր բեկում է նկատ-վում… ժպտալով դիմեց Գրիգոլը, բաղկաթոռում տխուր նըս-տած Լուսարային:

— Ինչի՞ց ես յենթադրում:

— Ենպես, մելամաղձոտություն է համակել քեզ և…

— Եվ ի՞նչ…

— Մի քիչ էլ քամահրելուց ձեռք քաշեցիր, ինչպես յերևում է— …Գրիգոլը ժպտաց…

— Գիտե՞ս ինչ Գրիշա, ճիշտ վոր բնավորությունս փոխվել է բոլորովին… Գուրամի բացակայությունը ինձ վրա անտանելի տանջանք է…

— Ինչո՞ւ, Լուսարա… Չէ՞ վոր այնտեղ Գուրամին լավ են պահում…

— Ավելի լավ, քան յես, սակայն, էլի…

— Վոչինչ Լուսարա, այդ դրությանն էլ կընտելանաս…

— Գրիշա՛…

— Ի՞նչ կասես…

— Գրիշա, հո չե՞ս նեղանա:

— Ասա, ի՞նչ ես ուզում… նեղացավ Գրիգոլն ու դարձավ դեպի Լուսարան…

— Յես վճռել եմ ծառայության մտնել…

— Հետո՞.

— Ի՞նչ կասես, հո չե՞ս վիրավորվի.

— Վո՞րտեղ պիտի ծառայես.

— Մանկատանը, յերաժշտության ուսուցչուհու պաշ-տոնով.

— Ընդհակառակը՝ …Գովելի յե նույնիսկ… Լուսարա, այսու-հետև դու յել իսկական քաղաքացի կդառնաս… իսկական կեն-դանի մարդ…

— Գրիշա, Գրիշա… Մի՞թե դու յել….

Լուսյան ուրախ ու խանդավառանքով փաթաթվեց իր խստաբարո ամուսնու վզով, գողտուկ նույնիսկ մի քանի համբույր քաղելով:

— Գրիշա, յես համ Գուրամին մոտիկ կլինեմ, համ էլ կըծառայեմ...

Գիգաուրու բնակարանում դարձյալ լռություն տիրեց... Միայն հյուրասենյակից լսվում եր ամուսինների քաղցր և անուշաբույր խոսակցությունը:

Յերեկո յեր...

— Գիգաուրի,—բակից լսվեց փոստատարի խռպոտ ձայնը և Փանիան որոտվելով փայտե սանդուղքով շտապ իջավ բակը:

Յերկուսն էլ ականջները սրեցին:

Փանիան նամակ բերեց:

Գրիգոլը ուշադրությամբ դննեց նամակը, սակայն ձեռագիրը չկարողացավ ճանաչել...

— Յերևի գրողն օտար մարդ ե, մտածեց Գիգաուրին և պատռեց ծրարի ծայրը.

«Յեղբայր Գրիշա».

— Յեթե այլ բանի ուշադրության չառնենք, դու համենայն դեպս մորս զավակն ես, հետևաբար եղբայրս, այդ պատճառով էլ գրում եմ սույն տողերը վորպես հարազատ յեղբորս, արյունակցիս... Յես կորա... կորավ իմ անցյալը, հետևաբար և ապագան. իմ պայքարն ուղղված եր այն իշխանության և կուսակցության դեմ, վորի ակտիվ անդամներից մեկն էլ դու յես, ուրեմն իմ նիզակների մի մասն էլ ուղղված եր նաև քո դեմ. չնայելով յես քո տանն եյի սնվում, ապրում (անտարակույս նյութական միջոցների մասին ե խոսքս), և այդ միջոցները յերբեմն ոգտագործվում եյին քո կուսակցության դեմ, սակայն... պայքար եր մղվում և այդ պայքարի գլխավոր ղեկավարներից մեկն էլ յես եյի համարվում մինչև այսոր... Այսոր այս նամակը գըրվում ե ուրիշի ձեռքով... իմ թելադրությամբ... թելադրում եմ, բայց...

Ջերմը խիստ նեղում ե ինձ, մտքերս խառնվել են իրար ու չեմ կարողանում կենտրոնանալ... Յես վիրավորված եմ...

Վերքը սրտիս խորքումն ե և...

Մոտենում եմ վախճանին...



Շարժվել չեմ կարողանում... իրավունք էլ չեն տալիս թեկուզ շարժում անելու... գիտեմ, քեզ այլևս սա չի հետաքրքրի... Գիտեմ, վոր մեր մեջ ամեն ինչ վերջացած ե ու փոշիացած...

Բայց...

Չե՞ վոր յեղբայր ես. ինձ համար միևնույն ե, ինչպես կուզես, այնպես վարվիր... Յես չեմ փոշմանում... Յես ամեն ինչ անում եյի գիտակցաբար և հենց դժբախտությունն էլ այն ե, վոր փոխանակ «ձեր և ձերայինների» իմ գաղափարական հակառակորդների ֆրոնտում պարտություն կրելու, յես ընդհակառակը պարտվեցի հենց իմ ընկերների շրջանում, մեր ներսի պայքարում... Անչափ ցավում եմ, վոր համախոհ ընկերոջս փամփուշտներն են զարկված սրտումս, սիրտս մղկտում ե, վոր մեր գործն այսպիսի տխուր վախճան ունեցավ:

Վերջացավ ամեն ինչ...

Գիտեմ, դու վորպես իմ դասակարգային թշնամին, կուրախանաս, բայց... չգիտեմ... վորպես յեղբորդ, կհիշե՞ս արդյոք... Չնայելով, այլևս չեմ էլ հավատում, թե դու վորպես յեղբայր կարգվե՞ս, կհասկանա՞ս ներկա դրությունս... Յես քաջ գիտեմ քո բնավորությունը... Դու ուժեղ և ամուր կամքի տեր ես, անողոք կլինես դեպի ինձ, նամանավանդ այն պարագայում, յերբ կճանաչես իմ իսկական դեմքը, իմ խաղացած դերը, թե ի՞նչ քաղաքական նկարագիր եմ ունեցել յես. յերբ կհամոզվես, վոր յես վոչ թե յեղել եմ բժշկական ֆակուլտետի ուսանող, այլ ձեր և ձեր իշխանության ամենաակտիվ հակառակորդներից մեկը... Յես գիտեմ, համոզված եմ, վոր այս խոսքերիս համար դու կթքես կարհամարհես ինձ, սակայն ինչ անեմ՝ յես ասում եմ իմ վերջին խոսքը. չեյի կարող այս ամենն ինձ հետ տանել գերեզման և գրում եմ քեզ, իբրև իմ յեղբորը— ուրիշի միջոցով այս բոլորը... վոչ միայն յես, այլ և մեր բոլոր ընկերները կորստի յեն մատնված, վոչ մի գրավական չունեմ, դրության բարվոքման վերաբերմամբ, վերջացած ե ամեն բան... Յավելով ցավում եմ, վոր ներկայումս Փարիզում գտնված իմ ընտանիքս չպետք ե կարողանա իմանալ իմ վողբերգական վախճանի իսկական մանրամասնությունը... Ա՜խ, իմ յերկու տղաներս, իմ փոքրիկ Թամրիկոն... Այո՛, հիմա զգում եմ նրանց կորցնելու (ավելի շուտ իմ կորստի) դժվարություններն ու ան-

բուժելի ցավերը... Ամեն ինչ ավարտվեց... Ամեն ինչ մոխիր դարձավ... Սակայն... ի՞նչ սրա ժամանակն է...

Այսպե՞ս...

Վոչինչ չեմ ցանկանում քեզ... Հրաժեշտի ժամին...

Վորովհետև...

Կարիք էլ չկա...

Մեկի դժբախտությունը՝ մյուսի բախտավորությունն է...

Այնպես վոր...

Դու ազատ ես և հաղթող...

Իմ մասին վորևէ հոգացողություն չանես... չնայելով համոզված եմ, շատ էլ չես մտահոգվի: Ամեն ինչ վերջացավ...»:

Նամակին կցված է նամակագրի հետևյալ տողերը.—

«Յերբ Լևանը ստորագրեց, ջուր պահանջեց, ապա ցանկացավ շուռ գալ մյուս կողքին, սակայն այլևս չէր շնչում»...

Հերթապահ բժիշկ՝ Ղանդարելի:

Գրիգոլը տխրեց... դեմքը մռայլվեց... նամակը ձեռքում ճմրթեց և...

— Գրիշա՛, ի՞նչ է պատահել, անհամբեր հարցրեց Լուարսան

— Լևանը վախճանվել է,— չոր պատասխանեց Գրիգոլն ու նորից նրա դեմքը տխուր արտահայտություն ընդունեց...

— Ինչպե՞ս, յե՞րբ,—վեր թռավ Լուարսան, Գրիգոլի ձեռքից նամակը հափշտակեց ու հետաքրքրությամբ սկսեց կարդալ...

— «Կալում», ինչպես ինքն է ծանուցում:

Լուարսան կարդաց նամակը...

— Մի՞թե...— ցածրաձայն արտասանեց Լուարսան և, հիշեց Լևանի գնալու առավոտը... Լուարսան համակվեց ծանր մտածմունքներով.

— Վողբալի յե. Լևանը... Խեղճ Լևանը...— խուլ մրմնջաց Գրիգոլը...

— Խեղճ Լևանը, արտասվեց Լուարսան...

— Վո՛չ, ցավալի յե միայն այն, վոր նախկին մարդն իմ հարկի տակն էր ապրում... Ցավալի յե... Բայց սա ավելի ցավալի յե, քան նրա... Օձի կծածի նման վեր թռավ Գրիգոլն ու արագ քայլերով դուրս գնաց պատշգամբ...



— Գրիշա՛, անհամարձակ ձայն տվեց Լուարսան և, ինքն էլ քայլերով հետևեց նրան:

— Գրիշա՛...:

— Ի՞նչ ես ուզում, Լուարսա:

— Գնանք... Գրիշա... Չէ՞ վոր ննջեցյալին էլ հարկավոր է տերություն անել...

— Նրան տերություն կանեն...—կարճ ու կտրուկ պատասխանեց Գիգաուրին. Լուարսան այլևս չհամարձակվեց խոսք ասելու...

Դարձյալ լռություն...

— Խեղճ Լևան,—դուրս պոռթկաց Լուարսայի սրտից...

— Լուարսա, վոչ մի խոսք, վոչ մի հառաչանք... վողբալի ու ցավալի յեն հենց այն, վոր իմ հարկի տակ նույնիսկ իմ կոպեկներով գործելիս է յեղել Լևանը և նրա ու նրա ընկերների միջոցով կազմակերպվելիս է յեղել այդ իշխանության ու կարգերի տապալման գործը, վորի անդամներից մեկն եմ և յես... Թեև...

— Գրիշա, դու ի՞նչ գիտեյիր այդ բոլորի մասին:

— Չգիտեյի վոչինչ, սակայն...

Հարկավոր էր, նույնիսկ անհրաժեշտ էր գիտենալ... Թեև, Լուարսա...

— Ի՞նչ...

— Չէր կարող պատահել, վոր դոնե դու...

— Ի՞նչ Գրիշա,—զարմացավ Լուարսան և հուսահատական դեմք ընդունեց...

— Ե՛հ—վոչինչ... ուշ է արդեն... Ամեն ինչը իր տեղն ու ժամանակն ունի... Այժմ արդեն ուշ է...

Գրիգոլը թափահարեց աջ ձեռքն ու սկսեց պատշգամբում մանգալ...

— Գրիշա, մի՞թե դու կասկածում ես ինձ վրա...

— Լուարսա՛...

— Վոչինչ, սա իմիջի այլոց...

Լուարսան սկսեց լալ...

Փափուկ թաշկինակով սրբեց աչքերը...

Բայց... թե ի՞նչն էր Լուարսայի այս արտասունքների պատճառը—արդյոք՝ Գիգաուրու չպրծած կասկածի խոսքերը՞, թե

կեանք անժամանակ կորուստը,—Գիտության համար մնաց անլուծելի դիլեմա...

## 24

Մելիքովի գործի հետ շաղկապված ֆաբրիկայի հետախուզությունը բավական յերկարեց: Վնասարարության հարցն իր վրա բևեռեց շատերի ուշադրությունը:

Բոլոր փաստաթղթերը տակն ու վրա արին, խուզարկեցին:

Գրագրությունն ու արխիվը շուռ ու մուռ տվին:

Մեխանիկներին ձերբակալեցին...

Կալանավորեցին նաև Վայնբերգին:

— Ի՞նչպես, յես...վնասարա՞ր. դա անհավատալի յե,—ցուցմունքներ տալու ժամանակ Վայնբերգը կարմրում, սփրթնում, քրտնում էր—դողում էր ջերմով բռնվածի նման...Հաճախակի ուղղում էր ակնոցները...մերթ հանում էր, սրբում, նորից դնում քթին և մերթ...

— Ինչո՞ւ ուշացրիք նախագիծը. չէ՞ որ խոստացել էիք ժամանակին հանձնել, ինչո՞ւ չկատարեցիք ձեր խոստումը:

— Նախագիծը... Նախագիծ...ներողություն, ձեր...

— Հարկավոր չէ...կարող եք Երգեմլիձև կոչել—ընդհատեց Վայնբերգի խոսքը քաղվարչության ավագ քննիչը—ավելի լավ կլիներ հարցերիս վճռական պատասխան տայիք...

— Նախագիծ...սար...ընկ... Երգեմլիձև...ճիշտ է, նախագծի մշակումն ուշացրինք, բայց կուսակցական, կոմյերիտական կուսբյուրոն էլ կվկայի, թե ինչ պայմաններում էինք աշխատում: Վայնբերգն սկսեց իրեն արդարացնել, հանկարծ ակամայից մեղադրական խոսքեր շպրտեց նաև միձակարգական վարչության և Պետպլանի հասցեին, վորոնք իբր թե իր ժամանակին չէին հասցրել տեղեկությունները և այլն... Այս անելով՝ Վայնբերգն արդեն յերկու վատ խրվեց...ընկավ այնտեղ, վորտեղ ամենևին չէր սպասում:

— Փաստե՞ր:

— Փաստեր...ահա ձեզ փաստ, ինչվոր յես...յես ուզում էի ասել, վոր հիշյալ կազմակերպություններն էլ ժամանակին չունեյին պատրաստ անհրաժեշտ տեղեկություններ, վորոնք ի հարկե պարտավոր էին ունենալ...



— Սպասեցե՛ք...պարտավորությունների մասին ձեզ չեն խոսեցնում, պատասխանեցե՛ք. դուք, նախագիծն ուշացնելու համար ստացա՞ք վորևէ տեղից վարձատրություն, թե՞ վոչ:

— Չեմ հասկանում, ինչպե՞ս թե ուշացնելու համար, յես վոչինչ չեմ ստացել...

— Հիշեցեք, Վայնբերգ, գուցե մոռացել եք...կարելի յե ստացել եք...

— Չեմ հիշում...վոչինչ չեմ հիշում...

— Լա՛վ մտաբերեք...յերեք հազար մեկ. նույնքան՝ յերկրորդ նվագին...դարձյալ յերկու հազար...

— Ուհ, ի՞նչ եք ասում...թե ստացած լինեք...վո՞րտեղից, ի՞նչպես...

— Յեվ դարձյալ...ինչքա՞ն...

— Երգեմլիձեն սպասում էր պատասխանին:

— Ելի...վորքա՞ն—Վայնբերգը թուլացավ...դողով բռնվածի նման սկսեց կոնկոռնալ:

— Ասո՛ւմ եք, վորքա՞ն.—բարկացած գոչեց Երգեմլիձեն:

— Հինգ հազար...չէ՞.

Վայնբերգը սրտնեղեց: Վախեցավ: Մի անգամ էլ փորձեց քննիչի առաջ չքմեղ ձևանալ, գործի իսկական էությունը մթագնել և մեղմել, սակայն նրա դեմքը պատռվեց, յերբ ներս բերին տրեստի դիրեկտորի տեղակալ Ռուբեն Պողոսովին, վորը հայտարարեց ու հաստատեց Մելիքովի, Վայնբերգի և մյուս սրիկաների արարմունքները, վորոնց պատճառով ֆաբրիկան միլիոնների վնասներ կրեց... Այդ ամենը դեռ անցյալ տարի ֆաբրիկայի գործերը քննելիս՝ նկատել էի, բայց...

— Ի՞նչ բայց.—հարցրեց քննիչը:

— Բավարար չափով չէի համոզված և վոչ էլ...

— Թաքցնո՞ւմ էիք, կամ բաժի՞ն էիք պահո՞ւմ...

— Այդ էլ ճիշտ է...դժբախտաբար չեմ կարող դրժել: Այո՛, զգալի չափով հանցավոր եմ ֆաբրիկի առաջ. սա անկեղծորեն հայտարարում եմ և պատրաստ եմ նույնիսկ արժանի պատիժն էլ կրելու:

— Էլ ի՞նչ էիք նկատում:

— Նկատում էի նաև, վոր Վայնբերգը նյութապես ապահոված էր և սրանից մի քանի որ առաջ, ճիշտ այն ժամանակ, յերբ

տեսար դիրեկտորի և իմ մեջ ինչ վոր տարաձայնություն էր ծագել, մի խոսքով, մեր հարաբերությունները մի քիչ սրվել էյին, Վայնբերգը Մելիքովին պատժելու համար նույնիսկ փող էլ առաջարկեց... Մելիքովն իմ փեսան է, ինչպես գիտեք և...

— Լավ, դուք Վայնբերգից փող հո չե՞ք առացել:

— Ի հարկե վոչ...

— Ամաչեցե՛ք, Ռուբեն Արութինովիչ, ամոթ ձեզ համար... ամոթ...

— Այստեղ ամաչելու բան չկա...

— Подлец !...կատվի նման մլավեց Վայնբերգը, քիչ էր մնում արյունակալած աչքերը դուրս թափվեյին...

Քննիչը զգուշացրեց յերկուսին էլ, առաջարկելով կոռեկտության սահմանից դուրս չգալ և շարունակեց իր գործը...գործը հանձնվել է բարձագույն դատարանին...

Ֆաբրիկայի ծառայողներից պատասխանատվության յենթարկվեցին՝ Բարնար Բարբաքաձեն, նրա օգնականը և մի քանի ուրիշ աշխատակիցներ... Բանվորների պահանջի համաձայն ցուցադրական դատ պիտի կազմակերպվեր...

Աշխատավոր բնակչությունն անհամբեր սպասում էր պրոցեսին...բայց...

Իր հերթին համախոհներն էլ քնած չէյին: Վնասարարներին պաշտպանելու համար գինվում էյին ու լեզուները մաքրազարդում մի շարք փաստաբաններ... Այո՛, լեզուները սրում էր յուրիսպրուդենցիայով տարված «խելագարների» փոհմակը... Որենսգրքերի մեջ փնտրում էյին վորոշ կետեր, ծանոթություններ...

Վորոնում էյին մեղմացնող հանգամանքներ...

Վորոնում էյին գլուխները մի կերպ դուրս պրծեցնելու միջոցներ...վորոնում էյին, վորովհետև նրանք շահագրգռված էյին «ձեռքի կեղտով»...

Ցեվ խոսք, այստեղ, հազարներից էյին խոսում:

Այստեղ շարժման մեջ էյին դրվել չերվոնեցները...և...Այս պատրաստությունների հետ զուգընթաց՝ մոտենում էր նաև դատավարության օրը...





— Այսպես, ուրեմն.—ավարտեց կուսկոլեգիայի քարտուղար Մակարովն ու կարդաց արձանագրության վերջին տողերը.

«Պոդոսով Ռուբեն Արությունի, ծառայող 33 տարեկան, հայ, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, կոմկուսի անդամ 1922 թվից, ուրիշ կուսակցություններում չեղած (?), Կարմիր բանակում չի ծառայել, մեղադրվում է, վոր նա կոլեգիալ աշխատանք չի տարել, մոտիկ հարաբերության մեջ է յեղել վնասարար ինժեներ Մելիքովի հետ. վերջինիս նպատակն էր՝ Ֆաբրիկի կառուցման աշխատանքների կասեցումն ու այստեղից հետևող պետության նյութական վնասներ հասցնելը. գործի քննության ընթացքում, Պողոսովը վերահսկիչ հանձնաժողովին դիմում տվեց, վորի մեջ խոստովանում է իր սխալներն ինժեներ Մելիքովի հետ, վորպես ազգականի մոտիկ կապի մեջ լինելու գործում. սակայն ինչ վերաբերում է վնասարարության՝ նա իրեն համարում է անմեղ, վորովհետև վնասարար Մելիքովին՝ նա՝ Պողոսովը, ճանաչում էր վորպես փեսայի, ազգականի և վոչ վորպես վնասարարի ու պետական դավաճանի: Զեկուցում է կուսկոլեգիայի քննիչ, վերահսկիչ հանձնաժողովի անդամ ընկ. Բերբաձեն:

ՎՈՐՈՇԵՑԻՆ՝

«Ընկ. Պողոսովի հայտարարության—դիմումը համարել փաստաթուղթ. ապացուցված է, Ռուբեն Պողոսովի ազգակցական և ֆաբրիկի գործում վնասարարական կապն ինժեներ Մելիքովի հետ: Գործին կցել նաև ինժեներ Վայնբերգի վերջին ցուցմունքն իրենց փոխհարաբերությունների վերաբերյալ: Ապացուցված համարել նաև այն փաստը, վոր Պողոսովը մինչ կոմկուսի շարքերը մտնելը, յեղել է դաշնակցական կուսակցության ակտիվ անդամներից մեկը, վորպիսի դրությունը նա դիտավորյալ կերպով ծածկել է կուսակցության շարքերը մտնելու ժամանակ...Ռուբեն Արությունի Պողոսովին վտարել Վրաստանի կոմկուսի (բ) շարքերից, ինչպես վոչ կոմունիստական և միևնույն ժամանակ ավանտյուրիստական նպատակներով տարված տարրի: Գործը հանձնել դատական օրգաններին՝ դաշնակ Պողոսովին պատասխանատվության յենթարկելու համար»:

Սեպտեմբերի 23-ին, 1929 թվին:

Վոչ վոք չուզեց պաշտպանել:

Ամենքին հայտնի չեր ֆաբրիկայում ստեղծած դրությունը, սակայն սաստիկ հուզումնալից եր այն, վոր Պողոսովը, Դաշնակցության ակտիվ անդամը, ինչպես հետագայում պարզվեց, մասնակցել ե հայ-վրացական արյունահեղ կռիվներին և նույնիսկ առաջնորդել եր դաշնակցական մի բանդայի Լոռու-Փամբակի ուղղությամբ. այսօր նա կոմկուսի անդամ եր, իր անձնական գործում վոչ մի հիշատակություն չունի իր անցյալ «հերոսական գործունեության» վերաբերյալ:—Պողոսովը Հայաստանի ֆրոնտո՞ւմ.— մտածմունքի մեջ ընկավ կոլեգիայի անդամ, ալեզարդ Ստեփանը.—Հայաստանի ու Վրաստանի միջև յեղած պատերազմների ժամանակ... Ռուբեն Պողոսով... Ինչո՞ւ չես մտաբերում. կամ թե վո՞րտեղից հիշես:

Բայց վո՛չ, այն ժամանակ չե՞ր վոր Ստեփանը հայ-վրաստանյան սահմաններում զբաղված եր անլեգալ աշխատանքներով. մի տեղից մյուսն եր տեղափոխում ամեն տեսակի կուսակցական գրականություն, իրեն միշտ «աշուղ» ձևացնելով: Ստեփանը շարունակ՝ հեռու թե մոտիկ շփվում ե զինվորների հետ, ճամփորդում եր և տեղից-տեղ, գնում զորաբանակի հետ միասին. վոգևորված ագիտացիա յեր տանում յեղբայրասպան ու ազգամիջյան ընդհարումների դեմ. այդ համարձակությունների ու հանդուգն ագիտացիայի պատճառով քիչ եր մնացել զոհ գնար... կասկածելով՝ Ստեփանին մի քանի անգամ ձերբակալում են յերբեմն Վրաստանում, յերբեմն ել Հայաստանում...Սակայն նա, ամեն անգամ մի կերպ ազատվում եր, հավատացնելով, վոր ինքը լոկ հասարակ «աշուղ» ե՝ սրինգ նվագող և ուրիշ վոչինչ:

Ստեփանը յերկու ֆրոնտների «բարձրաստիճան» զորականներին ել եր լավ ճանաչում, յերբ պատերազմներում հաղթանակներ տարած գեներալներն իրար շնորհավորում եյին (?), Ստեփանը հենց այդ մոմենտին սկսում եր նվագել իր «սրինգը» և պառնադին ու ալեկտուր սկսում եր յերգել որևէ չարիքը:

Ալեզարդ Ստեփանը սպաներին ու գեներալներին լավ եր ճանաչում, նրանց ազգանուններն ել գիտեր, անգիր հիշում ե բոլորին... Սակայն Պողոսովի՞ն... Ռուբեն Պողոսո՞վ... սպաների շարքում նման ազգանունով մարդ չեր ճանաչում և չեր հիշում...



— Տեր-Նիկողոսով... գնդապետ Տեր-Նիկողոսով... ինքն իրեն մտաբերեց Ստեփանը—այո՛, այո՛, Տեր-Նիկողոսովը հարձակվեց Լոռու-Փամբակի վրա, բայց չե՞ վոր նա հատակն ասած գնդապետ եր... Մեսրոպով... վաշտապետ Դանելյանց, պորուչիկ Միկիրտումով... Մանվելյան...

Ստեփանը սրանց բոլորի ազգանունները նշանակած ունի իր են ժամանակվա անլեգալ ծոցատետրում.— Արաքսի, Կարապետյան... Գալուստով... Այո՛, պորուչիկ Գալուստով, վորը մի գիշեր գնդակահարեց բոլշևիկության մեջ մեղադրվող 18 զինվորի. Գալուստով՝ միջահասակ, գանգուր մազերով, արծվաքիթ և բազեյական թունալից աչքերով... Սակայն ի՞նչ... Այժմ ո՞ւր են աշխատավորների դահիճները. Նիկողոսով-Գալուստովներ, Մանվելյան-Կարապետյաններ կամ թե չե մենշևիկյան գվարդիայի «դարգիմանդ» առաջնորդները. հեծելազորի պետ—Ծերեթելին, Ղանչավելին, Կոխրեյձեն և Աբրիկյաձեն, վորոնց անունները սահմանամերձ հայ գյուղերի հայ. աշխատավոր մասսան զզվանքով ու նողկանքով և հիշատակում... «Անվանի գվարդիայի քաջագործություններից» սոսկում եյին թե ինչպես հայ, նույնպես նաև վրացի աշխատավորները. սակայն, այժմ վո՞ր մեկին մտաբերի ալեզարդ Ստեփանը... Քանի-քանի դահիճների ու արյունարբուների անունները տա...

— Պողոսովը...

Պողոսովին չի կարողանում հիշել... կամ թե ինչպես հիշի այնքան շատ ավազակներին ու ավանտյուրիստներին, վորոնք ազգամիջյան արյունահեղությամբ տաքացնում եյին իրենց ձեռքերն ու արյունաշաղախ կարիերա ստեղծում իրենց համար... Դաշնակ Պողոսով...նախկին սպա:

Վո՛չ, ալեզարդ Ստեփանյանի ծոցատետրում անգամ հիշված չե նրա ազգանունը, բավական հին գործ ե, բայց և այնպես չի հիշում, գուցե նա ել ե սխալվում՝ ով Պողոսովին մեղադրում ե Դաշնակցության պատկանելու և սպա լինելու մեջ, ո՞վ գիտե, գուցե նա չել ե մասնակցել հայ-վրաստանյան ավանտյուրիստական ընդհարումներին...

Գուցե՛... Ամեն ինչ հնարավոր ե... բայց...

— Խնդրեցեք Պողոսովին...

Պողոսովը ներս ե մտնում գլուխը կախ և գունատված:

Ստեփանը մի վայրկյան աչքը չի հեռացնում նրանից, զննում է, տնտղում, չափում ու ձևում, գլխից մինչև վոտների ղճեղները... Ուզում է մտաբերել...

Բայց Պողոսովը...

Պողոսով ազգանունը չի կարողանում մտաբերել...

— Ե՞րբ մտաք կուսակցության մեջ, կրկին հարցնում են Պողոսովին:

— Քսանչերկու թվին:

— Մինչ այդ վո՞րտեղ եյիք աշխատում:

— Ալլահվերդի գործարանում, կոնցեսիոներների մոտ,— պատասխանեց Պողոսովը:

— Դուք նախկին սպա՞ յեք, այո՞:

— Այո՛, յեղել եմ նաև սպա, 1918 թվին զանվում եյի զորաչարքում:

— Դուք այն ասացեք, հայ-Վրացական պատերազմին մասնակցե՞լ եք.

Զարմացական հայացք է նետում ալեզարդ Ստեփանը Պողոսովին, աչք չհեռացնելով նրա դեմքի գծագրությունից...

— Այո՛, կայի, բայց վորպես զորակոչի յենթարկված...

— Սպայի կոչումն ունեյիք, այնպես չե՞...

Պողոսովը շփոթվեց, հարմար պատասխան չեր կարողանում գտնել:

— Այսինքն՝ պատերազմին մասնակցո՞ւմ եյիք վորպես սպա.— առանց վարանելու հարցափորձ եր անում ալեզարդ Ստեփանն աչքերն ուղղակի կենտրոնացնելով նրա վրա...

— Ասացեք խնդրեմ, դուք լսել ե՞ք Սեսպկո սրինգ նվագողի անունը:

— Պատերազմի ժամանակ կարծեմ տեսել եմ...

Դահլիճը զարմանքով համակվեց:

Հեղափոխությունից հետո դուք ազգանունը հո չե՞ք փոխել.

— Արտառոց հարց է:

— Ի՞նչ կա. մեր որենքների համաձայն յուրաքանչյուր քաղաքացուն լիակատար իրավունք եր տրվում իր ազգանունը փոխելու,— ընդհատեց Ստեփանը:

— Ազգանունս փոխելու կարիք չեմ զգացել,— սառը պատասխան տվեց Պողոսովը:



Ստեփանը նորից մտածմունքների մեջ ընկավ:

— Պատերազմի ժամանակ դուք վո՞ր գյուղում եյիք բանակել, հարցնում է կրկին Ստեփանը:

— Փամբակում,— այլևս անկարող եր պատասխանել Պողոսովը...

— Ուրեմն, Սեսպկոյին ճանաչում եք, չե՞...

Պողոսովը ճանաչեց սրինգ նվագող Սեսպկոյին, հենց եդ ալեզարդ Ստեփանն եր. ահից աչքերը լայնացան, տոկաց, սակայն այնպես ձևացրեց, իբր թե վոչինչ չկար...

— Ճանաչում եյի,— խուլ ձայնով պատասխանեց Պողոսովը:

— Հետևաբար, դուք այն էլ կհիշեք, վոր մի գիշեր պարուչիկ Պախոմովի հրամանով տասնութ գինվորի գնդակահարեցին, վորոնց մեղադրում եյին բոլշևիկության մեջ. Պախոմովը ձեր ի՞նչն եր, ճանաչո՞ւմ եյիք նրան. Պողոսովը ցամաքեց... այլայլվեց... աչքերը մթնեցին...

— Ընկ. Պողոսով, ի՞նչ կասեք...— կրկնեց Ստեփանը չեշտակի հայացքը չհեռացնելով Պողոսովի ծանոթ դեմքից:

— Յես Պախոմովին չեյի ճանաչում... Գնդակահարման մասին լսել եմ... Այն ժամանակները յերևի մերձակա վորևե գյուղում կլինեյի...

— Պախոմով... նա շատ եր նման ձեզ. ձեզ նման կազմվածք ուներ, զանգուր մազերով, արծվաքիթ, նույն տեսակ ճակատով. ու աչք-ունքով, աչքերը բազեյանման եյին, ճիշտ ձեր աչքերի պես....

— Ի՞նչպիսի համեմատություն է.— նեղանալով պատասխանեց Պողոսովն ու գլուխն այնպես բռնեց, կարծես...

— Այո՛, Պախոմովը ճիշտ ձեզ նման եր, վորը հայտնի յեղավ իր քստմնելի արարքներով և դարձյալ կրկնում եմ, վորին շատ եք նման, ընկ. Պողոսով...— ընդգծելով «ընկեր» բառը:

— Դա չարամտություն է... յես բողոքում եմ...

— Համբերեցե՛ք,— զգուշացրեց նախագահը, մինչև ականջատակերը կարմրած Պողոսովին:

— Քանի վոր Սեսպկոյին ճանաչում եք,— չեր դադարում ալեզարդ Ստեփանը,— այն էլ կգիտենաք յերևի, թե Սեսպկոն մի գիշեր յոթ-ութ տարեկան յերեխային ինչպես փախցրեց բանակից, վորին այդ գիշեր պարուչիկ Պախոմովի կարգադրությամբ կրակի ճարակ դարձրին, միայն հետագայում պարզվեց, վոր այդ յերե-

խան ընդառաջ Տեր-Նիկողոսովի քրոջ փոքրին եր յեկել և բոլորովին սպառնալիքով հյուր եր յեկել յուր ղայաքի մոտ... և դրանից վերջ քննությունը կրակի ճարակ եյին դարձել...

— Զգխում...

— Սուտ եք:

— Զգխում,— կրկնեց Պողոսովը և կարմրությամբ ավելացավ...

— Սուտ եք խոսում... յես այժմ շատ լավ եմ հասկանում ձեզ, պարոնչիկ. հենց Տեր-Նիկողոսովի բնակարանում, հենց են յերեխայի աղաղակը յերկրորդ որը կազմակերպած խնջույքին, վորտեղ սրինգ նվագող Սոնակին ել եր մասնակցում...

— Հետո՞, դրանով ի՞նչ եք ուզում ասել...

— Այն, վոր դուք պարոնչիկ Պախումովն եք...

— Պախումո՞վ...

— Այո, Պախումով... Տասնմեկ բոլշևիկի դահիճ... Յես պահանջում եմ, վոր Պողոսովին՝ ինքն Պախումովին անմիջապես ձերբակալեք և այս վայրկյանից ուղարկեք ուր հարկն է... Յեթե հիշողությունս չի դավաճանում, իմ արխիվում այս «պատվական» դադանի լուսանկարն էլ պետք է վոր ունենամ... Այո՛, լուսանկարն ու մի քանի փաստաթղթերն էլ...

Այսպիսի անսպասելի հայտնաբերումից ամենքն էլ քարացած մնացին:

Պողոսովը նույն Պախումովն էր: Լուսանկարներն ու մի շարք փաստաթղթերը ստիպեցին Պողոսովին պարզապես խոստովանելու...

Որանից տասը տարի առաջ եր, Պողոսովի մաքուրն անցյալ չեր անցել, վոր այս կառուցման շրջանում, յերբ կուսակցության և իշխանության ուշքն ու միտքը բևեռված է այդ կողմը, համակած վորևիցե մեկը կհետաքրքրվեր «հին հին դարուց» հիշատակների քննությամբ և որևեքով փոխած ազգանվան գաղտնիքը կբացվեր:

Հետախուզ դանդահարմանը հետևեց դաշտային բաժնի կարգադրությունը և պարոնչիկ Պախումովին կամ Ռուբեն Արությունի Պողոսովին տենդային արագությամբ տարան ուր հարկն էր:

Այսպ լսվում է Փաբրիկի տնտեսաժնի պետ Բաղդասար Բարքաձեյի գործը. սա յել մեղադրվում եր վնասարար Մելիքովի



հետ սերտ կապ հաստատելու, ... կապիտալիստների հետ գործ ունենալու և աջ թեքման մեջ, վորի ցայտուն ապացույց կարող եր լինել այն, վոր կարճ ժամանակվա ընթացքում իր անձնական տնտեսությունը գյուղում վատ չեր կանգնեցրել, կառուցել եր յերկու հարկանի տուն, այգի դցել և պահում եր ծառաներ:

— Ի՞նչ կասեք, ընկերնե՛ր,— հարցնում է անդամներին կուսկոլեկտիվայի նախագահը:

— Կուսակցությունից հեռացնել, վորպես այլասերված կոմունիստի և վնասարարի հետ կապ հաստատողի...

— Հեռացնել, բա՞յց...

— Վոչ մի «բայց» չի օգնի Բարրաքաձեյի գործին, ընկ. Մակարով...

— Բանն այն է, ընկերնե՛ր, վոր,— սկսեց Մակարովը,— ընկ. Բարրաքաձեն ընկավ վնասարար Մելիքովի ազդեցության տակ, այլասերվեց, բայց...

— Безоговорок пожопуйста! —խոսք բարկացավ կոլեգիայի անդամներից մեկը և ընկերներին նայեց...

— Սպասեցեք, ընկերներ... Բարրաքաձեն կուսակցությունից հեռացնելու արժանի չէ, սակայն յեթե ի նկատի առնենք այն հանգամանքը, վոր Բարրաքաձեն հասարակ անուսում գյուղացի յէ...

— Առաջ սարաժնիկ է յեղել, միջամտեց մեկը:

Հենց բանն էլ դրանումն է, վոր նա սարաժնիկ է յեղել, մութ ում, ուրիշի հլու կամակատար, զուրկ սեփական ինքնագործունեությունից և այլն: Բայց այդ, ինկատի պետք առնել այն հանգամանքը, վոր կուսակցական շարքերը մտնելուց հետո, նա մի առ մի խոստովանել է նախկին հանցանքները, զգում է այժմյան բոլոր արածների ծանր պատասխանատվությունն ու խնդրում է ներողամիտ վերաբերվել. սրա հետ միասին նա խոսք է տալիս այն կարողությունը, վոր նա ձեռք է բերել կուսակցություն մտնելուց հետո՝ յերկհարկանի տունը— տալիս է գյուղական դպրոցին, այգին մտցնում է կոլխոզ և ինքն էլ անդամագրվում է նրան: Յես կարծում եմ, վոր կարելի յէ ընկեր Բարրաքաձեյին թողնել կուսակցության մեջ՝ տալով նրան խիստ և վերջնական նախազգուշացում: Յեվ յեթե վորևէ նոր մատերիալ հրապարակ գա նրա վերաբերմամբ, այն ժամանակ այս վերջ մատերիալն իր ուժի մեջ կպահենք՝ նրա գլխին վերջնական դատավճիռ կարդալու համար:

— Կարելի չէ... ձայնեցին մի քանիսները...

— Իմ կարծիքով, հարկավոր է Բարրաքաձեյին անպայման վտարել կուսակցությունից...

— Ընկ. Գյորգի, կուսակցությունից հեռացնելուն մենք էլ դեմ չէյինք լինի, յեթե Բարրաքաձեյի կողմից այսպիսի դիմումներ չլինեյին...

— Դիմումը հերիք չէ, ընկերներ։ Հարկավոր է, որ դիմումի մեջ չեշտված խոստումներն իրականանան։ Դիմումը գործին չի կարող նպաստել։

— Ճիշտ է,— վկայեցին այս ու այն կողմից։

— Այդ դեպքում, այսօրվա օրակարգից հանենք այս հարցը՝ հետեւյալ ժողովին նորից արծարծելու նպատակով, միայն Բարրաքաձեյից պահանջել դիմումի մեջ հիշատակած փաստերը վավերացնող պաշտոնական դոկումենտներ...։ Սրա հետ միասին դիմել դատարանին՝ պահանջելով այնտեղից Բարրաքաձեյի ամբողջ գործը...

Յերեկոյան ժամը հինգն էր, յերբ կուսկոլեկտիվայի նիստն ավարտվեց և ծխախոտի ծխից թմրած ժողովականները շտապ կերպով իջան վերահսկիչ հանձնաժողովի շենքի սանդուղքներով...

26

Աշնանային անձրեւ էր մաղում։

Մերկանում են ծառերը. շրջակայքն ամայանում, խոնավ է դառնում։ Ճնճղուկներն անգամ զգալով մոտալուտ ձմրան ցրտաշունչ օրերը՝ թրթռում են ու աղիողորմ ճկճկում։

— Արագ-արագ սլանում են էլեկտրաքարշի վագոնները. հաճախակի աղետներից սարսափած ժողովուրդը փութկոտությամբ է անցնում մի մայթից՝ մյուսը...

Փողոցները լեփ-լեցուն են...

Անձրեւ է գալիս, սակայն անցուդարձը չի ընդհատվում.

Ուր վոր շտապում են... մաղում...

Ահա, նայեցեք, մինչև վորտեղ է հասել հերթը, ի՞նչ հերթ է, են անձրեւին ու ցրտին ի՞նչ են ուզում, ինչո՞ւ համար են յեկել...

Մի տեղ կանգնած ջղաձգորեն ձեռները խփում են քանոնին։

— Ի՞նչ կա.

— ...



— Ինչո՞ւ համար են կանչված, ի՞նչ հերթ է, —հարցնում են փողոցով անցնողները։

— Փաբրիկի ինժեներ Մելիքովին են դատում...

— Հե՞տո.

— Ինչ հետո, ցուցադրական պրոցես է... Ահագին ժողովուրդ է հավաքվել և դահլիճը չի կարողանում տեղավորել ամենքին...

— Զարմանալի չէ...

Այո՛, շատերի համար կարող է զարմանալի լինել, սակայն բանվորների համար զարմանալու ոչինչ չկա։

Ընդհանրապես, հենց մեծ մասամբ բանվորներն են նման դատավարությունների ներկա լինում —և դա անկասկած բնական յերեւույթ է։ Քաղաքի բանվորությունն ու աշխատավոր մասսան է, որ հետաքրքրվում է վնասարարների իսկական դեմքը պարզել և վնասարարության մանրամասնություններով։ Այդ պատճառով էլ ահագին ժողովուրդ է հավաքվել ձմեռային ակումբի դահլիճում, որտեղ կտեղավորվի շատ շատ յերկու հազար մարդ։

Տասնյակ հազարավոր մարդու ինչպե՞ս կտեղավորվի այս դահլիճը... Ճիշտ է դժվար է, սակայն ուրիշ ճար չկա...

Վարագույրը բացվում է, դահլիճում խոր լռություն է թագավորում, ամենքի հայացքներն ուղղված են դեպի բեմը, ուշի-ուշով հետեւում են դատավարական ցերեմոնիաներին։

Ցերեմոնիաներ՝ սակայն կարեւոր և անհրաժեշտ։

Նամանավանդ, որ ցուցադրական դատ է, սա պետք է ամեն կողմով ցուցադրական լինի թե՛ արտաքին և թե՛ ներքին բովանդակությամբ...

Մեղադրյալների համար հատուկ պատրաստած տեղում՝ բեմից մոտիկ նստած է Փաբրիկի գործով գլխավոր մեղադրյալ ինժեներ Մելիքովը, շրջապատված պահակներով...

Մելիքովը գլուխը խոնարհած, ընկղմվել է մտքերի մեջ..

Աննպատակ նայում է... ո՞ւր՝ ինքն էլ չգիտե. աշխատում է խուսափել իրեն նայող հայացքներից...

— Դա՞ յէ։

— Ակնոցավո՞րը։

— Հա՛, լղար, թխադեմ ինժեները...

— Հը՛, յես գլա...

— Դեհ, ինչի՞ յեն պետք անվայել դարձվածքներ։

— Տո՛ւն էլ... անվայել...

— Ինչի՞ն են պետք...

— Ճշմարիտ է, կարիք չկա, բայց սիրտս ուզում է, յերբոր մեր քրտնաթաթախ կոպեկները...

— Քրտնաթո՞ր...

— Այո՛, յերբ մեր քրտնաթաթախ կոպեկները սրա նման շանտաժիստները քամուն տան և այդ առթիվ էլ կառավարությունը դատավարություններ կազմակերպի՞:

— Հապա ի՞նչպես ես ցանկանում.

— Ի՞նչպե՞ս.

— Ո, այդ, Վասո ջան, Ռազմական կոմունիզմի փշրանքներ են... Այսօր, նման հարցերը գնդակով չեն լուծվում:

— Գուցե դու ուղիղ լինես, սակայն այսպիսի խոշոր հանցանքի դեպքում, շատ ցերեմոնիաներ ավելորդ են... Յերբ այդչափ մեծ է հանցանքը...

— Այստեղ Վասոն ձեռքով թափահարեց և համր շարժումով յեզրակացություն հանեց:

— Գնդակահարել, ուրիշ վոչինչ...

Բայց...

Խոսք է տրվում հասարակական մեղադրող ընկ. Ջաձամբեկ-յին... Դահլիճում տիրում է քար լռություն...

Այս քար լռության մեջ տեղ տեղ լսվում եյին միայն խուլ հազերի ձայներ: Մելիքովը թեթևակի շարժվեց, մի ակնարկ ձգեց մեղադրողին և ապա նորից աչքերով սկսեց պտտումներ անել անհուն տարածության մեջ...

Կինո-ռեպորտյորներն ուղղեցին ապարատը...

Մելիքովն ուզեց ձեռքով պաշտպանվել կինո-ապարատից, սակայն փորձված ռեպորտյորի փորձված աչքից ի՞նչը կարող է վրիպել: Մի վայրկյան էլ, և Մելիքովի դառնալից պրոֆիլը կինո-ժապավենին գրվեց:

— Զզվելինե՛ր,— սրտում անցկացրեց Մելիքովը,— յերանի ինչո՞ւ համար են ուզում իմ պատկերը, Ախալցխայի հա՞մար... Ապուշներ... Մեղադրողը կրակ եր թափում իր գեղեցիկ ճառում... Ժողովուրդը վոգևորվում եր, բարկությունից կատաղում, ջղայնանում...

— Մա՛հ...



— Գնդակահարում...

— Նողկանք ու զայրույթ,— մերթ ընդ մերթ խռնվում եյին ձայները դահլիճում. Նախագահի պստիկ զանգը ձեռին հաճախակի զանգահարում եր...

Մելիքովը վոչինչ չեր լսում այլևս:

Կամ թե չեր ցանկանում վորևե բան լսել:

Ծանր մտքերով տարված՝ յերբեմնակի մեղադրողի հատ-հատ խոսքերը թե կդիպչեյին ականջին... Լոկ զարնվում եյին, առանց ըմբռնելու իմաստը...

Սակայն..

Խռնվեց ու դղրդաց ժողովարանը:

Մելիքովի յետևի շարքում նստած մեղադրվողների մեջ իրարանցում ընկավ, վախ ու դողը պատեց նրանց. սկսեցին դողդողալ:

Մելիքովը քարացել եր արձանի նման:

Գլուխը կախ գցած, կարծես ուշադրություն չեր դարձնում վո՛չ դատարանին և վոչ էլ հուզված ժողովրդին:

Համարյա յերկու ժամ եր անցել, սակայն Մելիքովը տեղից չեր շարժվել, մի վայրկյան անգամ ժողովրդի կողմ չեր դարձրել յերեսը..— Ժողովո՞ւրդ, ժողովուրդն ի՞նչ բան է, ժողովուրդը հո խուժան է և վոչխարի հոտ... վոր կողմ փչես, են կողմն էլ կգլորվի... Ժողովուրդ... հետո, են էլ ետպիսի ժողովո՞ւրդ... խաժամուժ, յեղկլտական, գազանացած խաժամուժ... Վորը չի գիտակցում, ի՞նչ է անում, կամ ինչո՞ւ համար...

Դահլիճում լսվեցին փսփսոցներ, շշուկներ, խոսակցություններ, վորոնք ի վերջո փոխվեցին բարձրաձայն աղմուկի, այնքան ուժեղ, վոր նախագահը ստիպված եր մի քանի րոպեյով ընդհատել նիստը:

Մելիքովը դարձյալ անշարժ եր:

Մեղադրական ամբիոնի վրա յերևաց բանվորական ներկայացուցիչը, բավական հասակն առած մի բանվոր:

— Թիֆլիսի դեպոյի և Ստալինի անվան գործարանի անունից պրոլետարական դատարանից պահանջում եմ մեղադրյալ Մելիքովի վերաբերմամբ կիրառել գերագույն պատիժը—գնդակահարում, իսկ մյուսներին՝ սաստիկ պատիժ...

Դահլիճում լսվեց վորոտընդոստ ծափահարություն. սա վոչ

թե վորևէ գերմանի պատվերը նպատակով էր, այլ բանվորության լավագույն մասի սրտից բղխած անկեղծ արտահայտությունն էր, վորով վավերացնվում էր ծեր բանվորի առաջարկը...

— Գերագույն պատիժ...— մտածում էր ներկա յեղողներից յուրաքանչյուր մեկը և կրկին ուժգնորեն ծափահարում...

Ամբիոն են բարձրանում պատգամավորները մեկը մյուսի հետևից... Պահանջում են պատժի գերագույն չափի կիրառումը... Ֆաբրիկայում յերևան հանած վերքի վիրահատումը, խայտառ վերացումը... Վնասարարների լիկվիդացիա...

Եվ վերջապես Մելիքովը լսելու ընդունակ է դառնում... Նա պարզ, աշկարա լսում է հազարավոր բանվորների կողմից ուղարկված պատգամավորների հայտարարությունները... Այժմ Մելիքովը շատ լավ է լսում...

Հիշողությունը վերականգնվում է...

Ուշքն ու զգալու ընդունակությունը գործել սկսեցին... Վոչ թե գործել սկսեցին, այլ ինքն աշխատեցրեց։

Այո՛, աշխատեցրեց։

— Մի՞թե, գնդակահարո՞ւմ։

Մելիքովը ջերմով բռնվածի նման դողաց, սոսկաց և սիրտն էլ սկսեց արագորեն բաբախել, սակայն...

— Մա՛հ վնասարարներին...

— Խայտառ բնաջնջում.— միաբերան աղաղակում է դահլիճը։

Մելիքովն այժմ սրտնեղեց, այլայլվեց, սփրթնեց, սպիտակեց ինչպես պատ... Վերջապես մի կերպ ուժը հավաքելով, հանկարծ աչքերը բացեց։ Բանվորական պատգամավորների կտրուկ պահանջը Մելիքովի համար ռեալ իրականություն դարձավ և նա՝ մահվան պատժի սոսկումի տակ, սկսեց դողալ...

— Ձե՛, յեթե իրոք ամեն ինչ վերջացած է— այն դեպքում հառաչանքը վոչինչ, սպեղանի չի լինի վերքիս... Ավելի լավ է ամեն ինչ մոռանամ... Ամեն բան արհամարհեմ և...

Սակայն այս ինչե՞ր եմ ասում։

Մոռանա՞մ։

Մոռանամ, բայց ո՞ւմ համար, ինչո՞ւ, ի՞նչ նպատակով, ի՞նչ արժեք ունի այս ինքնադոհությունը. թեև այս ուղղությամբ մտածելն անգամ չարժե... Ուշացած է...

Այսօր արդեն ուշ է... Սեփական հաշիվներով հանցանքների



դեմ առ դեմ յելնելը, այդպիսի պայքարում յուրաքանչյուր անձնականը միշտ խայտառակ պարտություն է կրում...

Մելիքովին տիրեց վախի սև ուրվականը, դառն մտածմունքների մեջ նա առաջին կարգում նկատեց իր ամուսնուն, վորի աչքերը լացից արդեն ուռել եյին...

Մի ակնթարթում նա համառոտ էքսկուրսիա կատարեց դեպի կյանքի անցյալը... Անցյալը ներկայի հետ համեմատեց և... գլուխը թափահարելով հետևյալ յեզրակացությունն հանեց.

— Վերևից ներքև... ներքև... ցա՛ծր, ցա՛ծր, դեպի անդունդ... ցածր,— դեպի խորխորատ, ուղիղ գերեզմանի ափին... կարծես գերեզմանում...ինչո՞ւ, պատճա՞ռը...ինչո՞ւ, կամ ո՞ւմ համար...

Խեղճ կին, յերեխաներ... Դժբախտ մայր, պառավ, անտերանտիրական... Բայց... Մի՞թե այս հարցերն առաջ էլ դրված չեյին որակարգում, յերբ... Փարիզում պայմանագիր ստորագրեցի և Կովկաս ուղևորվեցի առանձնահատուկ հանձնարարականներով... Սակայն ինչ դրա ժամանակն է. ահա վորտեղ վոր է խոսք են տալու Մելիքովին։

Ի՞նչ ասի, ի՞նչպիսի ճամբա ընտրի՝ բոլոր հանցանքները խոստովանի՞ և՛ խնդրի զիջող և ներողամիտ վերաբերմո՞ւնք, թե...

—Վո՛չ, կռվել մինչև վերջը...— հաստատապես վորոշեց նա,— միևնույն է, բան դուրս չի գա, նման աղաչանք-պաղատանքներով կյանքս չեմ փրկի և...հետևաբար, էլ ինչո՞ւ արատավորեմ իմ աշխատանքային տարվա անբիծ գործունեությունը... Թեև ո՞վ գիտե, դուցե... վոչ թե դուցե, այլ սպասելի յե նույնիսկ, վոր մի տեսակ մեղմ վերաբերմունք տածեն... Ինչե՞ր եմ ասում. մեղմ վերաբերմո՞ւնք և ումի՞ց. բոլշևիկների՞ց. նրանց կողմից զիջող վերաբերմո՞ւնք. յես զիջող վերաբերմունքի ակնկալություն ունեմ այն մարդկանցից, վորոնք ամբողջ չորս տարի քաղաքացիական պատերազմներն իրենց մեջքով կրեցին, վորոնք սովա՛ծ, քաղցա՛ծ, մերկ ու բոկոտն հաղթահարեցին բոլոր խոչընդոտները և պատմության մեջ պատվավոր տեղ գրավեցին։ Մի՞թե սրանք չեյին, վոր բացի ներսի հակահեղափոխությունից փառավոր կերպով հաղթեցին նաև օտար իմպերիալիստների բլոկադան, ինտերվենցիան և դիմացան ու հաղթեցին լոկ այն պատճառով, վոր նրանք ուժեղ էին իրենց կանոններով, աշխատանքի ծրագրներով, կամքի ուժով...

Եվ այսօր դեպի ինձ ցույց կտան զիջող վերաբերմո՞ւնք, այսօր, յերբ Ֆրանս–ամերիկյան կապիտալիստներին վերևից հրամայում են, գետնին հավասարեցնո՞ւմ...

Վո՛չ...

Ջուր է, այսպիսի մարդիկ պատմության առաջ վոչինչ չեն զիջի և, հետևաբար իմ յետ նահանջելը, հանցանքներ քավելն էլ անպտուղ կլինի և աննշան...

Թեև...

— Կասկածում եմ նույնիսկ...բայց—վոր վոչվոքին չհանդիպեցի զրուցելու... Մինչդեռ այսօր ամենքն էլ այստեղ են, սակայն այստեղ ի՞նչ կարող ես անել, ո՞ւմ հետ կարող ես խորհրդակցել և ծանոթացնել իրերի դրությանը ե՛հ, վերջացավ, ամեն բան վերջացավ...

## 27

Երրորդ օրն էր, ինչ շարունակվում էր դատավարությունը... Նորանոր հանդիսատեսներ են հավաքվում ակումբի դռան առաջ. Ներսի օդը տաք է և ծխով լի:

Քամհարը չի օգնում այլևս...

Քրտինքի ու գաղջահոտ է...

Հարցաքննում են մեղադրվող Մելիքովին...

Նա պատասխանում է խաղաղ և կայուն տոնով...

Իրեն հպարտ է պահում... Ճիշտ է, հարձակման չի դիմում, սակայն պաշտպանվելու ուժեղ միջոց է վորսում... Հաճախ հայացք է ձգում պաշտպաններին ու մեղմ ժպտում. կարծես օգնություն նրանցից է ակնկալում:

Դատախազ.—Ի՞նչ կարող եք ավելացնել ձեր նախկին ցուցմունքներին:

Մելիքով.— Գիտակցորեն եյի գործում, կանխապես կազմած ծրագրի համաձայն...

Դատախազ.—Նպատակը՞:

Մելիքով.— Պարզ էր, խանգարել շինարարությունն ու տապալել իշխանությունը:

— Զղջանք.

— Մահ.

— Գնդակահարել.



Ձայներ են լսվում այս ու այն կողմից և բորբոքված ժողովուրդը քիչ է մնում մոտենա բեմին... Հոտնկայս, լուռ լսում են Մելիքովին և ընդհանուր տրտունջն ու զայրույթն արտահայտում խմբովին...

Մելիքովը չի բավարարվում հարցաքննությամբ և խոսք է խնդրում:

— Ի՞նչ կարիք կա. դուք ձեր ցուցմունքներում ցայտուն կերպով ասել եք ամեն ինչ. ճշտորեն ուրվագծել նպատակն ու այն «գործունեյության» պլանը, վորպիսին կիրառում եյիք Կովկասում...

— Վո՛չ, յես խոսք եմ խնդրում...

— Հարկավոր չէ.

— Ամեն ինչ հասկանալի յե.

— Մահ վնասարարներին.—չեյին դադարում ծանոթ ձայները: Պրոցեսը մոտենում եր իր վախճանին:

Պաշտպանները քաչ ու քրտինքում կորած՝ բերանները փրփրակալած ճգնում եյին ապացուցել, վոր ամեն ինչ կատարվել է միամտության և անփորձության հողի վրա. օրենսգրքից տարբեր հոդվածներ բերելով՝ ապացուցում եյին՝ վոր, յեթե վոչ բոլորովին, գեթ վորոշ չափով պետք է մեղմել Մելիքովի և ընկերության հանցանքները...

Աուդիտորիան հոգնեց...

Իրենց դավզակություններով հոգնեցրին նաև դատավորների ուղեղներն էլ...

Ձանձրացան նաև ներկա յեղողները, սակայն...

Երանի «վորևէ» բան դուրս գա, վոչի՛նչ, թող խոսեն, բարբառեն դատապաշտպանները, չէ՞ վոր դրանց արհեստն այդ է...

Երեսպաշտության ու գաղտնի սողոսկած մտքերով սենչում եյին չքմեղ ձևացնել Մելիքովին ու նրա արբանյակներին... Բայց պրոլետարական դատարանում, վորտեղ ամեն ինչ պրոլետարական վոգով է շնչում, ամբողջ կանոնագիրքն ունի սոցիալ–տնտեսական արմատներ ու ղեկավարվում է պրոլետարական մաքուր խղճով, ասացեք խնդրեմ, ինչո՞ւ համար են դատապաշտպանները (վարձու և վո՛չ պետական), վորոնց գործն է անտեղի շատախոսությունն ու դրամներ կորզելը...

Հենց այս է պատճառը, վոր հաճախ պաշտպաններին նույնիսկ

չեն լսում և սրտատրոփ սպասում են դատավճռին... Վորքան յերկարում է ժամանակը, ենքան ավելի ծանր է դառնում Մելիքովի վիճակը. Նա ամբողջովին դողում է, սրթսրթում, գունատվում, սակայն ամոթի զգացումը նրան թելադրում է, վոր անհողդողդ մնա և հանգիստ ջղերով դիմավորի դատավճռին...

Այո՛, նա ցանկանում է անհողդողդ կանգնել, սակայն ջղերը չեն հպատակվում նրան...

— Հապա ի՞նչպես պետք է վարվել.— վերջապես հարցնում է իրեն Մելիքովն ու աչքերն աննպատակ հառում դահլիճին... Այլևս չի ամաչում դահլիճի ժողովրդին նայելուց: Չորրորդ որն է, ինչ տեղի յե ունենում դատավարությունը, Մելիքովն ընտելացել եր ներկա յեղող հասարակությանը...

Նա ընտելացավ նրանց դժգոհություններին և նույնիսկ մի քանիսների դառնագին հառաչանքներին...

Ընտելանալն—ընտելացավ, բայց սեփական նյարդերին, սեփական կամքի ուժը չի կարողանում հաղթահարել: Ինչո՞ւ համար է Մելիքովն ամբողջ մարմնով դողում.

Վախի զգացումի՞ց:

Չե՞ վոր նա այլևս վոչ մի բանից չի վախենում... Չե՞ վոր նա սպասում է արդար դատավճռին, թեև ըստ մեղադրվողի, դատավճիռը հազվադեպ է լինում արդարացի ու գործող որենքների վրա հենված: Եվ նա սպասում է խիստ դատավճռին, վորպես հատուցում իր «աշխատանքների»...

— Լռությո՛ւն, դատարանը գալիս է. խնդրեմ կանգնեք.— հայտարարում է դատարանի քարտուղարը: Չորս ժամվա խորհրդակցությունից հետո դատարանը յելնում է ժողովրդի առաջ:

Լսելով... (և այլն) վորոշում է.

Ցարբիկի գործով ավագ մեղադրվող ինժեներ Տիգրան Տիգրանի Մելիքովին ՍԽՀՄ-ի որենսգրքի № 58—10, 58—11 և այլ հոդվածներով, տալ սոց. պաշտպ. գերագույն պատիժը— գնդակահարում...

— Վա՛յ ինձ.—առաջին կարգում լսվեց կանացի մի ճիչ և ուշաթափված կնոջը դուրս տարան դահլիճից: Մելիքովն էլ սրտանեղեց:

— Մեղադրվողներ՝ Բարնաբ Բարրաքաձեյի և Գողոսովի գործի առթիվ-շարունակում է դատարանի նախագահը,— կատարել



լրացուցիչ քննություն, հավաքելով կարևոր տեղեկություններ և գործի քննությունը նշանակել մոտիկ ապագայում:

Ապա կարդացվում է բազմաթիվ մեղադրվողների ազգանունները, վորոնցից մի քանիսին տրվում է արժանի պատիժ, մինչդեռ միքանիսներն էլ ազատվում են բոլորովին...

— Փառավոր դատավճիռ է....

— Իսկական հեղափոխական դատավճիռ...

— Իսկ յես կարծում եմ, վոր...—մրթմրթաց մի շլյապավոր յերիտասարդ...

— Ի՞նչ եք կարծում... Չպե՞տք է գնդակահարեյին.

— Իհարկե, չպետք է գնդակահարեյին:

— Հիմարություններ եք դուրս տալի. դատավարության թշնամին է...

— Ինտելիգենտական մտածելակերպ է— խոսեց մեկը և դայլի աչքերով նայեց շլյապավորին...

— Ինտելիգենտակա՞ն...— Հազիվ լսելի ձայնով մրթմրթաց շլյապավորն ու մոտեցող ելեկտրաքարշի վագոնին բևեռեց աչքերը...

— Այո՛, ինտելիգենտական...

Բանվորները դահլիճից փողոց դուրս գալով գոհունակությամբ գովաբանում եյին դատավճիռը: Նրանք տեղավորվեցին ելեկտրաքարշի վագոններում, վորտեղ շարունակվում եյին դատավճռի շուրջ յեղած խոսակցությունները...

## 28

Աշնանային օրերը բանակել եյին քաղաքում:
Օրեր՝ մշուշապատ, մառախլապատ և արտասվալից:
Փչեց ցրտաշունչ քամին...
Սվվացին ու յերերացին դեղնած տերևները:
Այգի ու վողերի մեջ եյին մերկ չինարիններն ու ակացիաները:
Գիգաուրին չի հիշում անգամ, թե ամառային տաք օրերն ինչպես
անցկացրեց Թիֆլիսում:
Նա հնարավորություն չունեցավ իր անձի ու ընտանիքի մա-
սին հոգալու, յերբ արդեն կայծակի արագությամբ սլացավ ամառը
և յերկար ու ձիգ փռեց իր թևերն աշունը:
Ամառային տաք քրտինքը ցամաքեց ինչպես Գիգաուրու, նույն-

պես էլ մնացած քաղաքացիների յերեսներին. ածխված գլուխները՝ նորից գլխարկներով սկսեցին դուրս գալ փողոց. յերևացին նաև վերադարձող հաղնողներ... վոմանք նույնիսկ բարձրացրին վերարկուի օձիքները... Գիգաուրին էլ վորոնեց ձմեռային վերարկուն, նավթալինից հանել ավլեց, մաքրեց...

— Ի՞նչպես սուս ու փուս, աննկատելի ծլկվեց ամառը.— հարց էր տալիս Գիգաուրին ինքն իրեն.— Ի՞նչպես փախուստ տվեց գարեջրի սեզոնը— միջանկյալ ասեմ, վոր գարեջրի սաստիկ սիրահար էր, նա ամառվա տոթին ծարավը միշտ գարեջրով էր հագեցնում: Գարեջրին ընտելացել Թուրքեստանում, քաղաքացիական պատերազմի միջոցին, ապա Բաքվում շատ էր գործածում հայտնի «Ժիգուլևի» գարեջուրը և այսպես...

— Ահա մի «կրուժկա»... մեկ էլ...— և Գիգաուրին գոհ սրտով դուրս էր գալիս գարեջրատնից...

Այս ամառ Թիֆլիսումն էլ այսպես անցկացրեց:

— Մեկ «կրուժկա».—յերբեմն—«դարձյալ մեկ» և աննկատելիորեն անցնում եյին շոգ ու տոթ օրերը:

Ազատ օրերին ավտոյով փոքրիկ զբոսանք կատարել դեպի Կոջոր կամ հազվագյուտ դեպքում՝ Դուշեթի կողմերը. ահավասիկ Գիգաուրու համար հանգստի ու առողջապահության միակ հնարավորությունը...

— Իսկ արձակո՞ւրդը...

Ամսի 1-ը հետաձգում է 15-ին...

Տասնեհինգից էլ— յեկող ամսի մեկին...

— Հուլիսի տասնհնգից անպատճառ, անպատճառ.— կատեգորիկ հայտարարություն արավ նա հուլիսի սկզբներին, խոստում տվեց նաև Լուսարային (արդեն մի ամիս էր, ինչ նա նրան կերակրում էր նման խոստումներով), բայց... հենց վոր մոտենում էր տասնհինգը, տրեստում նորանոր գործեր, աշխատանքներ եյին բացվում... Նորանոր նախագծեր, ծրագրներ, պլաններ....

— Վո՛չ, այսպիսի րոպեներին գործը թողնել ու արձակուրդ տանել շատ վատ է, անկարելի չէ...

«Արձակուրդը տեղափոխել տասնհնգից—օգոստոսի մեկին»— ժամագրեց օրացույցի մաքուր թերթին ու ազատ շունչ քաշեց...

Վաղուց էր, ինչ Գիգաուրին տառապում էր սրտի թրթռոցով:

Օգոստոսի մեկը...—յերևաց օրացույցի թերթիկի վրա, սա-



կայն չէ՞ վոր այսօր Անդրկովկասյան Կենտ. գործ. կոմիտեյի նոր շենքի հիմնադրության օրն է, Ձերժինսկու փողոցի վրա... Ի՞նչպես կարելի չէ թողնել...

Թոքախտավորների դիսպանսերի շինությունն էլ են այժմ կառուցում... Անկարելի չէ, անկարելի...

— Ջհաննամը՝ օգոստոսի 15-ից լինի... Այո՛, տասնհինգից.— հայտարարեց նա. կարծես բացի ամսի մեկից և տասնեհինգից ուրիշ օրերին չէր կարելի արձակուրդ տանել...

Օգոստոսի տասնհնգի՛ց... ներողությո՛ւն, օգոստոսի 15-ին մի գործարանի աշխատանքներ եմ ստուգելու, հետազոտելու... Հետևաբար, կվերադառնամ քսանեհինգին, քսանութին...

— Ընկ. Ամբերկի, արձակուրդս փոխադրեցեք սեպտեմբերի մեկին,— ժպտալով դիմեց Գիգաուրին գործավարին...

— Լսում եմ, թեև...

— Ի՞նչ է, ընկ. Ամբերկի.— Գիգաուրին հասկացավ, թե ինչ էր ուզում ասել գործավարն, այդ պատճառով նրա խոսքն ընդհատելով կրկին ինքը շարունակեց,— վոչինչ, սեպտեմբերի մեկն էլ շատ շուտ վրա չէ հասնելու. շատ-շատ յերկու շաբաթ տևի...

— Բանը հենց այն է, վոր այս արդեն ով է իմանում թե քանի— քանի անգամ է, վոր արձակուրդը հետաձգում եք. հա՛ հետաձգում... թե չէ գրելն ի՛նչ է, հեշտ է...

Անհամարձակ դիմեց Ամբերկին տրեստի վարիչին ու հրամանագիրքը բանալով՝ մատուցեց ստորագրելու համար:

—Վոչի՛նչ, բան չկա, ընկ. Ամբերկի. գուցե տասն անգամ փոխադրենք ու հետաձգենք, կարող է պատահել, վոր նույնիսկ այս տարի ամենևին արձակուրդ չտանք ընկ. Գիգաուրուն... Այդ անկարելի չէ, ընկ. Գրիգոլ, նամանավանդ, վոր այս տարի դուք գանգատվում եք սրտի թրթռոցից. յեթե արձակուրդով չօգտվեք, մեծ հանցանք գործած կլինեք...

— Վոր ուրիշ ելք չկա՞. ինքդ մտածիր, մի՞թե կարելի չէ այսպիսի լուրջ ու պատասխանատու մոմենտին տրեստի գործերը բարձի թողի անել. ճիշտ է, կազմբաժնի վարիչը՝ փաստորեն իմ տեղակալը, ընկ. Սարդիոնը, բավական աչքաբաց ու յեռանդուն յերիտասարդ է, անտարակույս լավ ապագա չէ խոստանում. տեխնիկական բաժնի վարիչն էլ հո նոր մարդ է, տակավին անծանոթ, սակայն չէ՞ վոր հարկավոր է նրան պատշաճ ղեկավարություն

ցույց տալ... Նոր մարդ է, դեռ լավ չեմ ուսումնասիրել, հետևաբար ամբողջովին հավատ ընծայելն էլ մի բան չի... Այնպես որ... Անկարելի յե, անկարելի...

Ամառային շոգ ու պապակվող օրերը գլորվում էին մեկ-մեկու յետևից. Գիգաուրին առանց ուշք դարձնելու իր նիհարելուն, շարունակ զբաղված էր տրեստի գործերով ու աշխատակիցների կազմած ծրագրների ստուգման— քննությամբ...

Նրա միակ մխիթարությունը, հանգստյան օրերին դեպի Կոջոր գնալն էր՝ մաքուր օդ ծծելու նպատակով, այն էլ հազվադեպ դեպքերում.—

— Նիհարեցի... Ցերեկ շատ եմ ինձ զոռ անում,— հաճախ ասում էր ինքն իրեն Գիգաուրին, սակայն նրա աչքին կրկին ու կրկին ծառանում էին տրեստը և այլ քաղաքական խնդիրներ, որոնք նրանից պահանջում էին շուտափույթ լուծում և նա յել, որևիցե, առանց մի վայրկյան հանգստանալու, նույնիսկ անկողնում, մտածում, ծրագրում, ջղայնանում էր... Անթիվ անհաշիվ աշխատանքներ, ժողովներ, նիստեր, ծրագրներ, նախագծեր, հետապնդումներ, հազար ու մի գրագրություն և շրջաբերական մի կողմից, մյուս կողմից էլ Լուսարայի թունալից բարբաջանքները, ծաղրանքը և քաղքենական առեկոսները՝ ամառանոց գնալու, հանգստանալու, յուր ժամանակին տուն գալու, ճաշելու, ընթրելու, թատրոն-կինոներ այցելելու և այլ ընտանեկան մանր-մունր խնդիրների մասին, որոնք անչափ ջղայնացնում ու գայրացնում էին Գիգաուրուն...

Այո՛, հուզվում, նյարդայնանում էր նա և, հաճախ նույնիսկ կատեգորիկ պահանջների յեր դիմում...

Յերկար սպասեց Լուսարան ամառանոց գնալու հույսերով տարված, սակայն յերբ վերջնականապես համոզվեց, որ Գրիգոլը չի գնալու, որոշեց գնալ փոքրիկ Գուրամի հետ միասին... Յեվ իրոք, հուլիսի վերջերին դուրս յեկավ Թիֆլիսից...

— Ծաղվերում կլինենք... Գրիշա, սպասում ենք.— այս խոսքերով հրաժեշտ տվին Լուսարան ու Գուրամը Գիգաուրուն: Նրանցից հետո համարյա յուրաքանչյուր օր, նախատինքներով ու հանդիմանություններով լի նամակներ էր ստանում Գիգաուրին, որոնց կարդալու համար ազատ րոպեներ կարողանում էր որսալ միմիայն յերեկոները, քնելուց առաջ...



Յերբեմն Լուսարայի պահանջները տեղին էին... Այս բանը զգում էր Գիգաուրին էլ, բայց որ չէր կարողանում ազատ ժամանակ գտնել, ի՞նչ աներ...

— Գրիշա՛, գրում էր Լուսարան.—դու ֆանատիկոս ես, յուրահատուկ տարօրինակ մարդ.— քեզ համար ոչ մի նշանակություն ու արժեք չունի ընտանիքդ, դու ամենից բարձր ես դասում հասարակականն ու պետականը...Չես մտածում քո ֆիզիքական առողջության, քո ընտանիքի բարեկեցության մասին.—այս արդեն անթույլատրելի հանցանք է... Ինչի նման է իմ կյանքը. յես ավելի շատ նման եմ որբևայրի կնոջ, քան ամուսնացածի, կամ ավելի ճիշտ ամուսնուց ապահարզան տվածի, քանի որ իմ ընկեր կանանց ամուսինները համարյա ամեն կիրակի գալիս են իրենց ընտանիքների մոտ 2—3 օրով. շատերի ամուսինները մինչև իսկ ավելի յերկարատև արձակուրդով են յեկել ամառանոց. յերևի կրկին ծրագրների ու նախագծերի մեջ ես թաղված և առաջվա նման չես մտածում ուտել—խմելու, քնելու և հանգստանալու մասին...

Անտանելի յես, Գրիշա, քո արևովն եմ յերդվում, անտանելի, բայց յեթե կարողանաս հաջողացնել և գեթ յերկու շաբաթով գալ, գիտցիր, որ անսահման բերկրությամբ կհամակվես և այն ժամանակ կյանքն այլ կթվա քեզ. Գրիշա...Սպասում եմ...համբուրում է Գուրամն էլ...

— Լուսարան յերբեմն ճիշտ բաներ է գրում. սակայն ժամանակ որ չեմ կարողանում գտնել. ի՞նչպես կարելի յե տրեստի գործերը թողնել... Ո՛չ, դա անկարելի յե... Անտարակույս, հրաշալի յե Ծաղվերում հանգստանալ, մաքուր օդում, սառնորակ աղբյուրների մոտ, սեփական ընտանիքում...

Գիգաուրու քունը տարավ:

Քնեց և ջահն անմար մնաց...

***

Լուսարան և Գուրամը սեպտեմբերին վերադարձան ամառանոցից բրոնզե գույն ստացած ու խանձված...

Մայր ու որդի արևի վաննաներից ամբողջովին այրվել-խանձվել էին...

Ամառանոցում Լուսարան յերկար սպասեց Գրիգոլին...Անթիվ նամակ ու հեռագիր ուղարկեց, բայց յերբ տեսավ, որ ոչ մի

միջոց չազդեց ամուսնուն՝ վերջին ամսի ընթացքում նամակագրությունը դադարեց: Սկզբներում Գրիգոլը չէր նկատում նամակի ուշացումը, սակայն յերբ տեսավ, վոր անցավ մի շաբաթ, տասն օր, յերկու շաբաթ և նամակ չէր ստանում. մի գեղեցիկ օր հեռագիր պատրաստեց և շտապով ցրիչի ձեռքով ճամբեց փոստը.—«Լուսաբա, ի՞նչպես է Գուրամը, ինչո՞ւ նամակ չես գրում»:

Գրիգոլը խելագարության չափ սիրում էր Գուրամին... Իր մինուճար զավակին մտաբերելիս՝ նրա մարմնով մրջյունների նման դուրեկան դողեր էր անցնում և այդ պահին մեղմորեն ժպտում էր...

Պատասխան չկար...

Գիգաուրին կրկնեց հեռագիրը և յերբ Լուսաբայից պատասխան չստացավ, վորոշեց մի յերեկո անսպասելի մեկնել Ծաղվեր...

Առավոտյան Գիգաուրին Ծաղվերում նստած էր թթու ջրի ափին և մաքուր բաժակով հանդիստ խմում էր հանքային ջուրը: Արևակեզ Գուրամը պախրայի նման ազատորեն թռչկոտում էր իր ընկերների հետ:

— Ամոթ չէ՞ քեզ համար, Լուսաբա՛, — տրտնջալով ասում էր Գրիգոլը, սակայն իբր իր տրտունջի պատասխան Գրիգոլը լսում էր Լուսաբայի բարձրաձայն ծիծաղն ու յերեխայի ղուրղուրանքները...

— Ծանրաբեռնված էյի, ա՛յ մարդ,—Ամեն բան թողի... Գուրամից վախեցա... թե չէ...

Լուսաբան շարունակում էր ուրախ քրքջոցը և բոցկլտած աչքերով նայում էր Գրիգոլին...

Ուրախ ու զվարթ էր Լուսաբան, սակայն չգիտեր մինչև յե՞րբ կտևեր այդ ուրախությունը, նա մինչև անգամ չէր համարձակվում հարցնել, թե ինչքան ժամանակով է յեկել Գրիգոլը...

Վաղն առավոտյան պետք է լինեմ պաշտոնատեղումս... Այդ պատճառով Լուսաբան էլ վճռեց Գրիգոլի հետ մեկտեղ վերադառնալ Թիֆլիս...

Գիգաուրիները վերադարձան:

Նորից Գիգաուրիների բնակարանը կենդանություն ստացավ... Կենդանացավ նաև խոհանոցը...

Հնչեց դաշնամուրը, արեգակին տվին Լուսաբայի անկողինը... Փանիայի աշխատանքները կրկնապատկվեցին, և տանիքի վրա փռվեց Լուսաբայի ամառանոցային սպիտակեղենը...



Լուսաբան իրենց նախկին տեղերում դասավորեց յուրաքանչյուր կահկարասին ու առարկաները...

— Մայրի՛կ, հոլեղբայր Լևանը վո՞րտեղ է.

Լուսաբան տրտմեց...

— Ո՞ւր է.—կրկին հարցնում էր Գուրամը,—յես կարոտել եմ... Լուսաբան հեկեկաց, յերեխան հետաքրքրությամբ համակվեց և փաթաթվեց լացող մոր փեշերով...

— Ի՛նչ է, մայրի՛կ,—Ո՞ւր է Լևանը.

Լուսաբան հարմար դատեց լռել, բայց յերբեք իսկությունը չխոստովանել... Լևանի դրասեղանը հավաքեց, նրա լուսանկարներից մի քանիսը դուրս բերեց հյուրասենյակ, կախեց այնտեղ, մի քանիսներն էլ թաքցրեց...

Փանիային կարգադրեց, վոր Լևանի անկողինը տաներ խոհանոց:

Գիգաուրու բնակարանում բնաջնջվեց Լևանի անունն ու հիշատակը... Շուտով Գուրամի մանկապարտեզ գնալու ժամանակն էլ հասավ, Լուսաբան էլ պատրաստվում էր յերաժշտության դասերի համար: Ճիշտ է, նրան դուր չէր գալիս վո՛չ մանկապարտեզն և վոչ էլ դասերը... Սակայն...

Չէ՞ վոր Գուրամը, Գրիգոլի ցանկության համաձայն, պետք է դաստիարակվեր մանկապարտեզում...

## 29

Լոմջարը յերկու ամիս պառկած էր հիվանդանոցում: Հայտնի վիրաբույժներ բժշկում էին Լոմջարի կոտրած գլուխը. վերքը խիստ լուրջ էր և վիրահատումը՝ վտանգավոր. նրա դրությունը կախված էր «բախտի բերմունքից». գանգի վոսկրը հինգ կոպեկանոցի մեծությամբ ճեղքվել էր ու չչի կտորները մնացել էին մեջը, այնպես վոր բավական դժվար գործ էր դրանց մաքրելը:

— Պետք է գանգի տրեպանացիա կատարել.—հայտարարեց պրոֆեսոր Մուխաձեն:

— Հարկավոր է և անհրաժեշտ.—պրոֆեսորի կարծիքը հաստատեց նրա ընկերը: Լոմջարն առանց դժվարության կարողացավ տանել յերկու իրար հաջորդող վիրահատությունները, սակայն նրա ջերմաստիճանը սաստիկ բարձրացավ, շարունակ զառանցում էր...

— Լևան Գիգաուրի, գդուշացի՛ր, գդուշացի՛ր,—բռունցքները սեղմած սպառնում եր հիվանդը: Մշուշապատ ու տաքությունից կարմրած աչքերը հոգեկան հիվանդի նման չռում եր...

— Ի՞նչ եք կամենում, ի՞նչ եք ասում.—դիտմամբ հարցնում եյին կողքի նստողներն ու շոշափելով, հասկացնում նրան, վոր ինքը միայնակ չե, այլ կողքին մարդ կա, սակայն Լոմջարը միշտ միևնույն սպառնալիքն եր ուղղում ու բարկացած բացականչում. «Գիգաուրի, գդուշացի՛ր, գդուշացի՛ր»:

Յերկրորդ վիրահատությունից հետո տաքությունն ընկավ և ապաքինվելու հույսն ել ավելացավ: Յերբ նորմալ գիտակցության յեկավ, Լոմջարը մանրամասն հարց ու փորձի յենթարկեց խնամողներին՝ թե յե՞րբ և ի՞նչ դրության մեջ բերին նրան հիվանդանոց, ո՞վ կամ ինչով եր հասցրել վերքը, ո՞վ տերություն արավ և այլն, վորից հետո մտաբերեց մի ամիս առաջ «Ռաճա» ճաշարանում պատահած դեպքը, վորի հետևանքն այժմ պարզ ու ակնհայտ եր:

Լոմջարը վերհիշեց ամեն ինչ...մտաբերեց, թե նա ինչպես հրակեց մաուզերից Լևան Գիգաուրու վրա, ինչպես ուշաթափվեց...Բայց թե Լևան Գիգաուրուն ի՞նչ պատահեց, այդ մասին, նա հիվանդանոցում վոչինչ չկարողացավ իմանալ...

Աբեսալոմը շատ եր հետաքրքրվում.

Գթության քրոջից խնդրեց լրագրների համարները և անմիջապես նայեց թերթի վերջին յերեսները՝ վոչինչ չգտավ, բայց ինցինդենտից, վորի առթիվ լուրերի բաժնում զետեղված եր հետևյալ յերկտողը...

«Յերեկ թեթև վերք ստացավ և փախուստ տալով, ազատվեց».—յեզրակացրեց Լոմջարն ու կատաղությունից շրթունքները կրծոտեց...

— Ո՞ւր են մյուսները՝ Նոդարը, Ջալիկոն, Թամարը...

Զե՛, ամեն ինչ վերջացած ե... Վերջնականապես վճռված ու ավարտված...

Լոմջարին ման գալու իրավունք տրվեց...

Ու փորձեց, հիվանդանոցի միջանցքում զբոսանքի յելնելու... Նա խալաթը հագած ու հողաթափերով նոր վոտքի յելած յերեխայի նման ձեռնափայտին հենված՝ մի քանի քայլ անցավ, սակայն հանկարծ աչքերը մթնեցին, դողացին ու են ե պետք ե վայր ընկներ,



յեթե մոտը յեղած գթության քույրը վրա չհասներ ու չբռներ գիտակցությունը կորցրած Լոմջարին:

— Վալերիանի կաթիլներ...նաշատիրնի սպիրտ.—պահանջեցին, և, ուշքի յեկած Լոմջարին պառկեցրին մահճակալի վրա... Ամբողջ հիվանդանոցը Լոմջարի աչքին յերևում եր վորպես մի նավ ծովի ալիքների հետ խաղալիս...

Նրան ամեն բան թվում եր մութ, ժողակալ. նույնիսկ իր մահճակալի կողքին մշտական նստող գթության քույրն ել տարօրինակ թվաց, ամաչեց և սպիտակ սավանը քաշեց իր մերկ ու լղար մարմնին...

Լոմջարը նոր վոտքի յելնող յերեխայի նման ընտելացավ ման գալուն, լրագիր կարդալուն և յերկու ամսից հետո միայն նրան իրավունք տրվեց հիվանդանոցից դուրս գալու...

## 30

Տեքստիլ ֆաբրիկայում շինարարական աշխատանքներն ավարտվելու վրա եյին...

Հարվածային բրիգադներն ուժեղ կերպով կիրառեցին սոցմրցումը. իսկ նրանց մեջ առաջնությունը պատկանում եր Սուլակաուրուն:

— Արժանի յե,—միաձայն վկայում եյին բանվորական խըմբակները: Նրան հետևից Վանոյի բրիգադը, մյուս բրիգադները, և, առաջներում պարտված ֆաբրիկան, դուրս բարձրացրեց իր գործնական նվաճումներով: Ֆաբրիկի շրջակայքում իրար յետևից դուրս բարձրացրին բանվորական նորանոր տներ, ուր տեղավորվեցին ֆաբրիկայում աշխատողները: Գործարանի ծխնելույզներն սկսեցին շնչել, այս ու այն կողմից ողում գալարվել սկսեց բանվորական բնակարանների ծխնելույզներից դուրս յելնող արճճագույն ծուխը...

Տների շրջակայքում բուն դրին ճնճղուկները...

Կենդանացավ բանվորական թաղամասը—աղմո՛ւկ, խաղ ու ճիչ, բացականչություններ... կաթ վաճառողների ձայներն եռ տեղ գտան բանվորական թաղամասում...

Գիդուբեյի գործարանների ղռնչյունին ձայնակցում եյին յերկաթուղային դեպոյի սուլիչները, վորոնք միանալով ձուլվում եյին իրար...

— Բա, ասում էյիր թե Սուլախաուրին սոցմրցման մեջ չի կարող հաղթանակել.—ասում էր մեկը և մի աչքով մանող մեքենային սիրաշահում...

— Վաղվանից աշխատանքի կդրվեն մանող դազգյահները...

— Յես շատ էյի մտատանջվում Բակուրիձեյի առթիվ, թե չե...

— Այժմ համոզվեցի՞ր:

— Ինչո՞ւ:

— Նրանում, որ Բակուրիձեյի վերաբերմամբ սխալ կարծիք ունեյիր...

— Ամենևին,—շտապ պատասխանեց տարիքով վորմնադիրն ու քլունգը դրեց դարակում.—յես, յերևակայեցեք, այսօր էլ Բակուրիձեյի մասին նույն կարծիքին եմ...Ինքս էլ չգիտեմ, ինչու...

— Ե՛հ, դու էլ, նա վոր կասկածելի մարդ լիներ, սոցմրցման ու հարվածայնության այդպիսի յեռանդով ու սրտանց չեր մասնակցի...

— Չե՛, դա...դա ենքան էլ հիմնական փաստ չե...Սուլախաուրու մոտ ի՞նչ կարող էր անել... Չե, դա...դա...

— Լա՛վ. իսկ ի՞նչ կասես այն փաստին, վոր նա բջիջին դիմում է տվել կուսակցության մեջ ընդունվելու.—նորից պնդում էր առաջինը:

— Ի՞նչ...

— Այո՛, դիմում է ներկայացրել կուսակցության մեջ ընդունվելու համար: Սուլախաուրին և յերկու ուրիշ ընկերներ յերաշխավորել են...

— Դա թյուրիմացություն է: Սուլախաուրին յերաշխավորության գործում չարաչար սխալվում է... Չե՛, այդ արդեն չեմ հասկանում... Չգիտեմ, բան չեմ հասկանում...այդ...այդ.—փնթփնթում էր ինքն իրեն տարիքով վորմնադիրն ու գլուխն աննպատակ քորում.—

— Դա...դա անպայման թյուրիմացություն է...

— Յես չեմ կարողանում ըմբռնել, թե այս դեպքում իրոք ո՞վ է սխալվում—նա՞, թե՞ դու. միայն փաստը մնում է փաստ. ինչ վոր ասում եմ...

— Ուրեմն—հայտարարություն տվեց...լավ, բայց. ախր բանվորների շրջանում էլ ինչ վոր գաղտնի փսփսուկներով էր



զբաղվում, բացի այդ, նրա աջարեցի մուսուլման լինելը, սրանք բոլորը կասկածանքներ են հարուցում, և այս պայմաններում հավատ ընծայել՝ դժվար է...

— Փաստ է, քեռի ջան, փաստ, և յեթե չես հավատում, յերեքշաբթի բջիջի բաց ժողովում քննության է դրվելու այդ հարցը և...

— Բաց ժողովո՞ւմ.—վորմնադիրը նորից մտքերով տարվեց...Տխրեց... Այս փորձված մարդու մեջ կասկածները նորից գլուխ բարձրացրին... Մինչև ուղն ու ծուծը համակվեց կասկածներով... Նրա զարմացած աչքերն սկսեցին առկայծել..—

— Վո՛չ—դա...անկարելի յե,—մրմնջաց ինքն իրեն ու հեռացավ խոսակցից: «Հայտարարությո՞ւն—մտածում էր վորմնադիրը—դիմում է տալիս կուսակցության մեջ ընդունվելու և Սուլախաուրին յերաշխավորում է նրան. հետո ո՞ւմ...Բակուրիձե՞յին ...են Բակուրիձեյին, վորն անվստահելի մի անձնավորությո՞ւն է. վոչ, այդ անկարելի յե...թեև զարմանալու ի՞նչ կա վոր, Սուլախաուրին պարզ, սրտացավ ու միամիտ մարդ է, խորամանկ Բակուրիձեն օգտվեց այս դրությունից և նույնիսկ յերաշխավորությունն էլ կորզեց նրանից: Սակայն... Այդ անկարելի յե: Ո՞վ է իմանում Բակուրիձեյի անցյալը...Մինչ ֆաբրիկա մտնելը ո՞վ ինչ գիտե նրա սոցիալական ու քաղաքական դրության մասին...Թեև, դրա հետ միասին, կասկածելի և ուսումնասիրության կարոտ է նաև այն. թե նա վո՞րտեղից և ի՞նչպես ընկավ ֆաբրիկա...Այո, պետք է պարզել այս խնդիրը... Բայց քանի վոր հրապարակով, բաց ժողովում է դրվում նրա հարցը, յես, համոզված եմ, վոր ճշմարտությունն իր դրական ու բացասական կողմերով, յերևան կգա և հասարակական կարծիքն իր արժանի խոսքը կասի... Մտածելու բան չկա, ամեն ինչ կպարզվի... Այո՛, ամեն ինչ կպարզվի...

***

Լոմջարը հիվանդանոցից դուրս գրվեց թե չե, անմիջապես ձեռնարկեց իմանալու, թե ի՞նչ պատահեց կամ ի՞նչ հետևանք ու վախճան ունեցավ «Ռաճառ»-յում յեղած դեպքը: Ճիշտ է, քննիչը մի յերկու, թե յերեք անգամ հիվանդանոցում պառկած ժամանակ այցելեց, իրեն մանրամասն հարց ու փորձ արավ «ինցիդենտի»

վերաբերմամբ, սակայն «յուրայինների» մասին վոչ մի տեղեկու-թյուն չստացավ…

Այդ պատճառով էլ հիմնովանոցից ուղղակի Նոդարի մոտ գնաց…

Ընդհանուր մուտքից արագ վեր բարձրացավ, նեղ ու կեղտոտ սանդուղքներով. նույն արագությամբ և անհամբեր անցավ նեղ ու մութ, խոնավ ու նավթահոտով բռնված միջանցքով ու մոտե-նալով Նոդարի սենյակին՝ համարձակ կերպով բախեց դուռը:

Լռություն էր:

Նա կրկին բախեց դուռը և, վորքան էր նրա զարմանքը, յերբ Նոդարի սենյակից գլուխը դուրս հանեց մի գեր ու հաստ ռուսուհի, վորը հասարակ ռուսերենով հարցրեց.

— Чаво тебе?

— Ներողություն, Նոդարն այստեղ չի՞ ապրում այլևս.

— Шо, нодар? нет.

Ռուսուհին պատմեց, վոր մի ամիս առաջ, Նոդարն իր բնակա-րանը վաճառեց իրեն՝ Եվդոկիա Ֆեոդորովնա Կուդախչենկոյին և վոր այժմ բնակարանի տերն ինքն է և ուրիշ վոչվոք:

Աբեսալոմը քար կտրեց, զարմանում էր Նոդարի արարմունք-քից, սակայն վոչ պակաս զարմանում էր նաև այս տարորինակ ռուսու-հի՝ Կուդախչենկոյից էլ:

— А вы шо! —մեղմորեն ու աչքերը կկոցելով հարցրեց Կուդախչենկոն:

— Վոչինչ, ներողություն… ներեցեք…

— Может вам квартира нужна… Кравать уступим…

Աբեսալոմը փախեցավ… Անձայն շուռ յեկավ և շտապ քայլե-րով հեռացավ, սակայն մի տասը քայլ անցնելուց հետո մի անգամ էլ յետ նայեց և տեսավ Կուդախչենկոյին ձեռքերը կողքի վոսկրնե-րին կրթնած, վոտները լայնարձակ, ապուշ կտրած՝ իր հայացքով ուղեկցում էր հեռացող Լոմջարին:

— Ներողություն, ներողություն… ինքն իրեն փնթփնթաց Լոմջարն ու բազեյի արագությամբ սլացավ նեղ միջանցքով ու նույնքան էլ նեղ սանդուղքներով՝ դեպի բակը…

— Во черты окоянные! —քահ-քահ ծիծաղեց Կուդախչենկոն ու ընդլնդալով մտավ ներս: Լոմջարն ուղևորվեց Թամազի մոտ:

Թամազին էլ չկարողացավ գտնել տանը:



Նույնիսկ հարևաններից էլ վոչ մի տեղեկություն չստացավ նրա մասին:

— Վաղուց է այլևս չենք տեսնում, —ասում եյին հարևաննե-րը: Զալիկոն Աբեսալոմի համար վաղուց էր կորած, նույնիսկ ավե-լին—հենց Զալիկոյի պատճառով Լոմջարն ընդհարվեց Լևանի հետ և…

— Լևանն այլևս չկա:

Լոմջարը մտածմունքի մեջ ընկավ…

Այս մտածմունքներից հոգնեց:

Լոմջարը վերջապես հասավ իր բնակարանը:

Պառկեց թախթին:

Վոչվոքին վոչինչ չհարցրեց… Վոչ էլ տնեցիների հարցերին պատասխանեց…

Լուրջ մտքերում խորասուզվեց:

Մտքերում, վորոնք ահա յերկու տարի յե, ինչ տանջում են նրան և…

— Չէ՛, ամեն բան վերջացած է… վորոշված…

Լոմջարը մոտեցավ գրասեղանին…

Ժանգոտած գրչածայրը խզզաց և մաքուր թղթի վրա դրվեց մի հայտարարություն, վորը յերկու որից հետո լույս տեսավ «Կո-մունիստ» լրագրում: Ահա այդ հայտարարությունը.—

«Նկատի առնելով խորհրդային յերկրի հսկայական քայլերով զարգացումը, յես պախարակում եմ իմ ամոթալի անցյալը, դըժ-բախտաբար ամոթալի աշխատանքներս և ամբողջովին միանում խորհրդային պլատֆորմին. Աբ. Լոմջարի»:

Սրա հետ զուգընթաց նա խնդրեց, վոր իրեն մի վորևէ ֆաբրիկայում բանվորի տեղ տան և, նրա խնդիրը հարգելով—ու-ղարկեցին տեքստիլ ֆաբրիկա:

Լոմջարն ազատ շունչ քաշեց…

Բավական յերկար պարապությունից հետո, Լոմջարը մեծ յեռանդով կպավ ֆիզիքական աշխատանքին և շատ շուտով նրա փափուկ ձեռքերի վրա յերևացին կոշտեր, իսկ յեղունգները լցվե-ցին ժանգով… Նրա ձեռքերը կոպտացան, պնդացան և ծանոթ կանայք, վորոնք պատահում եյին նրան, բարևելիս ու ձեռք տա-լիս՝ զգում եյին ու տեսնում Աբեսալոմի ձեռքերի կոշտերը.—

Բայց…

Լոմջարը նման մանր-մունր բաներին այլևս ուշք չէր դարձնում...

## 31

Անընդհատ արտադրական շաբա՞թ. ի՞նչպես. ի՞նչ ձևով:

Այնպես, որ արտադրական հիմնարկությունները կաշխատեն անընդհատ, անխտիր կիրակի-տոն օրերին, միայն բանվոր-ծառայողները յուրաքանչյուր հինգ օրը մի անգամ կհանգստանան. այդ հանգստի օրը լինի կիրակի, թե մի այլ օր՝ միևնույն է.

— Տոնակատարությունների՞ն...

— Ասացի չէ՞, որ միևնույն է... Նոր օրացույցում կա միայն հինգ բանվորական տոն... Տոն կամ հանգստյան օր. որանք են՝ Լենինի մահվան և արյունոտ կիրակին հունվարի 22-ին, մայիսի 1—2 (ինտերնացիոնալի օրեր) և նոյեմբերի յոթ—ութի օրեր (Հոկտեմբերյան հեղափոխության առթիվ)... Այս օրերին գործարան-ֆաբրիկաներն ու հիմնարկությունները բանվոր-ծառայողների հետ միասին հանգստանում են, մնացած դեպքում՝ յուրաքանչյուր հինգ օր մի անգամ են հանգստանում...

— Դպրոցներո՞ւմ:

Պարզ է, որ դպրոցներում էլ այդպես նույնը պիտի լինի: Երկաթուղային գծի վրա, ֆաբրիկաներում, գործարաններում, արտադրական-հիմնարկներում և այլն. մի խոսքով ամենուրեք, ամեն տեղ ամբողջ Խորհրդային Միության գյուղերում և քաղաքներում... Խորհրդային Միության վողջ տերրիտորիայում...

— Ճիշտ է, բայց...

— Այո, այո, այդպես կլինի և վոչ մի «բայց»-ը չի կարող խոչընդոտ հանդիսանալ...—պարզաբանում էր ագիտատորներից մեկը:

Իրոք, հայտարարվեց թե չէ առաջին անգամ անընդհատ շաբաթը՝ սկզբներում մի քանիսներին խորթ էր թվում հանգստանալը, յերբ իր ընկերներն աշխատում էին, կամ ընդհակառակը, սակայն մի առ ժամանակ անցնելուց հետո, նոր կարգերին ընտելացան ինչպես բանվորները, նույնպես և ծառայողները, չէին հարցնում այլևս, թե կիրակի օրերը գործարանների սուլիչներն ինչո՞ւ էին սուլում...



Սկզբներում կիրակի օրերին սուլող սուլիչները զարմանք էին պատճառում ամենքին...

Ահա՞ ինչ է.

— Շաբաթօրյակի համար հո չե՞ն հրավիրում.

— Հո վորևէ տեղ հրդեհ չի՞ առաջացել.

— Սպի ո՞ր է, ի՞նչ է.

Հարցնում էին իրար զարմացած, մինչդեռ այսօր ամենքի համար սովորական յերևույթ է դարձել և, կիրակի օրերին էլ բանվորներն ու ծառայողները վեր են կենում ու իրենց արտհագուստներով գնում աշխատանքի:

Լուսաբային էլ խորթ թվաց նոր ձևերով ու կենցաղով ապրելու և ծառայելու յեղանակը...

Խորթ թվաց այն չափով, վորչափով նրան զարմանք էին պատճառում Խորհրդային իշխանության նորանոր սովորությունները... Նա դժվարանում էր կիրակի օրերը դասի գնալու, սակայն մի անգամ, յերկու, յերեք—և այդպես արդեն մոռացության տվեց կիրակնօրյա հանգիստն ու խաչը տոները...

Լուսաբան ընտելացավ յուրաքանչյուր հինգ օրը միանգամ հանգստանալուն...

Յեվ ահա, «Միքայել-Գաբրիել հրեշտակապետների» տոնակատարությունը նա չկարողացավ չկատարել. կատարեց, տոնեց, յերկրորդ օրն էլ հանգստի օր հայտարարեց...

Առավոտյա նախաճաշիկից հետո, Լուսաբան մոտեցավ դրադարակներին, վորտեղ դասավորված էին բազմաթիվ գրքեր, նայեց՝ գրքերից ցանկացավ մի գիրք ջոկել կարդալու համար. յերկար պրպտումից հետո, նա ջոկեց Մարսել Պրուստի վեպը. պետք է նկատել, վոր Լուսաբան սաստիկ տարված էր Ցվայգի, Պրուստի և Դոստոյեվսկու գրվածքներով...

Նա թղթամոլի նման ապրում էր ազարտ խաղի մոմենտները և աչքերն ուղղակի փայլատակում էին Կրուպիեյի բացականչություններից «Чет, первая половина, третья дюжина!», և այլն:

Լուսաբան բոլորովին պատահմամբ դարձավ Պրուստի յերկրպագու.

Կլոդ Ֆարերն էլ նրա սիրելի հեղինակներից մեկն էր: Նույնիսկ ավելին, յերբ «Մարդ, վոր սպանեց»-ը կարդում էր, նա այնպես էր վոգևորվում ու տարվում արևելյան էկզոտիկ գեղեցիկ

նկարագրությամբ, վոր քիչ եր մնում Ստամբուլ մեկներ, յեթե այդ մտադրությունը չխանգարվեր Լևոնի արտասահմանից գալով: Լուսաբան մտադրվել եր—յեթե պաշտոնական միջոց չստանար, նույնիսկ գաղտնի մեկներ...

Կնոջ հոգեկան վիճակի գեղեցիկ նկարագրությունն ու արևելյան եկզոտիկա, ահավասիկ ինչ եր նրան դուր գալի՝ ինչպես վեպերում, այնպես էլ անձնական կյանքում: Այսպիսով, Լուսաբան իր անդորրությունն ու հանգիստը սիրելի հեղինակների ընթերցման մեջ եր գտնում, և այսոր, նա, Պրուստի վեպի ընթերցմամբ ցանկանում եր և հանգստանալ, և՛ անդորր կյանք անցկացնել...

Լուսաբանի ցանկությամբ ու կարգադրությամբ Գուրամն էլ հենց եդ. որն եր հանգստանում. նա, իր խաղալիքների մեջ ընկղմած՝ փափուկ ու քնքուշ ձայնով աղունակի նման յերգեր եր մրմռում:

Հրաշալի յերեխա յեր Գուրամը...

Փանխան լվացք եր հարթուկում:

Փողոցից յերեխաների վառ ու ուժեղ ձայնի հետ՝ լսելի յեր նաև թմբուկի ձայնը:

Գուրամն ականջները սրեց:

Նա անմիջապես մոռացեց իր մանկատունը, հասակակից ընկերներին...

Վեր թռավ...

Շտապ իջավ սանդուխքներով:

Բաց դռնից դուրս թռավ և հայտնվեց փողոցում:

Յերեխաների շարքը բավական ճամբա յեր անցել, Գուրամը նկատեց նրանց այն պահին յերբ նրանք ծռվեցին դեպի մանկատան կողմը:

Այժմ լիովին համոզվեց, վոր նրանք իր ընկերներն էին, խաղալու ախորժակը գրգռվեց և գլխաբաց ու չստերով հետևեց նրանց...

Յերեխաների աղմուկը հետզհետե դադարեց...

Գուրամը ճանապարհից շեղվեց, բայց չվախեցավ,—նա, ժպտալից դիմավորեց փողոցում գտնվող ժողովրդին... Շատերի ժպիտն ու քնքուշ վերաբերմունքը վստահեց, սակայն...

Գուրամն առաջ եր գնում... Առաջ...դանդաղ ու չափած քայլերով և...



Ահա, Գուրամը հասավ ու կանգ առավ մի խաչաձև փողոցում. Նա տեսավ, թե ինչպես ելեկտրաքարշեր, ավտոներ, կառքեր, ֆուրգոններ և այլ բեռնակիրներ սպասում են հերթի, վոր ճանապարհը մաքրվի, վորպեսզի հնարավորություն ունենան անցնելու...

Գուրամը մայթից անցավ սալահատակին....

Ելեկտրաքարշի վագոնը շարժվեց իր տեղից...

Շարժվեցին նաև ավտոները...

Ահագին աղմուկով շարժվեցին նաև ֆուրգոնները...

Խրխնջացին ձիերը և, փողոցի խորության մեջ բարձրացավ անտանելի աղմուկ ու ժխոր...

Գուրամը խրտնեց, աչքերը պլշեց, բայց և այնպես քաջաբար ընտրեց ուղիղ գիծը և ուղղակի դիմեց մի մայթից մյուսն անցնելու ուղղությունը...

Շտապ սլացան ելեկտրաքարշի վագոնները, ավտոները, մոտոցիկլետները...

« Берегись! »—գոռաց կառապանը:

Գուրամն առաջ եր գնում...

Գնում է, սակայն վախի զգացմունքը պատում է նրան. յետ դառնալ անկարելի յեր...

Նա ընկավ անելանելի վիճակում:

Սփրթնեց...

Ուժասպառ յեղավ...

Չորս կողմն աղմուկ ու աղաղակ...սոսկալի ժխոր...

Ճամբաները կապվեցին ամեն կողմից. շարժումը դադարեց...

— Հեյ, հայ...ի...ի...—խուլ ձայներ էին հասնում Գուրամի ականջին ամեն կողմից և զգուշացնում նրան...

Այս պատահարը դիտում են նաև մայթերի վրա անց ու դարձ անողները.—Ամենքը դիտում են, զգում են մոտալուտ աղետը, սակայն...

Վոչ վոք չի համարձակվում օգնության հասնել...

Զգուշացնելու նպատակով նույնիսկ ձայն-ծպտուն չեն կարողանում հանել...

Մի վայրկյան ամենքը պապանձվեցին, դե՛, այսպիսի մոմենտում չէ՞ վոր մի վայրկյանը դարերի նշանակություն ունի:

— Берегись! —նորից լսելի յեղավ կառապանի խռպոտ ձայ-

նը և շոֆերն էլ ուզեց կանգնեցնել ավտոն, բայց...էլեկտրաքարշի վագոնը շուռ յեկավ խաչուղիի ճամբով, ընդհարվեց արագ վազքով սլացող կառքին, խրխնացին փուրգոնները, մի վայրկյան չորս կողմը մթնեց...

Միլիցիոները բարձրացրեց իր գավազանը և այդ վայրկյանին մի բարձրահասակ յերիտասարդ բանվոր շտապ կերպով մայթերից թռավ ու վազեց դեպի դժբախտ պատահարի առաջ կանգնած Գուրամը...

— Վա՜յ ինձ, յերեխան ընկավ կառքերի տակ—ծղրտաց ճամբորդ կանանցից մեկը:

Մի վայրկյան ես, և շարժումը կանգ առավ, գավազանի բարձրացմամբ ժողովուրդը հավաքվեց և....

— Կենդանի՞ յե, ի՞նչ պատահեց, հո ազատվե՞ց...

Կապույտ բլուզավորը գրկել եր ուշաթափված Գուրամին...Սա Աբեսալոմ Լոմջարն եր, տեքստիլ ֆաբրիկի բանվորը, Լևանին սպանողը և անցյալում նախկին մարդը, վորն ընդամենը մի քանի ամիս եր, ինչ իր քաղաքացիական իրավունքները վերականգնել եր՝ դառնալով ֆաբրիկի բանվոր:

Վերականգնեց և...վո՜չ, ինքն աշխատեց այդ արտոնությունները ձեռք բերելու, նույնիսկ պայքարեց...պայքարում եր յուրայինների շրջանում, նախկինների սեղմ շրջանում և այսօր, ահավասիկ Լոմջարն արդեն բանվոր եր ֆաբրիկայում...

Նա գոհ եր իր վիճակից...

Սակայն...

Նրա այժմյան գոհունակությունը, յերբ դժբախտ պատահարից ազատել եր յերեխային, այս առթիվ յեղած գոհունակությանը չափ ու սահման չկար...

— Չգիտե՞ք, ո՞ւմն ե յերեխան.—հարցրեց Լոմջարն ու գունատված Գուրամին բերեց դեպի մայթ:

Լոմջարն ուշադրությամբ դիտեց յերեխային...

— Կարծես մի տեղ տեսել եմ,—մտածեց նա,—սակայն այդ միևնույն ե, ումն ուզում ե լինի:

Փաստն ե հետաքրքիր, ազատելու փաստը, և Լոմջարը գրկախառնելով յերեխային, չգիտեր ո՞ւր տաներ...

— Յերեխան ո՞ւմն ե, չգիտե՞ք.—կրկին հարցրեց Լոմջարը:



— Գիդաուրինների բակից ե,—պատահմամբ բացականչեց մեկը ժողոված ամբոխի միջից:

— Գիդաուրինների՞.—չեշտակի նայեց Լոմջարը յերեխային... Ճանաչեց Գուրամին, նա համոզվեց, վոր յերեխան Գրիգոլ Գիդաուրու յերեխան եր:

— Տեսե՛ք, այն տանն ե ապրում,— մատով ցույց տվեց մի պառավ կին այն բնակարանը, վորտեղ ապրում եր Գիդաուրին:

— Այն տա՞նը... Գիդաուրի՞ն... Գնա՞մ.—տատանվեց Լոմջարը...

Նրա մեջ հանկարծակի զարթնեց սպանողը, շարժվեցին նրա մեջ նաև միջնադարյան հերոսների զգացմունքները Գուրամին փորձանքից ազատելու առթիվ և յերեխան խառնած՝ դիմեց «Գիդաուրինների բակը»...

— Հետո, ինչ անենք, վոր Լևանը սպանվեց իր արձակած փամփուշտից.... Կռիվը հո... Բայց, չէ՞ վոր առաջին անգամ նա խփեց ինձ դարբնի չիշը, ի հարկե սպանելու նպատակով, սակայն բախտի բերմամբ ազատվեցի...Հեշտ եր ինձ վոչնչացնել...դատառակրին վառնդավոր վնաս հասցնել... Բայց ազատեցին և...—Լոմջարը կանգ առավ.—ինչի՞ն են պետք անտեղի հիշողությունները ու արդարացումները...

Լոմջարը մոտեցավ բակին...Քայլերը դանդաղեցրեց և թեքվեց դեպի բակը...

Այդ ժամանակ...

Լուսարան հերարձակ և փախլան լալահառաջ շնչասպառ ուարատ իջնում եյին մարմարյա սանդուխքներով...Հանկարծ նկատեց կապույտ բլուզավորին, վորը յերեխան գրկած՝ գալիս եր դեպի իրենց:

Ծնկները թուլացան և են եր, պետք և ուշաթափվեր, յերբ —Մի՛ք վախենա, յերեխան անվնաս ե.—արտասանեց Լոմջարն ու յերեխան մեկնեց Լուսարային...

— Մայրի՛կ...

— Գուրամ... Գուրամ... ի՞նչպես ես, ցավդ տանեմ...

Գուրամը ուշքի յեկավ, ճանաչեց Լուսարային և փաթաթվեց մոր վզովը—Վախենում եմ.—հազիվ շշնջաց յերեխան և գլուխը թաղեց մոր ծոցում...

— Ի՞նչ պատահեց... ի՞նչպես յեղավ.— կշտամբում եր ինքն իրեն, աչքը չհեռացնելով Լոմջարից...

Լուսրան Աբեսալոմին ճանաչեց... ճանաչեց ու մռայլվեց...

— Ներողություն... Ձեզ կարծեմ ճանաչում եմ... Շնորհակալ եմ... Ձեր յերախտիքն անմոռանալի կլինի մեզ համար...

Լուսրայի խոսքերը սառն եյին ու բռնազբոսիկ...

— Ի՞նչ եք հրամայում... Այսպիսի դեպքում ինչ կարիք կա շնորհակալության... Հասարակ պարտականություն եր, մարդկային պարտականություն կատարեցի և դրա համար...

— Ի՞նչ եք ասում. չէ՞ վոր Գուրամին կյանք տվողը դուք յեղաք...Ներողություն, յես ձեզ... Յես ձեզ ճանաչում եմ— սակայն ձեր անունը չեմ կարողանում մտաբերել, մտքերս այնպես են ցրված:

— Յե՞ս, Աբեսալոմ Լոմջարն եմ...

— Լոմջար...

Լուսրան գլուխը տիկնիկի նման թափահարեց, կարծես յետևից մեկը հարվածեց նրա գլխին...

— ՞.՞.

— Լոմջա՛ր.— կրկնեց ինքն իրեն Լուսրան և դեմքը շուռ տվեց... Քարացավ, գունատվեց. մի վայրկյան Գուրամին մոռացավ... և...— Լոմջա՛րը.— փնթփնթաց նա յերրորդ անգամ.

Աբեսալոմը պատրաստվեց հեռանալ...

— Սպասեցե՛ք, բարձրանանք վերև... Մի ու ժամանակ է.— գոռեց իրեն Լուսրան:

— Ներեցեք, տիկին Լուսրա, բայց... Շտապում եմ, Փաբրիկա պիտի գնամ... բայց այդ...

Սրանից ավել բան չասաց Լոմջարը... Խոսքն անտեղի ընդհատեց և նշանակալից քայլվածքով դուրս յեկավ բակից...

Ահաբեկված Լուսրան, թուլացած ծնկներով հազիվ հաղ բարձրացավ սանդուղքով, մտավ հյուրասենյակն ու շատ կերպով դալկացած մոտեցավ հեռախոսին:





Գիքատուրը առանձնասենյակում խորհրդակցում եյին Փաբրիկի հանդիսավոր բացման մասին. Հենց այս մոմենտին Լուսրան զանգահարեց և հաղորդեց Գուրամի «բախտի բերմամբ» ազատվելու լուրը... Զայրացած Լուսրան ընդդիմադիրի նման վրա յեր տալիս բառերը... կատաղում եր, սպառնում, դժգոհում... «Ահա ես էլ քո մանկատունը... նոր դաստիարակության մեթոդները... նոր կենցաղի հարցեր... Ա՛յ մարդ, ինչ եմ անում քո նոր կենցաղն ու նոր մարդը, յեթե յերեխայի կյանքը «բախտի բերմունքին» պիտի յենթակա լինի... Մի վայրկյան հեռացավ աչքից. և քիչ մնաց ընդմիշտ կորցնեյի նրան, քիչ մնաց ընդմիշտ զրկվեյի իմ մինուճար զավակից... Մինչդեռ դու... նոր կենցաղ, նոր մարդիկ... կոմունիստական դաստիարակություն և ինչ գիտեմ... Այսօր յերեխան վախից ուշագնաց է... ահաբեկված, ճնճղուկի նման թրթռում, ջղայնանում... չի կարողանում հանգստանալ... վայ ինձ... ես ի՞նչ պատահեց... ես ի՞նչ ոյին յեկավ գլուխս...

Սակայն...

Գրիգորը վոչինչ չեր կարողանում հասկանալ...

Նա գունատվել, դեղնել եր, վորը ներկա յեղողների ուշադրությունից էլ չվրիպեց և անմիջապես հարցեր տեղացին այս ու այն կողմից.

— Ի՞նչ է պատահել, Գրիշա:

— Յերեխան... Քիչ է մնացել, վոր ավտոյի տակ ընկնի և այժմ վախից վատ է զգում իրեն...

Գիքատուրին ակամա մտածմունքի մեջ ընկավ... Տարվեց ինչ վոր մշուշապատ մտքերով... նրա ուղեղը կարծես այլես չեր գործում... վողջ մարմնով վախ ու սարսափի մեջ եր...

— Հա՛, ընկերներ, մենք կանգ առանք.— Գիքատուրին շփեց մազերը և աչքերը սևեռեց օրակարգին... Փաբրիկի աշխատանքների կառուցողական աշխատանքներն ավարտվեցին, ընկերներ, ուր վոր է Փաբրիկան պետք է ծանրաբեռնվի աշխատանքներով և յես կարծում եմ, արդեն ժամանակն է, վոր մենք կատարենք նրա պաշտոնական և հանդիսավոր բացումը և գործի գցենք Փաբրիկան... ուստի վատ չեր լինի և...

Գիգաուրին հառաչեց... իր խոսքն անտեղի ընդհատեց ու աչքերով սկսեց վորոնել մեկին. Նրա հայացքը կանգ առավ, ժողովի յեկած, բանվորական ներկայացուցիչ Գիորգի Սուլակաուրու վրա... Սուլակաուրին զգաց վարիչի հոգեկան դրության յերերուն վիճակը...

— Այո՛, այն եյի ասում...— ասեց Գիգաուրին, սակայն խոսակցության թելը կտրվելով՝ մոռացավ ինչի մասին եր խոսում.— Ներեցեք, չկարողացա վերհիշել, чорт! Լեզուն կապ ընկնելու և միտքը մոլորվելու մեջ նա հանդես բերեց իր անհատական կամքի թուլությունը, բնավորության անճարակությունը... Այդպես ինչի՞ն պետք է վերագրել Գիգաուրու հանկարծակի գլխապտույտը. Մտածում եր ինքն իրեն.— ի՞նչ պատահեց... Աղետ, դժբախտ պատահար, հետո՞ յենթադրենք, վոր... բայց... Գրիգոլի մարմնով սարսուռ անցավ... վախեցավ... Մտածելուց անգամ խուսափեց... Շուտով ուշքի յեկավ...

— Հա, ֆաբրիկի կոոպերացիական աշխատանքների ավարտման պատճառով...

— Ընկ. Գրիշա՛.

Գիգաուրին կանգ առավ...

— Ընկ. Գրիշա, գուցե ձեր գնալն անհրաժեշտ է...

Յեթե այդպես է, խորհրդակցությունը վերջացնենք:

— Վո՛չ, օրակարգի հարցերը սպառենք, հետո... ընդամենը մի յերկու հարց է մնացել է...

— Վո՛չ, ավելի լավ է հետաձգենք,— պնդում եյին ընկերները:

— Հետաձգենք... ընկ. Գրիշա, հետաձգենք. ով է իմանում. գուցե վորևե ոգնության կարիք է զգացվում:

— Բացի այդ, ֆաբրիկի հանդիսավոր բացման հարցը պետք է համաձայնեցնել Կենտգործկոմի հետ,— հայտարարեց դիրեկտորի ոգնական ընկ. Սարգիսովը,— ուստի վաղն ևեթ այս հարցը կհամաձայնեցնեմ և խորհրդակցությունն ել մնացյալ հարցերի վերաբերմամբ վաղը կհրավիրենք...

— Բարի, համաձայն եմ... Միայն խորհրդակցության շարունակությունն անպայման տեղի կունենա վաղը՝ ժամը 12-ին:

Գիգաուրին վեր կացավ...

— Ընկ. Ցեվդենի,— դիմեց նա գլխավոր հաշվապահին,—



ֆաբրիկի ամբողջական հաշիվները պատրաստեցեք... Ամբերկի. զեկուցման համար կարևոր տեղեկություններ ժողովեցեք...

— Լսում եմ.— յեղավ պատասխանը.

Գիգաուրին թեթև քայլվածքով ցած իջավ և...

— Դեպի տուն.— հրամայեց շոֆերին:

Գիգաուրու արարմունքը զարմացրեց շոֆերին:

Արագորեն սլացավ Մերսեդեսն իր յետևից թողնելով փոշի...

Միլիցիոները սուլեց արագ վազքով սլացող ավտոյի յետևից:

Շոֆերը ցնցվեց, սակայն...

— Գնա.

Խրախուսում եր Գիգաուրին շոֆերին...

## 33

Ֆաբրիկայում շինարարական աշխատանքներն ավարտվեցին...Բաց դաշտում արդեն բարձրացել եր հսկա շենքը, իսկ Քռի ափին կառուցվել բազմաթիվ յերկհարկանի և յեռհարկանի բնակարաններ բանվորների համար...

Հարկեր՝ բանվորական բնակչության համար...

Հարկեր՝ արդյունաբերա-կոոպերացիական բանվորների համար: Ֆաբրիկայի բակն ավելորդ շինանյութերից մաքրվեց: Բավական յերկար ժամանակ պահանջվեց, մինչև վոր ֆուրգոններով բակից դուրս տարան կոտրտված ու ավելցած մնացորդները:

Բակը սալահատակեցին, ջրախողովակ անցկացրին և այլն, կարճ՝ բակն ընդունեց իր առանձնահատուկ ֆաբրիկային տեսքը... Պահեստները խոշոր կողպեքներով փակվեցին...

Յերկաթյա փականքներով՝ ֆրանսիական կողպեքներին հարմարեցրած: Պահապանները խիստ կերպով սկսեցին հետևել ու պահպանել պահեստներն ու կողպեքները...

Դարբասի մեծ դռնից ներս են բերում բրդով լի «չվալներ»:

Մի քանի դազգյահներն արդեն սկսեցին աշխատել:

Աշխատանքի անցան նաև մի քանի բուրդ մանող մեքենաները...

Բրդի փոշիով լցվեց ֆաբրիկան... Բրդի հոտ եր բուրում ամենուրեք: Բուրդը մի դազգյահից մյուսն եր անցնում. մի քանի րոպեյից հետո գզգզված կտոր կտոր յեղած բուրդն արդեն մաքրվում, վեր է ածվում թելի...

Թելը փաթաթվում է իլիկներին և վերջին դազգյահի մոտ մաքոքներին արագ պտտվելու գործում՝ մրցման մեջ են մտել արդեն: Մրցում են, և խորհրդային կովերկոտը ծալվում, պատրաստվում է՝ խորհրդային ֆաբրիկայում...

Մաքուր, ճերմակ կովերկոտ...

Վորոշ տեսակներ էլ դժգույն ու հասարակ:

Գործելը գործեցին, սակայն մանուֆակտուրային արդյունաբերության մեջ ամենադժվարին աշխատանքը գունավորելն է: Լավագույն ներկերն ու գույները բոլոր յերկրներն էլ համարում են պետական գաղտնիք և իրոք, յեթե այս գաղտնիքը չլիներ, Անգլիան շատ վաղուց կորցրած կլիներ իր առաջնությունը՝ կամվոլ պատրաստելու գործում:

Ներկերն, ինչպես յերևում է, խոշոր նշանակություն ունեն մանուֆակտուրայի գործում...

Ահա և ներկարարների ցեխը...

Ֆաբրիկան սպասում է խորը շունչ քաշելուն...

Խորունկ ու ազատ շունչ քաշելուն...

Կարգավը մի անգամ էլ հետազոտեց դազգյահները, մեքենաներն ուշադրությամբ զննեց և...

— Ֆաբրիկան ամբողջովին, մեխանիկան աշխատանքի պիտի անցնի,— հայտարարեց նա ղեկավար շրջաններում:

Բանվորներն էլ սրտատրոփ սպասում եյին ֆաբրիկայի հանդիսավոր բացմանը...

Լուրեր եյին պտտում:

«Ակտիվի կողմից մշակված է պատվավոր հարվածայինների ցուցակ, կազմված են նաև կարմիր տախտակի և աշխատանքի հերոսների ցուցակները»:

Սպասում են...

— Հանդիսավոր բացումը վա՞ղն է լինելու.—հարցնում է մեկը:

— Այ տղա, դու յերևի աշխատանքի հերոս կլինես... կամ հարվածային,— հեգնեց կոմյերիտական բրիգադի անդամ Վանոն: Աջարացի Բակուրիձեն յերևի դիմագծերով ինչ վոր բան հասկացրեց Լոմջարին:

Բակուրիձեն իբր թե չնկատեց հեգնանքն ու շարունակեց իր ճամբան:



— Աջարացի, մոտ արի, ի՞նչ ես խռովում, թե՞ գլուխս.

— Վո՞րտեղացի յես,— հարցրեց Լոմջարը:

— Գլուխն աճարացու տեղ է սաղացնում և...

Բակուրիձեն արագացրեց քայլերը... խուսափեց Լոմջարին պատահելուց... Վոչ թե խուսափեց, այլ գիտակցաբար փախուստ տվեց... Այն որվանից, ինչ Լոմջարը ֆաբրիկա յե մտել, Բակուրիձեն շատ քիչ է պատահում, վոր մեկն ու մեկի հետ խոսի կամ նույնիսկ զրուցելու դուրս գա... Շատերը չգիտեն նույնիսկ, թե վերջերս վորտեղ է նախաճաշում նա: Մինչդեռ միրուքը հետզհետե յերկարում է ու յերկարում:

Յերբ Բակուրիձեն արագացրեց քայլերը, Լոմջարն ուշադրությամբ զննեց նրա մարմնի կիրթ շարժ ու ձևերը և ակամա կասկած ծագեց նրա մեջ, վոր հազիվ թե նա աջարացի անկիրթ փախստականներից լինի:

34

— Գրիշա, Գուրամին յեթե մի դժբախտություն պատահի, գիտցիր, ձեռքիցս չես ազատվելու... Իմացած յեղիր, վոր աչքերդ հանելու յեմ... Կխեղդեմ, իմ սեփական ձեռքերով, կխեղդեմ... Ցավ դու ասածներս ծաղրի տե՞ղ ես դնում, կարծում ես հանա՞ք եմ անում...

— Կրկին իստերիկա և գանգատնե՞ր. ի՞նչ է պատահել քեզ, Լուսարա.— մռայլվեց Գիգաուրին և հեգնական ծիծաղի փոխարեն պատրաստ էր պոռթկալու, սակայն հանկարծ հիշեց հիվանդին, ու քնքշորեն սկսեց փաղաքշել Լուսարային:—

— Լուսարա, դու էլի սկսեցի՞ր քո հին յերգը...

— Գրիշա, Գրիշա, շնորհիվ քո արտասովոր համառության՝ քիչ էր մնում յերեխայիս կորցնեի, յեթե այժմ Գուրամին մի բան պատահի, այն ժամանակ չգիտեմ թե ինչ կանեմ քո էն մանկատան վարիչներին, քո բերանից չարունակ լսվող սոցիալիստական դաստիարակության ու նոր մեթոդներին, քո տենչանք կազմող նոր մարդուն ու նոր կենցաղին...

— Լուսարա՛.

— Զե՛, Գրիշա, շնորհիվ քո համառ բնավորության, քո պնդումներին, ցանկություններին Գուրամն այսօր կանգնած է վտանգի առաջ. դու կասկածո՞ւմ ես, չե՞ս հավատում:

— Ցերեկը:

Սփրթնած ու այլայլված Լուսարան հենվեց բազկաթոռին:

— Քո շնորհիվ, քո համառ բնավորության շնորհիվ է, որ...— ցածրաձայն մրմնջում էր Լուսարան ու հուսահատ դեմքի արտահայտությամբ, անվերջ նայում էր առաստաղի մի կետին... Ցերեկվա հիվանդությունը Լուսարային կարծես խելագարության դուռն էր հասցրել և այս բոլորի պատճառը համարում էր Գիգասուրի «համառությունն» ու Գուրամին մանկատանը տեղավորելը...

— Յեթե մանկատանը չլիներ, Գուրամին այս դժբախտությունը չէր պատահի, չէ...

— Ի՞նչ ես ասում, Լուսարա:

— Հավատացնում եմ, Գրիշա, հավատացնում եմ քեզ, որ Գուրամին այս դժբախտությունը չէր պատահի:

— Ուղղակի անտանելի յեն քո պառավական ու քաղքենական բարբաջանքները... Այնչափ ատելի ու զզվելի յեն դրանք, որ քիչ է մնում հրաժարվեմ նույնիսկ տուն գալուց...

— Քիչ է մնում ընտանիքից փախչես, չէ՞, կարծեմ այս էիր ուզում ասել, այդպես չէ՞...— ձայնը բարձրացրեց Լուսարան:

— Այո՛, քիչ է մնում փախչեմ, քիչ է մնում փախուստ տամ քաղքենական վարմունքիցդ, սակայն... սա գործին չի կարող օգնել... Պետք է այնպես դասավորել գործը, որ մեր մեջ ամեն ինչ վերջանա... Լուսարա: Պետք է վերջ տրվի բռնի, սուտ ու արհեստականորեն կծկված ամուսնական կյանքին:

— Գուրա՞մը.

— Գուրամ...

— Այո, Գուրամը, քո կարծիքով, Գուրամն ո՞ւմ մոտ է մնալու...

— Գուրամը...— Գրիգոլը մտածմունքների մեջ ընկավ, անմիջապես չկարողացավ պատասխանել. վերկացավ ու ձեռքերը գրպանում—սկսեց սենյակում ջղաձգորեն յետ ու առաջ գնալ:— Գուրամը... կրկին մանկատուն կվերադառնա:— Խաղաղ կերպով հայտարարեց նա ու անդրավարտիքի գրպանից ծխատուփը հանեց:

— Սխալվում ես,— տեղից վեր թռավ նաև Լուսարան,— Գուրամը կմնա ինձ մոտ:



— Ցերե՛ք...

— Ինչո՞ւ, մի՞թե արժանի չեմ...

— Որպես դաստիարակչուհի թույլ ես ու անհամապատասխան:

— Մի՞թե...

— Առանց որևէ կասկածի... քո խնամքի տակ գտնվող յերեխային միշտ վտանգ է սպառնում... Ապացո՞ւյց ես ուզում. համեցեք, հենց այսօրվա դեպքը...

— Գրիշա, չարաչար սխալվում ես:

Ամենևին, Գուրամի հետ պատահած դեպքի գլխավոր պատճառը դու յես...

— Իսկ յես յենթադրում ու համոզված եմ, որ Գուրամի դժբախտության պատճառը քո սոցիալիստական դաստիարակության սկզբունքներն են և քո սրբագործված համառությունը:

— Դրանք զառանցանքներ են ու քամնելի բարբաջանքներ...

Գրիգոլը ծխախոտը վառեց, ծուխը քուլա-քուլա բաց թողեց, վառած լուցկու մնացորդը մոխրամանին դրեց և...

— Մայրիկ,— ննջարանից լսվեց Գուրամի նվաղ ձայնը:

Լուսարան շտապ շուռ յեկավ ու վազեց դեպի Գուրամի սենյակը:

— Մայրիկ,— զառանցում էր յերեխան տաքության մեջ և ձեռքերն օդում այնպես էր տարուբերում, կարծես մեկի հետ զրուցելիս լիներ...

— Ի՞նչ ես ուզում, ցավդ տանեմ, Գուրամիկ ջան.

Գուրամը ժպտաց, նայեց Լուսարայի աչքերին և հազիվ լսելի ձայնով մրմնջաց.

— Մայրիկ, յես Հոլեղրայլ Լեանին տեսա... այ, այս րոպեյիս այնտեղ էր, այնտեղ...

— Չէ՛, ղուրբան լինեմ քեզ, նա այստեղ ի՞նչ գործ ունի, գնացել է հեռու, շատ հեռու...

Լուսարայի մարմնով սարսուռ անցավ, ահ ու սարսափ պատեց նրան.

Գիգասուրին կնճռոտվեց, տաքությունից այրվող յերեխայի ճակատը շոյեց ու փորձեց բժիշկների կոնսուլիում հրավիրել...

— Ա՛յ... Այ, Հոլեղրայլ Լեանը,— հանկարծ բացականչեց Գուրամն ու մատնացույց արավ անկյունը:

— Չէ, բալիկ ջան, չէ... Հորեղբայր Լևանն այստեղ ի՞նչ գործ ունի..

— Ցես ուզում եմ Հոլեղբայր Լևանին... Հայրիկ ջան, յես գոտիկ եմ ուզում... Գոտիկն ու սուրը Հոլեղբայր Լևանի պես...

Գրիգորը պղտորվեց...

Վատ տրամադրությունն ու բարկությունն անցավ. սիրտը փափկեց նրա աչքերի անկյուններում մի քանի կաթիլ արցունքներ փայլեցին...

Գրիգորն ինքն էլ մնացել էր զարմացած իր արարմունքից, սակայն փաստը, փաստ էր, թափված արցունքները ցամաքել եյին նրա այտերին. Լուսարայի համար աննշմարելի չմնաց այդ: Նրա սրտում սկսվեց կատաղի պայքար, զգում էր, որ իր դժգոհ վերաբերմունքը դեպի Գրիգորը ոչ մի հիմք չուներ... Այս բոլորից հետո Լուսարան հիմնովին համոզվեց, որ Գրիգորը քարասիրտ մարդ չէ, նամանավանդ այնպիսի քարասիրտ, ինչպիսին ինքն էր յենթադրում մինչև այժմ...

Լուսարան մեղմացավ այս դեպքից, մեղմացավ և նույնիսկ մի փոքր էլ ամաչեց... սակայն...

Գուրամը լուրջ հիվանդ է, նա մահու և կյանքի դռանն է կանգնած... դրանցից վո՞րը կհաղթի, խիստ կասկածելի յէ...

Հանկարծ լսվեց հեռախոսի զանգի ձայնը...

— Ալլո: Ամեն բան պատրա՞ստ է. Գալիս եմ... իսկույն...

— Գրիշա՜...

— ...

— Գրիշա, ոչ մի տեղ չերթաս, իմացած յեղիր...

— Չէ վոր այսօր Փաբրիկի հանդիսավոր բացումը պիտի տեղի ունենա...

— Հետո՞.

— Ոչինչ... Ո՞վ պետք է ղեկավարի բացումը.

— Ինչ է, մի՞թե քեզանից բացի ուրիշ աշխատող մարդ չկա.

— Լավ, Լուսարա, լավ...լավ...թե չէ.—Գրիգորը ձեռքը թափահարեց ու կոկորդում հավաքված դժգոհությունը հացի պատառի նման կուլ տվեց...

— Այ մարդ, յերեխան խելագարության դուռն է հասել, տաքությունից այրվում— հալվում է,— իսկ դու հանդիսավոր նիստին պետք է ներկա լինե՞ս, դու դեռևս ես վիճակում անրջում ես



ճա՞ռ արտասանելու. մի՞թե դու այժմ հանգիստ, խաղաղ մտածելու և դատելու ընդունակությո՞ւն էլ ունես...

Բայց...

Գրիգորն այլևս ոչինչ չէր լսում...

Նա համարձակ քայլում էր Դիդուբեյի արվարձանում, մոռացության մատնելով ընտանեկան մանրակրկիտ հոգսերը և, իր մտքում մտածում էր, թե ի՞նչ ծրագրով պիտի տեղի ունենա Փաբրիկի հանդիսավոր բացումը...

Դանդաղ փչում էր Թիֆլիսի ցուրտ ու չոր քամին...

Գիգաուրու վոտների տակ ճրթճրթալով կոտրատվում եյին բարակ սառցապատակները, վորոնք ախորժելի դուրեկանություն եյին պատճառում նրան: Արագ քայլերով մոտեցավ Փաբրիկին: Բակում հերթով շարվել եյին նիստին յեկած հյուրերի ավտոները: «Ցես Հոլեղբայր Լևանին եմ ուզում».— հանկարծ հիշեց Գուրամի զառանցանքներն ու նրա դեմքը մռայլվեց...

— Լևանը... Լուսարան... Գուրամը.,— Գրիգորը հանկարծակի բացեց աչքերը, կարծես քնած լիներ. արթնացավ, բակի դուռը բացեց, վորտեղ նկատեց բազմաթիվ բանվորներ ու հյուրեր, վորոնք յեկել եյին բացման հանդեսին ներկա լինելու... Գիգաուրին բարևում է բանվորներին և բոլորին, կարծես ամաչում է, նրանցից ինչ վոր արտասովոր բանի յե սպասում. Նրա վողջ մարմնով թեթև դող է անցնում, ուրախության ու հուզմունքի դող... Փաբրիկի ծխնելույզից դուրս են ժայթքում ծխի սև ու թանձր քուլաներ... Ցերևում են փայլփլող դրոշակները, իսկ նրանց առջև սպեցշորներ հագած՝ բանվորներ...

Ջուլհակներ...

Մեքենավարներ...

Գիգաուրին չհասցրեց ամեն ինչին աչք ածելու, յերբ հանկարծ չորս կողմից վորոտացին ծափերն ու ուռաները, վորոնք շատ շուտ փոխվեցին ովացիայի... «Ջերմ վողջույն աշխատանքի հերոսներին, պատվավոր հարվածայիններին և կարմիր տախտակին արժանացած ընկերներին,— արձանագրված եր տախտակների վրա «Մենք կիրագործենք հնգամյակը չորս տարում»,— ազդարա-

կում էյին պլակատներն ու հազարավոր բանվոր ձեռքեր վողջունում էյին տրեստի դիրեկտորին...

Գիգաուրին կանգ առավ...

Անորոշ ու անհարմար դրության մեջ ընկավ...

— Կեցցե աշխատանքի հերոսն ու անձնվեր կառուցողը,— վողջունում էյին ժպտալից շրթունքներով Գիգաուրուն և հուզված ու խանդավառ ձեռքերը ճոճվում էյին օդի մեջ և վորոնում էյին Գիգաուրուն օդում խաղացնելու... Մի վայրկյան ևս և Գիգաուրին յերևաց ամբիոնի վրա։

Տրիբունը զարդարել էյին կովերկոտներով, շեվիոտներով, թանգարժեք մանվածքներով...

Սևական գործվածքներով...

Խորհրդային ֆաբրիկի թանգագին աշխատանքներով....

Նորից վորոտացին ծափերը և...

— Հանդիսավոր ժողովը հայտարարում եմ բացված,— կերկեռուն ու հուզված ձայնով թնդաց Գիգաուրու ձայնը...

Հնչեց Ինտերնացիոնալը...

Վորոտընդոստ ծափահարությունների տակ Գիգաուրին կովերկոտի նշանակած տեղը կարեց...

Միանգամից սուլեցին սուլիչներն ու, մինչ այդ «քնաթաթախ» դրության մեջ յեղած դազգյահները մի ակնթարթում սկսեցին պտտվել իրենց առանցքի շուրջը...

Թելերի կծիկները բացվեցին՝ սկսեցին մանել... Ճրխկճրխկացին մաքոքները, և ծխնելույզներից լավայի նման դուրս ժայթքեց թանձր գորշագույն ծուխը...

— Մենք, հերթական հաղթանակն ենք տոնում,— լսվում էր ամբիոնից Գիգաուրու հուզված ձայնը. հաղթական «Ինտերնացիոնալ»-ի խրոխտ հնչյուններին միախառնվում էյին բանվորների ու կառավարական ներկայացուցիչների խանդավառ կեցցեներն ու «ուռա՛» բացականչությունները...

Յեվ իրոք, Թիֆլիսը տոնում էր իր հերթական հաղթանակը։

Гос. публ. библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.

306

П. ЧХИКВАДЗЕ
Э т а ж и
Гиз ССР Армении, Эривань

ՀՀ Ազգային գրադարան
NL0376163

74.752